



Բնություն

Ուսուցչի գիրք

Լեւա Միքիաշվիլի • Մայա Լևիձե • Գիորգի Կվանտալիանի

Երաշխավորվել է Վրաստանի կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության կողմից
2018 թվականին:



Բնություն 2
Ուսուցչի գիրք
Թբիլիսի, 2018

Հեղինակներ՝ **Լելա Միքիաշվիլի, Մայա Լևիձե, Գիորգի Կվանտալիանի**

Խմբագիրներ՝ **Մակա Սեսկուրիա, Էլենե Բերիաշվիլի**
Էջադրումը՝ **Իա Մախաթաձեի**
Նկարագարումը՝ **Գիորգի Մադրաձեի**
Տեխնիկական դիզայներ՝ **Թինաթին Բերբերաշվիլի**

© Բակուր Սուլակաուրիի հրատարակչություն, 2018
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՄՊԸ «Բակուր Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցե՝ Դավիթ Աղմաշենեբեկի 150, Թբիլիսի 0112
Հեռախոս՝ 291 09 54, 291 11 65
Էլ-հասցե՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-30-327-2

The Natural Science 2
Teacher's Book

© Sulakauri Publishing, 2018
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ5
- 2. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ8
- 3.ՄԱՆՐԱՄԱՍՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԻ
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԻ ՀԵՏ (ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ,
ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐ, ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ), ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ9
- 4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ 10
- 5. II ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ 11
- 6. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ 18
- 7. ԴԱՍԱԳՐՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ 21
- 8. ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ 22
ԸՆԹԱՑԻԿ ԴԱՍԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 24
- 9. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 142
- 10. ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵՆՔ ԱՇԱԿԵՐՏԻՆ 146
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 148

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Տարրական դասարաններում նպատակահարմար ենք գտնում առավել շատ կիրառել բնական երևույթները Սուլխան-Մաբայի և Գոգեբաշվիլու պարզաբանմամբ և գործածել նրանց կողմից տրամադրված հասկացությունները, տերմինները: Դրանցում պահպանված են բնությունն ամբողջության մեջ քննելու կարգը և բնության հետ մարդու հուզական կախվածության բնագավառները»: Գ ո ռ ւ ր ամ Ռ ամ ի շ վ ի լ ի

Մենք համամիտ ենք բնաբանում նշված այն կարծիքին, որ այս տարիքում աշակերտների մտավոր-ճանաչողական զարգացման ճանապարհին նպատակահարմար է ամբողջականության տեսակետի ձևավորումը: Դրա հիմքում ընկած է ընկալման հոգեբանական տեսությունը, ինչի շնորհիվ, նախ՝ ձևավորվում են ամբողջական պատկերացումներ, ապա ճշտվում են մանրամասները՝ ամբողջի մասերը: Ընկալման բնույթին համապատասխանում է գիտելիքի ձեռքբերումը հետևյալ սկզբունքով. «ամբողջական պատկերացումներից մինչև մասնավոր պատկերացումներ»: Այստեղ մենք կրկին վերադառնում ենք տարրական դասարաններում ինտեգրած և ամբողջական ուսուցման գոգեբաշվիլիական ավանդույթին, ինչը պարզ ընթերցվում է Յակոբի հետևորդ Լուարսաբ Բոցվաձեի ծրագրային կանոնագրում. «Անհնար է, որ մի առարկայի շրջանակն առանձնացված լինի երկրորդ առարկայից: Մասնավորապես, դպրոցում ուսուցման ժամանակ միասնականության խախտումը, առարկաների առանձնացումը և մասնավորեցումը փոխանցվող գիտելիքի համար մեծ թերություն կարող են դառնալ: Յուրաքանչյուր առարկայի հաջողության գրավականն այն հաճույքն է, որն ուսուցումը հարուցում է երեխայի մեջ, ինչպես նաև այն սովորելու նպատակահարմարությունը: Դասավանդումը հաճելի ու նպատակահարմար կլինի այն ժամանակ, երբ ամուր կապ հաստատվի այն հասկացությունների միջև, որոնք տեղ են գտել գիտակցության մեջ: Տարբեր գիտելիքները պետք է մեկը մյուսին լրացնեն ու պարզաբանեն... Երբ պարապմունքն այս բնույթով է ընթանում, երեխաների մոտ ստեղծվում է հաջորդական և ամբողջական տպավորություն, հետևաբար, առարկաներին էլ լիարժեք կերպով կծանոթանան»: (Տարրական ժողովրդական դպրոցի ժամանակավոր ծրագրեր, ԹԲ.1919, էջ 14-15)

Գոգեբաշվիլու կողմից այս մոտեցման հիմնադրումը հաստատում է նաև պրոֆեսոր Գուրամ Ռամիշվիլին: Նա գրում է. «Կրթության ազգային հայեցակարգի մասին խոսելիս՝ կարևորում ենք մեկ հարցի լուծում ևս: Յա.Գոգեբաշվիլու «Մայրենի լեզուն», «Բնության դուռը», «Պատմական պատմվածքները» և «Աստվածաշնչյան պատմությունները» լրացնում են մեկը մյուսին: Այստեղ զարմանալի միասնականություն կա, որի հիմքում ընկած է ինչպես վրացի փիլիսոփայի ու պատմաբանի, այնպես էլ բնագետի մեծ բարոյականությունը: Տեղեկատվության հեղեղի ներխուժումն առարկաների ուսուցման մեջ խախտել է այդ կենսական ամբողջականությունն ու առաջնային կապերը: Պարտադիր ենք համարում այդ ամբողջականության ու ներդաշնակության պահպանում-վերականգնումը: Դպրոցներում առարկաների դասավանդումն այնպես պետք է կազմակերպվի, որ պահպանվի գիտելիքի ամբողջականությունը, վերականգնվեն մարդու և բնության միջև առաջնային կապերը: Այդ իմաստությունը ճշմարիտ գիտելիքի անհրաժեշտ հիմքն է»: (Գ.Ռամիշվիլի, Մայրենի լեզվի տեսություն, ԹԲ.2000, էջ 17)

Բնագիտության դասավանդման վերոհիշատակյալ սկզբունքներից (ինտեգրվածություն և ամբողջականություն) տրամաբանորեն անցում ենք կատարում երեք էական պահի, որոնցով էլ առաջնորդվում ենք բնագիտության դասագիրքը կազմելիս:

Առաջինն այն է, որ բնագիտության դասավանդումը պետք է լինի էկոլոգիական: Դա չի ենթադրում միայն բնապահպանական բովանդակություն ունենալ: Մեր ընկալմամբ էկոլոգիան կենդանի օրգանիզմների միջև եղած կապի և դրանց՝ շրջակա միջավայրի հետ ունեցած կապի մասին գիտական իմացությունն է, ինչն ամբողջական պատկերացում է տալիս աշխարհի մասին և հնարավորություն է տալիս մեզ ամբողջականության մեջ քննարկել նաև ուսումնական գործընթացը: Բնագիտություն ուսուցանելիս ցանկացած առարկա կամ երևույթ քննարկվում է աշակերտի շրջակա միջավայրի համատեքստում: Աշակերտի տարիքային աճի հետ մեկտեղ այդ միջավայրի սահմաններն էլ են ընդլայնվում:

Բնապահպանական նպատակներից ելնելով՝ բնագիտության ուսուցման նպատակներից մեկը հենց այն է, որ երեխան սիրի կենդանի ու անկենդան

բնությունը, և նրա մեջ զարգանա բնության հանդեպ խնամատար վերաբերմունք, ձևավորվի բնության պահպանության անհրաժեշտության զգացողություն և զինի նրան այդ ուղղությամբ որոշակի աշխատանքային հմտություններով: Երեխայի ընդհանուր զարգացումը մեծ մասամբ պայմանավորում է մանկավարժորեն կազմակերպված միջավայրում նրա կողմից գիտելիքի և հմտությունների ու կարողությունների սիստեմատիկ ձեռքբերումը: Առավել կարևոր է այն հանգամանքը, որ արտաքին աշխարհի մասին ձեռք բերած գիտելիքը չհասցվի տեղեկությունների գումարի, այլ այն երեխաներին տրվի որոշակի հաջորդականությամբ, նրանց սեփական փորձին կողմնորոշմամբ և տարրական դասարանների աշակերտների հասանելի եղանակով: Այս տարիքի (նկատի ունենք 6-ից 10 տարեկան) երեխաների մտածողության հիմնական գիծը կայանում է ակնառու-գործնական մտածողությունից ակնառու-պատկերավոր, իսկ վերջինից՝ վերացական մտածողության անցումը: Մեր դեպքում դա նշանակում է, որ, ճիշտ է, երեխաների մոտ պետք է անպայման ստեղծենք բնագիտական պատկերացումներ և ուսուցանենք հասկացություններ, սակայն այդ պատկերացումներն ու հասկացություններն աշակերտներին կոնկրետ բնական առարկաների միջոցով պետք է տանք, քանի որ այդ տարիքում գիտելիքի ձեռքբերման հիմքը հենց առարկան ու երևույթն են և ոչ թե՝ վերացական պատկերացումը: Երեխայի մտածողությունը պետք է ուղղված լինի առարկայից (երևույթից) հասկացություն և ոչ թե հասկացությունից առարկա (երևույթ):

Մեր մոտեցման երկրորդ էական պահը ենթադրում է ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպում, որ երեխայի ճանաչողական գործունեությանը մասնակցեն նրա ուղեղի երկու կիսագնդերն էլ: Այս ուղղությամբ մեր կողմից առաջարկվող դասավանդման մեթոդիկան, ծրագիրը, դասագիրքը և երաշխավորությունները հիմնված են մարդու ուղեղի հատուկ ուսումնասիրությունների վրա, որոնք կապված են աշակերտի ստեղծագործական հմտությունների և կարողությունների զարգացման խնդիրների հետ:

Մեր մոտեցման երրորդ էական պահը ենթադրում է բնության ուսումնասիրում և շրջակա միջավայրի հետ ճիշտ կապերի հաստատում՝ գործնական աշխատանքների միջոցով: Այդ նպատակով և՛ դասագրքում, և՛ Ուսուցչի գրքում ներառված են բազմաթիվ գործնական աշխատանքներ, ինչը կնպաստի հետազոտմանը և բնությունն ուսումնասիրելու հանդեպ հետաքրքրության առաջացմանը:

Մեր թվարկած երեք էական մոտեցումներն էլ

հիմնված են բնագիտության հոլիստիկ կամ ամբողջական (wholly (անգլ.) – ամբողջությամբ) ուսուցման հայեցակարգի վրա, որը մշակել է հայտնի ամերիկացի գիտնական Ջ.Հասսարդը (Jack Hassard, science experiences, 1990): «Հոլիստիկ ուսուցում» դասավանդման մոդելը աշակերտին ընկալում է՝ որպես ամբողջական անհատ, և հիմնվում է մարդու գլխուղեղի ամբողջական գործունեության վրա: Գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերը տարբեր բնության մտածական գործընթացների են մասնակցում: Յուրաքանչյուր կիսագնդի գործառույթների դոմինանտ տարածություն ունի: Ուղեղի ձախ կիսագնդում դոմինանտ է աստիճանաբար և տրամաբանական հաջորդականությամբ մատուցված տեղեկության ընկալումն ու մշակումը: Աջ կիսագնդում գերակշռում է ոչ բառային, ամբողջական-սինթեզային, պատկերավոր-կերպարվեստային տեղեկության ընկալումն ու մշակումը (ինչպիսիք են ռիթմը, մեղեդին, երևակայությունը, գույները...):

Հոլիստիկ կրթության մեջ միասնաբար են հասկացվում ձախ և աջ կիսագնդային տիպի ճանաչողական գործունեությունները: Միաժամանակ այս հայեցակարգը նկատի է առնում երեխաների միջև գոյություն ունեցող տարբերություններն՝ ըստ նրանց մտավոր հնարավորությունների տեսակների, մասնավորապես մենք նկատի ունենք Գարդնիերի սահմանած մտավոր հնարավորությունների ութ տեսակները (բազմակողմանի բանականություն): Դրանք են.

- 1) Ներանձնային – ներքին անհատական, երբ աշակերտը նյութը յուրացնում է անհատական ուսումնասիրման և կշռադատման միջոցով:
- 2) Միջանձնային – երեխան սովորում է ուրիշների հետ համագործակցելով:
- 3) Երաժշտական-ռիթմիկ – առարկաների ընկալման միջոցը ռիթմ է ու երաժշտական օրինաչափությունները:
- 4) Վիզուալ-տարածական – առարկան ուսումնասիրելիս՝ աշակերտը կարիք է ունենում դիտել գծապատկերային օբյեկտներ և հիմնվում է դրանց բաղկացուցիչ մաս կազմող տարրերի վրա:
- 5) Մարմնաշարժողական (կինեսթետիկ) – աշակերտը սովորում է շարժվելով, տեղափոխվելով, հավելելով:
- 6) Բանավոր-լեզվաբանական -երբ աշակերտը նյութը յուրացնում է լսած կամ կարդացած բառերի միջոցով:
- 7) Տրամաբանական-մաթեմատիկական – երբ աշակերտն ունի մաթեմատիկական բանաձևերով ու տրամաբանական կատեգորիաներով ձեռնածելու ունակություն:
- 8) Նատուրալիստական – աշակերտը բնությունը ճանաչելու հատուկ տաղանդ ունի: Նա բնական

երևույթների ու առարկաների հանդեպ մեծ ձգտում ունի:

Մովորաբար մարդու մեջ այս ութ տեսակներից գերիշխում են մեկը կամ երկուսը, թեև թվարկվածներից յուրաքանչյուրը քիչ թե շատ արտահայտված է նրա մոտ: Դասագիրքը պետք է նպաստի ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպման, որ աշակերտների մտավոր կարողությունների բոլոր տեսակներն ակտիվացված լինեն:

Ըստ Ջ.Չասարդի, հոլիստիկ կրթության նպատակն է երեխայի մտավոր ունակությունների թվարկած բոլոր տեսակների ակտիվացումը, ինչին, կիսագնդային տեսակի մտածողությունից բացի, նպաստում են նաև սենսոմոտորային տեսակի մտածական գործունեությունը (ինչը նկատի ունի ֆիզիկական օբյեկտների հետ անմիջական կապ) և հուզական տեսակի մտածողությունը (ինչը նկատի ունի զգայական-հուզական մտածողություն):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մարդկանց (այդ թվում նաև, բնականաբար, երեխաներին) բնորոշ են տարբեր տեսակի մտավոր ունակություններ և հնարավորություններ, այդ պատճառով ուսուցման հոլիստիկ մոդելը և՛ մանկավարժորեն, և՛ հոգեբանորեն, և՛ սոցիալական հավասարության տեսակետից պրոգրեսիվ և ընդունելի է:

Բնագիտության ուսուցումը տարրական դասարաններում ունի հատուկ դաստիարակչական նպատակ: Սպեցիֆիկ գիտելիքի փոխանցման հետ մեկտեղ բնագիտության դասընթացը պետք է ծառայի աշակերտների բնապահպանական, գեղագիտական, հայրենասիրական դաստիարակությանն ու աշխատանքի հանդեպ սիրո առաջացմանը: Եվ այս բոլորն աշակերտների մեջ պետք է արտահայտվի համապատասխան հմտությունների ու կարողությունների և տրամադրվածություն-վերաբերմունքի ձևավորմամբ ու մշակմամբ: Այսպիսով, բնագիտության դասագիրքը պետք է կրի նաև դաստիարակչական բնույթ:

Դասագրքի դաստիարակչական գործառնությունի մի մաս ենք համարում նաև ինքնուրույն աշխատելու ունակության զարգացումը: Ժամանակակից մանկավարժական ուսումնասիրություններն ապացուցել են, որ բնագիտության դասերի ժամանակ, երբ աշակերտներն

ինքնուրույն են փնտրում հանձնարարված խնդիրը լուծելու ճանապարհներ, ոչ միայն առարկայի հանդեպ նրանց հետաքրքրությունն է աճում, այլև այնպիսի հմտություններ և կարողություններ են զարգանում, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, վերլուծելու և ստեղծագործելու կարողությունը, ստացված տեղեկատվությունը համակարգելու ունակությունը և այլն:

Բնագիտության դասագրքերն այս՝ մեր ձևով կազմելու նպատակի մասին ամբողջական պատկերացում տալու համար, մեկ հարցի ևս պետք է անդրադառնանք: Անցյալ դարում Արևելյան Եվրոպայի երկրներում տարրական դպրոցի հիմքում դրված էր այն տեսակետը, որ տարրական դասարաններում կրթությունը պետք է միտված լինի գիտելիքի որոշակի պաշարի կուտակմանը, դպրոցի հաջորդ աստիճանի համար անհրաժեշտ տեղեկությունների բազիսային մակարդակի ստեղծմանը: Ժամանակակից (ինչպես նաև դասական) մանկավարժական տեսությունները նախապատվությունն այն տեսակետին են տալիս, ըստ որի տարրական դասարանում կրթության և դաստիարակման գործընթացը պետք է միտված լինի անհատի զարգացմանը: Ըստ մեզ, այս երկու սկզբունքներն իրարամերժ չեն, չնայած շեշտն այնուամենայնիվ պետք է զարգացման վրա դրվի:

Մեր կողմից ներկայացված բնագիտության երկրորդ դասարանի դասագիրքը կազմված է վերը նշված տեսակետների հիման վրա, և նրա առաքելությունն է նպաստել երկրորդ դասարանում ուսուցման հաջորդ նպատակների իրականացմանը. բնությունն ուսումնասիրելու մեծ ձգտման առաջացում, շրջակա միջավայրի պաշտպանության զգացողության սերմանում, աշակերտների մեջ հետաքրքրասիրության, զարմանքի և բացահայտում-ուսումնասիրման ճանապարհով առաջացած գոհունակության զգացողության զարգացում, երեխայի վարքի հիմնական ձևի՝ խաղի աստիճանաբար վերածում ուսումնական գործընթաց-վարքի (կամ ուսումնական վարքի ձևավորում), ճանաչողական հմտությունների և կարողությունների զարգացում և, ընդհանուր առմամբ, կրթության հանդեպ դրական տրամադրվածության ձևավորում:

2. ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

- **Ինտեգրում** – Դասագրքում սինթեզված ձևով են ներկայացված Ազգային ուսուսմական պլանով նախատեսված չորս ուղղությունները (Գիտական հետազոտություն-որոնում, Կենդանի աշխարհ, Մարմիններ և երևույթներ, Երկրագունդը և արտաքին աշխարհը), ինչպես նաև քաղաքացիական դաստիարակությանն առնչվող որոշ թեմաներ:
- **Մատչելիություն** – Հաշվի են առնված 5-6 տարեկան երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ու անհրաժեշտությունները:
- **Համակարգվածություն և հաջորդականություն** – Յուրաքանչյուր թեմա, որը պետք է ուսուցանվի, կազմված է միասնական կառույցով և հաշվի առնելով հետադարձ կապերը:
- **Կողմնորոշում արդյունքներին** – Դասագիրքը պետք է նպաստի, որ աշակերտները մինչև տարեվերջ հասնեն չափորոշչով նախատեսված արդյունքներին:
- **Գիտակցվածություն և ակտիվություն** – Դասագրքի ձևավորումը և ուսուցման մեթոդիկական այնպես են մտածված, որ ապահովեն աշակերտի կողմից նյութի գիտակցված յուրացումը՝ տեղեկության ինքնուրույն մշակման, սեփական ուժերի հանդեպ վստահության և համադասարանցիների հետ համագործակցության ճանապարհով:
- **Ակներևություն և զգայական ընկալում** – Դասագիրքը կնպաստի աշակերտների կողմից գիտելիքի ձեռքբերմանն ու հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ մարդու բոլոր զգայությունների ակտիվ վարժմամբ ու կիրառմամբ:
- **Հուզական ընկալում** – Դասագիրքը կնպաստի ուսուսմական գործընթացն ավելի հետաքրքիր ու հաճելի դարձնելուն, ինչը կապահովի երեխաների մեջ ուսման և առարկայի հանդեպ դրական տրամադրվածության ամրապնդում:
- **Դաստիարակչական** – Բնագիտության դասագիրքը մտավոր զարգացմանը զուգահեռ պետք է ծառայի նաև աշակերտների էկոլոգիական և գեղագիտական դաստիարակությանը, ինչպես նաև անվտանգությանն ու հիգիենային առնչվող ունակությունների զարգացմանը:
- **Դասագրքի ֆունկցիոնալությունը** – Այս սկզբունքը նկատի ունի ուսուցման ամբողջական համակարգում բնագիտության դասագրքի՝ որպես այս համակարգի տարրի ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություն այլ տարրերի (ուսումնական նյութեր, ուսուցման միջոցներ, այլ առարկայի դասագրքեր...) հարաբերակցությամբ:
- **Կանոնակարգող փաստաթղթերի հետ համաձայնեցվածությունը** – Դասագրքի թեմատիկական և ուսուցման մեթոդիկական հիմնվում են Հանրակրթության ազգային նպատակներով և Ազգային ուսուսմական պլանով սահմանված առաջնահերթությունների ու պահանջների վրա:

3. ՄԱՆՐԱՄԱՍՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԻ ՀԵՏ (ԱՇԱԿԵՐՏԻ ԳԻՐՔ, ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐ, ՈՒՍՈՒՑՉԻ ԳԻՐՔ), ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

II դասարանի բնագիտության դասագիրքը հավաքածու է, որը բաղկացած է Աշակերտի գրքից, Աշակերտի տետրից և Ուսուցչի գրքից:

Աշակերտի գիրքը սպեցիֆիկ է: Այն հիմնականում նկարագարողումների և վարժությունների հավաքածու է, որն աշակերտներին բազմազան աշխատանքներ է առաջարկում: Աշակերտի տետր «Բնություն 2»-ը աշխատանքային թերթերի հավաքածու է, որի մեջ աշակերտը նկարում է, գունավորում, պատրաստում պարզ մոդելներ, խմբավորում է առարկաները և այլն:

Երկրորդ դասարանի Աշակերտի տետրի հավելվածում հաջորդաբար ամրացված են առանձին թերթեր (4 ֆորմատի): Որոշ թեմաների համար աշակերտին անհրաժեշտ կլինի 1 կամ 2 այսպիսի թերթ: Թերթերը համարակալված են ըստ թեմաների,

այսպես նրանց օգտագործումն անհամեմատ ավելի հարմար է (ուսուցիչն, իր կարիքներից ելնելով, կարող է հեշտությամբ հանել, երեխաներին տալ թերթը):

Իսկ Ուսուցչի գրքում մանրամասնորեն ներկայացված են բոլոր դասերի սցենարները:

Բնագիտության առարկայական ծրագրով սահմանված են այն սպեցիֆիկ հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ է զարգացնել այս առարկայի ուսուցման ժամանակ: II դասարանում պետք է նպաստել ուսումնական հետազոտական հմտությունների ու կարողությունների զարգացմանը տարրական մակարդակում: Այստեղից ելնելով՝ դիտարկման, հետազոտման, նկարագրման, հաշվառման, դասդասման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը հիմք կդրվի հենց այս տարիքում:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

II դասարանում Բնագիտությունից ուսուցանվում են թեմաներ, որոնք ընտրվել են հատուկ հետազոտման հիման վրա, երկրորդ դասարանցիների տարիքի և հետաքրքրությունների նախատեսմամբ: Թեմաները հաշվարկված են 32 ուսումնական շաբաթվա համար: Ուսուցչի համար նախատեսված է մի քանի պահուստային և կրկնության դաս: Յուրաքանչյուր թեմա ներառում է 2 կամ ավել հարց: Ընդամենը Աշակերտի գրքում 53 դաս է, Աշակերտի տետրը համապատասխանաբար թեմատիկորեն հետևում է դասագրքին և օգնում աշակերտներին թեմաներն ավելի լավ ըմբռնել:

Ուսումնական թեմաների հաջորդականությունն այսպիսին է.

Թեմա. Մարդու մարմինը և նրա մասերը

1. Մարմինը և նրա մասերը
 2. Խնամենք մարմնի մասերը
 3. Եթե ուզում ես առողջ լինել
 4. Մենք մեծանում և փոխվում ենք
 5. Առողջ կենսակերպ և օրվա ռեժիմ
- Նախագիծ. Ուզո՞ւմ եմ առողջ լինել:

Թեստ 1

Թեմա. Կենդանի միջավայր. Կենդանիներ

6. Կենդանին և անկենդանը
7. Կենդանիներն էլ են մեծանում
8. Ընտանի կենդանիներ. կաթնասուններ
9. Անտառի գազանները
10. Անտառի տարատեսակները
11. Թռչուններ
12. Սողացող կենդանիներ

Թեստ 2

Թեմա. Կենդանի միջավայր. Բույսեր

13. Բույսերը և նրանց մասերը
 - 14 (1) Ինչ է մեզ պատմում արևածաղկի սերմը
 - 14 (2) Ծառերը դպրոցի բակում
 - 15(1) Իմ ծառը
 - 15 (2) Անտառը պահիր գավակներիդ համար
- Գործնական աշխատանք (փորձ). Բույսին ինչի՞ համար է անհրաժեշտ սերմը:

Թեմա. Ուտելի բույսեր

- Գործնական աշխատանք
- 16 (1) Միրգ և բանջարեղեն
 - 16 (2) Հատիկային բույսեր
- Դիտարկում. Մենյակային բույսեր
- Թեստ 3

Թեմա. Տարվա եղանակները. Ամիսներ և սեզոններ

- Գործնական աշխատանք. Տոնենք Նոր տարին Երաշխ. ակտիվություն. Եղանակը և մարդը
17. Ամիսներ և սեզոններ
 18. Եղանակը և տարվա եղանակները (սեզոնները)
 19. Տարվա եղանակները. տաքություն և ցուրտ
 20. Գործնական աշխատանք. Ինչպես է առաջանում անձրևը

Թեմա. Բնական ռեսուրսներ

- 21 (1) Ջուրը
 - 21 (2) Ջուրը բնության մեջ
- Քննարկում. Խնայենք խմելու ջուրը
- Թեստ 4

Թեմա. Օդ

22. Մեր շուրջը օդ է
23. Ինչպես է շարժվում օդը

Թեմա. Բնական ռեսուրսներ. Բնահողը և օգտակար հանածոները

- 25-26. Մագնիս
 27. Հրաբուխներ
- Թեստ 5

Թեմա. Անցյալի հետքերով

28. Որտեղ են ապրում մարդիկ
29. Ինչ է մեզանից թաքցնում հողը

Թեմա. Մենք և բնությունը

- Հետազոտություն. Մեր դպրոցի հարակից տարածքը
30. Ինչպես է մարդը փոխում շրջակա միջավայրը
- Գործնական աշխատանք. Շրջակա միջավայրը հնում և ներկայումս
- Դիտարկում. Շրջակա միջավայրի աղտոտում
- 31-32 Աղբը մեր շրջակա միջավայրում
 33. Պահպանենք շրջակա միջավայրը
 34. Անվտանգության պահակետում
 35. Մենք և դեղերը
 36. Ինչպես պահպանենք անվտանգությունը՝ կապված սննդի հետ
- Թեստ 6

37. Անվտանգ հանգիստ բնության գրկում
38. Խնամքով վերաբերվենք բնությանը
39. Ինչպես վարվենք
40. Վրաստանն իմ հայրենիքն է

5. II ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

| ԱՐԴՅՈՒՔՆԵՐԻ ԴԱՍԻՉԸ | ՉԱՓՈՐՈՇԻՉ ԱՐԴՅՈՒՆՔԸ |
|---|--|
| 1. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ-ՈՐՈՆՈՒՄ | |
| ԲՆ. ՏԱՐԲ.(I).1. | Աշակերտը պետք է կարողանա. Մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: |
| 2. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԿԵՆՂԱՆԻ ԱՇԽԱՐՀ | |
| ԲՆ. ՏԱՐԲ.(I).2. | Աշակերտը պետք է կարողանա. Նկարագրել օրգանիզմները (բույսեր և կենդանիներ) և բնութագրել դրանք՝ ըստ հիմնական հատկանիշների: Օրգանիզմները խմբավորել, խմբերը բնութագրել և համեմատել, դատողություն անել դրանց տիպիկ ներկայացուցիչների կառուցվածքի, կենսագործունեության և կենսական բոլորաշրջանի առանձնահատկությունների մասին, դատողություն անել օրգանիզմների կենսական պահանջումների և դրանց վրա միջավայրի գործոնների ներգործության մասին: |
| 3. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ | |
| ԲՆ. ՏԱՐԲ.(I).3. | Աշակերտը պետք է կարողանա. Բնութագրել մարմինները և դրանց բաղադրիչ նյութերի հատկությունները, դատողություն անել ձայնի, լույսի և ջերմության աղբյուրների և դրանց տարածման մասին, դատողություն անել ազդեցատային վիճակի փոփոխության մեջ ջերմության փոխանցման դերի մասին, բնութագրել հիշտությամբ դիտարկվող շարժումները և ուժերը: |
| 4. ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ | |
| ԲՆ. ՏԱՐԲ.(I).4. | Աշակերտը պետք է կարողանա. Կողմնորոշվել տեղի միջավայրում, նկարագրել ջրի և ցամաքի կարևոր օբյեկտները և դրանք ճանաչել տարբեր տեսակի պլանների և քարտեզի վրա, դատողություն անել բնական ռեսուրսների նշանակության մասին, նկարագրել բոլորաշրջանային բնական երևույթները և դատողություն անել դրանք հարուցող պատճառների մասին: |

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ. ՏԱՐԵՎԵՐՁԻՆ ՁԵՆՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՍՏՈՒԳԻՉՆԵՐԸ

Ուղղություն. Գիտական հետազոտություն-որոնում

ԲՆ. II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս:
- Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:
- Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:
- Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրողումների վրա կամ իրականության մեջ:
- Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):
- Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

- Մեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, S2S):

Ուղղություն. Կենդանի աշխարհ

Բն. II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:
- Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ, թե ինչպես է այն շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում: Մեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:
- Օրինակներ է բերում մարդու աճի-զարգացման գործընթացի ցուցադրման համար (օրինակ՝ հագուստի փոքրացում, կաթնատաճների փոխվելը) կամ ներկայացնում է ակներև նյութ (օրինակ՝ տարբեր տարիքում նկարահանված լուսանկարներ):
- Համեմատում է չափահաս կենդանիներին և նրանց ձագերին, նկարագրում է աճի-զարգացման գործընթացում տեղի ունեցած փոփոխությունները (օրինակ՝ չափը, գույնը, ծածկույթը):
- Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:

Բովանդակությունը

Բույսերը և կենդանիները կենդանի մարմիններ կամ օրգանիզմներ են: Դրանք սնվում են, մեծանում, շնչում, շարժվում: Մնվելն անհրաժեշտ է օրգանիզմների գոյության և աճի-զարգացման համար: Աճի-զարգացման հետևանքով կարող է փոխվել բույսերի և կենդանիների ձևը, չափը, գունավորումը, ծածկույթը և այլ հատկանիշներ: Շարժումն օգնում է կենդանիներին սննդի հայթայթման, պաշտպանության, բնակման տեղի կազմակերպման մեջ: Կենդանիները տեղաշարժվում են տարբեր տեսակի վերջույթների միջոցով (ցամաքի վրա տեղաշարժվելու վերջույթներ, լողակներ, թևեր): Բույսերը նույնպես շարժվում են, օրինակ՝ ծաղիկը բացվում է և փակվում, տերևը թեքվում է դեպի արևը: Մենյակային բույսերը և ընտանի կենդանիները մարդու կողմից հոգածության կարիք ունեն:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Աշակերտներին խնդրում է թվարկել դասասենյակում/միջավայրում առկա կենդանի և անկենդան մարմինները կամ առաջարկում է կենդանի և անկենդան մարմինների լուսանկարներ և խնդրում է խմբավորել դրանք ու բացատրել, թե ինչու են այս կամ այն մարմինը վերագրել կենդանիին կամ անկենդանին հատկացված խմբին:
- Աշակերտներին ցույց է տալիս չափահաս կենդանիների և դրանց ձագերի նկարներ/տեսանյութ, խնդրում է որոշել՝ որ կենդանու ձագն է, բացատրել, թե ինչպես կարելի է որոշել, դաստորություն անել, թե ինչ փոփոխությունների են ենթարկվում կենդանիներն աճի գործընթացում, խնդրում է նկարագրել՝ ինչպես են հոգ տանում նոր սերնդի մասին:
- Կազմակերպում է աշակերտների կողմից լուսանկարած կենդանիներին և նրանց ձագերին պատկերող լուսանկարների ցուցահանդես:
- Աշակերտների հետ դիտարկում է ցորենի կամ լոբու սերմի աճն ու զարգացումը, աշակերտներին օգնում է հավաքել տվյալները (աճի-զարգացման տարբեր փուլերի հաշվառում՝ գրառումների, լուսանկարների, ուրվանկարի միջոցով):
- Աշակերտներին խնդրում է անվանել կոնկրետ կենդանի մարմին և թվարկել, թե ինչ կարող է անել նա (օրինակ՝ քայլել, սնունդ ընդունել, խոսել), այնուհետև անվանել անկենդան մարմին (օրինակ՝ ռոբոտ, գնդակ, լուսամուտ) և մտածել, թե ինչ կարող է անել վերջինս: Ուսուցիչը պետք է օգնի աշակերտներին եզրակացություններ անելու մեջ, որ անկենդան մարմինները

ինքըստինքյան որևէ տեսակի շարժում կամ գործողություն կատարել չեն կարող, նրանց ակտիվ լինելը կախված է ինչ-որ ներգործությունից (օրինակ՝ ռոբոտին շարժում է մարդը, ուղիղ մակերևույթի վրա գնդակը կգլորվի, եթե նրան հարվածենք, լուսամուտը հնարավոր է բացվի, եթե փչի ուժեղ քամի):

- Հարց է տալիս, թե ինչ տարբերություն կա արհեստական և չորացած ծաղիկների միջև: Աշակերտներին օգնում է միմյանցից տարբերել արհեստական կամ անկենդան մարմինը (որը երբեք կենդանի չի եղել) և չոր ծաղիկը (որը մի ժամանակ կենդանի էր):
- Խնդրում է աշակերտներին ընտրել որևէ բույս կամ կենդանի տեղի միջավայրից (ընտանի կենդանի, սենյակային բույս) և անմիջական դիտարկման միջոցով ուսուճասիրել նրա կենսական դրսևորումները (ցողունի աճը երկարությամբ, տերևների շարժումը դեպի արև, ծաղիկների բացվել-փակվելը):
- Աշակերտներին առաջարկում է անմիջական դիտարկման ճանապարհով ուսուճասիրել որդի կենսական դրսևորումները/նշանները (օրինակ՝ արձագանքել լույսին կամ դիպչելուն և այլն), գրավոր հաշվառել դիտարկման արդյունքները: Ակտիվության անցկացման ժամանակ ուսուցիչն ուշադրությունը պետք է կենտրոնացնի կենդանի օրգանիզմների հետ շփվելու էթիկական հարցերին: Անհրաժեշտ է, որ դիտարկումից հետո որդերը վերադարձվեն բնական կենսամիջավայր:

Բն. III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջումներին (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:
- Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ապլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ՝ պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):
- Տեղի միջավայրում հետազոտում է օրգանիզմների տարբեր բնակատեղեր (որջ, բույն, տուն), նկարագրում է դրանց կառուցման առանձնահատկությունները:
- Հետազոտում է բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները (օրինակ՝ սենյակային բույսը տեղադրում է տարբեր պայմաններում՝ լույսին/առանց լույսի, ջրում է/չի ջրում), հետազոտության արդյունքները ներկայացնում է տարբեր ձևով (օրինակ՝ բանավոր խոսք, համառոտ գրառումներ, նկար, լուսանկար):
- Կազմում է իր սննդակարգի մեջ մտնող մթերքների ցանկը և առանձնացնում մարդու համար պարտադիր սննդամթերքների խմբերը (բանջարեղեն, միրգ, հատիկայիններ, կաթնամթերքներ):
- Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):
- Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝ ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Բովանդակությունը

Բույսերն ու կենդանիներն ապրում են տարբեր կենսամիջավայրերում՝ ցամաքում, ջրում և օդում: Շրջակա միջավայրը նրանց տալիս է սնունդ, ջուր, օդ, որոնք ընդհանուր կենսական պահանջումներ են: Կենդանիներն իրենց համար պատրաստում են սեփական կարիքներին համապատասխան բնակատեղի, օրինակ, որջ, բույն, բայոց: Բույսերին գոյության և աճի-զարգացման համար անհրաժեշտ է ջուր, օդ, արևի լույս և ջերմություն: Մարդը միջավայրից ստանում է սնունդ, ջուր, օդ, հայթայթում է նյութեր կենցաղային իրեր պատրաստելու համար: Օդի, ջրի, սննդի աղտոտումն արտացոլվում է մարդու առողջության, բույսերի ու կենդանիների վրա:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Աշակերտներին խնդրում է նկարների օգտագործմամբ գտնել համապատասխանություն

կենդանիների և դրանց բնական տեղի միջև (օրինակ՝ ծիծեռնակ – բույն, սկյուռ – փշակ, մուկ – բույն):

- Աշակերտներին խնդրում է կարծիք արտահայտել, թե ինչ հետևանք կարող է ունենալ տարբեր օրգանիզմների կենսական պահանջմունքների սահմանափակումը (օրինակ՝ հարցեր է տալիս. Ի՞նչ կպատահի կովին, եթե պակասի նրա խոտը: Դա ինչպե՞ս կազդի մարդու վրա):
- Աշակերտներին խնդրում է դատողություն անել, թե ինչ փաստ կարող է բերել մարդուն կենսական միջավայրի աղտոտումը:
- Ցույց է տալիս ցամաքի վրա, ջրում, բնահողում և օդում ապրող կենդանիների մասին տեսանյութ և աշակերտներին խնդրում դատողություն անել, թե ինչպես են նրանք բավարարում իրենց կենսական պահանջմունքները կոնկրետ միջավայրում:
- Աշակերտներին տեսանյութ է ցուցադրում, նկարագրողուժներ է ցույց տալիս տարբեր բնակատեղերի մասին, հարցեր է տալիս. Ի՞նչ նյութեր են օգտագործում կենդանիները բնակատեղ կառուցելու համար: Ի՞նչ նպատակի է ծառայում ապաստարանը (օրինակ՝ սերունդներ մեծացնել, ձմեռել): Ինչպե՞ս է համապատասխանում ապաստարանի կազմակերպումը կենդանու առանձնահատկություններին և նրա կենսակերպին:
- Արտագնա դաս է անցկացնում: Աշակերտներին խնդրում է դպրոցի բակում/հարակից տարածքում կամ զբոսայգում գտնել և դիտարկել կենդանիների բնակատեղեր (օրինակ՝ թռչունների կամ մրջյունների բույն), ուսուժասփրել (անվտանգության կանոնների պահպանմամբ) նրանց առանձնահատկությունները:
- Աշակերտներին հանձնարարում է օգտագործել տարբեր նյութեր (օրինակ՝ ճյուղեր, մանրաքարեր, հարդ, հող, կավ և այլն) իրենց հայտնի որևէ կենդանու բնակատեղի կառուցման համար և աշխատանքը ներկայացնել համադասարանցիներին:
- Աշակերտներին օգնում է դիտարկել բույսերի աճի-զարգացման գործընթացը տարբեր պայմաններում (լույսի առկայության դեպքում/առանց լույսի, կանոնավոր ոռոգման պայմաններում/առանց ոռոգման): Աշակերտներին հանձնարարում է հաշվառել տվյալները և ներկայացնել ցանկալի ձևով:
- Աշակերտներին ներգրավում է դպրոցական միջավայրի բարելավման համար պլանավորված ակտիվությունների մեջ:
- Աշակերտներին առաջարկում է ստեղծել իրենց ուզած կենդանու մոդելը, ներկայացնել այն և խոսել, թե ինչ է անհրաժեշտ այս կենդանուն ապրելու համար:
- Աշակերտներին առաջարկում է ստեղծել սեփական կենդանաբանական այգու մոդել: Խնդրում է ընտրել հինգ կենդանի, որոնց այս կենդանաբանական այգում կտեղավորեն: Նկարեն, ծեփակերտեն կամ կորեն-հանեն կենդանիների պատկերներ տարբեր աղբյուրներից, տեղակայեն համապատասխան ազատավանդակներում: Մանրակերտը ներկայացնեն դասարանական ցուցահանդեսին: Հիմնավորեն, թե ինչ սկզբունքով են ընտրել այս կամ այն կենդանու համար կոնկրետ միջավայրը:
- Բուժաշխատողի է հրավիրում՝ աշակերտների հետ առողջ կենսակերպի (հիգիենայի կանոնների պահպանում, առողջ սնունդ, ֆիզիկական մարզանք) նշանակության մասին խոսելու համար:

Ուղղություն. Մարմիններ և երևույթներ

Բն. III.4. Աշակերտը պետք է կարողանա բնութագրել մագնիսի գործողությունը:

Արդյունք ակներև է, եթե աշակերտը.

- Պարզ փորձեր է անցկացնում մագնիսի միջոցով և տարբեր նյութերից պատրաստված մարմինները խմբավորում՝ ըստ մագնիսի հետ փոխազդեցության:
- Պարզ փորձ է անցկացնում երկու մագնիսի կիրառմամբ և եզրակացություն անում մագնիսների բնեռների փոխազդեցության մասին:
- Թվարկում է մագնիսի կիրառման օրինակներ ամենօրյա կյանքում. մագնիսային գրատախտակ, պայուսակի փական, սառնարանի վրա ամրացնելու պատկերներ և այլն:
- Մագնիսն օգտագործում է պարզ խնդրի լուծման համար (օրինակ՝ երկաթից կամ այլ նյութից պատրաստած մարմինների կույտից երկաթյա մարմինների առանձնացման համար կամ/և սեղանի խաղ ստեղծելու համար):

Բովանդակություն

Մագնիսն ունի որոշ նյութերից պատրաստված իրերը ձգելու ունակություն: Մագնիսն ունի երկու տարբեր բևեռ. միանման բևեռները վանում են իրար, իսկ հակադիր բևեռները ձգում են իրար: Մագնիսների կիրառմամբ կարելի է որոշ նյութերից (օրինակ՝ երկաթ) պատրաստած մարմիններն առանձնացնել այլ նյութերից պատրաստած մարմիններից: Ամենօրյա կյանքում մագնիսն ունի լայն կիրառում:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Աշակերտներին բաժանում է մագնիս և տարբեր նյութերից պատրաստած մարմինների հավաքածու: Նրանց խնդրում է մոտեցնել մագնիսը տարբեր մարմինների և դիտարկել, թե ինչ տեղի կունենա: Դիտարկման հիման վրա անել համապատասխան եզրակացություն:
- Աշակերտներին բաժանում է երկձող կամ պայտաձև մագնիս և խնդրում դիտարկել, թե ինչպես են դրանք փոխազդում: Արդյունքների քննարկումից հետո աշակերտները դիտարկում են մագնիսից և երկաթից պատրաստված մարմնի փոխազդեցությունը և դատողություն անում այս երկու փորձերի ժամանակ դրսևորված նմանությունների/տարբերությունների մասին:
- Աշակերտների յուրաքանչյուր խմբին բաժանում է երեք ձողանոց կամ պայտաձև մագնիս և խնդրում դիտարկել, թե ինչպես են դրանք փոխազդում: Արդյունքների քննարկումից հետո աշակերտները դիտարկում են մագնիսի և մետաղից պատրաստած մարմնի փոխազդեցությունը և դատողություն անում փորձի ժամանակ բացահայտած նմանությունների/տարբերությունների մասին:
- Աշակերտների յուրաքանչյուր խմբի բաժանում է երեք ձողանոց կամ պայտաձև մագնիս, որոնցից մեկի վրա նշված են բևեռները, իսկ երկուսի վրա՝ ոչ: Աշակերտներին խնդրում է որոշել չնշված մագնիսների բևեռները, գունավորել կամ դրանց վրա փակցնել համապատասխան գույնի սոսնձաթուղթ:
- Աշակերտների խմբերին բաժանում է տարբեր նյութերից (օրինակ՝ պլաստմասսա, երկաթ, պլաստիլին, փայտ) պատրաստած (ցանկալի է, միանման գույնի և ձևի) փոքր չափի մարմինների հավաքածու և խնդրում է առանձնացնել երկաթյա մարմինները դեռ առանց մագնիսի օգնության, իսկ այնուհետև արդեն մագնիսի օգնությամբ ստուգել ընտրության ճշտությունը:

Բն.III.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Նկարագրում է և համեմատում տարբեր մարմինները՝ ըստ չափի, ձևի և բաղադրիչ նյութերի:
- Անվանում է իրեն լավ ծանոթ նյութերի (օրինակ՝ փայտի, ապակու, պլաստմասսայի) ամենօրյա կյանքում կիրառման օրինակներ:
- Դատողություն է անում, թե ինչու են իր կողմից կիրառվող որոշ առարկաներ (օրինակ՝ աթոռ, հագուստ, խաղալիքներ) մի քանի տարբեր նյութերից պատրաստվում:
- Ընտրում է նյութ՝ տրված նշանակման մարմին (կամ դրա մոդելը) պատրաստելու համար, դատողություն է անում մարմնի նշանակման հետ այս նյութերի հատկանիշների (օրինակ՝ ողորկություն, թափանցիկություն, առաձգականություն, ջրի մակերևույթին լողալու ունակություն, ջրանցիկություն) համապատասխանության մասին:
- Տեղեկություն է ձեռք բերում և դատողություն անում, թե ինչպես կարելի է կենցաղային թափոնների երկրորդային կիրառում իրականացնել (օրինակ՝ պլաստմասսայե շշերից ծաղկամաններ պատրաստել, մետաղյա թափոնները՝ որպես ջարդոն հանձնել, թուղթը՝ մակուլատուրա):

Բովանդակություն

Մարդու կողմից ստեղծված մարմնի ձևը, չափը և դրա պատրաստման համար օգտագործած նյութի տեսակը կախված է այս մարմնի նշանակումից: Որոշ մարմիններ բաղկացած են միայն մեկ տեսակի նյութից, իսկ որոշ մարմիններ՝ տարբեր նյութերից: Կենցաղային թափոնները և

դրանց վերամշակումը նշանակալի խնդիր է: Ժամանակակից տեխնոլոգիաները որոշ նյութերի (թուղթ, մետաղներ, պլաստմասսա, ապակի) կրկնակի օգտագործման հնարավորություն են տալիս, ուստի ցանկալի է այս տիպի թափոնները հավաքել/տեսակավորել:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Աշակերտներին բաժանում է տարբեր նյութերից (օրինակ՝ թուղթ, երկաթ, օրգանական ապակի, պլաստիլին) պատրաստած մարմիններ և հանձնարարում հետազոտել այս նյութերի հատկանիշները (ողորկություն, թափանցիկություն, առաձգականություն, ջրանցիկություն, ջրի մեջ սուզվում է, թե՞ ոչ), անվանել, թե ուրիշ ինչ/որ առարկաների պատրաստման համար կարելի է օգտագործել այս նյութերը:
- Աշակերտներին բաժանում է (ցույց է տալիս) երկու կամ ավել նյութերից պատրաստված մարմիններ և խնդրում պարզել, թե այս նյութերի որ հատկություններն են պայմանավորում դրանց կիրառում տվյալ մարմնի պատրաստման համար:
- Աշակերտներին խնդրում է ընտրել իրենց ծանոթ որևէ առարկա և դատողություն անել, թե ինչ տարբերվող նյութերով է հնարավոր պատրաստել նման նշանակման առարկա, հիմնավորել իրենց ընտրությունը և համեմատել օրիգինալի կամ սկզբից ընտրվածի հետ, քննարկել փոփոխությունների դրական և բացասական կողմերը:
- Աշակերտներին խնդրում է տեղեկություններ հայթայթել որոշ կենցաղային թափոնների վերամշակման մասին (մակուլատուրա, մետաղաջարդոն, ապակյա կամ պլաստմասսայե սպասք): Բացի այդ, մտածել, թե ինչպես կարող են առանձնացվել կամ հավաքվել նման տեսակի թափոնները (օրինակ՝ երկաթը ձգվում է մագնիսով, պլաստմասսան ջրի երեսին լող է տալիս):

Ուղղություն. Երկիրը և շրջակա աշխարհը

Բն. II.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:
- Նկարագրում է բնության մեջ կամ/և դիրկալիկ նյութի վրա արտացոլված ջրի և ցամաքի օբյեկտներ՝ ըստ նրանց բաղադրիչ մասերի (օրինակ՝ լեռ – լեռան գագաթ, լանջ և ստորոտ, գետ – ափ, հատակ):
- Դիտարկում է, նկարագրում և համեմատում բնական միջավայրում գտած քարերը: Խմբավորում է դրանք՝ ըստ տարբեր հատկանիշների (օրինակ՝ գույնի, չափի, ձևի, ողորկության):
- Ուսուսմասիրում է տարբեր տեղերից վերցված հողի նմուշներ մանրադիտակով և շոշափելով, դրանք համեմատում է ըստ տարբեր հատկանիշների (օրինակ՝ գույն, մասնիկների չափ, փխրունություն, խոնավության պարունակություն), համադասարանցիներին ծանոթացնում է դիտարկման արդյունքները:
- Պարզ փորձ է անցկացնում տարբեր բնական միջավայրերում (օրինակ՝ այգի, անտառ, գետի կամ ծովի ափ, մարգագետին) վերցված հողի նմուշների ջրաթափանցության մասին:

Բովանդակություն

Երկրի մասերն են ջուրը և ցամաքը: Դրանք ներկայացված են ջրային օբյեկտների (օրինակ՝ աղբյուր, ամվակ, գետ, լիճ, ծով) և ցամաքի օբյեկտների (օրինակ՝ լեռ, հարթավայր) տեսքով: Ջրային և ցամաքային օբյեկտները ստեղծում են բնական միջավայր: Դրանք բաղկացած են առանձին մասերից: Օրինակ՝ լեռն ունի գագաթ, լանջ և ստորոտ, իսկ գետերը՝ ափ, հուն: Երկրի մակերևույթի վրա հանդիպում ենք տարբեր տեսակի բնահողի, քարերի տեսակների: Բնության մեջ առկա ջուրը կարող է լինել քաղցրահամ և աղի/աղոտ:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Աշակերտներին կտանի տեղի միջավայր և կլինդրի նկարագրել աշխարհագրական օբյեկտները համապատասխան տերմինների կիրառմամբ (օրինակ՝ արագահոս գետ, բարձր լեռ, ավազոտ ափ, աջ/ձախ ափ):
- Աշակերտներին առաջարկում է նկարի կամ լուսանկարի վրա որոշել և բնութագրել տարբեր օբյեկտներ (լեռ, գետ, լիճ և այլն): Խնդրում է դրանք խմբավորել՝ որպես ջրային և ցամաքային օբյեկտներ:
- Աշակերտներին խնդրում է նկարել կամ ստեղծել աշխարհագրական օբյեկտների մոդելներ (օրինակ՝ պլաստիլինից ստեղծել լեռան մոդել):
- Աշակերտներին խաղ է առաջարկում. աշակերտն ընտրում է որևէ օբյեկտ, բնութագրում այն՝ ըստ երեք հատկանիշների, իսկ համադասարանցիները պետք է գուշակեն և անվանեն այս օբյեկտը:

Բն. II.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:
- Տեղեկություն է ձեռք բերում, թե ինչպես են մարդիկ հայթայթում տեղի միջավայրում առկա բնական ռեսուրսները (օրինակ՝ խմելու ջուր, փայտանյութ, անտառանյութ, շինարարական քարեր):
- Ենթադրություն է անում, թե ինչ կարող է պատահել բնական ռեսուրսների սպառման դեպքում:
- Համադասարանցիների հետ կիսվում է սեփական փորձով, թե ինչպես է պահպանում կամ/և տնտեսում բնական ռեսուրսները:
- Դատողություն է անում, թե ինչի կարող է հանգեցնել գետի/անտառի աղտոտումը կենցաղային և այլ տիպի թափոններով:

Բովանդակություն

Խմելու ջուրը, անտառը, շինարարական քարերը մարդու և կենդանի օրգանիզմների համար կարևոր բնական ռեսուրսներ են: Որոշ բնական ռեսուրսներ (օրինակ՝ օգտակար հանածոները, անտառը) երկրի վրա սպառվող են, ուստի անհրաժեշտ է դրանք տնտեսել և խնայել:

Երաշխավորվող ակտիվություններ

Ուսուցիչը.

- Աշակերտներին խնդրում է բերել ամենօրյա կյանքում ջրի օգտագործման օրինակներ:
- Աշակերտներին խնդրում է դատողություն անել, թե ինչպես կարող են տնտեսել ռեսուրսները դպրոցում և տանը (օրինակ՝ անջատել լույսը, երբ դրա կարիքը չկա):
- Աշակերտներին խնդրում է դատողություն անել, թե ինչ կարող է հետևել որոշ բնական ռեսուրսների պաշարի սպառմանը (անտառափայտի հատման հետևանքով կենդանիները կկորցնեն ապաստարանը, շրջակա միջավայրը կոգեղանա, օդն այլևս մաքուր չի լինի): Խնդրում է կարծիք արտահայտել այդ հետևանքներից խուսափելու ուղիների մասին (օրինակ՝ անտառի շարունակական թարմացում, ծառերի տնկում):
- Աշակերտներին խնդրում է դատողություն անել բույսերի և կենդանիների համար ջրի կարևորության մասին (օրինակ, ջուրը՝ որպես կենսական պահանջմունք, փոխադրման կամ սերմի տարածման միջոց և այլն):
- Աշակերտներին ցուցադրում է տեսանյութ, որտեղ արտացոլված է, թե ինչ ուղի կանցնի ջուրը ջրամբարից մինչև օվկիանոս, նկարել է տալիս պարզ սխեմա:
- Աշակերտներին կտանի աղտոտված բնական միջավայր կամ ցույց կտա աղտոտված միջավայր արտացոլող նյութեր (լուսանկար, տեսանյութ), կլինդրի դատողություն անել աղտոտման հնարավոր հետևանքների մասին:

6. ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻՆ

| Դասերի և թեմաների անվանումը | Ուսումնական ժամանակի տեղադրումները | ՉԱՓՈՂՈՇՉԻ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ | | ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՈՐ ՈՐՈՆՈՒՄ | ԿԵՆՂԱՆԻ ԱՇԽԱՐՀ | | ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒԹՅՈՒՆԵՐ | | ԵՐԿՐԱԳՈՒՆԴԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ | |
|------------------------------------|------------------------------------|---|---|----------------------------------|----------------|---|----------------------------|---|--------------------------------|---|
| | | Ա | Բ | | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը |
| 1. Մարմինը և նրա մասերը | | | | | | | | | | |
| 2. Խնամենք մարմնի մասերը | | | | | | | | | | |
| 3. Եթե ուզում ես առողջ լինել | | | | | | | | | | |
| 4. Մենք մեծանում և փոխվում ենք | | | | | | | | | | |
| 5. Առողջ կենսակերպ և օրվա ռեժիմ | | | | | | | | | | |
| Թեստ 1 | | | | | | | | | | |
| 6. Կենդանին և անկենդանը | | | | | | | | | | |
| 7. Կենդանիներն էլ են մեծանում | | | | | | | | | | |
| 8. Հնտանի կենդանիներ. Կաթնասուններ | | | | | | | | | | |
| 9. Անտառի գազանները | | | | | | | | | | |
| 10 Անտառի տարատեսակները | | | | | | | | | | |
| 11. Թռչուններ | | | | | | | | | | |
| 12. Սողաքող կենդանիներ | | | | | | | | | | |
| Թեստ 2 | | | | | | | | | | |

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 13. Բույսերը և նրանց մասերը | | | | | | | |
| 14 (1) Ինչ է մեզ պատմում արևածաղկի սերմը | | | | | | | |
| 14 (2) Ծառերը դպրոցի բակում | | | | | | | |
| 15(1) Իմ ծառը | | | | | | | |
| 15 (2) Անտառը պահիր գավակներից համար | | | | | | | |
| Գործն. աշխատանք. Ինչի՞ համար է անհրաժեշտ սերմը բույսին: | | | | | | | |
| Գործն. աշխատանք. Օգտակար սնունդ | | | | | | | |
| 16 (1) Միրգ և բանջարեղեն | | | | | | | |
| 16 (2) Հատիկային բույսեր | | | | | | | |
| Երաշխավորված ակտիվություն. Սենյակային բույսեր | | | | | | | |
| Թեևս 3 | | | | | | | |
| Երաշխավորված ակտիվություն. Տոնենք Նոր տարին | | | | | | | |
| Գործն. աշխատանք. Եղանակը և մարդը | | | | | | | |
| 17. Ամիսներ և սեզոններ | | | | | | | |
| 18. Եղանակը և տարվա եղանակները (սեզոնները) | | | | | | | |
| 19. Տարվա եղանակները. Տաքություն և ցուրտ | | | | | | | |
| 20. Գործնական աշխատանք. Ինչպե՞ս է առաջանում անձրևը | | | | | | | |
| 21(1) Զուր | | | | | | | |
| 21 (2) Զուրը բնության մեջ | | | | | | | |
| Քննարկում. Խնայենք խմելու ջուրը | | | | | | | |
| 22. Մեր շուրջը ոյ է | | | | | | | |
| 23. Ինչպես է շարժվում օդը | | | | | | | |

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 24. Բնահողը և օգտակար հանածոները | | | | | | | |
| 25-26. Մացնիս | | | | | | | |
| 27. Հրաբուխ | | | | | | | |
| Թեստ 5 | | | | | | | |
| 28. Որտեղ են ապրում մարդիկ | | | | | | | |
| 29. Ինչ է մեզանից թաքցնում հողը | | | | | | | |
| Հետազոտություն. Մեր դպրոցի հարակից տարածքը | | | | | | | |
| 30. Ինչպես է մարդը փոխում շրջակա միջավայրը | | | | | | | |
| Գործն. աշխատանք. Շրջակա միջավայրը անցյալում և ներկայում | | | | | | | |
| Դիտարկում. Շրջակա միջավայրի աղտոտում | | | | | | | |
| 31-32 Աղբը մեր շրջակա միջավայրում | | | | | | | |
| 33. Պահպանենք շրջակա միջավայրը | | | | | | | |
| 34. Անվտանգության պահակետում | | | | | | | |
| 35. Մենք և դեղերը | | | | | | | |
| 36. Ինչպես պահպանենք անվտանգությունը՝ կապված սննդի հետ | | | | | | | |
| Թեստ 6 | | | | | | | |
| 37. Անվտանգ հանգիստ բնության գրկում | | | | | | | |
| 38. Խնամքով վերաբերվենք բնությանը | | | | | | | |
| 39. Ինչպես վարվենք | | | | | | | |
| 40. Վրաստանն իմ հայրենիքն է | | | | | | | |

7. ԴԱՍԱԳՐՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Նախքան ուսումնական գործընթացի մեկնարկն, ուսուցիչն ամբողջությամբ պետք է ծանոթանա Ուսուցչի գրքում տրված բնագիտության ուսուցման հայեցակարգին ու յուրահատկություններին:

Ուսուցչի գրքում դասերի համարակալումն ու նկարագրությունը ճշտորեն համապատասխանում են Աշակերտի դասագրքում տրված հարցերի (թեմաների) հաջորդականությանը, ինչն ուսուցչի համար հեշտացնում է դասերի պլանավորումը: Դասի ընթացքի (ակտիվությունների) նկարագրության մեջ առանձնացված 3-6 հիմնական ակտիվությունները վերնագրված են և նշված ժամանակացույցով: Նշված բովանդակները կողմնորոշվելու համար են և պարտադիր չեն: Դասի ժամանակը տնտեսելու դեպքում, ուսուցիչը կարող է կիրառել նաև առաջարկվող լրացուցիչ ուսումնական գործունեությունները (այսուհետ՝ ակտիվություններ): Թեպետ, բոլոր դեպքերում ցանկալի է, որ ուսուցիչը չշտապի և աշակերտներին հանգիստ աշխատելու հնարավորություն տա:

Դասարանում աշակերտների քանակի ու նրանց հնարավորությունների նախատեսմամբ՝ ուսուցիչը կարող է առաջարկված հիմնական ակտիվություններից ընտրել այն ակտիվությունները, որոնք, ըստ նրա, ամենալավ արդյունքին կարող են հասցնել:

Աշակերտներին տնային հանձնարարություններ չեն տրվում: Ուսուցիչը պարապմունքն այնպես պետք է պլանավորի, որ ուսանում-ուսուցման գործընթացը տեղավորվի դասաժամի մեջ: Բոլոր դասերը պետք է ավարտվեն կարճ եզրակացություններով և ամփոփումով, պետք է կատարվի այսպես կոչված ռեֆլեքսիա (կշռադատում): Ամփոփելիս, ցանկալի է, որ ընդգծվեն կապերը նախորդ և հաջորդ դասերի հետ:

Աշակերտի տեսքում կատարված աշխատանքների մի մասը ցանկալի է փակցնել պատերին կամ ամրացնել պատի երկայնքով կապած թելի վրա: Թող այդպես մնա ամբողջ տարվա ընթացքում: Երեխաներին դուր է գալիս ցուցադրել իրենց աշխատանքները, անհրաժեշտության դեպքում դրանց կիրառումն է՝ լավելի հեշտ կլինի:

Այսպիսով, Ուսուցչի գրքով ուսուցիչներին առաջարկում ենք բնագիտության մեր դասագրքով (Բնություն 2) դասավանդման մեթոդիկան, սակայն դրանով չենք սահմանափակում ուսուցիչներին: Ըստ իրենց որակավորման և պայմանների, նրանք կարող են ինքնուրույն ընտրել լրացուցիչ ուսուցման այն եղանակներն ու ակտիվությունները, որոնք այս դեպքում ավելի արդյունավետ են համարում և, ըստ նրանց, ավելի լավ կնպաստեն յուրաքանչյուր պարապմունքի նպատակի իրականացմանն ու չափորոշյով նախատեսված արդյունքներին հասնելուն:

8

• ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկն աշակերտների այսպես կոչված կենսական հմտությունների ու կարողությունների զարգացումն է: Փորձել ենք դասագրքի բովանդակությունն ու կառուցվածքն այնպես կազմել, որ աշակերտներին օգնենք քննադատական մտածողության կարողության և բնագիտություն առարկային հատուկ հմտությունների ու կարողությունների զարգացման հարցում: Որպեսզի ուսուցիչների համար պարզ լինի, թե ինչ նկատի ունենք այս հմտությունների ու կարողությունների զարգացման մասին խոսելիս, դրանցից յուրաքանչյուրը հակի՛ժ կրնա հասկանալ:

Քննադատական մտածողության հմտություններ ու կարողություններ

Քննադատական մտածողության կարողություն ասելով հասկանում ենք պատճառա-հետևանքային հասկացություններով մտածողություն, որը միտված է որոշում կայացնելուն՝ ինչին հավատա կամ ինչ միջոց ձեռնարկի մարդը:

«Քննադատական մտածողությունը ներառում է գիտակցման բարդ գործընթաց, որն սկսվում է տեղեկության ընկալմամբ և ավարտվում որոշման կայացմամբ: Քննադատական մտածողությունը նկատի ունի հասկացությունների գիտակցում և դրանց աներևույթ իմաստի հետազոտում, դրանց հանդեպ հոռետեսական վերաբերմունք՝ քաղաքավարության շրջանակներում, դրանց համադրում տարբերվող տեսակետի հետ, դրանց ճշգրտությունը փաստելու համար համոզիչ և վստահելի համակարգերի ներկայացում և այս ամենի հիման վրա՝ որոշակի տեսակետի մշակում... Քննադատական մտածողությունը բարդ գործընթաց է: Հաճախ մտածում են, որ այս գործընթացին պետք է մասնակցեն միայն բարձր դասարանների աշակերտները: Սակայն դա ամենևին էլ այդպես չէ: Փոքրերն էլ, իրենց զարգացածության մակարդակին համապատասխան, հոյակապ կարող են ներգրավվել այս բարդ գործընթացին: Նրանք հաճույքով են մասնակցում բարդ խնդիրների լուծմանը և կարևոր որոշումներ են կայացնում» (Ձ. Սթիլ, Ք. Մերեդիթ, Չ. Թեմփլ, «Տեղեկությունների ուրվանկար քննադատական մտածողության համար», Դասագիրք I):

Դասագրքում տրված վարժություններն ու

հանձնարարությունները աշակերտների առջև հիմնախնդիրներ են դնում, առաջարկում են դրանց մասին դատողություն ծավալել, որոնք որոշման կայացման ուղիներ: Ուսուցիչն աշակերտներին պետք է խրախուսի, որ նրանք քննադատաբար և ստեղծագործաբար մտածեն, փորձարկեն ստացած տեղեկատվական գիտելիքը, վերլուծեն փաստերը և կշռադատեն իրենց սեփական պատկերացումներն ու կռահումները:

Քննադատական մտածողության հմտություն-կարողություններից հատկանշական են ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրությունը և գնահատումը:

Բնագիտությանը բնորոշ յուրահատուկ հմտություններ ու կարողություններ

Այս հմտությունների ու կարողությունների զարգացումը նպաստում է գիտական հետազոտության հիմքերի ստեղծմանը և գիտելիքի՝ գիտակցված տիրապետմանը, ինչպես նաև՝ աշակերտների առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանն ու ստացված գիտելիքի՝ նոր իրավիճակներում կիրառմանը:

Դիտարկում

Դիտարկման կարողությունը բնագիտության տիրապետման անհրաժեշտ հիմնարար կարողություն է, որի հիմքում ընկած են բոլոր մնացած յուրահատուկ հմտություններն ու կարողությունները: Մարդը հենց դիտարկման շնորհիվ է հավաքագրում շրջապատում գոյություն ունեցող իրերի ու երևույթների մասին հիմնական տեղեկությունները: Դիտարկումն իր մեջ ներառում է ուշադրությունը, մտածողությունը, ունկնդրումը, շոշափելը, համեմատությունը, գործունեությունը, ինչպես նաև հնարավորություն, որ մարդը նկարագրի, թե ինչ է դիտարկում (ուսումնասիրում):

Դասդասում

Դասդասման ունակությունը ևս կարևորագույն ունակություններից է, և հենց տարրական դասարաններից է նպատակահարմար նրա զարգացումը: Աշակերտներն իրենք ու երևույթները խմբավորում

են՝ ըստ հիմնական բնութագրիչների. սկզբում՝ ըստ որևէ մեկ հեշտ դիտարկելի նշանի, ապա՝ ըստ մի քանի էական նշանի:

Հաղորդակցում

Առանց այս ունակության անհնար է դիտարկման կամ գործունեության (փորձի) արդյունքներով կիսվել ուրիշների հետ: Այդ պատճառով այն հավասարապես կարևոր է ինչպես հետազոտման ժամանակ, այնպես էլ ամենօրյա կյանքում: Հաղորդակցման ժամանակ աշակերտը նկարագրում է, պարզաբանում, ցույց տալիս, գրում է, բանավոր փոխանցում, հասկանալի խոսում:

Չափում

Առանց չափման ունակության անհնար է հետազոտում-որոնումը: Չափման ժամանակ աշակերտը հավաքագրում է համեմատական և քանակական բնութագրիչները: Տարրական դասարաններում աշակերտների անհրաժեշտ է երկարության, կշռի, ջերմաստիճանի և ժամանակի չափման միավորների իմացություն և դրանց կիրառում:

Համեմատում-հակադրում

Համեմատման և հակադրման ունակությունը առարկաների և երևույթների միջև նման և տարբերվող բնութագրիչների հայտնաբերումն ու սահմանումն է: Այս ունակության զարգացումը նպաստում է գիտելիքի համակարգմանն ու վերլուծական մտածողությանը:

Եզրահանգում

Եզրահանգում անելու ունակությունը հիմնված է արդեն քննարկված ունակությունների զարգացման վրա: Եզրահանգումը կատարվում է ձեռք բերված տվյալների, ուսումնասիրության կամ փորձի արդյունքների վերլուծումից և տեղեկությունների համադրումից հետո:

Կանխատեսում

Կանխատեսման համար աշակերտը կիրառում է իր կողմից արդեն ուսումնասիրված և մշակած տեղեկությունը, որպեսզի ենթադրի, թե ինչ կարող է ապագայում այս ուղղությամբ տեղի ունենալ, կամ էլ ձեռք բերած գիտելիքի և փորձի հիման վրա աշակերտը պետք է կանխատեսի սպասվող հետևանքները:

ԴԱՍ 1

Թեմա.

Մարդու մարմինը և նրա մասերը

Դասի վերնագիրը.

Մարմինը և նրա մասերը

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան դիտարկել ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների օգտագործմամբ: Տրված հարցին պատասխանել՝ հիմնվելով սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Որոշել և անվանել մարդու մարմնի որոշ մասեր:

Մարդու հինգ զգայություններն ու դրանց նշանակությունը գիտակցել:

Գիտակցել անձնական հիգիենայի կանոնների պահպանման անհրաժեշտությունը:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Անհրաժեշտ նյութ.

Աշակերտի տետր, գրիչ:

1. ՈՒՍՈՒՑՉԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԵՎ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱԳՐՔԻՆ (2-5 րոպե)

Բնագիտության առաջին դասը ուսուցիչն սկսում է զրույցով:

Ուսուցիչը ցույց է տալիս դասագիրքը և ուշադրություն է հրավիրում նրա կազմի վրա. խոսում է դասագրքի անվանման և բովանդակության, Աշակերտի գրքի և տետրի նշանակման մասին, զգուշացնում է, որ Աշակերտի տետրում եղած բազմապիսի աշխատանքների կատարման համար դասերին պետք է ունենան գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, հասարակ (սև) մատիտ, սոսինձ, մկրատ և գրիչ:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-4 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բացել է տալիս դասագրքի առաջին դասը, և նրանցից մեկը կարդում է դասի վերնագիրը՝ «Ես և իմ մարմինը»: Նա բացատրում է, որ այս դասի նպատակն այն է, որ երեխաները նկարագրեն իրենք իրենց, ավելի լավ ճանաչեն միմյանց: Այս նպատակով որոշակի աշխատանք պետք է կատարվի:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-6 րոպե)

Ի՛ «Մա ես եմ» ակտիվությունը կատարվում է Աշակերտի տետրում, աշակերտներն այն դասարանում կատարում են ինքնուրույն, ցանկալի է, որ տանը յուրաքանչյուրը շրջանակում փակցնի իր լուսանկարը (կամ նշված տեղում նկարի):

Շրջանակի աջ կողմում աշակերտները պետք է գրեն իրենց տվյալները (անուն, ազգանուն, տարիք, տղա է, թե աղջիկ): Հետո ուսուցիչը հարց է տալիս.

– Ձեզանից ո՞վ գիտի իր մազերի գույնը: Խնդրում եմ, ձեռք բարձրացրեք:

Կպարզվի, որ շատերը չգիտեն: Ուսուցիչը հաջորդ առաջադրանքն է հանձնարարում երեխաներին. աշակերտներից յուրաքանչյուրն ուշադիր պետք է նայի իր կողքին նստած երեխայի մազերին և անվանի գույնը՝ սև, շագանակագույն, խարտյաշ, ոսկեգույն և այլն: Հետո երեխաները տեղեկություններ են փոխանակում, ասում են մազերի գույնը և սրանից հետո նրանցից յուրաքանչյուրն ինքնուրույն աշխատում է իր աշխատանքային տետրում՝ համապատասխան գույնով ներկելով դատարկ վանդակը:

Նման կերպով է որոշվում աչքերի գույնը և նույնպես գրառվում է տետրում:

Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցիչը հարցով դիմում է դասարանին.

– Թող ձեռք բարձրացնեն բոլոր նրանք, ովքեր սև մազեր ունեն... Շագանակագույն... Խարտյաշ...

Շիկահեր (ուրիշ ի՞նչ գույնի մազերով երեխաներ կան):

Երեխաները ձեռք են բարձրացնում, և ուսուցիչը աչք անցկացնելով ստուգում է նրանց պատասխանները:

Նման ձևով է կատարվում աչքերի գույնի մասին հարցումը: Ճիշտ է, աչքերի գույնը այսպես միանգամից չի որոշվում, բայց կարևորը դա չէ: Լիովին բավական է ուսուցչին մոտ նստող մեկ-երկու աշակերտների աչքերի գույնը ստուգելը՝ աչքերի մեջ նայելով:

4. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻՆ (8-10 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ մազերը և աչքերը մարդու մարմնի մասեր են: Հիմա պետք է ծանոթանան մարմնի որոշ այլ մասերի: Առաջին դասարանում սովորած նյութից հիշեն ու անվանեն իրենց դասագրքի առաջին դասում սլաքով նշված մարմնի մասերը, իսկ հետո ուսուցչի հանձնարարությամբ բոլոր աշակերտները ոտքի են կանգնում և ձեռքը դնում իրենց մարմնի այն մասի վրա, որն անվանում է ուսուցիչը: Սրանից հետո աշակերտները նստում են և շարունակում աշխատանքը՝ Աշակերտի տետրում, որտեղ ինքնուրույն պետք է կատարեն 4-րդ էջում տրված վարժությունը՝ կապված մարմնի մասերի հետ: Ուսուցիչը միայն ընդհանուր բացատրություն է տալիս և կարող է որպես նմուշ գրատախտակին մեկ կամ երկու բառ գրել:

5. ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐՀԻՇՈՒՄ (4-6 րոպե)

Ուսուցիչը երեխաներին խնդրում է փակել աչքերը: Ուսուցիչը գրչով թխկթխկացնում է իր սեղանին և հարցնում է.

– Կարո՞ղ եք գուշակել, ինչն է թխկթխկում:

– Ինչպե՞ս հասկացաք, որ գրչով եմ թխկթխկացնում:

– Մարմնի ո՞ր մասով լսեցիք:

Առաջին դասարանից դուր արդեն սովորել էք զգայությունները, եկեք այժմ վերհիշենք, թե մարմնի որ մասերով ենք մենք զգում:

Հավանաբար երեխաները մոռացած կլինեն և բոլոր հինգ զգայարանները ճշտությամբ չեն կարողանա անվանել: Ուսուցիչը չի ճշտում: Նա զգայությունները վերհիշելու համար աշակերտներին հանձնարարում է դասագրքում տրված վարժությունը, ինչպես նաև նրանք պետք է դասագրքում կարդան նախադասությունները, որոնք տրված են «Հիշի՛ր» խորագրում, և կապեն նկարում տրված զգայության օրգանների հետ:

6. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (3-6 րոպե)

Նման առաջադրանք աշակերտներին առաջին անգամ է հանձնարարվում, ուստի այն կատարելու համար հնարավոր է ուսուցչին անհրաժեշտ լինի համառոտ բացատրել այն:

7. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ամփոփման կարգով ուսուցիչը բացատրում է, որ այս դասի ընթացքում նրանք ծանոթացան մարդու մարմնի մի քանի և ոչ թե բոլոր մասերին, որոշեցին իրենց մազերի և աչքերի գույնը, հայտնաբերեցին, որ տարբեր մարդկանց մարմնի մասերը (մազեր, աչքեր, ձեռքեր) իրարից տարբերվում են գույնով, մեծությամբ և այլ նշաններով:

Երաշխավորվող տեսանյութ. <https://www.youtube.com/watch?v=3jLLYdzPNfk>

Ուսուցիչը գրատախտակին նկարում է ուղղանկյունի՝ «նոր բառերի տուփ», և աշակերտների օգնությամբ առանձնացնում է այն նոր բառերը, որոնք նրանք այս դասին են սովորել, «տուփի մեջ» գրում է 3-4 բառ և բացատրում է երեխաներին, որ հաջորդ դասին նրանք ինքնուրույն պետք է լրացնեն Աշակերտի տետրում տեղ գտած նոր բառերի համար հատկացված տուփը: Աշակերտները նաև չպիտի մոռանան տանը շրջանակի մեջ իրենց լուսանկարը փակցնել կամ ինքնադիմանկար նկարել:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարժություն լսողական ընկալման զարգացման համար. «Գուշակենք ականջներով»

Ուսուցիչը աշակերտներին շրջվել է տալիս թիկունքով դեպի իրեն և մատիտը հաջորդաբար թխկթխկացնում է տարբեր առարկաների (նստարանին, լուսամուտի ապակուն, մետաղե առարկաների, փայտյա իրերի...): Այն աշակերտները, որոնք կգուշակեն, ձեռք պետք է բարձրացնեն և պատասխանեն:

Վարժություն տեսողական ընկալման զարգացման համար. «Ճանաչենք փայտիկով»

Նստարանի վրա դրված են մի քանի տարբեր առարկաներ (պայուսակ, սկահակ, գիրք...): Պատասխանող աշակերտի աչքերն ուսուցիչը փակում է, առարկաների տեղերը փոխում է և աշակերտին տանում նստարանի մոտ: Փայտիկով կամ մատիտով դիպչելով՝ աշակերտը պետք է ճանաչի առարկաները (քանի որ չեն հասցնի բոլոր աշակերտներին ներգրավել, ուսուցիչը երեխաներին առաջարկում է վարժությունը տանը ինքնուրույն շարունակել):

ԴԱՍ 2

Թեմա.

Մարդու մարմինը և նրա մասերը

Դասի վերնագիրը.

Խնամենք մարմնի մասերը

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան որոշել աչքի մասերը և անվանել դրանք:

Տեսողության հետ կապված հիգիենայի պահանջները պահպանել:

Գիտակցել մարմնի խնամքի ու մաքրության պահպանության անհրաժեշտությունը:

Խոսել հիգիենայի որոշ կանոնների և դրանք պահպանելու անհրաժեշտության շուրջ:

Մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցադրել հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Դիտարկել ուսումնասիրման օբյեկտը:

Հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքել և իր մոտ նշել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն. II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Անհրաժեշտ նյութ.

հասարակ մատիտ, քանոն:

1. ԱԶՔԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՍԵՐԸ (3-4 թույլե)

Ուսուցիչը դիմում է երեխաներին.

– Մինչև մեր դասի վերնագրում տրված հարցին պատասխանելը, եկեք ծանոթանանք այժի որոշ մասերի, այդ նպատակով բացեք դասագրքերը և գույգերով քննարկեք առաջին վարժությունը: Միայն թե, մինչև գրառելը, գույգերով միմյանց հետ համաձայնության պետք է գաք:

Աշակերտներն արդեն գիտեն գույգերով աշխատել: Միասին նրանց համար դժվար չի լինի նկարում տրված այժի մասերը և հոնքը ճանաչելը: Միակ անծանոթ տերմինը նրանց համար այժի բիրն է, բայց քանի որ ընդամենը մեկ անծանոթ բառի բացատրությունը չգիտեն, այն հեշտությամբ կկռահեն, երբ նույն առաջադրանքը տետրում ինքնուրույն կկատարեն:

Առաջադրանքը ստուգելուց հետո ուսուցիչն ավելացնում է, որ այժի փաստվածքը վտանգավոր է տեսողության համար, այդ պատճառով այն առանձնահատուկ խնամքի և զգույշ վերաբերմունքի կարիք ունի:

2. ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (2-4 թույլե)

Ուսուցիչը քննարկման հարց է առաջադրում. «Ինչպե՞ս պետք է խնամենք այժերը»: Հետո այս հարցը լավ հասկանալու համար, աշակերտներին կատարել է տալիս Աշակերտի տետրում տրված առաջադրանքը այժի հիգիենայի վերաբերյալ: (Առաջադրանք 2)

3. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՐ (4-6 թույլե)

Աշակերտի տետրում տրված 3-րդ վարժության նպատակն այն է, որ աշակերտները ինքնուրույն եզրակացնեն, որ պարապմունքների ժամանակ գերադասելի է, որ լուսավորումը սեղանի դիմացից և մի փոքր ձախ կողմից ընկնի:

Առաջադրանքը կատարելուց և ստուգելուց հետո (անկախ նրանից՝ պատասխանը ճիշտ է, թե սխալ), ուսուցիչը խնդրում է աշակերտներին հիմնավորել, թե ինչու են այդպես մտածում: (Ճիշտ պատասխանն, ինչ խոսք, այն նկարն է, որտեղ լույսը ձախ կողմից է ընկնում: Բոլոր մասցած դեպքերում ստվեր է ընկնում ընթերցանության տեքստի կամ տետրի վրա, ինչը լարում է ու հոգնեցնում այժերը:)

Այս խորհուրդը տարբեր կլինի, եթե երեխան ձախլիկ է, քանի որ ձախ կողմից ընկած լուսավորումը ստվեր է գցում նրա գրածի վրա: Ուստի աշակերտներին պետք է բացատրել, որ կարևորն այն է, որ ստվեր չընկնի գրքին կամ տետրին:

4. ՄԵՓՎԿԱՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ (6-10 թույլե)

Ուսուցիչը հարց է տալիս.

– Ինչ էք կարծում, բոլոր մարդիկ միանմա՞ն են տեսնում:

Երեխաները պատասխանում են, որ որոշ մարդիկ վատ են տեսնում և ակնոց են կրում:

Ուսուցիչը.

– Ինչ էք կարծում, մարդը երկու այժով էլ միանմա՞ն է տեսնում:

Այս հարցին հավանաբար երեխաների պատասխանները տարբեր կլինեն: Ոմանք կարծում են, որ երկու այժով էլ միանման ենք տեսնում, ոմանք կարող են հակառակ կարծիքն արտահայտել: Այս հարցը պարզելու համար, ուսուցիչն առաջարկում է կատարել դասագրքում տրված հաջորդ վարժությունը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ բացված թևի հեռավորության վրա պետք է պահի դասագիրքը, հաջորդաբար ձեռքով փակի այժերը և կարդա տարբեր չափի տառատեսակներով տրված նախադասությունները և պետք է մտապահի այն նախադասությունը, որը կարդալ չի կարողանա (եթե աշակերտը չի կարող այժը փակել, կարող է խնդրել իր գուգրնկերոջը գիրքը բռնել): Այն աշակերտները, որոնք ակնոց են կրում, փորձն առանց ակնոցի պետք է անեն:

Վարժությունը կատարելուց հետո ուսուցիչն անցկացնում է փոքր հարցում՝ պարզելու, թե ինչ արդյունքներ ստացան երեխաները (սա կարող է ընդհանուր հարցում լինել. «ձեռք բարձրացնի նա, ով երկու այժերով էլ կարդաց բոլոր նախադասությունները» և այլն):

Վերջում եզրակացնում են, որ պարզվում է, հաճախակի են այն դեպքերը, երբ մարդը մի աչքով ավելի լավ է տեսնում, քան մյուսով:

Եթե պարզվի, որ աշակերտներից որևէ մեկը առաջին նախադասությունը չի կարող կարդալ կամ խավար է տեսնում տառերը, ուսուցիչը անպայման պետք է նրան խորհուրդ տա ծնողների հետ բժշկի գնալ, որպեսզի կարճատեսություն չզարգանա:

5. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչն սկսում է համառոտ դասարանական քննարկում հետևյալ հարցի շուրջ.

– Արդյոք մարդու մարմնի մասերը կարիք ունենա՞ն առանձնահատուկ խնամքի:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (6-10 րոպե)

Դասագրքի համապատասխան էջում տրված է նկարներով եռամաս տեքստ, որը վերաբերում է ականջների, մաշկի և մազերի խնամքին: Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է տեքստի վրա աշխատել արդեն ծանոթ միջոցով. գույգերից մի աշակերտը կարդում է, մյուսը պատմում է բովանդակությունը: Այս դեպքում մասնակցում են երեք տարբեր գույգեր:

7. ԴԱՄԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ամփոփման ժամանակ ուսուցիչն աշակերտներին հիշեցնում է, որ լավ պետք է մտապահեն և կատարեն այն պահանջները, որոնք կապված են մարմնի խնամքի հետ: Դրանց մի մասը մարդ կարող է սիրով չանի, բայց հիգիենայի կանոնները պետք է պահպանել և խնամել սեփական մարմինը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զրույց «Ինչո՞ւ է կեղտը հիվանդության պատճառ դառնում» թեմայի շուրջ

Ուսուցիչը երեխաներին պատմում է, որ շատ հիվանդությունների հարուցիչ են մարդու մարմնի մեջ հայտնված մանրէները: Մանրէները փոքր կենդանի օրգանիզմներ են: Դրանք անհնար է աչքով տեսնել: Կեղտի մեջ անհամար մանրէներ կան և, եթե դրանք մարդու մարմնի մեջ ընկնեն, շատ արագ կբազմանան:

Հետո աշակերտներին հարցեր է տալիս.

– Ինչո՞ւ չի կարելի կեղտոտ ձեռքերով ուտել: Աչքերը տրորե՞լ:

– Ինչո՞ւ է վտանգավոր եղունգները կրծելը:

– Ուրիշ ինչպե՞ս կարող են մանրէները հայտնվել մարդու մարմնի մեջ (չվկացած մրգից, «վատ սովորություններից», երբ երեխան մատն է ծծում, մատիտը ծամում և այլն):

ԴԱՍ 3

Թեմա.

Մարդու մարմինը և նրա մասերը

Դասի վերնագիրը.

Եթե ուզում ես առողջ լինել...

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան կազմել սննդակարգ:

Գիտակցել մարդու առողջության համար սննդի կարևորությունը:

Տարբերել բուսական և կենդանական սնունդները:

Գիտակցել ուտելու ժամանակ հիգիենայի կանոնների պահպանման նշանակությունը:

Մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցադրել հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Անձնական կարծիքի և դիտարկման վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Սննդամթերքը խմբերի բաժանել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն. II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն. II.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Կազմում է իր սննդակարգի մեջ մտնող մթերքների ցանկը և առանձնացնում մարդու համար պարտադիր սննդամթերքների խմբերը (բանջարեղեն, միրգ, հատիկայիններ, կաթնամթերքներ):

Անհրաժեշտ նյութ.

պատին փակցնելու թերթ, նախապես կազմած սննդի բուրգ, յուրաքանչյուր աշակերտի համար նկարած թերթիկներ՝ տարբեր սննդամթերքների պատկերներով, չոր սոսիս:

1. ՄՆՆԴԱԿԱՐԳԻ ԿԱԶՄՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել Աշակերտի տետրի համապատասխան էջը և լրացնել աղյուսակը. գրել ամբողջ օրվա սննդակարգը և պատրաստվել շնորհանդեսի:

Ուսուցիչը ցանկացողներին (3-4 աշակերտների) հանձնարարում է կարդալ աղյուսակը, և ինքը գրատախտակին լրացնում է նման մի աղյուսակ: Հետո դիմում է ամբողջ դասարանին. արդյոք որևէ մեկը ունի նշած այնպիսի սնունդ, որը գրատախտակին դեռ չի գրվել: Եթե այդպիսին լինի, ավելացնում է: Այսպես կազմվում է ամբողջ դասարանի աշակերտների սննդակարգը:

2. ՄՆՆԻ ԲՈՒՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ (8-10 րոպե)

I. Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է գործնական վարժություն. «Կառուցենք սննդի բուրգ»:

Բայց մինչև աշխատանքը սկսելը, խնդրում է նրանց հիշել, լսե՞լ են արդյոք որևէ բան բուրգի մասին:


II. Այնուհետև ուսուցիչը պատին փակված թղթի վրա գծում է (կարող է նախապես պատրաստած ունենալ) բուրգի ուրվագիծ: Մեկ անգամ էլ է ուշադրությունը կենտրոնացնում նրա ստորին և վերին մասերի վրա և դիմում է աշակերտներին.

– Սա հասարակ բուրգ չէ, մենք այս պատկերը սննդամթերքով պետք է կառուցենք, ձեր հայեցողությամբ տեղավորեք սնունդը բուրգի աստիճաններին (ընդամենը չորս աստիճան է): Հիշեք, որ սննդամթերքը պետք է դասակարգել ըստ օգտավետության՝ ամենակարևորից ու օգտավետից (ստորին առաջին աստիճանին) դեպի պակաս կարևոր ու օգտավետը (վերին աստիճանին):

Ուսուցիչը տարբեր սննդամթերքների նկարներով տուփով շրջում է, յուրաքանչյուր աշակերտ տուփից հանում է մեկ նկար (նկարները ուսուցիչը նախապես պետք է պատրաստի, սա կարող է լինել մրգի, բանջարեղենի, խմորեղենի, հացի, ձկնեղենի, կաթնեղենի, պաղպաղակի, կոկա-կոլայի, շոկոլադների, կոնֆետների նկար՝ ըստ տրված բուրգում տեղադրվող սննդամթերքի), հետո գնում է ցուցապաստառի մոտ և կայուն թղթով փակցնում թղթի վրա ուսուցչի գծագրած բուրգի վրա այն տեղում, որտեղ ինքն է անհրաժեշտ համարում:

III. Աշխատանքի այս փուլում ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է առողջ սննդի բուրգի դասական նմուշը (տե՛ս հավելվածում): Աշակերտները դիտարկումների և քննարկումների հիման վրա ընտրում, ուղղում կամ տեղափոխում են իրենց ոչ ճիշտ տեղադրած նկարները:

IV. Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել Աշակերտի տետրը և կատարել վեցերորդ էջին տրված վարժությունները:



3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՍԱԳՐՔՈՎ (2-3 րոպե)

Աշխատանքը վերջացնելուն պես ուսուցիչը հարցեր է տալիս երեխաներին.

– Ինչ էք կարծում, ատամների առողջությունն արդյոք կապված է ճիշտ սնվելու հետ, հիմնավորե՞ք ձեր տեսակետը:

Աշակերտները դասագրքում ծանոթանում են նկարներին, որոնցից պետք է ընտրեն ատամների համար փաստկար սնունդը:

4. ԱՏԱՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄՔԸ. ՀԱՐՑ-ՊԱՏԱՄԽԱՆ (3-5 րոպե)

– Ձեզանից ո՞վ ունի փչացած ատամ:

Եթե դասարանում այսպիսի երեխա կա, ցանկալի է, որ ուսուցչի ու աշակերտի միջև զրույց սկսվի: Օրինակ.

- Ինչ ես կարծում, ի՞նչը կարող է լինել դրա պատճառ:
- Օրվա ընթացքում քանի՞ անգամ ես մաքրում ատամներդ:
- Ո՞ւմ պետք է դիմել ատամները փաստվելու դեպքում և այլն:

Վարժությունը կատարելու համար աշակերտները զույգերով պետք է աշխատեն: Մա նշանակում է, որ մինչև ատամները փաստող սննդամթերքը թվարկելը, միմյանց (միննույն նստարանի մոտ նստող երեխաները) ասում են սեփական կարծիքը, քննարկում են և միասին ընդհանուր եզրակացության են հանգում:

Ուսուցիչը ընդհանուր կամ մեկ-երկու աշակերտի հարցնելով՝ ստուգում է պատասխանները (ատամները փչանալուն նպաստում են շոկոլադը, մուրաբան, թխվածքը, ծծովի կոնֆետը):

5. ԿԱԶՄԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ՝ ԳՈՐԾԱԾԵԼՈՎ ՏՐՎԱԾ ԲԱՌԵՐԸ (3-5 րոպե)

Հաջորդ առաջադրանքն աշակերտները տեսրում պետք է կատարեն: Ավարտեն նախադասությունները:

6. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ՄՆՈՒՆՆԵՐ (3-5 րոպե)

Ուսուցիչը քննարկման հարց է առաջադրում.

– Ձեր կարծիքով, ընդհանրապես, մարդը ինչո՞ւ է սնվում:

Հավանաբար աշակերտները կպատասխանեն, որ սնունդն անհրաժեշտ է առողջության, ապրելու, էներգիայի, մեծանալու համար... Կամ թեկուզ՝ քաղցի զգացումը բավարարելու համար:

Բոլոր պատասխանները այս կամ այն չափով ճիշտ են, բայց ուսուցիչը պետք է նշի, որ տարբեր կերակուրներ տարբեր չափաբաժնով են օգտակար: Երեխաների առողջության համար անհրաժեշտ են միրգ-բանջարեղեն, կաթնամթերք և ապուրներ:

Հիմա ուսուցիչն այսպիսի հարց է ուղղում երեխաներին.

– Ձեր կարծիքով, ինչի՞ց են պատրաստում մեզ համար օգտակար և անհրաժեշտ կերակուրը:

Աշակերտների պատասխաններից հետո ուսուցիչը նշում է, որ կերակուրը պատրաստում են ինչպես բուսական, այնպես էլ կենդանական մթերքներից, այդ պատճառով էլ գոյություն ունեն կենդանական և բուսական սնունդներ:

Ուսուցչի առաջադրանքով աշակերտները վերադառնում են դասագրքին և կատարում վարժություն՝ բուսական և կենդանական սնունդները տարբերելու շուրջ: Ուսուցիչը պետք է խոսի կաթնամթերքի՝ որպես ատամների առողջության համար անհրաժեշտ մթերքի մասին: Հաջորդ առաջադրանքը կարող է ստուգվել ֆրոնտալ, մի քանի աշակերտների հարցմամբ, զույգերում կամ խմբերով՝ ըստ ուսուցչի ցանկության: Աշակերտները պետք է կարդան նախադասություններ և բանավոր ավարտեն դրանք՝ տրված բառերի կիրառմամբ:

6. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը կամ ինքն է ամփոփում այս դասին սովորած նյութը, կամ աշակերտներին է հանձնարարում ամփոփել՝ երկու-երեք հարց տալով:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.slideshare.net/natiagvilia/ss-73018814>

ԴԱՍ 4

Թեմա.

Մարդու մարմինը և նրա մասերը

Վերնագիր.

Մենք մեծանում և փոխվում ենք

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան ուսումնասիրվելիք մարմնի մասին պարզ հարցեր տալ:

Որոշել մարմինը, նկարագրել, տեսակավորել:

Սեփական տեսակետները արտահայտել-հիմնավորել:

Կենդանի մարմնին բնորոշ նշանները թվարկել:

Մարդու աճի-զարգացման գործընթացի ցուցադրման համար օրինակ բերել:

Մարդու աճի գործընթացը հավաստող նշաններ բերել:

Մարդու օրգանիզմի աճի համար պարտադիր պայմաններն անվանել:

Աճի գործընթացում տեղի ունեցած փոփոխություններն արձանագրել:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրողումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Օրինակներ է բերում մարդու աճի-զարգացման գործընթացի ցուցադրման համար (օրինակ՝ հագուստի փոքրացում, կաթնատամների փոխվելը) կամ ներկայացնում է ակներև նյութ (օրինակ՝ տարբեր տարիքում նկարահանված լուսանկարներ):

1. ԶՐՈՒՅՑ՝ ԸՍՏ ՆԿԱՐՆԵՐԻ (6-7 բույս)

Դասագրքի առաջին էջին տրված է միննույն երեխայի նկարը՝ երեք տարբեր տարիքներում: Նկարները նայելով՝ աշակերտները պետք է պատասխանեն գրքում տրված հարցերին: Գործընթացն այսպես կարող է ընթանալ. մեկ աշակերտ ընթերցում է առաջին հարցը: Ցանկացողները պատասխանում են: Սրանից հետո ուրիշ աշակերտ կարդում է երկրորդ հարցը, և այսպես շարունակվում է աշխատանքը: Զրույցի ժամանակ պետք է հնարավորինս աշխատել բոլոր երեխաներին սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն տալ: Վերջում ուսուցիչը պետք է ամփոփի գրույցը և նշի, թե ինչ ակներև փոփոխություններ են տեղի ունենում հասունացման հետ:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-6 բույս)

Այս գրույցի տրամաբանական շարունակությունն է հաջորդ վարժությունը, որն աշակերտի ուշադրությունը կենտրոնացնում է այն հիմնական փոփոխությունների վրա, որոնց ենթարկվում է ֆիզիկական մարմինը աճի ընթացքում: Այսպիսիք են հասակի, քաշի ավելացումը, ատամները փոխելը:

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-6 բույս)

Ուսուցիչը դասարանական քննարկում է վարում հետևյալ հարցի շուրջ.
– Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ մեծանալու համար:
Քննարկման ընթացքում երեխաները պետք է գան այն եզրակացության, որ մարդուն աճի-զարգացման համար անպայման անհրաժեշտ են օդ, ջուր և սնունդ (ուսուցիչը այս բառերը քննարկման վերջում կարող է գրել գրատախտակին):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (7-9 բույս)

Դասի երկրորդ էջին տրված վարժությունը կոշիկների մասին է: Աշակերտները անհատապես են աշխատում: Ըստ նկարների՝ նրանք պետք է որոշեն երեխաների հասակը և համապատասխանաբար նրանց վերագրեն այս կամ այն չափի ոտնամանը:
Առաջադրանքն ավարտելուց հետո ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ինչն է են հատկապես այդպես բաժանել ոտնամանները:
Լրացուցիչ հարցեր.
– Երեխաներից հաճախ ենք լսում՝ կոշիկս փոքրացել է: Ինչ եք կարծում, իսկապես կոշիկն է փոքրանում: Ինչն է այդպես ասում:
«Համաձայն ես, թե՛ ոչ» – Այս վարժության վրա աշխատանքն ուսուցիչն այսպես կարող է վարել. ինքն է կարդում կամ աշակերտներին հանձնարարում է հերթով կարդալ յուրաքանչյուր նախադասություն: Այն աշակերտները, որոնք համաձայն են կարդացած նախադասության հետ, ոտքի կանգնելով հաստատում են, իսկ նրանք, ովքեր համաձայն չեն, թույլ են նստած:

5. ՀՅՈՒՐ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը երեխաների համար անակնկալ է պատրաստել. նա դասարան է հրավիրել մայրիկներից մեկին՝ մանկան հետ:
Ուսուցիչը հյուրին առաջնորդում է դասարան և հարցնում է աշակերտներին.
– Ինչ եք կարծում, ի՞նչ է պետք այս փոքրիկին մեծանալու համար:
Աշակերտների պատասխաններից հետո ուսուցիչը խնդրում է մորը պատմել փոքրիկի կարիքների մասին այս հասակում և այն ժամանակ, երբ նա մի փոքր կմեծանա: Մայրն աշակերտներին պատմում է, թե ինչպես է խնամում փոքրիկին, ինչ պայմաններ է ստեղծում, ինչով է կերակրում, որպեսզի նա առողջ մեծանա:
Զրույցը գերադասելի է անցկացնել հարց-պատասխանի ձևաչափով. աշակերտները հյուրին հարցեր են տալիս իրենց հետաքրքրող թեմայի մասին:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը հարց է տալիս.

- Ինչպե՞ս էք նկատում, որ մեծանում էք (նկարագրեք):
- Ձննեք ինքներդ ձեզ: Մարմնի ո՞ր մասերն են համեմատաբար արագ աճում (մազեր, եղունգներ, ներբաններ):

ԴԱՍ 5

Թեմա. Մարդու մարմինը և նրա մասերը

Վերնագիր. Առողջ կենսակերպ և օրվա ռեժիմ

Դասի նպատակը. Աշակերտները կարողանան առողջ վարքի նախատեսամբ կազմել օրվա ռեժիմ:
 Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքել, սխեմաներ կազմել:
 Դիտարկման արդյունքում հարցի պատասխանը տրամաբանորեն հիմնավորել:
 Սեփական կարծիքը կամ հետազոտության արդյունքերը ներկայացնել հաղորդակցման տարբեր ձևերով:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):


Անհրաժեշտ նյութ.

գրելու թուղթ կամ տետր, գրիչ:

1. «ԻՄԱՍՍՍՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ» ԿԱԶՄՈՒՄ (7-8 բույս)

Անցած նյութերից երեխաներն արդեն գիտեն, որ մարմինը խնամքի և հոգածության կարիք ունի, բայց առողջության համար սա բավական չէ: Աշակերտները պետք է վստահորեն իմանան, որ մարդու մարմնի աճի-զարգացման ու կոփման համար անհրաժեշտ է ամենօրյա մարզանք: Ուսուցիչը գրատախտակի կենտրոնում գծում է շրջան, որտեղ գրում է «առողջ մարդ» և հարցով դիմում է աշակերտներին.

- Ի՞նչ է անհրաժեշտ նրա համար, որ մարդը առողջ լինի:



Աշակերտների պատասխանները գրվում են կենտրոնական շրջանի շուրջ և այսպես ստացվում է այսպես կոչված «իմաստային քարտեզ»:

Եթե պատասխաններում չխոսվի ֆիզիկական վարժությունների անհրաժեշտության մասին, ուսուցիչն ինքը պետք է հարցնի՝ ունի՞ արդյոք առողջության համար նշանակություն ֆիզիկական վարժությունը: Պատասխանը գրվում է գրատախտակին:

2. ԶՈՒԳԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ (10-15 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հանձնարարում է գույգերով աշխատանք. միմյանց հետ համաձայնելով, նրանք պետք է հիշեն և գրեն (թերթի վրա կամ տետրում) այն ամենը, ինչ արել են այսօր առավոտվանից (արթնանալուց հետո): Զույգերը քննարկում և պլյուսով նշում են այն գործողությունները, ինչը, նրանց կարծիքով, նպաստում է առողջ կենսակերպին (օր.՝ առավոտ վաղ արթնանալ, մարժամարզություն, ձեռքերը, երեսը լվանալ, նախաճաշ, ոտքով դպրոց գնալ...): Ուսուցիչը գույգերի շնորհանդեսի ժամանակ պատին նախապես փակցրած թերթի վրա գուգահեռաբար գրում է նրանց կարծիքները (առողջ կենսակերպի վերաբերյալ): Հաջորդ փուլում քննարկում են այս ցանկը: Եթե որևէ վարք նրանց կարծիքով առողջ կենսակերպի համար օգտակար չէ, դատողության և հիմնավորման արդյունքում կարելի է դրա վրա գիծ քաշել:

Վերջում ուսուցիչը կարդում է դասարանի հետ համաձայնեցված ցանկը և հարցնում է աշակերտներին.

– Ո՞ր գործողությունից հետո եք առանձնապես լավ զգում ձեզ (նկատի է առնվում ցուցապաստառին գրվածը):

– Ինչ եք կարծում, ինչո՞ւ:

Վերջում երեխաները պետք է գիտակցեն, որ սովորաբար առողջ կենսակերպ վարող մարդիկ իրենց ավելի լավ, առողջ ու կենսուրախ են զգում:

3. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ՕՐՎԱ ՌԵԺԻՄԻ ԿԱԶՄՈՒՄ (10-15 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին փոքր խմբերի է բաժանում և բացատրում է, որ, եթե այն թվարկմանը (կամ այն գործողություններին, որ արել են մինչև տվյալ պահը) ավելացնեն այն, ինչ անելու են հետո, մինչև քնելը, կստանան այսպես կոչված օրվա ռեժիմը:

Աշակերտները խմբում պետք է քննարկեն ներկայացված նմուշային օրվա ռեժիմի կետերը: Հետո ուսուցիչը ուշադրություն է հրավիրում Աշակերտի տետրում տրված նման սխեմայի վրա, որը նրանք ինքնուրույն պետք է լրացնեն: Յուրաքանչյուր աշակերտ մեկ շաբաթվա ընթացքում պետք է վերահսկի (ստուգի) սեփական վարքը և շաբաթվա վերջում համադասարանցիներին պատմի սեփական դիտարկման արդյունքների մասին. փոխվե՞լ է արդյոք իր օրվա ռեժիմն այս ընթացքում:

Հետագայում ուսուցիչը պարբերաբար պետք է հիշեցնի և հարցնի, թե ինչպես են կատարում օրվա ռեժիմի կետերը:

Այս հասակի երեխաների օրվա ռեժիմի հնարավոր կետերն են.

1. Արթնանալ
2. Առավոտյան մարզանք և լոգանք
3. Նախաճաշ
4. Պայուսակը հավաքել
5. Դպրոց գնալ
6. Դասերին նստել
7. Դպրոցից վերադառնալ
8. Ճաշ
9. Հանգիստ
10. Տնային առաջադրանքների կատարում
11. Բակում խաղ (կամ ֆիզիկական վարժություն)
12. Գեղարվեստական գրականության (գրքի) ընթերցանություն
13. Ընթրիք
14. Հեռուստացույց դիտել (կամ համակարգիչ)
15. Զբոսանք մաքուր օդին
16. Ձեռքերը, երեսը լվանալ
17. Քնել

4. ԴԱՄԻ ԱՍՓՈՓՈՒՄ ԵՎ ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասի ակտիվություններն ու ձեռք բերած գիտելիքը: Հետո աշակերտներին հանձնարարում է տանը ծնողներին ծանոթացնել իրենց օրվա ռեժիմը, ուղղել այն, գեղեցիկ արտագրել թղթի վրա, փակցնել պատին, գրասեղանին մոտ և փորձել ամեն օր հետևել նրան:

ՈՒՍՈՒՑՉԷ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը կարող է հրավիրել այնպիսի մարդու, ով առողջ կենսակերպ է վարում (դպրոցի աշխատակից, ծնող և այլն): Հյուրը երեխաներին է ներկայացնում իր օրվա ռեժիմը և խոսում է այդ ռեժիմի պահպանման նպատակահարմարության (դրական կողմերի) մասին:

Թեման շարունակվում է նաև հաջորդ դասին: Այս անգամ ուսուցիչը մատնանշում է դասագրքի համապատասխան էջը և աշակերտներին խնդրում կրկնել վարժությունները:

Տանը կատարած առաջադրանքը՝ ավարտած նախադասությունը կարդալուց հետո ցանկալի է, որ աշակերտները մեկ անգամ ևս դատողություն անեն և հանգեն համապատասխան եզրակացության այն գործողությունների մասին, որոնք պարտադիր են առողջության համար:

ՆԱԽԱԳԻԾ

ՈՒՋՈՒՄ ԵՄ ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼ

Նախագիծը ներառում է 3 փուլ. տեղեկատվության տեսակավորում, հետազոտություն, շնորհանդես: Հետազոտություն. ուսուցիչը դասարանը բաժանում է 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի առաջադրանք է տրվում պարզել, թե քանի աշակերտ է զբաղվում սպորտով: Դրա համար յուրաքանչյուր խումբ պետք է.

- ա) Ընտրի նպատակային խումբ (մեկական դասարան):
- Դասարան.
- Աշակերտների թիվը.

| | |
|-----------|--|
| Ֆուտբոլ | |
| Վոլեյբոլ | |
| Լող | |
| Ըմբշամարտ | |
| Ձյուղո | |
| Կարատե | |
| Թենիս | |
| Շախմատ | |

բ) Անցկացնի հարցում և լրացնի աղյուսակը («+»-ով նշի, եթե մարզաձևի որևէ տեսակի է հաճախում, եթե չի հաճախում՝ ընդհանրապես չնշի):

գ) Պատրաստվի շնորհանդեսի համար (տեսակավորի նյութը, օրինակ, դասարանում կա 21 աշակերտ, դրանցից սպորտի է հաճախում 12-ը, այդ թվում ֆուտբոլի՝ 6-ը, մարմնամարզության՝ 2-ը):

Աշխատանքի նկարագրություն

Մեծ ընդմիջման ժամանակ յուրաքանչյուր խմբի անդամներ (3-4 աշակերտ) կհարցնեն ընտրված դասարանի աշակերտներին՝ հաճախում են նրանք որևէ մարզաձևի և պլյուսով նշում են այն մարզաձևը, որին հաճախում է այս կամ այն աշակերտը: Եթե աշակերտը չի մարզվում, աղյուսակում ոչինչ չեն նշում: Համապատասխանաբար, ըստ աղյուսակի լավ կերևա, թե որ մարզաձևից են մարզվում հիմնականում ընտրված դասարանի աշակերտները և ի վերջո՝ դասարանում քանի աշակերտ է սպորտով զբաղվում: Ենթադրաբար, աղյուսակը կստանա հետևյալ տեսքը.

| | |
|-----------|-------|
| Ֆուտբոլ | +++++ |
| Վոլեյբոլ | ++ |
| Լող | +++++ |
| Ըմբշամարտ | |
| Ձյուղո | |
| Կարատե | +++ |
| Թենիս | ++ |
| Շախմատ | ++++ |

Հարցաթերթը լրացնելուց հետո աշակերտները պետք է տեսակավորեն տվյալները և պատրաստեն նորհանդեսի համար:

- Սպորտի է հաճախում – 19 երեխա
- Չի հաճախում – 5 երեխա
- Հեղինակավոր մարզատեսակ – լող

Խմբի մեկ անդամ, հիմնվելով համապատասխան հարցաշարի վրա, համադասարանցիներին ներկայացնում է հարցման արդյունքները՝ քանի աշակերտի հետ է հարցում անցկացրել իրենց խումբը, և որ մարզաձևով քանի աշակերտ է մարզվում, օրինակ, 3-րդ դասարանում 24 աշակերտ է, դրանցից 19-ը մարզվում է այս կամ այն մարզաձևով, ամենահեղինակավոր մարզաձևը լողն է: Կարելի է անվանել նաև այլ մարզաձևերով զբաղված աշակերտների թիվը: Այս տվյալները ուսուցիչը կգրառի գրատախտակի վրա նախապես գծած աղյուսակի մեջ:

Տվյալները ներկայացնում են դասարանի բոլոր խմբերը: Վերջնականապես կորոշվի, թե հարցված դասարաններում քանի աշակերտ է զբաղված սպորտով:

Եզրակացություն. Ձեռք բերած տեղեկությունների վրա հիմնվելով՝ երեխաներն անում են եզրակացություն՝ քանի աշակերտի հետ հարցում անցկացրին, դրանցից քանիսն է զբաղված սպորտով, քանիսը՝ ոչ: Ինչ նշանակություն ունի կյանքում սպորտը, և ինչ խորհուրդ են տալիս հասակակիցներին:






ԹԵՍՏ 1

1. Զգայության քանի՞ օրգան ունի մարդը: Շրջագծի՛ր ճիշտ պատասխանը:

- | | |
|----------|---------|
| ա) Երկու | գ) Հինգ |
| բ) Չորս | դ) Յոթ |

2. Ինչո՞վ ենք զգում:

Բառերը սլաքներով կապի՛ր համապատասխան նկարների հետ:

| | | | |
|-------|---|--|---|
| Մատ |  |  |  |
| Ականջ | | | |
| Աչք | | | |
| Լեզու | | | |
| Քիթ |  | |  |

3. Մարմնի ո՞ր մասերն են երկու և որո՞նք՝ մեկ հատ:

| | |
|----------------|-------------------|
| Կենտ (մեկական) | Զույգ (երկուական) |
| | |
| | |
| | |
| | |

4. Օգտագործելով տրված բառերը՝ լրացրո՛ւ նախադասությունները.
 հագուստ, մեծանալ, կաթնատափեր:

Երբ երեխան մեծանում է, նրա հագուստը փոքրանում է:

Երեխան մեծանալով փոխում է կաթնատափերը:

Չափահաս կենդանին սնվում է, սակայն այլևս չի մեծանում:

5. Գրի՛ր 5 բուսական և 5 կենդանական սնունդ:

| | | | | | |
|------------|---------|-------|-----------|----------|-------|
| ԲՈՒՍԱԿԱՆ | հաց | բրինձ | կաղամբ | կարտոֆիլ | միրգ |
| ԿԵՆԿԱՆԱԿԱՆ | խորոված | պանիր | չախոխբիլի | նրբերշիկ | կարագ |

ԴԱՍ 6

Թեմա.

Կենդանի միջավայր. Կենդանիներ

Վերնագիրը.

Կենդանին և անկենդանը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան թվարկել կենդանի օրգանիզմների մարմինների հիմնական բնորոշ առանձնահատկությունները:

Տարբերել կենդանի և անկենդան առարկաները:

Ճանաչել ու համեմատել թռչունների ու կաթնասունների մարմնի որոշ արտաքին մասեր:

Որևէ կենդանու մասին տեղեկություններ հավաքել, համեմատել համադասարանցիների աշխատանքների հետ և ի մի բերել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

**Արդյունքն ակներև է,
եթե աշակերտը.**

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրողումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Անհրաժեշտ նյութ.

արհեստական և չորացած վարդ:

1. ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ԱՆԿԵՆԴԱՆԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ առաջին դասարանում նրանք տարբերում էին փմյանցից կենդանի ու անկենդան առարկաները: Հիմա առաջադրում է մտածել և թվարկել կենդանի և անկենդան առարկաներ, բացատրել, ինչո՞ւ են այդպես մտածում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-8 րոպե)

Դասագրքում դասի համապատասխան էջում տրված է երկու փոքր տեքստ նկարներով: Աշակերտները պետք է դիտեն նկարները, ընթերցեն տեքստը և հասկանան:

Տեքստի վրա աշխատանքը հետևյալ կերպ է ընթանում. ոտքի է կանգնում երկու աշակերտ, առաջինը կարդում է տեքստի առաջին հատվածը, երկրորդը լսում է (մյուս աշակերտներն այս ընթացքում հետևում են դասագրքի տեքստին), հետո մյուս աշակերտը պատմում է կարդացած տեքստի բովանդակությունը:

Հասկանալու համար, թե ինչպես են ըմբռնել երեխաները ընթերցած նյութը, ուսուցիչը հարցեր է տալիս (օրինակ՝ ինչո՞ւ ենք ասում, որ կենդանիները կենդանի արարածներ են, ձեր կարծիքով ի՞նչ զգայություններ ունի կատուն...): Այնուհետև նման ձևով մշակում են տեքստի երկրորդ մասը, այս անգամ արդեն գործընթացին ներգրավվում է երկու այլ աշակերտ:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (5-6 րոպե)

Հաջորդ առաջադրանքը կատարվում է Աշակերտի տետրում և վերաբերում է կենդանիի և անկենդանի տարբերակմանը: Աշխատանքը անհատապես է կատարվում. աշակերտը պետք է կարդա բառերը և տեղաբաշխի համապատասխան սյունակում:

4. ՃԱՆԱԶԵԼ ԿԵՆԴԱՆԻՆ ԵՎ ԱՆԿԵՆԴԱՆԸ (2-4 րոպե)

Ուսուցիչը երեխաներին խնդրում է ուշադիր դիտել իրենց շրջապատում առկա առարկաները (դասարանում, դպրոցի բակում) և թվարկել կենդանի և անկենդան առարկաներ:

Այնուհետև դասարանը պայմանականորեն բաժանում է 2 մասի և առաջին խմբին առաջարկում է համաձայնության գալ և անվանել կոնկրետ կենդանի մարմին և թվարկել՝ ինչ կարող է անել նա (օրինակ՝ քայլել, սնվել, խոսել):

Մյուս խումբը մտածի և անվանի անկենդան մարմին (օրինակ՝ գնդակ, սեղան, տիկնիկ) և որոշի, թե ինչ է կարող անել վերջինս:

Ի վերջո, աշակերտները պետք է հանգեն եզրակացության, որ անկենդան մարմիններն ինքնին ոչինչ չեն կարող անել, նրանց ակտիվությունը կախված է այս կամ այն ներգործությունից, օրինակ՝ տիկնիկը շարժվում է մարդու կողմից, գնդակը կգլորվի, եթե նրան ոտքով հարվածենք և այլն:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ (3-5 բույե)

Դասի վերջում գերադասելի է դասագրքում տրված առաջադրանքը զույգերով կատարել: Դրա համար ուսուցիչը խնդրում է երեխաներին ծանոթանալ վարժության պայմանին, զույգերով մտածել, քննարկել և անվանել կենդանու մարմնի մասերը: Առանձնացնել այն մասերը, որ ունեն երկու կենդանիներն էլ:

Առաջադրանքը կատարելուց հետո ցանկալի է ուշադրությունը կենտրոնացնել միանման նշանակում ունեցող մարմնի մասերի (ոտք – թաթ, մուռ – կտուց, փետուր – մորթի) և դրանց գործառնությունների վրա (շարժվել, հոսատություն, սնվել, ջերմություն պահպանել):

6. ԼՐԱՑՐՈՒՒ ԱՂՅՈՒՍԱԿ (6-7 բույե)

Տեսրում տրված երկրորդ վարժությունը ցանկալի է, որ աշակերտները անհատապես կատարեն: Նրանք «+»-ով պետք է նշեն և աղյուսակում գրառեն տրված կենդանիների մարմնի մասերը: Վերջում կատարվում է շնորհանդես:

7. ԱՐՇԵՍՏԱԿԱՆԸ ԵՎ ԲՆԱԿԱՆԸ (1-2 բույե)

Ցանկալի է, որ Աշակերտի տեսրում տրված 3-րդ առաջադրանքը աշակերտները զույգերով կատարեն: Հարցն ավելի լավ ըմբռնելու համար ուսուցիչն ակներևության համար պետք է դասին բերի արհեստական և չորացած վարդ: Նա աշակերտներին խնդրում է ուշադիր դիտել մարմինները, այնուհետև հարցով է դիմում նրանց՝ ըստ ձեզ, ի՞նչ տարբերություն կա արհեստական և չոր ծաղիկների միջև:

Եթե աշակերտները դժվարանան պատասխանել հարցին, ուսուցիչն ինքն է օգնում նրանց տարբերել իրարից արհեստականը (այսինքն՝ մարմին, որը երբեք կենդանի չի եղել) և չորացածը (որը երբևէ կենդանի է եղել): Այնուհետև աշակերտները կատարում են 3-րդ առաջադրանքը:

8. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 բույե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասին ձեռք բերած գիտելիքը:
Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.slideshare.net/natiagvilia/ss-73019707>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՐՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնական և արհեստական առարկաներ

Ուսուցիչը երեխաներին բացատրում է, որ անկենդան առարկաների մի մասը բնության մեջ ինքնին գոյություն ունի (քար, ջուր, հող...), մի մասը մարդու ձեռքով, այլ կերպ ասած՝ արհեստականորեն է ստեղծված (նստարան, գրատախտակ, գիրք, կոշիկ...): Աշակերտները պետք է թվարկեն դասարանում առկա մարդու ձեռքով պատրաստված առարկաները:

ԴԱՍ 7

| | |
|--|---|
| Թեմա. | Կենդանի միջավայր. Կենդանիներ |
| Վերնագիր. | Կենդանիներն էլ են մեծանում |
| Դասի նպատակը. | Աշակերտները կարողանան գիտակցել օրգանիզմի աճի համար անհրաժեշտ պայմանները: Նկարագրել աճի գործընթացում առկա փոփոխությունները: Համեմատել չափահաս կենդանիներին և նրանց ձագերին: Դատողություն անել կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների մասին: |
| Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ. | Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: |

Բն.II.2.Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3.Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակններև է, եթե աշակերտը.

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Համեմատում է չափահաս կենդանիներին և նրանց ձագերին, նկարագրում է աճի-զարգացման գործընթացում տեղի ունեցած փոփոխությունները (օրինակ՝ չափը, գույնը, ծածկույթը) :

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Անհրաժեշտ նյութ.

գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (6-7 րոպե)

Ուսուցիչը քննարկման հարցեր է տալիս.

– Ինչ էք կարծում, կենդանիները մեծանո՞ւմ են:

– Նկարագրե՞ք ի՞նչ արտաքին և վարքային փոփոխությունների են ենթարկվում կենդանիները:

Այս հարցերին են նվիրվում դասի ամբողջ բովանդակությունը և ակտիվությունները:

Նախ և առաջ աշակերտները գրքում պետք է դիտեն և ճանաչեն ճտին ու աքաղաղին, որոշեն նրանց միջև նմանություններն ու տարբերությունները, այլ կերպ ասած որոշեն, թե ինչով են նման և ինչով են տարբերվում նրանք միմյանցից (ձև, քաշ, գույն, մեծություն, մարմնի մասեր կամ արտաքին նշաններ), նաև խոսեն նրանց կերի ու ձայնի, վարքի մասին, օրինակ, աքաղաղը՝ գոռոզ, մեծամիտ, կատաղի, հավերի պահապան, պարծենկոտ և այլն, ճուտը՝ վախկոտ, ծվծվան, մոր թևի տակ թաքնվող, անզոր...

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՁԱԳԵՐԸ (8-10 րոպե)

Առաջադրանքի նպատակն է, որ աշակերտը գիտակցի, որ տարբեր կենդանիների ձագերը մեծանալու հետ նմանվում են իրենց ծնողին, և հիմնավորի այս միտքը իր դասագրքում տրված նկարների հիման վրա:

Ուսուցիչ.

– Փոխվե՞լ են արդյոք ճուտիկը, եղնաձագը, շերեփուկը մեծանալու պրոցեսում:

– Ձեր կարծիքով նրանցից յուրաքանչյուրի ի՞նչն է փոխվել մեծանալու հետ:

3. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (6-8 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-5 աշակերտներից բաղկացած խմբերի: Հետո հաջորդաբար ընտրում է երեք աշակերտների. մեկը «ճուտիկն» է, մյուսը՝ «եղնիկի ձագը», երրորդը՝ «շերեփուկը»:

Յուրաքանչյուր խումբ հաջորդաբար պետք է երկուական հարց տա այս «կենդանիներին»: «ճուտը», «եղնիկի ձագն» ու «շերեփուկը» հնարավորինս նկարագրում են այս կենդանիներին, նրանց դերն են կատարում և այստեղից ելնելով՝ պատասխանում են տրված հարցերին: Ցանկալի է, ուշադրություն դարձնել նաև այն երևույթներին, որոնցից նրանք վախենում են (գիշատիչ կենդանի, ձուկ):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Աշակերտի տեսքում տրված առաջին և երկրորդ վարժությունները կատարելուց հետո աշակերտները տեղեկանում են, որ կենդանիներին մեծանալու և գոյության համար անհրաժեշտ է օդ, սնունդ, ջուր և բնակելի միջավայր (այս դեպքում՝ անտառ):

Նույն տեղում տրված է լաբիրինթոս, որի վրա աշխատանքը հավանաբար կվարճացնի երեխաներին: Այն զարգացնում է նրանց տրամաբանական և պատկերավոր մտածողության հմտություններն ու կարողությունները:

5. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-8 բույս)

Աշակերտները պետք է կատարեն դասի վերջում տրված վարժությունը, համապատասխան բառերը գրելով՝ լրացնեն նախադասությունները:

6. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասին ձեռք բերած գիտելիքը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը դասարան է բերում որևէ կենդանու ձագ (ճուտ, կատվի կամ շան ձագ...), ցույց է տալիս երեխաներին և հարցեր տալիս.

– Ի՞նչ է անհրաժեշտ այս փոքրիկ արարածին մեծանալու համար:

– Ինչպե՞ս է նա փոխվում մեծանալու ընթացքում:

Կամ ցուցադրում է վավերագրական ուսումնաճանաչողական ֆիլմ, եթե դա հնարավոր է: Ցանկալի է, որ քաղաքաբնակ աշակերտներին ուսուցիչը տանի կենդանաբանական այգի:

ԴԱՍ 8

Թեմա.

Կենդանի միջավայր. Կենդանիներ

Վերնագիր.

Ընտանի կենդանիներ. Կաթնասուններ

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան ճանաչել և անվանել ընտանի կենդանիներին:

Ճանաչել ընտանի կենդանիների ձագերին և անվանել դրանց:

Գիտակցել մարդու համար ընտանի կենդանիների նշանակությունը:

Կենդանիների նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորել:

Գիտակցել կենդանիների հետ շփվելիս անվտանգության կանոնների պահպանման անհրաժեշտությունը:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.ՈՒ.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.ՈՒ.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Համեմատում է չափահաս կենդանիներին և նրանց ձագերին, նկարագրում է աճի-զարգացման գործընթացում տեղի ունեցած փոփոխությունները (օրինակ՝ չափը, գույնը, ծածկույթը) :

1. ՆԵՐԱԾՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (4-5 րոպե)

Ուսուցիչը աշակերտներին հիշեցնում է, որ մեր սնունդը բաղկացած է ինչպես բուսական, այնպես էլ կենդանական մթերքներից: Հետո նա աշակերտներին խնդրում է բացել Աշակերտի գրքի այն դասը, որտեղ օրվա սննդակարգ կազմեցին.

- Մտաբերենք, թե որն է բուսական սնունդ:
- Ո՞րն է կենդանական:
- Ձեր կարծիքով, բոլո՞ր կենդանիներն են մեզ սննդի պաշարով ապահովում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (6-8 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագիրքը և թվել (անվանել) նկարում պատկերված կենդանիները, հետո ըստ նկարների պարզել, թե որ կենդանին է մարդկանց ապահովում սննդամթերքով:

(Ուսուցիչը չպետք է գործածի ոչ ճիշտ հաստատված «կենդանի և թռչուն» կամ «ընտանի կենդանիներ և թռչուններ» սխալ արտահայտությունները: Կենդանական աշխարհը ներառում է զազաններ-թռչուններ, սողուններ, ձկներ, միջատներ և այլն:)

Այնպես որ, երբ ասում ենք «ընտանի (կամ վայրի) կենդանի», ենթադրում ենք ինչպես կաթնասուններին, այնպես էլ թռչուններին: Այս դասը ընտանի կաթնասուն կենդանիներին է տրամադրվում:

Այնուհետև ուսուցիչը աշակերտներին հարցնում է. «Ի՞նչ ընդհանուր անուն ունեն այս կենդանիները»: Աշակերտները հեշտորեն կկոսահեն, որ դրանք ընտանի կենդանիներ են:

3. ՔՆՆԱՐԿՈՒՄ (8-10 րոպե)

Առաջադրանքը կատարելուց հետո ուսուցիչն աշակերտներին հարցնում է.

- Գիտե՞ք արդյոք, թե ինչ կպատահի կովին, եթե խոտը պակասի:
- Ինչպե՞ս կազդի դա մարդու վրա:
- Ինչպե՞ս է կոչվում այն կառույցը, որում ապրում են ընտանի կենդանիները (գոմ, ախոռ, խոզանոց, հավանոց):

Իր հերթին, ուսուցիչն այնպես պետք է վարի գրույցը, որպեսզի ընդգծվեն այն պարտականությունները, որ ունեն մարդիկ ընտանի կենդանիների նկատմամբ: Ցանկալի է, որ աշակերտները կարծիք արտահայտեն, թե ինչ հետևանք կունենա տարբեր օրգանիզմների կենսական պահանջմունքների սահմանափակումը:

4. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՁԱԳԵՐԻՆ (8-10 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է ծանոթանալ դասագրքի երկրորդ էջին տրված վարժությանը և կատարել այն: Առաջադրանքում գույգերով տրված են ընտանի կենդանիները և նրանց ձագերը: Աշակերտները պետք է ճանաչեն ու անվանեն կենդանուն ու նրա ձագին:

Ուսուցիչն աշակերտներին կարող է հանձնարարել աշխատել ինչպես անհատապես, այնպես էլ գույգերով:

Աշխատանքի երկրորդ փուլը տրամադրվում է այն նկարագարողութեի, նկարների ցուցահանդեսի կազմակերպմանը, որ նրանց հանձնարարվել էր բերել նախորդ դասին: Նրանք զուգահեռաբար խոսում են յուրաքանչյուր լուսանկարի վրա պատկերված կենդանու և նրա ձագի մասին:

5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը նշում է, որ կենդանիների հետ հարաբերությունն իր կանոններն ունի, որպեսզի չփասսվեն ո՛չ մարդը, ո՛չ էլ կենդանին: Ուստի խնդրում է աշակերտներին տեղում մտածել և ձևակերպել, օրինակ, շան հետ անվտանգ վարվելու կանոնները: Այս կանոնները ձևակերպելու մեջ երեխաներին ավագներն էլ պետք է օգնեն: Ուսուցիչը ներկայացնում է այսպիսի տարբերակ. յուրաքանչյուր կանոն պետք է սկսվի հետևյալ բառերով.

- Չի կարելի շան հետ (կամ շանը)...:

6. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 թույլ)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին սովորած հարցերը: «Մտածի՛ր» խորագիրը երեխաներին մեկ անգամ ևս խորհել է տալիս կենդանիների մասին հոգալու և նրանց խնամելու անհրաժեշտության մասին: Եթե աշակերտն ինքը չկարողանա պատասխան տալ հարցին (անասնաբույժ), հանձնարարեք, որ հարցնի ծնողներին, ավագներին և մտապահի:

Երաշխավորվող տեսառեսուրս. https://www.youtube.com/watch?v=zTLkl__kxBk

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏԲԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԲԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը դիմում է դասարանին. «Անկախ այն բանից քաղաքում եք ապրում, թե գյուղում, ընտանի կենդանիների հետ շփվում եք բոլորը: Ումնք տանը ընտանի կենդանի ունեն, եթե ոչ դուք, հնարավոր է, հարևաններից որևէ մեկը կամ բարեկամներն ունեն: Կենդանիների մասին շատ բան իմացել եք հեռուստա- կամ ռադիոհաղորդումներից, շատ բան՝ գրքերից, շատ բան էլ՝ դպրոցում եք սովորում...»

Հիշեք ու պատմեք ընտանի կենդանիների հետ կապված որևէ հետաքրքիր պատմություն, որի անմիջական մասնակիցը կամ վկան դուք եք եղել»:

Ակտվությանը մասնակցում են բոլոր ցանկություն ունեցող աշակերտները: Աշակերտներին մտածելու համար տրվում է ժամանակ (երկու-երեք թույլ): Ցանկալի է, որ ուսուցիչն այս ակտիվությունն իրականացնի այսպես կոչված «կախարդական» միկրոֆոնի միջոցով, երբ մի մասնակիցը միկրոֆոնը փոխանցում է մյուսին (ասենք՝ գրիչը): «Առանձնահատուկ» պատմությունները լսելուց հետո, ուսուցիչը հարցնում է դասարանին.

– Նկատե՞լ եք, թե ինչպես է խնամում իր ձագին ձեր անվանած կենդանին (շունը, կատուն, կովը, հավը...):

– Մարդիկ հոգատա՞ր են ընտանի կենդանիների հանդեպ: Ինչպե՞ս:

– Ո՞վ է մասնակցել ընտանի կենդանիներին խնամելու գործընթացին: Ինչպե՞ս էիք խնամում: Հաճելի՞ է արդյոք այս գործընթացը:

ԴԱՍ 9

Թեմա.

Կենդանի միջավայր. Կենդանիներ

Վերնագիր.

Անտառի գազանները

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան ճանաչել և անվանել անտառում ապրող որոշ գազանների:

Գիտակցել գլխավոր տարբերությունները ընտանի և վայրի կենդանիների միջև:

Գիտակցել մարդու համար ընտանի կենդանիների նշանակությունը:

Ճանաչել անտառի գազանների ձագերին և համեմատել նրանց:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.2.Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3.Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Համեմատում է չափահաս կենդանիներին և նրանց ձագերին, նկարագրում է աճի-զարգացման գործընթացում տեղի ունեցած փոփոխությունները (օրինակ՝ չափը, գույնը, ծածկույթը):

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջումների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Տեղի միջավայրում հետազոտում է օրգանիզմների տարբեր բնակատեղեր (որջ, բույն, տուն), նկարագրում է դրանց կառուցման առանձնահատկությունները:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (4-5 րոպե)

Դասի սկզբին ուսուցիչը հարց է տալիս.

– Բացի ընտանի կենդանիներից, ուրիշ ի՞նչ կենդանիներ կարող եք անվանել:

Երեխաները կասեն՝ արջ, գայլ, առյուծ և այլն: Հնարավոր է, որևէ մեկը նշի «վայրի կենդանիներ» արտահայտությունը, եթե ոչ ոք չի նշի, ուսուցիչը կհարցնի.

– Շունը ընտանի՞ կենդանի է, ա՞րջը:

– Կովը ընտանի՞ է, գա՞յլը:

Այսպես երեխաներին կհանգեցնի «վայրի կենդանիներ» արտահայտությանը: Այսուհետև ուսուցիչը նոր հարց է առաջադրում.

– Ձեր կարծիքով, ի՞նչ տարբերություն կա ընտանի և վայրի կենդանիների միջև:

Քննարկումների ու մտքերի փոխանակման միջոցով ուսուցիչն աշակերտներին պետք է բերի այն եզրակացության, որ ընտանի կենդանիներին մարդն է պահում ու խնամում (կերակրում, ապրելու տեղ հատկացնում և այլն), վայրի կենդանիներն ինքնուրույն, մարդուց անկախ են ապրում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-7 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է ծանոթանալ վայրի կենդանիների մի մասին՝ անտառի գազաններին: Սրա համար աշակերտները պետք է բացեն դասագրքերը և կատարեն առաջադրանքը (ծանոթություն գազաններին):

Անտառը վայրի կենդանիների տունն է: Սակայն նրանց այստեղ ևս անհրաժեշտ է ապահովել բնակման տեղով, որտեղ նրանք իրենց պաշտպանված կզգան, ձագերին կմեծացնեն, ցրտից կպաշտպանվեն և այլն:

Գիտե՞ք, արդյոք, թե ինչպես է կոչվում արջի բնակման տեղը: (որջ)

Աղվեսի՞նը, մկա՞նը: (գետնափոր բույն)

Ճնճղուկի՞նը: (թռչնաբույն)

Սկյուռի՞նը: (փչակ)

Մրջյունի՞նը: (մրջնաբույն)

Գիտե՞ք, արդյոք, թե ինչ նյութ են օգտագործում կենդանիները բնակատեղ կառուցելու համար:

Ի՞նչ նպատակի է ծառայում ապաստարանը:

(սերունդներին մեծացնել, ձմեռել)

3. ԽԱՂ. ԳՈՒՇԱԿԻՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ (5-8 րոպե)

Ուսուցիչն աշակերտների համար կարդում է մեր անտառներում ապրող մի քանի գազանների համառոտ բնութագիրը: Երեխաները յուրաքանչյուր բնութագրից հետո պետք է դատողություն անեն, գուշակեն, թե որ կենդանու մասին է խոսքը, գույգերով կարծիքների փոխանակումից հետո, կենդանիների անունները գրեն թղթի վրա մեկ պտուկով:

1-ին. «Նա գիշերային կենդանի է, սակայն երբեմն ցերեկով էլ է դուրս գալիս որսի: Նա ոչ ոքից չի վախենում, ոչ ոքից չի թաքնվում, չնայած որ արագ չի վազում: Տեսողությունը վատ է, հոտառությունը՝ լավ: Որսի ժամանակ չափազանց ճարպիկ է, նա անտառում անհամար փասսատու միջատներ և դրանց թրթուրներն է ոչնչացնում, նույնիսկ թունավոր օձերին չի խնայում: Նրա հուսալի զենքը երկար, սրածայր փշերն են, որոնցով ողջ մարմինն է ծածկված»: (Ոզնի)

2-րդ. «Նրա ստորգետնյա լաբիրինթոսը անհամար խորշերից է բաղկացած: Կեր գտնելու համար նա օր ու գիշեր առանց հանգստի փորում ու նոր ճամփաներ է բացում: Երբեմն գետնի վրա էլ է դուրս գալիս՝ որդ կամ թրթուր բռնելու համար: Չոհին բույն է տանում և այնտեղ ուտում է»: (Խլուրդ)

3-րդ. «Այս գազանը մեր անտառի բնակիչների մեջ ամենամեծն է: Մնվում է ինչպես բուսական, այնպես էլ կենդանական կերով: Երբեմն ընտանի կենդանիների վրա էլ է հարձակվում. բազմիցս հռչոտել է կովի կամ եզի: Նրա սիրած ուտելիքը մեղրն է: Եթե վայրի մեղուների բույն տեսնի, անպայման կհամտեսի մեղրը: Չմոռանր ձյան տակ, որջում պատկած է և քնած»: (Արջ)

4-րդ. Այս կենդանին անտառի իսկական զարդն է: Բարակ իրան, գեղեցիկ, ուղիղ ոտքեր, գեղեցիկ զլուխ ու մեծ սև աչքեր, փոքրիկ սրածայր եղջյուրներ ու կարճ պոչ ունի: Մնվում է խոտով, մրգերով,

կաղինով, սնկով: Ձմռանը եթե գտնի, չոր խոտ էլ կուտի: Առատ ձյան ժամանակ սոված է փում ու հաճախ օգնության աղերսով գյուղեր է մտնում:

Նրա պաշտպանվելու միակ միջոցը արագաշարժ ոտքերն են: Նա այնպես արագ է վագում, որ գայլն էլ չի կարող հասնել ետևից: Նրա թշնամիներն են նաև լուսանը, արջը և սարի արծիվը»: (Այծյամ)

Կարդալն ավարտելուց հետո ուսուցիչը գրատախտակին գրում է ճիշտ պատասխանները (ոգնի, խլուրդ, արջ, այծյամ) և խնդրում է աշակերտներին ինքնուրույն ստուգել իրենց պատասխանները: Եթե գազաններից որևէ մեկին երեխաները դժվարությամբ են որոշում, ուսուցիչը լրացուցիչ տեղեկատվություն է մատուցում՝ հանգեցնելով ճիշտ պատասխանի:

4. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՁԱԳԵՐԻՆ (8-10 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին դասագրքի երկրորդ էջին տրված առաջադրանքին ծանոթանալ և կատարել այն: Աշակերտները պետք է ճանաչեն ու անվանեն գազանին ու նրա ձագին:

Վարժության հաջորդ փուլը գազանների ու ձագերի միջև ընդհանրությունների ու տարբերությունների հայտնաբերումն ու արձանագրումն է:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԽԱՎԵՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐՈՒՄ (4-5 րոպե)

Աշխատանքը շարունակվում է Աշակերտի տետրում: Աշակերտները ինքնուրույն կատարում են վարժությունը: Նրանք փնտրում են այն հուշումը, որի հիման վրա եզրակացնելու են, որ առաջին դեպքում ավելորդ է կովը, քանի որ այն ընտանի կենդանի է, երկրորդ դեպքում ավելորդ է կնճիթը, քանի որ բոլոր մսացածները կենդանիների պոչեր են: Աշակերտները կռահում են, որ փղի կնճիթը բոլորովին այլ գործառույթ ունի և չնայած արտաքին նմանությանը, պոչի հետ ընդհանուր ոչինչ չունի:

Վարժությունը կատարելուց ու ստուգելուց հետո, ուսուցիչը խնդրում է աշակերտներին հիմնավորել իրենց տեսակետները:

6. ԴԱՍ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ (1-2 րոպե)

Եթե ժամանակն ուսուցչին հնարավորություն է տալիս, ցանկալի է, որ աշակերտներին 5 րոպեով դուրս տանի, որտեղ նրանք իրենք կդիտարկեն կենդանիների բնակատեղերը (ճնճուկի և մրջնի բները), հնարավորության սահմաններում կհետազոտեն դրանք և հաջորդ դասի համար կխոսեն տեսածի մասին: Եթե դա չհաջողվի դասի ժամանակ, կարելի է այս առաջադրանքը տանը կատարել և պատրաստվել շնորհանդեսի համար:

7. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Պլաստիլինից ծեփել որևէ կենդանու մոդել, իսկ հաջորդ դասի համար ներկայացնել ու խոսել, թե ապրելու համար այս կենդանուն ինչ է անհրաժեշտ:

8. ԴԱՄԻ ԱՍՓՈՓՈՒՄ (4-5 րոպե)

Դասն ամփոփելուց հետո ուսուցիչը խնդրում է աշակերտներին ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ ծանոթանալ «Մա հետաքրքիր է» խորագրին և նրանց օգնությամբ գտնել տեղեկություններ:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=HwPeYXwcvXk&feature>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասակարգման վարժություն

Ուսուցիչը գրատախտակին գծում է երկու երկայունակ աղյուսակ: Աշակերտներին խնդրում է դասագրքում տրված անտառային գազաններին խմբավորել.

ա) 1-ին աղյուսակում – Եղջերավոր և անեղջուր կենդանիներին,

բ) 2-րդ աղյուսակում – Խոշոր և փոքր մարմին ունեցող կենդանիներին: (Աշակերտները տեսնում են, որ միևնույն առարկաները (այս դեպքում՝ կենդանիները) կարող են խմբավորվել՝ ըստ տարբեր նշանների:)

ԴԱՍ 10

Թեմա.

Վերնագիր.

Դասի նպատակը.

Կենդանի միջավայր. Կենդանիներ

Անտառի տարատեսակները

Աշակերտները կարողանան տարբերել և անվանել փշատերև և սաղարթավոր անտառները:

Ըստ ծառի անվանման կազմել անտառի անվանում (օրինակ՝ եղևնի – եղևնուտ):

Ծանոթանալ անտառային գազանների բնական միջավայրին: Ըստ նկարագրուման՝ որոշել գազանների հետքերը, տարբերել դրանք իրարից:

Կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների մասին տեղեկություններ հավաքել և դատողություն անել:

Զարգացնել դիտարկման և հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառել հաղորդակցման տարբեր միջոցներ:

Կոնկրետ օրգանիզմի համար ստեղծել կենսական միջավայրի մոդել:

Դատողություն անել մաքուր շրջակա միջավայրի անհրաժեշտության և նշանակության մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, S2S):

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների մասին տեղեկություններ է հավաքում և դատողություն անում:

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

Անհրաժեշտ նյութ.

գունավոր ֆլումաստերներ կամ մատիտներ, մկրատ, սոսինձ, թերթ, 1 հատ ֆորմատ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է առաջադրանքը ստուգելով և աշակերտներին առաջարկում է բերած մոդելներով ստեղծել իրենց կենդանաբանական այգին, կենդանիներին տեղավորել համապատասխան

ազատավանդակներում և կազմակերպել դասարանական ցուցահանդես: Այնուհետև դիմում է դասարանին.

- Հիշե՛ք՝ ինչպե՞ս է կոչվում այն վայրը, որտեղ շատ ծառեր են միասին աճում:
- Ձեզնից ո՞վ է անտառում եղել:
- Հաճելի՞ է անտառում զբոսնելը: Ինչո՞ւ:
- Բացի ծառերից, ուրիշ ի՞նչ է աճում անտառում... (Թփեր, խոտեր, սնկեր)

Այնուհետև ուսուցիչը հավելում է, որ որոշ անտառներում միայն փշատերև ծառեր են աճում, որոշ անտառներում՝ միայն սաղարթավոր ծառեր: Հանդիպում են նաև այնպիսի անտառներ, որտեղ և՛ փշատերև, և՛ սաղարթավոր ծառեր են աճում: Այս անտառների անուններն էլ են տարբեր: Դասագրքում երեք տեսակի անտառների նկարներն էլ կան: Աշակերտները պետք է բացեն գրքերը, որոշեն, թե որ նկարում է պատկերված փշատերև անտառ, ո՞ր նկարում՝ սաղարթավոր և բնութագրեն: Ըստ վերջին նկարի, նրանք պետք է բացատրեն, թե ինչ է նշանակում խառը անտառը:

2. ԴԱՍԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԱՆՏԱՌԻ ՍՏԵՂԾՈՒՄ (10-12 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին հիշեցնում է, որ առաջին դասարանում նրանք ստեղծել են այսպես կոչված «անտառ», որը խառը անտառ ստացվեց: Այժմ առաջարկում է կատարել նման աշխատանք և դրա համար բաժանում է մեջտեղից կիսված թերթեր, որոնց վրա աշակերտները պետք է ծառ նկարեն ու գունավորեն: Կարող են ընտրել այն ծառը, որը դպրոցի բակում է աճում, կարող են նաև ցանկացած ուրիշ ծառ ընտրել: Այնուհետև աշակերտները կտրում-հանում են իրենց ծառերը, հերթով դուրս են գալիս պատին փակցված մեծ ֆորմատի թղթի մոտ, որի վրա ուսուցիչ օգնությամբ փակցնում են իրենց «ծառերը»:

Քանի որ բոլոր աշակերտները նույն պահին չեն վերջացնի աշխատանքը, բոլորը միասին չեն փակցնի ծառերը, մանկավարժը պետք է նրանց հիշեցնի, որ չխանգարեն իրար: Այսպես դասասենյակում ստեղծվում է «անտառ»: Վերջում ուսուցիչը հարցնում է՝ ինչպիսի՞ անտառ ստացվեց: Ինչպիսի՞ սովեր կլինի այս անտառում:

3. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄ ԱՆՏԱՌՈՒՄ (8-10 րոպե)

Ուսուցիչը հարց է տալիս.

- Ձեր կարծիքով, ի՞նչ է պակասում այս անտառում:
- Երեխաները հեշտորեն կգուշակեն, որ անտառում չկան գազաններ:

- Եկեք բնակիչներով լցնենք, բնակեցնենք մեր անտառը: Սրա համար բացեք Աշակերտի տետրի հավելվածը (Հավելված 8), գտեք անտառի բնակիչների նկարները (սրանք այն գազանների նկարներն են, որոնք նրանք նախորդ դասին են ուսուցնասիրել):

Աշակերտները գտնում են անտառի գազանների նկարները: Աշակերտը պետք է ընտրի նրանցից միայն մեկին, կտրի-հանի և բնակեցնի իրենց կողմից ստեղծված անտառում (պատին կամ թղթին): Մինչ աշակերտներն աշխատում են, ուսուցիչը մի տեղ, ֆլումաստերով անտառի մոտակայքում գետ պետք է նկարի: Կենդանիներին անտառում տեղավորելու գործընթացը պետք է հսկի ուսուցիչը, որպեսզի աշակերտները իրար չխանգարեն ու համերաշխ աշխատեն: (Եթե դասարանում աշակերտների քանակը փոքր է, ուսուցիչը կարող է երեխաներին հանձնարարել երկուսական նկարի վրա աշխատել):

Այսպես կկենդանանա «դասարանական անտառը»:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Այնուհետև ուսուցիչը խնդրում է աշակերտներին պատասխանել հարցին.

- Ձեր կարծիքով, մեր անտառում ինչո՞ւ գետ նկարեցի:

Պատասխանները թերևս տարբեր կլինեն: Այս շարքում գուցե և լինի մեկը, որ ասի՝ գետի ջրով գազանները հագեցնելու են իրենց ծարավը: Ուսուցիչը հաստատում է, որ դա իսկապես այդպես է, ծարավը հագեցնելու համար խոշոր գազանները երբեմն անտառից դուրս են գալիս և ուղղվում դեպի գետը: Այդ ժամանակ այժամը և եղնիկը չափազանց զգուշ պետք է լինեն, որպեսզի հանկարծ գիշատիչ կենդանիների կեր չդառնան: Ուսուցիչը հանձնարարությամբ աշակերտները նորից բացում են 11-րդ դասը և նայում են նկարը: Ուսուցիչն ասում է.

- Ինչպես երևում է, այս գետի մոտ արդեն եղել են կենդանիներ: Ձեր կարծիքով, ինչի՞ց հասկացա: Երեխաները տեսնում են, որ գետի մոտակայքում ոտնահետքեր կան: Ուսուցիչը նորից հարցնում է.

– Ուրեժն, եկեք ուշադիր նայենք այս ոտնահետքերին և որոշենք, թե որ ոտնահետքը որ կենդանուն է պատկանում: Ձեր կարծիքները զույգերով փոխանակեք:
Երեխաները քննարկում են, համաձայնության են գալիս և պատրաստվում շնորհանդեսի համար:

5. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2-3 րոպե)

Ըստ ձեզ, անտառի բնակիչների համար արդյոք վտանգ կստեղծվի⁶, եթե գետն աղտոտվի կենցաղային կամ քիմիական թափոններով:

6. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասը: Դասագրքում տրված պարզ վարժությունը ցանկալի է հասցնեն կատարել հենց դասի ընթացքում: Եթե չհասցնեն, ուսուցիչը խնդրում է երեխաներին այս առաջադրանքը տանը կատարել:

Երաշխավորվող տեսառեսուրս. https://youtu.be/aqyHpkst3_Y

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը կազմակերպում է դասարանական քննարկում՝ հետևյալ հարցերի շուրջ.

– Ձեր կարծիքով, ինչո՞ւ են փնտրում այս ոտնահետքերը:

– Ի՞նչ ուղղությամբ էր գնում արջը:

– Արջը դանդաղ էր շարժվում, թե՞ արագ: Ինչո՞ւ էք այդպես մտածում:

– Ի՞նչ ուղղությամբ էր գնում այծյամը:

– Ե՞րբ էր այծյամը արագ շարժվում: Ինչո՞ւ էք այդպես մտածում:

– Ձեր կարծիքով ավելի շուտ արջն է գետի մոտ եղել, թե՞ այծյամը: Ինչո՞ւ էք այդպես մտածում:

(Երեխաները դիտարկման արդյունքում ցանկալի է գուշակեն, որ հետքերը փնտրում են թաց գետնին, արջը գետի մոտ եկել ու ետ է դարձել, նրա հետքերը մոտ են իրար և համաչափ հեռավորության վրա են, ինչը նշանակում է, դանդաղ է եկել, այծյամի հետքերից երևում է, որ նա զգուշորեն է մոտեցել գետին, երևի վտանգ է զգացել ու շատ արագ ետ՝ դեպի անտառ է վազել, ինչպես երևում է, այծյամը գետի մոտ եղած արջի հոտն է զգացել ու փախել է: Սա նշանակում է, որ արջն ավելի շուտ է եղել գետի մոտ:)

ԴԱՍ 11

Թեմա.

Կենդանի միջավայր. Կենդանիներ

Վերնագիր.

Թռչուններ

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան մասնակցել գործնական ակտիվությունների և հանդես բերեն հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Մարմինները ճանաչել, նկարագրել/տեսակավորել:

Թվարկել/գուշակել մարմնի բնորոշ նշանները:

Տեղեկություններ հավաքել կենդանու բնական միջավայրի նշանակության մասին և դատողություն անել այդ մասին:

Կոնկրետ օրգանիզմի համար ստեղծել կենդանական միջավայրի մոդել:

Նկարագրել օրգանիզմների տարբեր բնակատեղեր, հետազոտել դրանց կառուցման առանձնահատկությունները:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3.Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.III.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

**Արդյունքն ակներև է,
եթե աշակերտը.**

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, S2S):

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջումների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ապլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ՝ պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):

Ընտրում է նյութ՝ տվյալ նշանակումն ունեցող մարմին (կամ դրա մոդել) պատրաստելու համար, դատողություն է անում այդ մարմնի նշանակման հետ նյութերի հատկանիշների (օրինակ՝ ողորկություն, թափանցիկություն, առաձգականություն, ջրի մակերևույթին լողալու ունակություն, ջրանցիկություն) համապատասխանության մասին:

Անհրաժեշտ նյութ.

կավ, ճյուղեր, մանրաքարեր, հարդ, հող, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, մկրատ, սոսինձ, թերթ, տեսանյութ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-5 բույս)

Դասը սկսվելուն պես ուսուցիչը ուշադրությունը հրավիրում է դասարանական անտառի վրա ու ասում է.

– Մեր անտառն արդեն լի է գազաններով, բայց այնպիսի լռություն է, որ չափազանց տխուր է երևում: Ինչ էք կարծում, ի՞նչ է պակասում այս անտառին:

Երեխաներն իրենց ենթադրություններն են արտահայտում և վերջում հասկանում են, որ ուսուցիչը թռչուններին նկատի ունի:

– Եկեք հիմա ծանոթանանք այն կենդանիներին, որոնք թռչում են և այդ պատճառով կոչվում են թռչուն: Եթե ցանկանում եք, նրանցից մի քանիսին կարող ենք անտառում բնակեցնել:

Աշակերտները պետք է բացեն դասագրքերը և դիտեն թռչունների նկարները: Ուսուցիչն ասում է, որ ընտանի թռչունները նրանց արդեն ծանոթ են, հետևաբար խոսքն այս անգամ վայրի թռչունների մասին կլինի: Նկարների վրա աշխատանքը կատարվում է գույգերով. աշակերտները պետք է ձանաչեն վայրի թռչուններին և անվանեն:

2. ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿԵՑՈՒՄ ԱՆՏԱՌՈՒՄ (10-15 րոպե)

Հետո ուսուցիչն աշակերտներին առաջադրում է Աշակերտի տետրում (Հավելված 7) գտնել թռչունների նկարները, կտրել-հանել և անտառում բնակեցնել: Բացի այդ, բացատրում է աշակերտներին, որ ոչ բոլոր վայրի թռչուններն են անտառում ապրում (շատ վայրի թռչուններ բաց, անտառագուրկ վայրերում են ապրում), այդ պատճառով միայն որոշ թռչունների նկարներ են տրված հավելվածում: Աշակերտներից յուրաքանչյուրը միայն մեկ նկար պետք է ընտրի, կտրի-հանի և տեղավորի անտառում (ամրացնի կամ փակցնի): Ուսուցիչը, ինչպես նախորդ դասերին, այս անգամ էլ վերահսկում է աշակերտների աշխատանքն այսպես կոչված անտառում (պատի մոտ):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-5 րոպե)

Այնուհետև ուսուցիչ պահանջով աշակերտները կրկին վերադառնում են դասագրքերին, որպեսզի կատարեն թռչունների նկարների վերնում տրված առաջադրանքը. պետք է կռահեն, որ անտառում գրքի մեջ տրված ոչ թե բոլոր թռչուններն են ապրում, այլ միայն նրանք, որոնց իրենք կտրեցին-հանեցին ու բնակեցրին անտառում: Դրանք են փայտփորիկը, բուն, հոպոպը, կկուն:

Ուսուցիչը քննարկման համար տալիս է այսպիսի հարց.

– Ինչո՞վ է տարբերվում գազանը թռչունից:

Աշակերտները թվարկում են տարբերակիչ նշանները, սակայն, հնարավոր է, որ չհիշատակեն, որ թռչուններն, ի տարբերություն կաթնասունների, ձվադրում են և ձվից դուրս են գալիս ձագերը: Այս տարբերության վրա աշակերտները ուշադրություն են դարձնում, երբ անցնում են երկրորդ էջին տրված վարժության կատարմանը (որտեղ աշակերտները ձվերի հետ պետք է կապեն ու նկարագրեն այն կենդանիներին, որոնք ձվադրելով են բազմանում, օրինակ՝ հավը, արծիվը, աղափսին, ջայլամը, պինգվինը և ծիծեռնակը):

4. ՃԱՆԱՉԵԼ ԹՈՉՈՒՆՆԵՐԻՆ՝ ԸՍՏ ՏԵՔՍՏԻ (8-10 րոպե)

Ուսուցիչը վարում է ծանոթ խաղը կենդանիներին ճանաչելու համար: Նա կարդում է փոքր տեքստը, որի բովանդակությունից ելնելով, աշակերտները պետք է գուշակեն՝ որ թռչունի մասին է խոսքը:

1-ին. «Այս փոքրիկ թռչունները գարնանը, սովորաբար ապրիլին են չվադառնում մեր երկիր: Նրանց հաճելի ծվլոցը կենդանացնում և ուրախությամբ է լցնում շրջապատը:

Նա սիրում է մարդկանց մոտիկ ապրել: Գարնանը վերադառնալով կամ հին բնին է դառնում, կամ նոր բույն դնում: Դրա համար պատշգամբում, ծածկի տակ, կատվի համար անհասանելի տեղ է գտնում ու սկսում է զարմանալի վարպետությամբ, ցեխով, ցախերով ու մանր քարերով սարքել իր փոքրիկ բույնը: Հետո բնում ձվեր է դնում, ձագեր հանում: Այս փոքրիկ հավքը մկրատաձև պոչիկ ունի»: (Ծիծեռնակ)

2-րդ. «Սա էլ անտառային տարօրինակ մի թռչուն է: Նա ինքն իր համար բույն չի շինում, ձագեր չի հանում: Հաճախ ենք տեսնում նրան, թե ինչպես է թռչում՝ ձուն կտցին: Մտածում են, որ նա գետնի վրա է ձվադրում, հետո ձուն կտցին առնում ու տանում է ուրիշ հավքի բնում դնում: Երբ որևէ միջատակեր թռչուն կարճ ժամանակով թողնում է բույնը, այս մեր տարօրինակ թռչունը նույն պահին, օգտվելով առիթից, թռչում է նրա բնի մոտ ու ձուն այնտեղ տեղավորում: Բույն վերադարձած մայր թռչունը ոչինչ չի նկատում և իր ձագերի հետ այս ձագն էլ է հանում: Այսպես տաքացնում, կերակրում ու մեծացնում են ձագին ուրիշ թռչունները»: (Կկու)

3-րդ. «Այս փոքրիկ թռչնի կուրծքը սպիտակ է, մեջքն ու թևերը՝ ժանգի գույնի: Հատկապես գեղեցիկ են մեծ, մուգ աչքերը: Գարնանն այս թռչուններն այն ժամանակ են չվադառնում, երբ արդեն բավական տաք է, ու թփերը կանաչ են: Նրանք մացառների ու թփերի մեջ են սիրում բույն դնել, հատկապես նրանց հրապուրում է վարդի թուփը: Ձագերին կերակրելու համար նրանք անհամար փասակար միջատներ են բռնում և նրանց թրթուրները ոչնչացնում: Գարնանը հաճախ ենք լսում նրանց չքնաղ դայլայլը, հաճախ դայլայլի համար այս թռչունն այնպիսի ժամանակ է ընտրում, երբ բոլոր մյուս թռչունները լուռ են: Այո՛, նրանք զիջերներն էլ են դայլայլում: Հիասքանչ է այս դայլայլը, նրանց հետ ոչ մի թռչուն չի համեմատվի»: (Մոխակ)

4-րդ. Այս թռչունին հաճախ «անտառի բժիշկ» են անվանում, և դա արդարացի է: Նրա հիմնական կերը անտառի փասակար միջատներն ու նրանց թրթուրներն են: Ծառի կեղևի մեջ բնադրած թրթուրներին էլ է նա ոչնչացնում: Ահա, տեղավորվեց ծառին ու զգում է, որ կեղևի մեջ թրթուրներ

են թաքնվել, իր ամուր կտուցով կտցում է, ու լսվում է նրա անդադար թակոցը. տուկ-տուկ-տուկ... Երբ ծակում է, ներս է մտցնում իր երկար, կպչուն լեզուն և դուրս է բերում ծառի փասատուներին: Այսպես է «բուծում» ծառերին այս թռչունը»: (Փայտփորիկ)

5. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1-2 բույս)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի բաժանում է գործնական վարժության համար պատրաստած «շինանյութ» (կավ, կարելի է պլաստիլինով փոխարինել, մանր ճյուղեր, հարդ, հող, մանրաքարեր) և հանձնարարում է ճնճողուկի համար բույն կառուցել: Ծնորհանդեսի ժամանակ ցանկալի է, որ հիմնավորեն, թե ըստ իրենց, ինչու է ճնճողուկն ընտրում այդ շինանյութը:

6. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 բույս)

Վերջում ուսուցիչն ամփոփում է դասը և բացատրում է երեխաներին դասի վերջում տրված վարժությունը. «Համաձայն ես արդյոք»: Եթե աշակերտը համաձայն է որևէ նախադասության, ոտքի պետք է կանգնի:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԸԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե դասի ժամանակը հնարավորություն ընձեռի, ապա ցանկալի է, որ ուսուցիչը երեխաների համար կարդա Վաժա-Փշավելայի «Ճայերի հարսանիքը», կոնկրետ՝ այն փոքրիկ հատվածը, որտեղ խոսքը հարսանիքին հրավիրված թռչունների մասին է:

ԴԱՍ 12

Թեմա.

Կենդանի միջավայր. Կենդանիներ

Վերնագիր.

Սողացող կենդանիներ

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան տարբերել և անվանել սողուններին:

Կենդանիների միջև (սողուններ, կաթնասուններ, թռչուններ) նմանություններն ու տարբերությունները արձանագրել:

Խոսել կենդանիների տեղաշարժման միջոցների մասին:

Հավաքել անհրաժեշտ տվյալները:

Հաղորդակցման տարբեր ձևեր կիրառել/ներկայացնել:

Ընտրել կենդանի, մոդել ստեղծել և նկարագրել:

Դատողություն անել կոնկրետ կենդանու կենսական պահանջ-մունքների մասին:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրողումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ապլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ՝ պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):

Անհրաժեշտ նյութ.

տեսանյութ, պլաստիլին, գործնական աշխատանքի նյութ. ավազ, մանրաքարեր, ֆլումաստերներ, ֆորմատ:

1. ՆԵՐԱԾՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ԵՎ ԳՈՒՇԱԿԵԼՈՒ ԽԱՂ (10-12 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է գրույցով այն մասին, որ կան այնպիսի կենդանիներ, որոնք ոչ գազաններ են, ոչ էլ թռչուններ, չնայած որ գազանի էլ են նման, թռչունի էլ: Դասագրքում այս կենդանիներին ծանոթանալուց առաջ, ուսուցիչը երեխաներին առաջարկում է նրանց արդեն ծանոթ գուշակելու խաղը խաղալ. նա կարդում է կենդանու համառոտ բնութագիրը, իսկ աշակերտները պետք է գուշակեն:

Աշակերտներն աշխատում են գույզերով, նրանք ընդհանուր թղթի վրա պետք է գրեն նկարագրվող կենդանիների անունները (այնպես, ինչպես նման պարապմունքների ժամանակ):

1. «Այս փոքրիկ կենդանին շատ արագ է շարժվում և հմտորեն թաքնվում է քարերի, խոտերի մեջ կամ գետնի վրա փոքրիկ ճաքերում: Դրան նպաստում է ձկուն ու երկարավուն մարմինը, որը վերջավորվում է երկար ու սուր պոչով: Ոտքերն այնքան թույլ են, որ մարմինը վերև չի կարող բարձրացնել, ուստի շարժվելիս ոչ միայն ոտքերն է գործի դնում, այլ նաև հենվում է փորի ու պոչի վրա: Այնպես որ, նա սողալով է շարժվում»: (Մոդես)

2. «Նա ոտքեր չունի, բայց միննույն է, արագ է շարժվում: Նա գետնին սողում է՝ երկար, անոտք մարմնով: Նախ գալարվում է, հետո հանկարծակի ուղղվում ու առաջ գնում: Հաճախ ոլորվում, պառկում, տաքանում է արևի տակ: Զոհին կամ թույնով է սպանում, կամ ամբողջությամբ կուլ է տալիս»: (Օձ)

3. «Նրա ողջ մարմինը զրահով է պատված: Այս թասակը բացվածքներ ունի միայն առջևի մասում ու ետնամասում: Առջևի մասից դուրս են գալիս գլուխն ու դիմացի ոտքերը, ետնամասից՝ ետևի ոտքերն ու կարճ պոչը: Ալարկոտ է ու դանդաղ է շարժվում: Զմռանը փոս է փորում, հողի մեջ թաքնվում, մինչև գարուն քուն է մտնում»: (Կրիա)

4. «Այս վիթխարի կենդանին կյանքի մեծ մասը գետում կամ լճում է անցկացնում: Երկար ու ամուր պոչի օգնությամբ հիանալի լողում է: Քթանցքերն ու աչքերը գլխի վերին մասում են տեղադրված, ինչի շնորհիվ կարող է գլուխը մի փոքր դուրս հանել ջրից այնպես, որ շնչի ու շրջապատը դիտի, իսկ ինքը չի երևում, դարանակալած է: Բավական է անտիլոպը, զեբրան կամ ուրիշ գազաններ գան ջուր խմելու, հանկարծակի վրա է պրծնում է իր հսկայական երախով, քաշում է ջրի մեջ ու իր սուր ատաճներով կտոր-կտոր անում: Գետնի վրա նա շատ դանդաղ է սողում իր կարճ ոտքերով, առավելապես պառկում է ու արևի տակ տաքանում»: (Կոկորդիլոս)

Կարդալի ավարտելուց հետո, ուսուցիչը գրատախտակին գրում է ճիշտ պատասխանները (մոդես, օձ, կրիա, կոկորդիլոս), և խնդրում է աշակերտներին ինքնուրույն ստուգել և ուղղել իրենց գուշակած պատասխանները:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՍԳՐՔՈՎ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ (5-10 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքերը և նայել տրված նկարները. ո՞ր կենդանին է իրենց ծանոթ և ո՞րը՝ ոչ: Աշակերտները տրված բառերը պետք է վերագրեն համապատասխան

կենդանիներին ու ասեն դրանց հաջորդական համարը: Աշակերտների մեծ մասի համար թերևս անծանոթ կլինի վարանը, հետևաբար ուսուցիչը համառոտ պատմում է նրա մասին. «Վարանը մեծ չափսերով մողես է, բնակվում է որոշ շոգ երկրներում: Կոմոդո կղզում (Ինդոնեզիայում) ապրող վարանի երկարությունը երեք մետրի է հասնում: Այս սարսափելի գիշատիչ կենդանին եղնիկներով, վարագներով և ուրիշ կենդանիներով է սնվում: Նրա կծածը մահացու է, աֆրիկական վարանը շատ ավելի փոքր է, նա փոքր կենդանիներով ու կոկորդիլոսի ձկներով է սնվում, որոնք վարպետորեն գողանում է»:

Հետո ուսուցիչը համառոտ քննարկում է սկսում հետևյալ հարցերի շուրջ.

– Գազանը քայլում կամ ցատկում է, թռչունները թռչում են, այս կենդանիներն ինչպե՞ս են շարժվում:

– Ձեր կարծիքով, ինչո՞ւ են նրանք սողուններ կոչվում:

– Ինչո՞վ են տարբերվում սողունները թռչուններից:


– Ինչո՞վ են որոշ սողուններ նմանվում գազաններին (չորս ոտք ունեն, որոնց միջոցով շարժվում են, ատամներ ունեն):

– Ինչո՞վ են տարբերվում սողունները գազաններից (մորթի չունեն, մեծ մասը բազմանում է ձվերով, սառնարյուն են):

Ճանաչողական տեսաֆիլմի դիտումից հետո ուսուցիչը հարց է տալիս՝ ըստ ձեզ, ինչո՞վ են իրար նման սողուններն ու թռչունները:

3. ԴԻԱԳՐԱՄԻ ԼՐԱՑՈՒՄ (5-8 րոպե)

Ուսուցիչը գրատախտակին գուգահեռաբար գծում է այսպես կոչված «Վեննի դիագրամ» և ըստ աշակերտների պատասխանների՝ լրացնում է այն:



4. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՍՈՂՈՒՆՆԵՐԻՆ՝ ԴԻՆՈՋԱՎՐԵՐԻՆ (5-8 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին նորից բացել դասագրքերը և ծանոթանալ «Մա հետաքրքիր է» խորագրին, որտեղ խոսքը հնագույն սողունների մասին է: Նրանք շատ վաղուց են ապրել երկրի վրա ու ոչնչացել են: Նրանց ոչնչացման պատճառը ոչ ոք հաստատ չգիտի: Աշակերտները նկարներից հասկանում են, որ խոսքը դինոզավրերի մասին է: Աշակերտները նայում են նկարները, պատկերացնում նրանց չափսերն ու կարդում են նրանց անունները:

ԴԻԴԱԿՏԻԿ ՆՅՈՒԹԻ ՄՈՂԵԼԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Դասարանը բաժանվում է խմբերի: I և II խումբը ֆորմատի վրա ստեղծում է սողունների կենսամիջավայրի մոդել (օրինակ՝ լիճ, գետ, անապատ և այլն): Աշակերտները կարող են նկարել կամ սոսնձի և տարբեր նյութի միջոցով (ավազ) ստեղծել, օրինակ, անապատ, գետի ափ: III-IV խումբը կծեփի սողուններ: Վերջում կստեղծվի դիդակտիկ նյութ՝ մոդել:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այսպիսի ուսումնական գործունեությամբ աշակերտները լավ կըմբռնեն և կփոխանցեն գոյություն ունեցած և ստացած տեղեկատվությունը: Այս անգամ ոչ թե բառերով, այլ դիդակտիկ նյութով, որն իրենք են ստեղծում: Ձարգանում են նրանց երևակայությունը և ստեղծագործական կարողությունները, բարձրանում մոտիվացիան: Ցուցահանդեսը կարող է դիտել նաև ուրիշ դասարանի աշակերտներ: Այս ժամանակ աշակերտներն իրար հետ փոխանակվում են տեղեկություններով:

Աշակերտներին կգնահատի հատուկ «մրցատյանը», որի կազմի մեջ կարող են լինել ուրիշ դասարանի աշակերտներ (3-4 աշակերտ):

Գնահատման ենթադրյալ սխեմա.

| | I ԽՈՒՄԲ | II ԽՈՒՄԲ | III ԽՈՒՄԲ | IV ԽՈՒՄԲ |
|--------------------|---------|----------|-----------|----------|
| Լավագույն աշխատանք | | | | |
| Լավ աշխատանք | | | | |
| Միջին աշխատանք | | | | |
| Անբավարար | | | | |

ՈՒՍՈՒՑՁԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաղ «Կենդանիները սեղանի վրա»

Ուսուցիչը սեղանին է շարում վայրի կենդանիների նկարներ, որոնց թվում մի քանիսը սողուններ են (ընդամենը՝ մինչև 12 կենդանու նկար): Մոտեցող աշակերտին տրվում է 10 վայրկյան դիտելու ու մտապահելու համար: Հետո նա պետք է վերադառնա ու բնութագրի՝ ուսուցչի պահանջով.


ա) սեղանի վրայի սողուններին,

բ) մյուս կենդանիներին:

Հետո աշակերտը շրջվում է դեպի սեղանը և գնահատում՝ ճիշտ է պատասխանել, թե՞ որևէ բան շփոթել է:

ԹԵՍՏ 2


1. Կենդանուն կապի՛ր իր ձագի հետ:



2. Թվարկած կենդանիները տեղադրի՛ր համապատասխան խմբում. առյուծ, արծիվ, կոկորդիլոս, մողես, արջ, ճուռակ, օձ, լուսան, ճնճղուկ:

| | | | |
|--------|------------|--------|---------|
| Գագան | առյուծ | արջ | լուսան |
| Թռչուն | արծիվ | ճուռակ | ճնճղուկ |
| Սողուն | կոկորդիլոս | մողես | օձ |

3. Նկարում տրված կենդանիներին սլաքներով կապի՛ր իրենց հետքերի հետ: Առաջադրանքը կատարի՛ր այնպես, որ գծերը չհատվեն:



4. Գտի՛ր ավելորդ բառը և վրան գի՛ծ քաշիր.

շարժում, շնչառություն, աճ, կարգավ, բազմացում, սնվել:

ԴԱՍ 13

Թեմա.

Կենդանի միջավայր. Բույսեր

Վերնագիրը.

Բույսերը և նրանց մասերը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան մասնակցել գործնական ակտիվությունների:

Ճանաչել ու անվանել բույսի հիմնական արտաքին մասերը:

Արձանագրել տարբեր բույսերի մասերի միջև առկա նմանություն-տարբերությունները:

Պարզ սարքերի կիրառմամբ դիտարկել ուսումնասիրման օբյեկտը:

Դիտարկման արդյունքները գրավոր հաշվառել:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:

Անհրաժեշտ նյութ.


տեսանյութ, ուսուցչին անհրաժեշտ նյութ. բույժ դանակ, մանրադիտակ, խոշորացույց, տեսաֆիլմ:

1. ԲՈՒՑՍԻ ՄԱՍԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԴՊՐՈՑԻ ԲԱԿՈՒՄ (15-20 րոպե)

Ուսուցիչը մեկ անգամ ևս աշակերտների ուշադրությունը հրավիրում է դասասենյակում նրանց ստեղծած անտառին և հարցնում է.

– Բույսին ի՞նչ է անհրաժեշտ գոյության համար (բնահող, օդ, ջուր, ջերմություն, լույս):

Պատասխանները գրում է գրատախտակին և լրացնում է սխեման:



– Հիշո՞ւմ եք, ինչ մասերից է բաղկացած բույսը:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է միասին դուրս գալ դպրոցի բակ և այնտեղ միասին դիտել բույսը և նրա մասերը:

Ուսուցիչը երեխաներին կազմակերպված տանում է դպրոցի բակ, որտեղ խոտաբույսեր ու թփեր կան: Աշակերտներն ուշադիր դիտում ու ուսումնասիրում են հետազոտելիք բույսը, ինչում նրանց օգնում են ուսուցչի նպատակաուղղված հարցերը:

– Ինչ էք կարծում, ծաղիկներից բացի, ի՞նչ ընդհանրություն կա այս երկու բույսերի միջև (ցույց է տալիս ցանկացած երկու բույս):

– Ինչպիսի՞ տերևներ ունի նրանցից մեկը: Երկրորդը: (Աշակերտները համեմատությունը պետք է անեն ոչ միայն դիտելով, այլև շոշափելով):

– Ի՞նչ տարբերություն կա այս բույսերի ծաղիկների, պտուղների միջև (մտաբերեն նրանց ծաղիկները, զննեն պտուղները):

– Ցողունը ո՞րն է: Երկուսն էլ միանմա՞ն ցողուն ունեն:

– Ձեր կարծիքով, ցողունն ինչպե՞ս է ամրացված հողում: Ի՞նչն է բույսին ուղիղ պահում: Ինչո՞ւ չի ընկնում բույսը:

– Ինչ էք կարծում, բույսի ո՞ր մասը կտեսնենք, եթե այն հողից հանենք:

Ուսուցիչը որևէ խոտաբույս զգուշությամբ հանում է հողից այնպես, որ արմատները չփասի (սրա համար անհրաժեշտ կլինի հասարակ, բութ դանակ):

– Տեսնո՞ւմ եք, թե որքան ամուր է արմատներով հողում ամրացած: Տեսեք, թե ինչպիսի արմատներ ունի:

– Եկեք հիմա մեկ ուրիշ բույսի արմատները դիտենք: Այն նույնպես այսպիսի՞ն է:

Ուսուցիչը հիմա էլ մեկ ուրիշ բույս է արմատահան անում, և երեխաները եզրակացնում են, որ արմատները նույն նշաններն ունեն (օրինակ՝ ճյուղավորված են), բայց չափսերով ու ձևով տարբերվում են իրարից:

– Ինչ էք կարծում, բույսին ինչո՞ւ են պետք արմատները:

– Ձեր կարծիքով, ի՞նչ կլինի, եթե բույսերն ամբողջությամբ հողի երեսին թողնենք: Ինչո՞ւ:

– Ինչպե՞ս վարվենք, որ նրանք կրկին շարունակեն ապրել:

Ուսուցիչն իր ձեռքին եղած բույսերը կրկին զգուշ կտնկի հողի մեջ, ինչպես հանել էր:

Այնուհետև ուսուցիչը շարունակում է հարցեր տալ:

– Ձեր կարծիքով, ի՞նչ կլինի, եթե բույսերը նորից խրենք հողի մեջ: Ինչո՞ւ:

– Ի՞նչ անենք, որ շարունակեն ապրել:

Ուսուցիչը ձեռքի բույսերը խնամքով խրում է հողի մեջ, հետո շարունակում է հարցումը:

– Ինչ էք կարծում, թփե՞րն էլ նույն մասերից են կազմված: Ծա՞ռը:

– Ո՞րն է այս թփի ցողունը: Այս ծառի ցողո՞ւնը:

– Ո՞րն է ավելի հաստ:

– Գիտե՞ք ինչպես է կոչվում ծառի հաստ ցողունը (ծառի բուն):

Այնուհետև ուսուցիչն աշակերտներին խնդրում է բերել բույսի մեկական տերև կամ կեղևի մաս, եթե որևէ տեղ գտնեն:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-4 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բերում է դասասենյակ և խնդրում է բացել դասագրքերը: Նրանք ինքնուրույն պետք է կատարեն դասագրքում տրված վարժությունները:

ա) Ճանաչեն ու անվանեն սլաքներով նշված բույսերի մասերը,

բ) Համեմատեն ծառի ու խոտաբույսի մասերը:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (2-3 րոպե)

Այնուհետև աշխատանքը շարունակվում է Աշակերտի տետրում: Աշակերտները տրված աղյուսակում պետք է գրեն բույսի մասերի անվանումները (ց – ցողուն, տ – տերև, ծ – ծաղիկ, ա – արմատ):

4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-10 րոպե)

Ուսուցիչը գույգերին բաժանում է մեկական խոշորացույց, լավ կլինի, եթե բոլոր աշակերտներն ունենան, և բացատրում է այս սարքի նշանակումը: Նա ունի նաև մանրադիտակ, որի մասին համառոտ տեղեկություններ է տրամադրում աշակերտներին: Այնուհետև խնդրում է խոշորացույցով ուշադիր դիտարկել նյութը (տերևը) և նկարագրել այն: Վերջում ուսուցիչը մեկ անգամ ևս երեխաներին հնարավորություն կտա մանրադիտակով դիտարկել նյութը, նրա բաղադրությունը և այլն:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 թույլ)

Ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները կատարում են աշխատանքային տետրում տրված հաջորդ առաջադրանքը: Նրանք տետրի վերջում տրված հավելվածից (Հավելված 6) պետք է կտրեն-հանեն նկարները և փակցնեն աղյուսակում, 1-ին վարժության հաջորդականությամբ համապատասխան, համապատասխան տեղում:

(ցողուն, արմատ, ծաղիկ, տերև)

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 թույլ)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասի ակտիվությունները:

6. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (1-2 թույլ)

Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է հաջորդ դասի համար բերել միրգ (խնձոր, տանձ, սալոր, կեռաս, նարինջ):

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://youtu.be/O-nY8oucwdI>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է խաղ՝ «Ճանաչենք շոշափելով»: Սրա համար նա օգտագործում է նախապես բերած բույսերը: Ուսուցիչը հերթով իր մոտ է կանչում երեխաներին, ընտրում է բույսը և աչքերը փակ (կամ կապած) աշակերտի ձեռքն է տալիս բույսը: Աշակերտը մատներով շոշափելով պետք է կռահի, թե բույսի որ մասին է ինքը դիպչում (արմատին, ցողունին, ծաղիկին, տերևին) և անվանի:

ԴԱՍ 14 (1)

Թեմա.

Կենդանի միջավայր. Բույսեր

Վերնագիր.

Ի՞նչ է մեզ պատմում արևածաղկի սերմը:

Դասի նպատակները.

Աշակերտները կարողանան ճանաչել բույսի սերմը և խոսել նրա արտաքին նշանների մասին:

Արտահայտել իրենց ենթադրություններն ու հիմնավորել դրանք:

Նկարագրել բույսի աճի գործընթացը:

Հավաքել հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները/նշումներ անել:

Տեղեկություններ հավաքել և դատողություն անել կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ո.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ո.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Հետազոտում է բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները

(օրինակ՝ սենյակային բույսը տեղադրում է տարբեր պայմաններում՝ լույսին/առանց լույսի, ջրում է/չի ջրում), հետազոտության արդյունքները ներկայացնում է տարբեր ձևով (օրինակ՝ բանավոր խոսք, համառոտ գրառումներ, նկար, լուսանկար):

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար. բույսի՝ խնձորի, եգիպտացորենի, լոբու, արևածաղկի և այլնի սերմ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (10-15 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է նախորդ դասին քննարկված թեման և հարցնում է.

– Ձեր կարծիքով, որտե՞ղ պետք է փնտրենք բույսի սերմը:

Երեխաների մի մասը հավանաբար կպատասխանի, որ բույսի սերմը պտղի մեջ է: Ուսուցիչն ավելացնում է, որ բույսի պտուղն էլ, սերմն էլ ծաղկի մեջ են սկսում զարգանալ: Դրա ակնառու օրինակներից մեկը արևածաղկն է: Ուսուցիչը աշակերտներին խնդրում է բացել դասագրքերը և կարդալ արևածաղկի սերմի արկածները:

Ուսուցիչը դասարանը բաժանում է չորս խմբի և և յուրաքանչյուր խմբի առաջարկում է կարդալ տեքստի համապատասխան հատվածը (1-ին խումբ – 1-ին, 2-րդ խումբ – 2-րդ և այլն): Շնորհանդեսի ժամանակ խմբի ներկայացուցիչը պատմում է պատմության համապատասխան հատվածը: Վերջում ուսուցիչը հարցերի միջոցով մեկ անգամ ևս ստուգում է աշակերտների ձեռք բերած տեղեկատվությունը և իրենց կարծիքներն արտահայտելու հնարավորություն է տալիս: Հարցեր է տալիս քննարկման համար.

– Ինչ էք կարծում, մարդկանց անհրաժե՞շտ է արևածաղկի սերմը: Ինչի՞ համար:

2. ԴԱՍԱԼՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱԼՐԿՈՒՄ (5-8 րոպե)

– Ձեր կարծիքով սերմի փոխադրման (տարածման) ուրիշ ի՞նչ ուղիներ կան: Հիմնավորե՛ք ձեր տարբերակը:

(Կամ՝ ինչպե՞ս է տարածվում սերմը բացի այն դեպքերից, երբ հասունանում ու ընկնում է պտղի վիջից):

Արտահայտված ենթադրությունները գրառվում են գրատախտակին (դա կարող են լինել քամին, առուն, թռչունները, կենդանիները):

Հասկանալու համար աշակերտները պետք է բացեն դասագրքի երկրորդ էջը և դիտեն նկարագրողուժները՝ կարդալով կցված փոքրիկ տեքստերը: Այս անգամ յուրաքանչյուր տեքստ բարձրաձայն կարդում է մեկ աշակերտ, մյուսները լսում են: Առաջին տեքստի ընթերցումից հետո աշակերտները կարող են վերհիշել, թե ինչպես է օդում թռչում խատուտիկի սերմը:

Վերջում աշակերտներն ինքնուրույն պետք է կատարեն «Մտածի՛ր» խորագրում տրված վարժությունը: Նրանք պետք է գուշակեն, որ այս ծառի սերմը՝ կաղինը, տարածվում է ջրի միջոցով:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (10-15 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և նրանց բաժանում է տարբեր քանակությամբ տարբեր սերմեր (օրինակ՝ 5 խնձորի, 6 ընկույզի, 4 լոբու, 10 արևածաղկի սերմ և այլն): Աշակերտները պետք է խմբավորեն միատեսակ սերմերը և որոշեն.

ա) Քանի սերմ կա իրենց խմբում,

բ) Ինչ բույսի սերմեր են,

գ) Յուրաքանչյուր բույսի սերմի առանձնահատուկ նշանները (գույն, չափ, ուտելու համար օգտագործում ենք, թե՞ ոչ...):

Շնորհանդեսին աշակերտները պետք է նշեն նաև, որ միատեսակ սերմերը միևնույն բույսին են պատկանում: Նրանք նման են իրար:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին անցկացված ակտիվությունները:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=QP6lVS2AoK4&feature>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է արևածաղկի սերմի տված հարցը. «Ես ձեր ինչի՞ն եմ պետք»:
Շատերն ասել են, որ արևածաղկի սերմեր շատ են սիրում:

- Այժմ ուսուցիչը բանավեճը շարունակում է հետևյալ ուղղությամբ.
- Ի՞նչ նշանակություն ունի բույսը մարդու համար:
- Բույսի ո՞ր մասերն ենք օգտագործում սննդի մեջ:
- Ուրիշ ինչի՞ համար ենք օգտագործում բույսերը:
- Ի՞նչ նշանակություն ունեն բույսերը կենդանիների համար:

ԴԱՍ 14 (2)

- Թեմա.** Կենդանի միջավայր. Բույսեր
- Վերնագիր.** Ծառերը դպրոցի բակում
- Դասի նպատակը.** Աշակերտները կարողանան զարգացնել հետազոտական և դիտարկման հմտություններ ու կարողություններ:
Ծառերի նկատմամբ հոգատար վերաբերմունք ձևավորել:
Սեփական ենթադրություններն արտահայտել, հիմնավորել:
Զգայության օրգանների օգտագործմամբ ուսումնասիրել ծառերը:
Իրականության մեջ որոշել մարմինը, նկարագրել և տեսակավորել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրադրումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Անհրաժեշտ նյութ.

նկարչության թերթեր, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, ստվարաթղթի թերթ:

1. ԾԱՌԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԴՊՐՈՑԻ ԲԱԿՈՒՄ (18-20 րոպե)

Ուսուցիչը ծնողի կամ մեկ ուրիշ մանկավարժի օգնությամբ երեխաներին տանում է դպրոցի բակի այն տեղը, որտեղ ծառեր կան (եթե դպրոցի բակում ծառեր չեն աճում, ուրե՛մս մոտակայքում պետք է գտնեն համապատասխան վայր): Ուսուցիչը դասարանը բաժանում է երկու խմբի (այն դեպքում, եթե դասարանում տասներկուսից ավելի աշակերտ կա), մի խմբի հետ ինքն է աշխատում, երկրորդի հետ՝ նրա գործընկերը:

- Ուսուցիչը պարբերական ցուցումներով աշխատանքը հետևյալ կերպ է առաջնորդում.
- Աշակերտը դիտարկում է ծառերը և իր համար ընտրում է նրանցից մեկը:

- Ծառին մոտիկ է կանգնում ու փակում է աչքերը:
- Շոշափում է ծառի բունը՝ որոշելու համար այն հաստ է, թե՞ բարակ:
- Քիթը մոտեցնում է ծառին և հոտ քաշում՝ նրա հոտը զգալու համար:
- Ձեռքի ավերով ու մատներով շոշափում է ծառի կեղևը՝ հասկանալու համար հարթ է այն, թե՞ խորդուբորդ, ուստի կամ փչակներ կա՞ն, կարող է օգտվել խոշորացնող սարքավորանքից, որպեսզի ավել լավ տեսնի ծառի կեղևի մակերևույթը:

- Ձննում է ծառի հիմքը՝ հասկանալու համար ծառի բնի հաստությունը նույնն է, թե՞ փոխվում է: Ծառի հիմքում մամուռ կամ ճյուղեր չե՞ն աճում:

- Եթե ծառի տակ ծառի տերևներ (փշատերևներ) են թափված, աշակերտը պետք է վերցնի և պահի: Աշակերտները ծառի դիտարկմամբ ստացած տեղեկությունը (տպավորությունները) պետք է մտապահեն, որպեսզի դասի ժամանակ այն օգտագործեն: Վերջում յուրաքանչյուր աշակերտ (եթե հնարավոր է) նկարչության թղթի վրա նկարում է ընտրած ծառի կեղևը: Վերջում ուսուցիչը բոլորին հնարավորություն է տալիս իրենց տպավորություններն արտահայտելու: Ինչը նրանց հետաքրքրեց, ինչ հայտնաբերեցին և այլն: Ուսուցիչը հավելում է, որ «իրենց» ծառերը պետք է շարունակեն դիտարկել տարվա մյուս եղանակներին ևս՝ ինչպիսին կլինի ծառը գարնանը, ամռանը, աշնանը, ձմռանը:


2. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-5 րոպե)

Դասարան վերադառնալով, ուսուցիչը հարցեր է տալիս.

- Ձեր կարծիքով, ինչն է են անհրաժեշտ ծառերը:
- Մարդը ինչի՞ համար է օգտագործում ծառերը:
- Ձեր կարծիքով, մեր դպրոցի բակում ի՞նչ նպատակով են տնկել այս ծառերը:
- Պատկերացրեք, ինչ կլինի, եթե ծառերը ընդհանրապես ոչնչացվեն:
- Կարևոր է արդյոք ծառերը պահպանելը: Հիմնավորե՛ք ձեր կարծիքը:

3. ԶՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԻ ՍՏԵՂԾՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչը գրատախտակի կենտրոնում նկարում է շրջան՝ «Անտառ» մակագրությամբ. ի՞նչ էք պատկերացնում՝ այս բառը լսելիս, ի՞նչ գույնգործություն է առաջացնում այս բառը ձեզ մոտ, ի՞նչ նշանակում ունի անտառը:



4. ԽՍՂ. «ԾԱՌԵՐԻ ՈՒՐՎԱՊԱՏԿԵՐՆԵՐ» (3-5 րոպե)

Ուսուցիչը դասարանը փոքր խմբերի է բաժանում: Խմբերին հանձնարարվում է դիմախաղի ու մեջախաղի միջոցով մարմնավորել դպրոցի բակի ծառերից մեկը: Կարող է ամբողջ խումբը կամենա ծառը մարմնավորել կամ խմբից մեկին՝ ամենաձկուն մասնակցին ընտրեն: Երբ մի խումբը

մարմնավորում է, մյուս խմբերի աշակերտները փորձում են կռահել, թե որ ծառն է ներկայացնում աշակերտը:

Ակտիվության երկրորդ մասում աշակերտները ժեստ-միմիկայի միջոցով պետք է մարմնավորեն ծառը՝ ըստ տարվա եղանակի:

Տերևաթափ – Աշուն.

Տերևակալում, զարթոնք – Գարուն.

Խշշոց – Ամառ.

Քուն, մերկություն – Ձմեռ:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է, թե ինչ են սովորել այս դասին և խնդրում է աշակերտներին հաջորդ դասի համար պահել այն տերևները (կամ փշատերևները), որոնք գտել էին ծառի տակ:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքը տարվում է խմբերում: Աշակերտները մեկ անգամ ևս պետք է նկարեն ու կտրեն-հանեն ծառի ուրվապատկեր, այնպես սոսնձեն սովարաթղթին, որ ծառերն իրար չծածկեն: Այնուհետև ծառի ուրվապատկերի մակերևույթին սոսինձ քսեն ու վրան բամբակ կպցնեն: Այսպես կստանան ձմեռային անտառ: Այնուհետև ուսուցչի օգնությամբ տարբեր «անտառները» (թերթերը) փակցնեն պատին՝ իրար կողքի:

ԴԱՍ 15

Թեմա.

Կենդանի միջավայր. Բույսեր

Վերնագիրը.

Իմ ծառը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան ճանաչել և անվանել բույսի մասերը:

Արձանագրել և նկարագրել տարբեր տեսակի բույսերի միջև նմանություններն ու տարբերությունները:

Տեղեկություններ հավաքել բույսի կենսական պահանջմունքների մասին և դատողություն անել:

Կոլաժ պատրաստել:

Թվարկել կենդանի մարմիններին բնորոշ հատկանիշները:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (անունը, ջուր, օդ, ապաստան) մասին:

Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ապլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ՝ պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):

Անհրաժեշտ նյութ.

Ֆորմատ, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, «սեփական ծառի» տերև կամ փշատերևներ, սոսինձ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔԻ ՎՐԱ (10-12 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին վերհիշել նախորդ դասին ստացած տպավորությունները և այժմ աշխատել դասագրքի օգնությամբ: Նախ աշակերտները պետք է հիշեն իրենց ծառերը՝ ինչպիսի՞ն էր ծառի արտաքին տեսքը: Եթե այն նման է դասագրքում տրված կաղնուն կամ սոճուն, բառացի պետք է հիմնավորեն իրենց տեսակետը: Այստեղ ուսուցիչը ֆրոնտալ հարցեր է տալիս և զրույց է ծավալում.

- Ուշադիր դիտե՛ք կաղնին ու սոճին: Ի՞նչ տարբերություն եք տեսնում նրանց միջև:
- Ինչո՞վ են նման իրար:
- Որևէ մեկը դպրոցի բակում սոճի ընտրե՞լ է: Կաղնի՞:

Այնուհետև աշակերտները ուսուցչի ցուցումով բացում են Աշակերտի տետրերը և տրված շրջանակում նկարում են ծառերի տերևներ (կամ փշատերևներ): Այս նպատակով ումանք օգտագործում են այն տերևները, որ պահել էին նախորդ դասին, ումանք էլ փորձում են հիշողությամբ վերականգնել և այնպես նկարել: Տերևի կողքին ծառի անունը դեռ չեն գրում, քանի որ երեխաների մեծ մասը չգիտի: Ծառի անունը որոշելն ու գրելը նախատեսում է տնային առաջադրանքը:

Հետո աշակերտները պետք է անցնեն Աշակերտի տետրում տրված հաջորդ առաջադրանքին՝ դատարկ շրջանակում պետք է նկարեն իրենց ընտրած ծառի կեղևը: Սրա համար, բնական է, օգտվում են նախորդ դասին կատարած ուրվանկաներից:

2. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-6 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և տալիս առաջադրանք. աշակերտները պետք է խմբերում համեմատեն միմյանց նկարած տերևներն ու կեղևները և շնորհանդեսի ժամանակ պատասխանեն հարցերին.

- Քանի՞ նման տերևներ հայտնաբերվեցին խմբում: Քանի՞ տարբեր տերևներ:
- Քանի՞ նման կեղևներ հայտնաբերվեցին խմբում: Քանի՞ տարբեր կեղևներ:
- Ի՞նչ հետևություն կարող ենք անել, երբ դասարանում մի քանի նման տերևներ կամ կեղևներ ենք հայտնաբերում (նույն տեսակի ծառեր են հանդիպել այս երեխաներին, թե՞ տարբեր):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (4-5 րոպե)

Աշակերտները նորից վերադառնում են դասագրքերին և ուսուցչի օգնությամբ ծանոթանում են «Սա հետաքրքիր է» խորագրին:

4. ԿՈՂԱԺԻ ՍՏԵՂԾՈՒՄ (10-14 րոպե)

Ուսուցիչն իր սեղանին (կամ միացրած նստարաններին) փռում է ֆորմատը և դասարանին հանձնարարում է իրենց ցանկությամբ տեղադրել տերևները և սոսնձել: Քանի որ այս դասը

համընկնում է ուշ աշնան հետ, կոլաժը գեղեցիկ ու հետաքրքիր կլինի: Հետո ցանկալի է անցկացնել վերնագրի ընտրության մրցույթ:

Վերջում ցանկալի է կոլաժը պատին կախել:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 թուպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այն, ինչ սովորել են դասին և երեխաներին տալիս է առաջադրանք. ծնողների հետ որոշել, թե ինչ բույսեր են աճում իրենց տան հարակից տարածքում (փողոցում, այգում, բակում):

ԴԱՍ 15 (2)

Թեմա.

Կենդանի միջավայր. Բույսեր

Վերնագիրը.

Անտառը պահպանի զավակներիդ համար

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան գիտակցել անտառի և ընդհանրապես բնության պաշտպանության և պահպանման անհրաժեշտությունը:

Ձևավորել բնության նկատմամբ սեփական հոգատար վերաբերմունք:

Գիտակցել գրական ստեղծագործության դերը բնության նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորման մեջ:

Մասնակցել դպրոցի միջավայրի բարելավման համար պլանավորված ակտիվություններին:

Դատողություն անել առողջության համար շրջակա միջավայրի նշանակության մասին:

Կապը ԱՌԴ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.


Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Տեղի միջավայրում հետազոտում է օրգանիզմների տարբեր բնակատեղեր (որջ, բույն, տուն), նկարագրում է դրանց կառուցման առանձնահատկությունները:

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

1. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (10-15 թուպե)

Դասի սկզբին ուսուցիչը ստուգում է տնային առաջադրանքը, տեղեկությունները, որը աշակերտները հետազոտման արդյունքում պետք է ձեռք բերեն: Հետո գրատախտակի կենտրոնում շրջան է նկարում, որի մեջ գրում է դասի գլխավոր թեման՝ անտառ, և նրա կողքին գրում է բառերը՝ մարդ, կենդանիներ:



Այսուհետև ուսուցիչը հետևյալ հարցերով դիմում է աշակերտներին և քննարկում է սկսում.

- Ձեր կարծիքով նրանց միջև որևէ կապ կա՞:
- Ի՞նչ նշանակություն ունի անտառը մարդու համար:
- Ի՞նչ նշանակություն ունի անտառը կենդանիների համար:
- Ինչ էք կարծում, ի՞նչ կլինի, եթե մարդիկ բոլոր անտառները հատեն:
- Եթե անտառում հրդեհ սկսվի՞:

2. ԴԱԴԱՐՆԵՐՈՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ. Ռ.ԻՆԱՆԻՇՎԻԼԻԻ «ԿԱՂՆԻ» ՊԱՏՄՎԱԾՔԸ (8-10 րոպե)

Ուսուցիչը տեքստը կարդում է դադարներով ընթերցանության մեթոդի կիրառմամբ և խնդրում է աշակերտներին ուշադիր լսել ու մտապահել տեքստի ընթերցած հատվածը, որպեսզի կարողանան քննարկել, արտահայտել իրենց ենթադրությունները, հիմնավորել, կանխատեսումներ անել: Ուսուցիչը դասարանը բաժանում է մի քանի խմբերի և սկսում է կարդալ.

«Այս կաղնին անտառի եզրին է կանգնած, ծեր, ամուր, մարմինը ոստերով ծածկված, նոսրացած տերևներով: Ոչ ստվեր է փռում, ոչ կաղին տալիս: Հազվադեպ են նրան մոտենում մարդ, գազան կամ թռչուն: Դարերով հոգնած, տառապած ծառի չոր կատարին երբեմն շահեն կկանգնի, այն էլ՝ անշարժ, ցատումով դեպի դաշտը նայելով, կամ փայտփորիկ կայցելի, շտապ, անսիրտ շուրջը կպտտվի՝ ասես պարտականություն կատարելով, մի քանի անգամ կտուցը կխփի, կձայնարկի ու կթռչի դեպի ուրիշ ծառեր: Սկյուռներն էլ լքել են նրան, հեռացել...»

Առաջին դադար

Ուսուցիչն այստեղ ընդհատում է ընթերցանությունը և հարցերով դիմում դասարանին.

- Ի՞նչ զգացում էք այրում տեքստի այս հատվածը լսելիս:
- Ինչ էք կարծում, ի՞նչ է լինելու:
- Ինչո՞ւ էք այդպես կարծում:

Ուսուցիչը շարունակում է ընթերցանությունը մինչև երկրորդ դադարը.

«Մի քանի տարի առաջ կաղնու կողքին գեղեցիկ ծփու ստվերում որսորդները հանգստանալու նստեցին: Կրակ վառեցին, սկսեցին կերուխումը: Մի քիչ որ տաքացան, սկսեցին պարծենալ՝ ես եմ լավ կրակում, չե՛՝ ես: Որսորդներից մեկը ոտքի կանգնեց.

- Ահա գնդակը, ահա հրապարակը, - կաղնու մեծ ոստին լուցկու տուփը դնելով, ասաց. «Կրակե՛նք»: Հրացաններն առան: Ոմանք ծալապատակ նստած կրակեցին, ոմանք՝ կիսապառկած: Ծիծաղով բաց թողած գնդակները դիպչում էին կաղնուն, դառնության պատառիկները սարսափով տարածվում էին այս ու այն կողմ»:

Երկրորդ դադար և ուսուցչի հարցերը.

- Այժմ ինչ էք կարծում, արդարացա՞վ ձեր ենթադրությունը:
- Ի՞նչ կատարվեց պատմվածքում:
- Ինչ էք կարծում, նկատո՞ւմ էին որսորդները, թե ինչ ժառանգ էին հասցնում կաղնուն:
- Ըստ տեքստի, ո՞վ է ծիծաղում: Ո՞վ է մորմոքում:
- Ի՞նչ կասեր կաղնին մարդկանց, եթե խոսել կարողանար:
- Ինչո՞ւ էք այդպես մտածում:

Ուսուցիչը շարունակում է ընթերցանությունը մինչև երրորդ դադարը.

«Որսորդները որ գնացին, քամի բարձրացավ, կաղնու թաց վերքը հողով լցվեց: Անցավ ժամանակ՝ ամիսներ, տարիներ, և ահա, այս տարի գարնանը այն որսորդը, որը լուցկու տուփը տեղավորեց կաղնու բնին, արդեն ալեհեր, փոքրիկ թռռան ձեռքը բռնած, նորից այն վայրերում հայտնվեց»:

Երրորդ դադար և ուսուցիչը հարցնում է.

- Ինչ էք կարծում, երեխայի հայտնվելն այս պարագայում պատահական է, թե՞ նա որոշակի դեր պետք է ունենա (ձեր ենթադրությունն արտահայտեք):
- Հետո ի՞նչ կլինի:
- Ինչո՞ւ էք այդպես մտածում:

Ուսուցիչը շարունակում է վերջին հատվածի ընթերցանությունը.

«Կաղնու վերքի հետքի մեջ մի փունջ մանուշակ էր աճել ու ծաղկունք էր ապրում: Որսորդի թորը՝ գեղեցիկ, քնքուշ մի աղջնակ, հիացած կանգ առավ, ձեռքերով գրկեց, փարվեց կաղնու բնին:

Որսորդը նայեց, նայեց, հետո գլխարկը հանեց ու գլխիկոր կանգ առավ»:

Ուսուցիչը հարցեր է տալիս.

– Հիմա ինչ եք կարծում, արդարացա՞վ ձեր ենթադրությունը:

– Ի՞նչ էր ուզում ասել պապիկը իր այս արարքով:

– Աղջի՞կը:

– Պատմվածքում նշմարվո՞ւմ է արդյոք հույս (հիմնավորե՞ք):

– Ինչ եք կարծում, հեղինակն ի՞նչ է ուզում ասել այս պատմվածքով:

3. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասը և աշակերտների ուշադրությունը հրավիրում է չորս լուսանկարներին, որոնց վրա տարվա տարբեր եղանակներն են պատկերված:

Ուսուցիչը կարող է ֆրոնտալ հարցեր տալ, թե որ նկարում տարվա ինչ եղանակ է պատկերված, և երեխաներն ինչպե՞ս կռահեցին այդ:

Հաջորդ դասի համար ուսուցիչը խնդրում է աշակերտներին տանից բերել ցանկացած միրգ (1 հատ):

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=ZBM5kMFMCOs>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը պայմանավորվում է մեկ կամ երկու ծնողի հետ, որոնք մի քանի տնկի են բերում: Երեխաները դպրոցի բակում ավագների օգնությամբ փոսեր են փորում ու տնկում տնկիները: Հետագայում նրանք պարբերաբար հետևում են տնկիների աճին ու զարգացմանը և խնամում են, ջրում, փխրեցնում են հողը...

Դասի երկրորդ ակտիվության մեջ, գերադասելի է, աշակերտները համեմատելու համար ունենան նաև այլ տեսակի միրգ: Այս դեպքում աշխատող զույգի մի աշակերտը պետք է դիտարկման համար խնձոր ունենա, իսկ մյուսը՝ այլ տեսակի միրգ: Աղյուսակը նույնպես համապատասխանաբար կփոխվի և կլրացվի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ՓՈՐՉ

Թեմա.

Կենդանի միջավայր. Բույսեր

Վերնագիրը.

Բույսին ինչի՞ համար է անհրաժեշտ սերմը

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան դատողություն անել և խոսել բույսերի բազմացման, մասնավորապես, սերմով բազմանալու մասին:

Վարել դիտարկման օրացույց:

Մասնակցել գործնական ակտիվության:

Անհրաժեշտ տվյալները գրի առնել-հավաքել:

Բույսի կենսական պահանջումների մասին տեղեկություններ հավաքել/դատողություն անել:

Կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել ստեղծել:

Բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները հետազոտել և արդյունքները ներկայացնել տարբեր ձևով:

Կապը ԱՌԴ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

**Արդյունքն ակներև է,
եթե աշակերտը.**

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ալլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ, պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):

Հետազոտում է բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները (օրինակ՝ սենյակային բույսը տեղադրում է տարբեր պայմաններում՝ լուսին/առանց լուսի, ջրում է/չի ջրում), հետազոտության արդյունքները ներկայացնում է տարբեր ձևով (օրինակ՝ բանավոր խոսք, համառոտ գրառումներ, նկար, լուսանկար):

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար անհրաժեշտ նյութ. բույսի սերմ, օրինակ, արևածաղկի, լոբու, եգիպտացորենի, սիսեռի հատիկ: Փայտյա ձողիկներ, պլաստմասսայե տարաներ, չոր հող, ջուր:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ (5-10 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին հանել տանից բերած մրգերը (խնձորը) և հարցնում է.

- Ձեր բերած խնձորը ծառի ո՞ր մասն է: (Պտուղ)
- Կարող ե՞ք կռահել, ի՞նչ կա այս խնձորի «սրտում»: (Կորիզներ)
- Իրականում պտղի մեջ գտնվող «կորիզներն» ի՞նչ են: (Սերմեր)

Ուսուցիչը ինքն է կտրում խնձորը և այն միրգը, ինչ բերել են: Աշակերտներին խնդրում է գտնել իրենց ձեռքին եղած պտուղների սերմերը, հաշվել և լրացնել Աշակերտի տետրում տրված աղյուսակը (այս դեպքում գերադասելի է զույգերով աշխատանքը, որպեսզի աշակերտները օգնեն միմյանց և քննարկեն իրենց կարծիքները: Բացի այդ, աղյուսակում պետք է մուտքագրվեն երկու աշակերտների տվյալներն էլ):

| | ԲՈՒՅՄԻ ՊՏՈՒՂԸ | ՍԵՐՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|--------------|---------------|----------------|
| 1-ին աշակերտ | խնձոր | |
| 2-րդ աշակերտ | նարինջ | |

- Ըստ ձեզ, մարդը բույսի սերմն ինչի՞ համար է օգտագործում:
- Տարվա ո՞ր եղանակին են սովորաբար ցանում հացահատիկը, եգիպտացորենը, արևածաղիկը...

Ինչո՞ւ:

– Սերմերը ցանելու ժամանակը գարունն է: Ձեր կարծիքով, ի՞նչ է տեղի ունենում այս սերմերը ցանելուց հետո:

Մտածելուց, քննարկելուց և մտքեր փոխանակելուց հետո աշակերտները եզրակացնում են, որ


այստեղ բերած բոլոր հատիկները և կորիզները սերմեր են, ցանելուց (կամ հողի մեջ թաղելուց) հետո սերմից բույս է սկսում ծլել ու աճել:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (8-10 բույս)

Իմաստային քարտեզի լրացում

Ուսուցիչը հարցնում է՝ ձեր կարծիքով, ի՞նչ է անհրաժեշտ բույսի սերմին ծլարձակելու, աճի-զարգացման համար:

Աշխատանքը կատարվում է Աշակերտի տետրում, որտեղ աշակերտներն անհատապես պետք է լրացնեն սխեման, հետո գրեն ենթադրություններ: Շնորհանդեսի ժամանակ ուսուցիչը գրատախտակին լրացնում է նման սխեմա.



3. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (3-5 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասի ժամանակ ձեռք բերած գիտելիքը և տալիս է տնային առաջադրանք: Տանը վերցնել մեծ ափսե կամ թաս, վրան փռել բամբակի բարակ շերտ, վրան շաղ տալ՝ «ցանել» ցորենի հատիկներ և վրան ջուր լցնել այնպես, որ բամբակը թրջվի: Դիտարկման արդյունքները արձանագրել օրացույցի մեջ, որը շաբաթը մեկ անգամ կքննարկեն դասարանում:

| Ամիս, ամսաթիվ | 01.11 | 02.11 | 03.11 | 04.11 | 05.11 |
|---------------|-------|-------|-------|-------|-------|
| Ցանումը | | | | | |
| Ոռոգումը | | | | | |
| Ընձյուղվելը | | | | | |
| Բարձրությունը | | | | | |

ԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 1. ՓՈՐՁ

Ուսուցիչը դասարանը փոքր խմբերի է բաժանում և յուրաքանչյուր խմբի բաժանում է պլաստիկատե փոքր ամաններ (թթվասերի տարա կամ մեկանգամյա բաժակ), փայտյա ձող, սերմ (մեկ խմբին միայն մեկ տեսակի սերմ այնպես, որ բոլոր խմբերին տարբեր սերմեր բաժին հասնեն): Սա կարող է լինել լոբի, սիսեռ, ոսպ, լոլիկ, դդում, վարունգ: Ուսուցիչը նախապես հետը տոպրակով փխրուն չոր հող պետք է ունենա բերած, որը բաժանում է երեխաներին, նրանք էլ լցնում են ամանների մեջ: Հետո ուսուցիչը հարցեր է տալիս.

– Բոլորդ պատրա՞ստ եք: Կարո՞ղ եք գուշակել, թե ինչ ենք մտադիր անել:

– Ինչպե՞ս պետք է ցանենք: Ի՞նչ նայեք:

(Երեխաները փայտյա ձողիկներով հողում փոս են բացում, որտեղ դնում են սերմը և հողով ծածկում են:)

– Ձեր կարծիքով վերջացրի՞նք ցանելը: Բույսի աճելու համար բավակա՞ն է այն, ինչ արեցինք, որ բույսը ծլարձակի:

Եթե մեկն ասի, որ պետք է ջրել, փոքր քանակությամբ ջուր պետք է լցնել:

Եթե այս միտքը հայտնող չլինի, ուսուցիչն ինքը պիտի հարցնի.

– Ի՞նչ եք կարծում, այս չոր հողի մեջ սերմը կծլարձակի՞: Ուրիշ ի՞նչ է նրան հարկավոր ապրելու համար:

Նման հարցերով աշակերտներին պետք է հանգեցնի այն մտքին, որ սերմը զարգանալու համար խոնավության կարիք ունի: Հետո ուսուցիչն աշակերտներին խնդրում է թղթի կտորների վրա գրել խմբի անդամների անուն-ազգանունները և նույն տեղում նշել, թե ինչ են ցանել և երբ (օրինակ՝ լոբի, հոկտեմբերի 25-ին): Աշակերտները այս թուղթ-պիտակները պետք է փակցնեն իրենց անոթներին:

– Հիմա որտե՞ղ պետք է պահենք այս անոթները: Պահարանում, թե՞ լուսամուտի մոտ: Ինչո՞ւ:
 – Ձեր կարծիքով, որտե՞ղ ավելի լավ կաճի բույսը՝ մութ, թե՞ արևոտ տեղում: Ինչո՞ւ:
 Աշակերտները լուսամուտի գոգին շարում են իրենց անոթները: Հետո ուսուցիչը նորից է հարցնում.
 – Ի՞նչ եք կարծում, բոլորը միաժամանակ կաճե՞ն: Ամեն օր նայեք ու գրանցեք այն օրը (ամսաթիվը), երբ առաջին ծիլը կերևա անոթի մեջ:

– Եկեք ստուգենք, մթության մեջ արդյոք նո՞ւյն կերպ կաճեն բույսերը (ուսուցիչն իր կողմից ցանված սերմով տարան տեղավորում է մի մութ տեղում կամ պահարանում: Որոշ ժամանակ անց, երբ երեխաների ցանած բույսերը լավ կձլեն, մթի մեջ պահած տարան էլ կհանի և համեմատելու համար կտա աշակերտներին: Մթության մեջ բույսը եթե նույնիսկ ծլարձակված լինի, գույնը այնպես կանաչ չի լինի, ինչպես լուսավորության մեջ աճած բույսինը, չափսերով էլ ավելի փոքր կլինի: Աշակերտները կհամոզվեն, որ բույսի աճի ու հասունացման համար բացի ջրից անհրաժեշտ է նաև արև ու լույս):

Հաջորդ օրերին աշակերտները պարբերաբար պետք է ստուգեն ու հետևեն իրենց «ցանքսերին».
 Երբ սկսեց սերմը ծլարձակել, ինչպես է զարգանում, անհրաժե՞շտ է արդյոք ջրել, ինչ գույնի ցողուն ու տերևներ են զարգանում և այլն:

Զուգահեռաբար յուրաքանչյուր խումբ օրագրում գրանցում է դիտարկման բոլոր կարևոր փաստերը:

| | | | | | |
|---------------|------|------|-----|-----|-----|
| Ամիս, ամսաթիվ | 5.10 | 8.10 | ... | ... | ... |
| Ցանումը | ✓ | | | | |
| Ոռոգումը | ✓ | | | ✓ | |
| Ընձյուղվելը | | | | | |
| Բարձրությունը | | | | | 1սմ |

Աշխատանքը գնահատվում է՝ ըստ ներգրավվածության, ըստ օրագիր վարելու և հետևողականության:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Թեմա.** Ուտելի բույսեր
- Վերնագիրը.** Օգտակար սնունդ
- Դասի նպատակը.** Աշակերտները կարողանան ճանաչել տարբեր մրգեր, անվանել և նկարագրել դրանք:
 Գիտակցել մրգի օգտակարությունը:
 Միրգը կապել սեզոնների հետ:
 Սեփական զգայության օրգանների միջոցով դիտարկել ուսումնասիրվելիք առարկան:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչի արդյունքների հետ.

- Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
- Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:
- Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

- Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:
 Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար. քարտեր մրգերի նկարներով, աղյուսակներ խմբերում աշխատելու համար: Աշակերտի համար. տանից բերած միրգ, գունավոր մատիտներ:

1. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՄԲԵՐ ԿԱԶՄԵԼ (6-8 բույս)

Ուսուցիչն աշակերտներին ասում է, որ այսօր աշխատանքի մի մասը խմբերով է արվելու: Խմբեր կազմելու համար այս միջոցն է առաջարկում աշակերտներին. ուսուցիչը նախապես պատրաստել է տարբեր մրգերի նկարներով քարտեր, ասենք, 5 խնձոր, 5 մանդարին, 5 սերկևիլ այն դեպքի համար, եթե աշակերտների քանակը դասարանում 15 է, և նրանց երեք խմբի է բաժանում: Ուսուցիչը մրգերով քարտերը տուփի մեջ է զետեղել, աշակերտները նկարները չեն տեսնում, այսպես վերցնում են հերթով մեկական նկար: Երեխաները բաժանվում են ըստ նրա, թե ում ինչ միրգ է բաժին հասել («խնձորները» մի խմբում են նստում, «մանդարինները»՝ երկրորդ խմբում, «սերկևիլները»՝ երրորդում):

Յուրաքանչյուր խմբի անդամներ նկարագրում են իրենց միրգը (համաձայն քարտի) և իրենց կարծիքն են արտահայտում այս մրգի մասին, թե երբ է հասունանում տվյալ միրգը, ինչ գույնի է, ինչպիսի կեղև ունի, ինչպիսի հոտ, ցիտրուս է, թե՛ ոչ և այլն:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (10-12 բույս)

I. Ուսուցիչը խնդրում է աշակերտներին հանել տանից բերած միրգը և դնել նստարաններին (խմբում տարբեր մրգեր կհավաքվեն): Յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչ դասարանին պետք է ցույց տա իրենց խմբում եղած մրգերը և անվանի, մինչև ժամանակ պետք է արտահայտի իր կարծիքը՝ տվյալ միրգը Վրաստանում է աճում, թե՞ օտար երկրից է բերված (օրինակ՝ եթե խմբում հավաքվում է խնձոր, բանան և նարինջ, աշակերտը նկարագրում է դրանք ու բացատրում, որ խնձորն ու նարինջը Վրաստանում են աճում, իսկ բանանը բերված է օտար երկրից):

II. Յուրաքանչյուր խումբ պետք է արտահայտի իր կարծիքը, թե ինչու է դասարանում այդքան քիչ տեսակի մրգեր հավաքվել (երեխաները պետք է կռահեն, որ համեմատաբար քիչ միրգ կա ձմռանը, այդ պատճառով նրանք բերել են միայն այն, ինչը լավ է պահվում՝ խնձոր, նարինջ կամ արտասահմանից բերած բանան...):

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (6-8 բույս)

Այսուհետև ուսուցիչը զրույց է ծավալում հետևյալ հարցերով.

- Ուրիշ ի՞նչ մրգեր գիտեք:
- Ո՞ր միրգն էք սիրում: Ինչո՞ւ:
- Ի՞նչ համ ունի այն (օրինակ՝ դեղձը, թուզը, կեռասը...):
- Գիտե՞ք, թե որ միրգն է հասունանում գարնանը:
- Ձեր կարծիքով խնձորն է ավելի օգտակար, թե՞ շոկոլադը: Ինչո՞ւ:
- Ի՞նչ էք ավելի շատ սիրում՝ միրգ, թե՞ քաղցրավենիք:
- Ինչ էք կարծում, ինչո՞ւ են ծնողները խորհուրդ տալիս միրգ ուտել:

4. ԽՄԲԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ (8-10 բույս)

Ուսուցիչն աշակերտներին թողնում է նույն խմբերում և նրանց առաջարկում է մի նոր վարժություն կատարել: Աշակերտի տետրում տրված է տառերի աղյուսակ (տե՛ս՝ Հավելված 2):

Ուսուցիչն աշակերտներին ասում է, որ այս աղյուսակում գրված են («թաքնվում են») տարբեր մրգերի անուններ, նրանք պետք է փնտրեն այդ բառերը և դուրս գրեն նույն թերթի վրա: Աղյուսակում բառերով վանդակները բաց գույնի մատիտով պետք է գունավորեն, որ հեշտ լինի բառը կարդալ: Բառերը գրված են միայն վերևից ներքև և ձախից աջ: Հաղթողը կլինի այն խումբը, որն առաջինն

ամենաշատ բառեր կգտնի (աղյուսակում ընդամենը 10 բառ է տրված. ուղղահայաց – թուր, նարինջ, կեռաս, տանձ, խաղող, դեղձ և սալոր, հորիզոնական – խնձոր, թուզ, բանան):

5. ԴԱՄԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 բուպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին ձեռք բերած գիտելիքը և աշակերտներին հանձնարարում է մտածել, թե ուրիշ ինչ ուտելի բույսեր կան մրգերից բացի:

Ուսուցչի այլընտրանքային (կամ լրացուցիչ) ակտիվություններ

Ուսուցիչ աշակերտներին առաջարկում է «Փորձի՛ր և գուշակի՛ր» խաղը: Նա միրգը կեղևահանում ու կտրատում է, սեղանին մոտեցած աշակերտին աչքերը փակել է տալիս ու մրգի կտորներից մեկը տալիս է նրան: Աշակերտը այդ կտորը պետք է ուտի ու գուշակի, թե ինչ միրգ է, ու բնութագրի այն:

ԴԱՍ 16 (1)

Թեմա.

Ուտելի բույսեր

Վերնագիրը.

Միրգ և բանջարեղեն

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան որոշել, նկարագրել և տեսակավորել նկարագարդման վրա տրված մարմինը:

Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել տրված հարցերին:

Կազմել սեփական սննդակարգի մեջ մտնող մթերքների ցանկը և սննդամթերքները խմբերի բաժանել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագարդումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Կազմում է իր սննդակարգի մեջ մտնող մթերքների ցանկը և առանձնացնում մարդու համար պարտադիր սննդամթերքների խմբերը (բանջարեղեն, միրգ, հատիկայիններ, կաթնամթերքներ):

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար. տարբեր տեսակ բանջարեղեն, զամբյուղ կամ արկղ: Աշակերտի համար. մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ԵՎ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻՆ (5-9 բուպե)

Ուսուցիչը գրույցը սկսում է հետևյալ հարցերով.

– Նախորդ դասին խոսեցինք մրգերի մասին: Մրգից բացի կա՞ն արդյոք բույսեր, որոնք օգտագործում ենք ուտելու համար (հավանաբար երեխաները կասեն՝ կարտոֆիլ, պոմիդոր, վարունգ, լոբի, գազար և այլն: Ուսուցիչը գրատախտակին գրառում է թվարկած բանջարեղենը):

– Ինչ այստեղ գրեցինք, իսկապես, ուտելի բույսեր են: Արդյոք հիշո՞ւմ եք ինչ ընդհանուր անուն ունեն այս բույսերը: (Բանջարեղեն)

Այս դասի համար ուսուցիչը նախապես պատրաստած ունի զամբյուղ՝ տարբեր բանջարեղենով. կարտոֆիլ, սոխ, սխտոր, կաղամբ, գազար, լոբի, ճակնդեղ, վարունգ, պոմիդոր, շաղգամ, բողկ,

հնարավոր ամեն ինչ, որ կարելի է գտնել տարվա այս եղանակին: Ուսուցիչը մեկ-մեկ վերցնում է զամբյուղից բանջարեղենն ու հարցնում է դասարանին.

- Գիտե՞ք, սա ինչ բույս է:
 - Ինչպե՞ս ենք այն ուտում՝ հում, խաշած, թե՞ տապակած:
- Այս կերպ պետք է անվանեն և քննարկեն յուրաքանչյուր բանջարեղեն:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 բույս)

Այնուհետև ուսուցիչը խնդրում է երեխաներին բացել դասագրքերը և աշխատել ինքնուրույն: Նրանք պետք է կռահեն և անվանեն, թե ինչ բանջարեղեն է տրված: Առաջադրանքը ստուգվում է ֆրոնտալ ձևով:

Աշակերտներն աշխատում են դասագրքում, նրանք թվարկված բառերը բանավոր պետք է տեղադրեն համապատասխան տեղում և կարդան նախադասությունը: Կատարելով այս վարժությունը՝ աշակերտները կգիտակցեն, որ շատ ծառեր միասին, անտառից բացի, հանդիպում է նաև այգում: Այգում, ի տարբերություն անտառի, առավելապես մրգատու ծառեր են տնկած:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (10-14 բույս)

Հաջորդ աշխատանքը կատարվում է Աշակերտի տետրում: Նրանք 6-րդ հավելվածից պետք է կտրեն նկարները, ներկեն և խմբավորեն՝ ըստ սխեմայի: Այս վարժությունը կատարելու համար գերադասելի է, որ աշակերտները զույգերով աշխատեն (ասենք՝ մեկը կտրի, մյուսը սոսնձի):

4. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (7-8 բույս)

Ուսուցիչը զրույց է սկսում.

- Մտաբերեք, թե ինչ բանջարեղեն կար այն կերակրի մեջ, որ երեկ կերաք:
- Ո՞ր բանջարեղենով կերակուրն էք հատկապես շատ սիրում:
- Ի՞նչ նշանակություն ունի բանջարեղենը մարդու համար:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին քննարկած թեման:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԸԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը հիշեցնում է աշակերտներին, որ օրգանիզմի աճի-զարգացման ու առողջության համար պետք է ճիշտ սնվել: Առանձնապես օգտակար է մեծ քանակությամբ մրգի ու բանջարեղենի ընդունումը: Դրանք առատ վիտամիններ են պարունակում, որոնք մեր օրգանիզմի անտեսանելի «բարեկամներն» են, այսինքն՝ հոգ են տանում մեր առողջության մասին:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին վերհիշել, թե ինչ են կերել նախորդ օրը և լրացնել այսպիսի աղյուսակ (ուսուցիչը աղյուսակը գծում է գրատախտակին):

| ՆԱԽԱՃԱՇ | ՃԱՇ | ԵՏՃԱՇԻԿ | ԸՆԹՐԻՔ |
|---------|-----|---------|--------|
| 1. | 1. | 1. | 1. |
| 2. | 2. | 2. | 2. |
| 3. | 3. | 3. | 3. |
| | 4. | | 4. |

Հետո աշակերտները պետք է նշեն այն կերակուրները, որոնք պատրաստված են մրգերից կամ բանջարեղենից: Ուսուցիչը մի քանի ցանկացողների կարդալ է տալիս իրենց ճաշացանկերը և խնդրում է անել համապատասխան եզրակացություն ու գնահատում է.

- Ձեր կերակրացանկում մեծ քանակությամբ միրգ կլինի, թե՞ ոչ: Բանջարեղե՞ն:
- Ինչ էք կարծում, ճի՞շտ էք սնվում (հիմնավորե՛ք):

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=bba9OKmNZ9I>

ԴԱՍ 16 (2)

Թեմա.

Ուտելի բույսեր

Վերնագիրը.

Հատիկային բույսեր

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան անվանել որոշ հատիկային բույսեր և տեսակավորել դրանք:

Գիտակցել հատիկային բույսերից պատրաստած սննդամթերքի անհրաժեշտությունը:

Հիմնվելով անձնական կարծիքների վրա՝ պատասխանել տրված հարցերին:

Մանրի օրաբաժնի մեջ մտնող սննդամթերքը տեսակավորել:

Մթերքները տեսակավորել ըստ խմբերի:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերազարդումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար. ցանկալի է՝ տարբեր հատիկային բույսերի հատիկներ (օրինակ՝ ցորենի, բրնձի, եգիպտացորենի...):
Աշակերտի համար. գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. «ԴԱՇՏՈՒՄ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ (13-15 բույս)

Ուսուցիչը դասի սկզբին խթանող հարց է տալիս.

– Մրգից ու բանջարեղենից բացի, ձեր կարծիքով, կա՞ն արդյոք էլի բույսեր, որոնցով մարդիկ սնվում են: Կարո՞ղ եք անվանել:

Անկախ նրանից աշակերտները կկարողանան պատասխանել, թե՛ ոչ, ուսուցիչը հարց է տալիս.

– Ինչ եք կարծում, հացը ինչի՞ց է պատրաստվում:

Այս հարցին պատասխանելու համար ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է մի փոքրիկ պատմվածք, որն ինքն էլ կարդում է.

Դաշտում

Նինիկոն տատիկի հետ դաշտ գնաց: Դեռ առվի երկայնքով շարված ծաղիկները գրավեցին նրա ուշադրությունը, հետո մասրենու թփերին մոտեցավ, թռչունների դայլալը լսեց և անվերջ հարցեր էր տալիս տատին:

Դաշտում փոխված էր անձայրածիր ցորենի արտը: Մեղմ սյուքից ծփում էին սերմով բեռնավորված հասկերը: Նինիկոն զարմացավ.

– Այստեղ ի՞նչ է աճում, տատի՛կ:

– Ինչպես թե՛ ի՞նչ, հաց, բալի՛կ:

– Իսկ բուլկիներն ո՞ւր են, տատիկ:

– Բուլկիներն էլ այստեղ են, սիրելի՛ս:

- Խաճապուրի՞ն:
- Խաճապուրին էլ է այստեղ:
- Տատիկ, մի թե այստեղ տեսակ-տեսակ խմորեղեն էլ է աճում:
- Այո՛, այո՛, այստեղ ամեն ինչ աճում է, ի՛նչ հրեշտակ:

Նինիկոն նայում է դաշտին, զննում է հասկերը և փորձում կռահել՝ ո՞րն է հացը, ո՞րը խաճապուրին, ո՞ր կողմում են թխվածքները:

Դուք չե՞ք ցանկանա օգնել Նինիկոյին գտնել այն, ինչ նա փնտրում է:
Մկավում է քննարկում, որը ուսուցիչը հարցերով է վարում.

- Ի՞նչ նկատի ունի տատիկը, երբ ասում է՝ այստեղ հաց է աճում:
- Ի՞նչ նկատի ունի տատիկը, երբ ասում է՝ խաճապուրին ու թխվածքներն էլ են այստեղ:
- Ո՞վ գիտի, ինչպես են ցորենի հատիկներից հաց ստանում (պատմի՛ր մեզ):

Երեխաների մի մասը գիտի, մյուսներն էլ գրույցի ընթացքում են իմանում, որ ցորենը բույս է, որը հատիկներ ունի, հասուն հատիկները մարդիկ հավաքում են, ջրաղացում աղում և ստանում են ցորենի (հացի) ալյուր: Այս ալյուրով հացի գործարաններում և փոքրում հաց են թխում: Երեխաները հասկանում են, որ հենց ցորենի ալյուրը նկատի ունի տատիկը, երբ ասում է՝ հացը, խաճապուրին, թխվածքներն էլ այստեղ են:

Վերջում ուսուցչի օգնությամբ երեխաները գալիս են եզրակացության. «Քանի որ ցորենը հատիկներ ունի, ուրե՛մն այն բույս է՝ հատիկային բույս»:

2. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԻԿԱՅԻՆ ԲՈՒՅՄԵՐԻՆ (8-10 րոպե)

Ուսուցիչը կրկին դիմում է դասարանին.

- Ուրիշ ի՞նչ հատիկային բույսեր գիտեք, որոնք մարդիկ օգտագործում են ուտելու համար կամ որոնցով կերակրում են կենդանիներին:

Հնարավոր է, որ աշակերտները անվանեն եգիպտացորենը, գարին և բրինձը (կամ ուրիշ բույսեր): Հնարավոր է, որ ոչ մեկն էլ չկարողանան հիշել: Երկու դեպքում էլ ուսուցիչը դիմում է երեխաներին, որ բացեն դասագրքի համապատասխան էջը: Գրքում տրված են ցորենի, եգիպտացորենի և բրնձի նկարներ: Երեխաները ուշադիր դիտում են յուրաքանչյուր նկար, անվանում են բույսերի միջև նմանություններն ու տարբերությունները:

Համառոտ դասարանական քննարկման ընթացքում պետք է որոշեն, թե որ նկարում ինչ բույս է, ինչ առանձնահատուկ պայմաններ են անհրաժեշտ, ասենք, բրինձ աճեցնելու համար (ջրածածկ հողատարածք և տաք եղանակներ) և այլն:

Հետո ուսուցիչը խնդրում է երեխաներին թվարկել նկարի աջ կողմում տրված կերակրատեսակները, ինչից հետո որոշել ու բնութագրել այն հատիկային բույսը, որից պատրաստում են այդ կերակրատեսակը: Վերջում, ամփոփելու ժամանակ որոշում են, որ ցորենի ալյուրից են պատրաստվում զանազան տեսակի հացերը (թոնրինն էլ, կլոբն էլ), խաճապուրին, խմորեղենը և մակարոնը, եգիպտացորենից՝ եգիպտացորենի շիլան ու մճադին, բրնձից՝ փլավը:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ (8-10 րոպե)

Հաջորդ վարժության վրա աշակերտները պետք է աշխատեն տետրում, մասնավորապես, նրանք պետք է կռահեն, որ հատիկային բույսերից են ստանում հացը և մակարոնը, այլ բուսական կերակուր են լոբին ու սալաթը, իսկ երշիկը, պանիրը, կարագը և ձուն կենդանական սննդամթերքներ են:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասին ձեռք բերած գիտելիքը և աշակերտներին հանձնարարում է դասագրքի «Գուշակի՛ր» խորագրում տրված վարժությունը: Հուշումների օգնությամբ կփորձեն գուշակել հատիկային բույսի անունը: Կարելի է վարժությունը տանը կատարել:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐՄԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԸԱՑՈՒՑԻՉ) ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զրույց «Ինչպես են աղում հատիկայինները» թեմայի շուրջ

Ուսուցիչը գրույցը ծավալում է այսպիսի հարցերով.

- Ձեր կարծիքով հատիկներից ալյուր ինչպե՞ս են ստանում:

- Որտե՞ղ են աղում հատիկները:
- Ո՞վ է տեսել ջրաղաց:
- Ինչպե՞ս են աղում հատիկները ջրաղացում:
- Ինչպե՞ս է աշխատում ջրաղացը:
- Ձեր կարծիքով էլեկտրաաղացում ջրի ուժի կարիք ինչո՞ւ չկա:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ. ԴԻՏԱՐԿՈՒՄ

| | |
|---|---|
| Թեմա. | Ուտելի բույսեր |
| Վերնագիրը. | Սենյակային բույսեր |
| Դասի նպատակը. | <p>Աշակերտները կարողանան խնամել սենյակային բույսեր և փորձով կիսվել համադասարանցիների հետ:</p> <p>Դիտարկել ուսումնասիրման օբյեկտը, նկարագրել, հետազոտել, օրագիր վարել:</p> <p>Արտահայտել սեփական կարծիքները/հիմնավորել:</p> <p>Նկարագրել բույսի աճի դիտարկման գործընթացը:</p> <p>Հետազոտել բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները, հետազոտման արդյունքները ներկայացնել համառոտ գրառումների տեսքով:</p> |
| Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչի արդյունքների հետ. | <p>Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:</p> <p>Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:</p> <p>Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:</p> |
| Արդյունքն ակներև է, եթե աշակերտը. | <p>Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:</p> <p>Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:</p> <p>Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:</p> <p>Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջումների (անունը, ջուր, օդ, ապաստան) մասին:</p> <p>Հետազոտում է բույսի աճի համար անհրաժեշտ պայմանները (օրինակ՝ սենյակային բույսը տեղադրում է տարբեր պայմաններում՝ լույսին/առանց լույսի, ջրում է/չի ջրում), հետազոտության արդյունքները ներկայացնում է տարբեր ձևով (օրինակ՝ բանավոր խոսք, համառոտ գրառումներ, նկար, լուսանկար):</p> |
| Անհրաժեշտ նյութ. | ուսուցչի համար. սենյակային ծաղիկներ, ցնցուղ, ջուր, կտոր, երկաթյա ձողիկ, մկրատ: Աշակերտի համար. գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ: |

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (5-6 բույս)

- Ձեր կարծիքով, մեր մարմինն ավելի շատ ջերմության, թե՞ ցրտի կարիք ունի:
- Ինչպե՞ս եք պաշտպանում ձեր մարմինը ցրտից:
- Ձեր կարծիքով, բույսերը ջերմության կարիք ունե՞ն: Ինչո՞ւ եք այդպես մտածում:

Ուսուցիչը բացատրում է, որ ջերմության կարիք ունեն բոլոր կենդանի օրգանիզմները, այդ թվում՝ բույսերը: Բնության մեջ տերևաթափված բույսերը ձմռանը «քնած են» և սպասում են գարնանային տաքությանը, որպեսզի նորից արթնանան: Մեր շրջապատում աճում են նաև այնպիսի բույսեր, որոնք մարդու շնորհիվ պաշտպանված են սառնամանիքից և ամառ-ձմեռ «արթուն են»:

- Կարող եք ասել, ո՞ր բույսերն ի նկատի ունեմ:
- Ո՞վ է հոգ տանում նրանց մասին և ինչո՞ւ:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ՏԵՏՐՈՒՄ (10-14 բույս)

Աշակերտները կարող է կռահեն, որ խոսքը սենյակային բույսերի մասին է, կարող են նաև չկռահել: Բոլոր դեպքերում ուսուցիչը խնդրում է երեխաներին բացել Աշակերտի տետրը, որտեղ սենյակային բույսեր են պատկերված և դիտել նկարները:

Այս նկարների դիտարկմամբ ուսուցիչը գրույց է սկսում.

- Ի՞նչ ընդհանուր անվանում ունեն այս բույսերը:
 - Ինչ եք կարծում, ցրտից «վախենո՞ւմ են» այս բույսերը: Ինչո՞ւ:
 - Մարդիկ ինչի՞ համար են օգտագործում սենյակային բույսերը (աշակերտներին պետք է բերել այն մտքին, որ սենյակային բույսերը գեղեցկացնում են մեր կենցաղը, բացի այդ, դրանք մարդու համար շատ այլ նշանակություններ ևս ունեն):
 - Ի՞նչ է անում երեխան առաջին նկարում: Երկրորդո՞ւմ: Երրորդո՞ւմ: Չորրորդո՞ւմ:
- (Մի նկարում երեխան ջրում է ծաղկամանի միջի ծաղիկը, երկրորդում՝ մկրատով չորացած ճյուղերն է կտրատում, երրորդում՝ տերևների փոշին է մաքրում, իսկ չորրորդում՝ հողն է փխրեցնում):
- Ձեր կարծիքով, սենյակային բույսերին ինչո՞ւ է անհրաժեշտ խնամքը:
 - Ձեզանից ո՞վ ունի սենյակային բույսեր: Ո՞վ է խնամում: Ինչպե՞ս է խնամում:
 - Ձեր կարծիքով, ի՞նչ կլինի սենյակային բույսերին, եթե ձմռանը դրսում դնեք ու երկար ժամանակով այնտեղ թողնեք դրանք:
 - Հողը որ չփխրեցնե՞ս:
 - Որ չջրե՞ս:
 - Այս բույսերը սննդի մեջ օգտագործվո՞ւմ են:
 - Մարդիկ ինչո՞ւ են աճեցնում ու խնամում սենյակային բույսերը:

3. ՄԵՆՑԱԿԱՅԻՆ ԲՈՒՑՄԵՐԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (10-15 բույս)

Աշակերտները դիտում ու քննարկում են «դասարանական բանջարանոցը», որն արդեն մի ամիս է նրանց դիտարկումների առարկան է: Ուսուցիչը պահարանից հանում է իր ցանած բույսը, և այն համեմատում են խմբերի կողմից խնամած «ցանքսերի» հետ: Ցանկալի է, որ այս դասի համար աշակերտները բերեն իրենց դիտարկումների գրառումներով օրագրերը, որը տանը ցանած ցորենի հասկի աճը և խնամքն է նկարագրում:

Ընդհանուր քննարկման հիման վրա, որը ուսուցիչը հարցերով է վարում, նրանք պետք է գան այն եզրակացության, որ բույսը աճի ու զարգացման համար կարիք ունի լույսի, ջերմության, օդի, ջրի ու հողի:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (3-5 բույս)

Ուսուցիչն ամփոփում է այս դասին ձեռք բերած գիտելիքը և փորձը, խնդրում է երեխաներին ուշադրություն դարձնել սենյակային բույսերին և հոգ տանել դրանց մասին:


ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԲԱՑՈՒՑԻՉ) ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը մի քանի ծնողների խնդրում է դասարանի համար բերել սենյակային ծաղիկներ: Ծնողները կարող են նստել այս դասին: Ցանկալի է նրանց էլ ներգրավել ուսումնական գործընթացի մեջ նրանով, որ աշակերտներին ծանոթացնեն (նկարագրեն) իրենց բերած բույսերը, նշեն, թե որը


ինչ առանձնահատուկ պայմանների կարիք ունի, ինչպիսի հաճախականությամբ պետք է ջրել և այլն: Վերջում աշակերտների ճաշակով ու մասնակցությամբ նոր բերած բույսերը կդասավորվեն դասարանում:

ԹԵՍՏ 3

1. Ստորև թվարկվածներից ո՞ր ծառերից է կազմված սաղարթավոր անտառը, ո՞ր ծառերից՝ փշատերև անտառը (միացրու գծերով):




2. Բույսերի անունները կապի՛ր նրանց տարածման վայրերի հետ (բառերը միացրո՛ւ գծերով):



3. Ընդգծի՛ր այն միրգը, որը Վրաստանում չի աճում.

խնձոր, տանձ, քանան, դեղձ, անանաս, սալոր, թուզ:

4. Որոշի՛ր բույսի մասերը և գրի՛ր.



5. Ի՞նչ է անհրաժեշտ բույսին ապրելու համար:

Շարունակի՛ր թվարկումը. օդ...

լույս ջուր
 ջերմություն հող

6. Տեսակավորի՛ր և տեղադրի՛ր համապատասխան սյունակներում հետևյալ բույսերը. եգիպտացորեն, տանձ, գազար, ծիրան, ցորեն, պոմիդոր, մանդարին, սոխ, բրինձ, կարտոֆիլ, կաղամբ, սալոր, կորեկ, դեղձ, սոյա:

| ՄԻՐԳ | ԲԱՆՋԱՐԵՂԵՆ | ՀԱՑԱՀԱՏԻՎ |
|-------------|-------------------|------------------|
| Տանձ | Պոմիդոր | Ցորեն |
| Դեղձ | Գազար | Եգիպտացորեն |
| Սալոր | Կաղամբ | Բրինձ |
| Ծիրան | Սոխ | Կորեկ |
| Մանդարին | Կարտոֆիլ | Սոյա |

7. Թվարկած բանջարեղենից ընդգծիր, ո՞ր բույսի արմատներն են գործածվում՝ որպես սնունդ.

վարունգ, բոդկ, պոմիդոր, համեմ, գազար, ճակնդեղ, կարտոֆիլ, թարխուն, մաղադանոս:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1

- Թեմա.** Ամիսներ և սեզոններ
- Վերնագիրը.** Տոները Ամանորը (թեմատիկ դաս)
- Դասի նպատակը.** Աշակերտները կարողանան Նոր տարվա համար զարդարել դասասենյակը:
 Հաջորդաբար թվարկել սեզոններն ու ձմեռվա ամիսները:
 Մասնակցել պարզ, գործնական ակտիվությունների:
 Մասնակցել դասարանական միջավայրի բարելավման համար պլանավորված ակտիվությունների:
- Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.** Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
 Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:
- Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.** Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:
 Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):
- Անհրաժեշտ նյութ.** ուսուցչի համար. հաստ թել, խաղալիք Ձմեռ պապ: Աշակերտի համար. մկրատ, սոսիսձ, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (3-4 բույս)

Այս դասը ցանկալի է, որ անցկացվի դեկտեմբերի վերջին կամ «հին տոմարով Նոր տարուց» առաջ (մինչև հունվարի 14-ը): Ուսուցիչը թեմատիկ պլանավորման ժամանակ սա պետք է նկատի ունենա:

Ուսուցիչը գրույց է սկսում հետևյալ հարցերի կիրառումով.

- Հիմա տարվա ի՞նչ եղանակ է:
- Ձմեռը ո՞ր եղանակին է հաջորդում:
- Ձմեռվան տարվա ո՞ր եղանակն է հաջորդում:
- Որո՞նք են ձմեռվա ամիսները:

(Աշակերտները բնութագրում են, և ուսուցիչը հաջորդականությամբ գրատախտակին գրում է ձմեռվա ամիսները:)

- Սովորաբար ի՞նչ ենք տոնում հունվարին:
- Նոր տարվա գալուստը ուրախացնո՞ւմ է ձեզ: Ինչո՞ւ:

2. ԴԱՍԱՍԵՆՅԱԿԻ ԶԱՐԴԱՐՈՒՄ (15-20 բույս)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել Աշակերտի տետրի հավելված 4-ը, որտեղ փաթիլ ու մոմ է նկարված:

Աշակերտները փաթիլին ձեռք չեն տալիս, իսկ մոմը գունավորում են ըստ ցանկության, իրենց ուզած գույնով: Հետո երեխաները պետք է կտրեն-հանեն նկարը և փակցնեն (սոսնձեն) լուսամուտների ապակիներին: Ուսուցիչը կարող է հաստ թելեր կախել պատերի երկայնքով ու պատկերների մի մասը կախել թելերից: Այսպես Ամանորին կգարդարվի նրանց դասասենյակը:

Ուսուցչի լրացուցիչ հարցեր.

- Դուք առաջին դասարանում էլ եք աշխատել փաթիլներ կտրելու վրա: Հիշում եք, քանի՞ թև ունի փաթիլը:

- Ձեր կտրած փաթիլը քանի՞ թև ունի:

- Ուրե՞ս քանի՞ թև պետք է ունենա փաթիլը (ուսուցիչը դիտելու հիման վրա պետք է սահմանի, որ փաթիլն ունի վեց թև):

3. ՏՈՒՍԾԱՌԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ (14-15 բույս)

Ուսուցիչը վերցնում է սպիտակ թուղթը և կտրում է մեծ հավասարասրուն եռանկյունի: Հետո խնդրում է երեխաներին բացել Աշակերտի տետրի հավելված 5-ը, կանաչ թերթին դնել ձեռքերն ու շրջագծել: Շրջագծած ուրվանկարը կտրել և սոսնձել եռանկյունու վրա այնպես, որ այսպես կոչված դաստակները փակվեն, այսինքն՝ երևան միայն մատները: Այս գործընթացը լավ կլինի, որ առաջնորդվի ուսուցչի կողմից: Վերջում եռանկյունուն կպցնում են շագանակագույն ցողուն՝ այսպես կոչված բուն և գազաթ: Տոնածառը կարող են զարդարել փայլուն թղթերից կտրված պսպղուն փաթիլներով:



4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասի ակտիվությունները և երեխաներին խորհուրդ է տալիս տանն էլ պատրաստել նման տոնածառ:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը նախապես պատրաստած պետք է ունենա մուգ գույնի թուղթ և խոշորացույց: Այն դեպքում, եթե ձյուն է գալիս, թղթով հենց լուսամուտից կարող է «բռնել» փաթիլներ և երեխաներին խոշորացույցով դիտելու հնարավորություն տալ: Երեխաները կհամոզվեն, որ բոլոր փաթիլները վեց թև ունեն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- | | |
|--|--|
| Թեմա. | Ամիսներ և սեզոններ |
| Վերնագիր. | Եղանակը և մարդը |
| Դասի նպատակը. | Աշակերտները կարողանան տարրական պատկերացում կազմել եղանակի մասին: Ճանաչել եղանակը սահմանող որոշ բնական երևույթներ: Որոշել բնական երևույթները, նկարագրել և տեսակավորել դրանք: Մեփական կարծիքները/դիտարկման արդյունքները ներկայացնել հաղորդակցման տարբեր ձևերով (բանավոր խոսք, նկար): Անհրաժեշտ տեղեկություններ հավաքել և նշումներ անել: |
| Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ. | Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: |
| Արդյունքն ակներև է, եթե աշակերտը. | Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրումների վրա կամ իրականության մեջ: Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով): Մեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ): |
| Անհրաժեշտ նյութ. | գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, մկրատ, սոսինձ: |

1. ԵՂԱՆԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ (18-20 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին ասում է, որ այս շաբաթ տարվա եղանակների (սեզոնների) ու եղանակի մասին պետք է խոսեն: Եղանակի դիտարկման համար նա աշակերտներին առաջարկում է բակ դուրս գալ:

Ուսուցիչը երեխաներին տանում է դպրոցի բակ և հարցնում է.

- Մտաբերե՞ք, ինչպիսի՞ եղանակ էր երեկ:
- Արևոտ, թե՞ ամպամած:
- Անձրևային, թե՞ չոր:
- Քամոտ, թե՞ առանց քամու: Մառնամանի՞ք էր, ձյուն գալի՞ս էր:

Աշակերտները մտածում են, մտաբերում և պատասխանում յուրաքանչյուր հարցին:

Հետո ուսուցիչը այսպիսի հարց է տալիս.

– Այսօրվա եղանակն ինչո՞վ է տարբերվում երեկվա եղանակից:

Աշակերտները պետք է գտնեն տարբերությունը և եզրակացնեն, որ, պարզվում է, եղանակը փոփոխական է:

Ուսուցիչը նոր հարց է տալիս.

– Այսօրվա եղանակի մասին ի՞նչ կարող ենք ասել՝ լավ եղանակ է, թե՞ վատ:

Աշակերտները թերևս կհասկանան հարցի բովանդակությունն ու կպատասխանեն: Եթե հարցը չհասկանան, ուսուցիչ կամ միմյանց օգնության շնորհիվ պետք է պարզեն, թե ինչ է նշանակում լավ կամ վատ եղանակը: Լավը արևոտ, պարզ եղանակ է նշանակում, վատը՝ անձրև, քամի, բուք, ամպրոպ-որոտ...

Այնուհետև ուսուցիչը երեխաների հետ վերադառնում է դասարան, ու աշխատանքը շարունակում են դասագրքի վրա:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (10-15 րոպե)

Հաջորդ վարժությունը կատարվում է Աշակերտի տետրում, որտեղ յոթ պլանակ է գծած: Ուսուցիչ հանձնարարությամբ աշակերտները եղանակի դիտարկումը սկսում են եղանակի մասին դասը ուսուսման փուլում օրվանից (օրինակ՝ երեքշաբթվանից): Այս օրվա եղանակին համապատասխան ընտրում են տրված ուրվանկարներից որևէ մեկը (մեկ կամ երկու), հետո տետրի վերջին մասում՝ 1-ին հավելվածում (վերնագիրը՝ «Մարդը և եղանակը») գտնում են նման ուրվանկար, կտրում են, փակցնում են երեքշաբթի օրվա պլանակում և գունավորում են: Կարող են ինքնուրույն ավելացնել լրացուցիչ մանրամասներ: Մյուսակի ստորին մասում (ցանցում) պետք է գրեն լավ եղանակ է, թե՞ վատ:

Նույն տեղում պետք է ստուգել՝ ճի՞շտ են արդոք հասկացել երեխաներն առաջադրանքը, այսօրվա եղանակը համապատասխանո՞ւմ է արդյոք նրանց կողմից ընտրված նկարներին, որքանով ճիշտ են որոշել լավ եղանակ է, թե՞ վատ: Այսպիսով, պլանակներից մեկը լրացվում է, և մեկ օրվա եղանակը բնութագրվում է դասարանում, փացած աշխատանքը աշակերտները տանը, ինքնուրույն պետք է կատարեն ամեն օր, մեկ շաբաթվա ընթացքում:

3. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-5 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է այն դասը, որի ընթացքում խոսք եղավ եղանակի մասին, և աշակերտներին հանձնարարում է, որ դասարանում սկսած աշխատանքը շարունակեն նաև առաջիկա օրերի ընթացքում. «Մինչև հաջորդ երեքշաբթի վեց օր կա, այստեղ էլ վեց պլանակ է փում, ամեն օր հետևեք եղանակին և կատարեք այն աշխատանքը, ինչ դասարանում կատարեցինք. կտրեք-հանեք նկարները, սոսնձեք պլանակի մեջ, գունավորեք, մակագրություններ արեք: Մեկ շաբաթ հետո յոթ պլանակներն էլ լրացրած պետք է ունենաք»:

Տետրում տրված հաջորդ առաջադրանքը պետք է կատարեն ուղիղ մեկ շաբաթ հետո: Աշակերտները պետք է որոշեն, թե ինչպիսի եղանակ է գերակշռել ձմեռվա այս յոթ օրերի ընթացքում՝ լավ, թե՞ վատ:

ՈՒՍՈՒՑՁԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԸԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննարկում «Օրվա տևողությունը և եղանակը» թեմայով՝ հետևյալ հարցերի կիրառմամբ.

– Երբ էր ավելի տաք, այժմ, թե՞ երկու ամիս առաջ, երբ դասերը սկսվեցին:

– Հիմա է ավելի շուտ մթնում, թե՞ այն ժամանակ:

– Ինչպիսի՞ եղանակ կլինեք, եթե օրերը մշտապես կարճանային և գիշերները երկարեին (ուսուցիչն այս հարցերով աշակերտներին պետք է հանգեցնի այն եզրակացության, որ աշնանը օրերը կարճանում են, գիշերները երկարում, սրա հետ մեկտեղ նվազում են նաև արևի լույսն ու ջերմությունը, օրը որ անընդհատ կարճանա, մեր շրջապատում գիշերային խավարն ու ցուրտը ընդմիջտ կհաստատվեն):

Քննարկում «Մպասվող եղանակ» թեմայի շուրջ՝ հետևյալ հարցերի կիրառումով.

– Ձեր կարծիքով ինչո՞ւ են սովորաբար հեռուստատեսությամբ ու ռադիոյով հաղորդում եղանակի տեսությունը:

– Մարդուն ինչո՞ւ է անհրաժեշտ նախապես իմանալ եղանակի տեսությունը:

ԴԱՍ 17

Թեմա.

Ամիսներ և սեզոններ

Վերնագիրը.

Ամիսներ և սեզոններ

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան թվարկել տարվա եղանակները և դրանց բնորոշ եղանակը:

Թվարկել ամիսները՝ ըստ տարվա եղանակների:

Համեմատել սեզոնները:

Հավաքել անհրաժեշտ տվյալները և նշումներ անել:

Դիտարկման արդյունքների և անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել տրված հարցերին:

Ուրվանկար ստեղծել և խմբում աշխատել:

Բնութագրել կենդանի մարմիններն՝ ըստ սեզոնների:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչի

արդյունքների հետ.

Բն. II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն. II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն. III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է,

եթե աշակերտը.

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Դիտարկում է և նկարագրում բույսերի աճի գործընթացը (օրինակ՝ ցորենի ծլի բաձրության ավելացում), գրավոր կամ լուսանկարների միջոցով գրանցում է դիտարկման արդյունքները:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ալլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ, պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):

Անհրաժեշտ նյութ

ուսուցչի համար. 4 ֆորմատ: Աշակերտի համար. գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԽՄԲԵՐՈՒՄ (5-6 բույս)

Ուսուցիչը երեխաներին հարցնում է այն մասին, թե որքանով են հետաքրքիր գրքում տրված առաջադրանքները նրանց համար: Այնուհետև բոլորը բացում են Աշակերտի տետրը, և անցած օրերին (կամ օրվան) համապատասխան, հերթով ստուգում են, թե ով ինչպես է նշել եղանակը:

Վերջում ուսուցիչը երեխաներին խնդրում է կրկին շարունակել հետևել եղանակին ամբողջ շաբաթվա ընթացքում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին համեմատել այս շաբաթվա եղանակը ընդհանրապես ամառվա եղանակի հետ, երբ նրանք արձակուրդի մեջ էին և հանգստանում էին: Երեխաներն իրենք կանեն եզրահանգում, որ այն ժամանակ՝ ամռանը, շոգ էր (տաք եղանակ էր), իսկ հիմա ցուրտ է: Ուսուցիչը հարց է տալիս.

– Հիմա տարվա ո՞ր եղանակն է (երեք ամիս առաջ աշուն էր, հիմա՞):

Դասարանից գուցե որևէ մեկը կպատասխանի, որ հիմա ձմեռ է: Ուսուցիչը նորից է հարց տալիս.

– Մտաբերեք, տարին քանի՞ եղանակ ունի: Ո՞վ կարող է թվել դրանք:

Այն բանից հետո, երբ կվերհիշեն, որ տարին չորս եղանակ ունի (գարուն, ամառ, աշուն, ձմեռ), երեխաները պետք է կատարեն դասագրքում տրված երկու վարժությունները՝ կապված տարվա եղանակների հետ:

Ցանկալի է, որ առաջադրանքը կատարելուց հետո ուսուցիչը, այս նկարների վրա հիմնվելով, փոքրիկ գրույց վարի տարվա յուրաքանչյուր եղանակ բնութագրելու համար: Այստեղ ուսուցիչը բացատրում է, որ տարվա եղանակն այլ կերպ սեզոն է կոչվում:

Աշխատանքը կարելի է անցկացնել խմբերում: Դասարանը բաժանվում է 4 խմբի: Յուրաքանչյուր խումբ ուսուցչի ցուցումներով ընտրում է նկարներից որևէ մեկը, խոսում է նկարում պատկերված եղանակի մասին: Նկարագրում են տարվա տվյալ եղանակը, նրան բնորոշ առանձնահատկությունները, շրջակա միջավայրը տարվա տվյալ եղանակին, բույսերը, կենդանիներն ու թռչունները, նրանց վարքը և այլն...

Այս սկզբունքով են կատարվում հաջորդ առաջադրանքները:

3. «ՔԱՆԻ՞ ԱՄԻՍ Է ՏԵՎՈՒՄ ՁՄԵՈՒՆ» (5-7 րոպե)

Աշակերտները չպետք է դժվարանան պատասխանել այս հարցին, քանի որ այն սովորել են առաջին դասարանում:

– Ուրե՛մ, քանի՞ ամիս է տևում ձմեռը, որո՞նք են այդ ամիսները:

Եկեք հիմա փորձեք կատարել դասագրքում տրված վերջին առաջադրանքը և հիշեք, թե որոնք են ամառվա, ձմեռվա և գարնան ամիսները:

Առաջադրանքը կատարելու համար աշակերտներին պետք է օգնեն ամիսների գունավոր անվանումները: Գարնան ամիսները վարժության մեջ բաց կանաչ են ներկված, ամռան ամիսները՝ կանաչ գույնով, աշնան ամիսները՝ դեղինով և ձմռան ամիսները՝ երկնագույնով:

Առաջադրանքը կատարելուց հետո այն պետք է ֆրոնտալ ստուգել («կարդացե՛ք ամռան ամիսները...») կամ գրել գրատախտակին: Ուսուցիչը գրատախտակին գրում է «ամառ» բառը, երեխաները թելադրում են ամռան ամիսները, նա գրառում է: Այսպես գրում են բոլոր ամիսները՝ բաժանելով դրանք ըստ տարվա եղանակների:

4. ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԱՐՏԱՑՈՂՈՂ ՈՒՐՎԱՆՎԱՐՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ (10-15 րոպե)

Մեղանին դրված են չորս գույնի (կանաչ, դեղին, վարդագույն, սպիտակ) միներույն քանակությամբ քարտեր, որքան աշակերտ կա դասարանում: Նրանք հերթով դուրս են գալիս, վերցնում են իրենց դուր եկած գույնի մեկ քարտ և գույնին համապատասխան նստում են այն սեղանի մոտ, որի վրա նույն գույնի թերթ է փռած: Այսպես կազմվում է չորս խումբ: Երեխաները կարդում են իրենց համար հատկացված ցուցումները: Յուրաքանչյուր գույնի քարտ պայմանականորեն նշանակում է տարվա այս կամ այն եղանակը, սեզոնը: Օրինակ՝ դեղինը՝ աշունը, կանաչը՝ գարունը, վարդագույնը՝ ամառը, սպիտակը՝ ձմեռը: Երեխաներին տրվում է հետևյալ առաջադրանքը. դուք պետք է կենդանացնեք տարվա համապատասխան եղանակը:

Խումբը պետք է ստեղծի ընդհանուր նկար (մեկ ընդհանուր ֆորմատի վրա) տարվա համապատասխան եղանակի վերաբերյալ:

Շնորհանդեսի համար յուրաքանչյուր խմբի տրվում է 2-3 րոպե:

5. ԴԱՄԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ (1-2 րոպե)

Դասի վերջում ուսուցիչն ամփոփում է այդ օրը ձեռք բերած գիտելիքները:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը դասարանը բաժանում է չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ պետք է մարմնավորի տարվա որևէ եղանակը՝ դիմախաղի ու ճաշախաղի միջոցով: Մյուսները պետք է գուշակեն, թե որ եղանակն են մարմնավորում:

Ուսուցիչը սկսում է զրույց «Ով ինչ է անում գյուղում» թեմայով: Զրույցի նպատակն է պարզել, թե ինչ գործունեություն են վարում գյուղում (տղամարդիկ, կանայք, երեխաները) գարնանն, ամռանը, աշնանը և ձմռանը (լավ կլիմա, եթե քաղաքի ուսուցիչը այդ գործունեությունն արտացոլող լուսանկարներ ձեռք բերի և օգտագործի դրանք):

ԴԱՍ 18

Թեմա.

Ամիսներ և սեզոններ

Վերնագիր.

Եղանակը և տարվա եղանակները (սեզոնները)

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան որոշել կապը տարվա եղանակների (սեզոնների) և եղանակի միջև:

Որոշել երևույթները նկարագարող մյուս և իրականության մեջ, նկարագրել, տեսակավորել:

Մեզոնը արտացոլող կոլաժ ստեղծել:

Հարցին պատասխանելու համար հավաքել անհրաժեշտ տվյալներ և նշել:

Հարցին պատասխանել անձնական կարծիքների և դիտարկման արդյունքների հիման վրա:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Մեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Ստեղծում է կոնկրետ օրգանիզմի համար կենսական միջավայրի մոդել (օրինակ՝ ուրվանկար, ապլիկացիա կամ տարբեր նյութերից, օրինակ, պլաստիլինից պատրաստված կոմպոզիցիա):

Անհրաժեշտ նյութ

ուսուցչի համար. 4 ֆորմատ: Աշակերտի համար. թուղթ, տարվա տարբեր եղանակներ արտացոլող որքան հնարավոր է շատ լուսանկար:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՍԱԳՐՔՈՎ (15-17 րոպե)

Ուսուցիչը աշակերտներին ասում է, որ նրանք արդեն ունեն որոշակի գիտելիք եղանակի ու տարվա եղանակների մասին, իսկ այժմ պետք է հասկանան, թե ինչից է կախված եղանակը, և ինչպիսի եղանակներ են լինում տարվա տարբեր սեզոններին:

Դասագրքի համապատասխան էջին տրված է նկարներով տեքստ այս հարցերի մասին:

Ուսուցիչը երեխաներին հերթով ընթերցել է տալիս տեքստը, դիտում են նկարները և քննարկում բովանդակությունը:

Ուսուցչի հնարավոր հարցերը.

– Այսօր ինչպիսի՞ եղանակ է:

– Ի՞նչ կարելի է ասել՝ պարզ, թե՞ ամպամած օր է, քամոտ, թե՞ ամռանց քամի, անձրևային, թե՞ չոր:

– Ամռանը ինչպիսի՞ եղանակ է գերակշռում:

– Աշնանը ինչպիսի՞ եղանակ է գերակշռում:

– Ամենացուրտ եղանակները տարվա ո՞ր եղանակին են լինում:

– Տարվա ո՞ր եղանակի հետ է սկսվում բնության զարթոնքը:

– Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անձրևաբեր ամպը մոխրագույն:

Նույն թեմայի շարունակությունն է երկրորդ էջին տրված տեղեկությունը ամպերի մասին: Աշակերտները ծանոթանում են, թե ինչպիսի ամպը ինչպիսի եղանակ է պայմանավորում (երկու իրարից խիստ տարբեր դեպքեր):

2. ԵՐԿՆՔԻ ԵՎ ԱՄՊԵՐԻ ԴԻՏՈՒՄ (4-6 րոպե)

Ուսուցիչը աշակերտներին կանչում է լուսամուտի մոտ և խնդրում է նայել երկնքին: Նրանք պետք է նկարագրեն, թե ինչպիսի ամպեր են տեսնում, և ինչ եղանակ է սպասվում:

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը բացում է դասագիրքը, իսկ աշակերտները, հիմնվելով նկարագրողումների վրա, ենթադրություն են արտահայտում սպասվող եղանակի մասին:

3. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (8-10 րոպե)

Աշխատանքը շարունակվում է հարց-պատասխանի ձևաչափով: 3-րդ հարցը հատկացված է քննարկման համար: Աշակերտները պետք է դատողություն անեն, ենթադրություններ արտահայտեն և հիմնավորեն իրենց տեսակետները:

4. ԼՐԱՑՆԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (3-4 րոպե)

Հաջորդ վարժության մեջ աշակերտները պետք է լրացնեն նախադասությունները: Նրանք թվարկած բառերը թեմատիկ առումով պետք է համապատասխանեցնեն նախադասություններին և կարդան:

5. ԿՈԼԱԺ ՍՏԵՂԾԵԼ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է չորս խմբի, յուրաքանչյուր խումբ կկենդանացնի տարվա մեկ եղանակ և կստեղծի կոլաժ: Ուսուցիչն իր սեղանի վրա բացում է տարվա եղանակների լուսանկարների փաթեթը: Խմբերից մեկական ներկայացուցիչ ընտրում է տարվա այն եղանակն արտացոլող լուսանկարներ, որը պետք է կենդանացնի իր խումբը, իսկ խմբի անդամները, եթե ցանկություն ունեն, կկտրեն-կհանեն և ըստ իրենց հայեցողության՝ նկարները կփակցնեն ֆորմատի վրա: Ցանկալի է, որ կոլաժի համար ընտրեն նաև վերնագիր:

6. ԴԱՄԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին ստացած տեղեկությունները, այնուհետև վերցնում է ափսե, մեջը լցնում մի փոքր ջուր և պահում պահարանում այնպիսի տեղում, որտեղ այն ոչ ոք չի խանգարի:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=WzPhBjCnHgQ&featurew>

ԴԱՍ 19

Թեմա.

Ամիսներ և սեզոններ

Վերնագիրը.

Տարվա եղանակներ. տաքություն և ցուրտ

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան իրենց զգայության օրգանների օգնությամբ դիտարկել ուսումնասիրման օբյեկտը:

Նկարագրուման վրա և իրականության մեջ որոշել երևույթները, նկարագրել և տեսակավորել դրանք:

Դիտարկման հիման վրա կենդանու վարքի մասին տեղեկություններ հավաքել, հիմնավորել:

Դատողություն անել կենդանու կենսական պահանջմունքների մասին:

Հարցին պատասխանելու համար օգտվել դիտարկման արդյունքներից:

Կապը ԱՌԲՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Անհրաժեշտ նյութ

ուսուցչի համար. գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (10-15 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքերը, ուշադիր դիտել նկարները և պատասխանել հարցերին: Հետո ինքն է հարց տալիս.

– Նկատե՞լ եք, թե անձրևից առաջ ինչպես են իրենց պահում այն թռչունները, որոնք միջատներով են սնվում:

Եթե աշակերտների պատասխանը չի բավարարում ուսուցչին, ինքն է պատմում.

– Հնագույն ժամանակներից մարդիկ հետևել են տարբեր կենդանիների վարքին և դրանով կանխատեսել են եղանակը (անձրևը, լավ ու վատ եղանակները, երաշտը, առատ ձյունը): Օրինակ, նկատել են, որ վատ եղանակին միջատները ցածր են թռչում, համապատասխան ձևով են վարվում այն թռչունները, որոնք սնվում են այդ միջատներով:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (10-15 բույս)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին դիտել դասագրքում տրված նկարագրողումները՝ համապատասխան տեքստերով: Աշակերտները դիտում են նկարները, կարդում են տեքստը ու մշակում այն: Ուսուցիչը տեքստը մշակելու համար արդեն ծանոթ մեթոդը պետք է կիրառի, երբ մի երեխան կարդում է, երկրորդը պատմում է նրա կարդացածի բովանդակությունը: Այնտեղ, որտեղ հարցեր են տրված, պետք է ծավալվի քննարկում:

3. ՄԵԶՈՆԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ (5-7 բույս)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել Աշակերտի տետրը և կատարել առաջին և երկրորդ վարժությունները:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին ձեռք բերած գիտելիքը և երեխաներին բացատրում է տանը հանձնարարվող վարժությունը:

5. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հարցրեք ծնողներին, տատիկներին, պապիկներին, թե չե՞ն հիշում արդյոք կամ չե՞ն իմացել որևէ ժողովրդական կանխատեսում, իմաստություն՝ կապված բնական երևույթների հետ: Մտապահեք և հաջորդ դասին պատմեք մեզ:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե ժամանակ չես, ուսուցիչը կարող է կինեսթետիկ բանականության զարգացման համար աշակերտներին առաջադրանք տալ: Երեխաները ժառանգողի միջոցով (խմբերով կամ բոլորը միասին) պետք է ներկայացնեն իրավիճակ, երբ. ա) չափազանց շոգում են, բ) երբ շատ են մրսում:

ԴԱՍ 20

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԻՆՉՊԵ՞Մ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՆՁՐԵՎԸ

| | |
|------------------------|---|
| Նպատակը. | Աշակերտները կարողանան փորձի դիտարկման արդյունքում ըմբռնել, որ գոլորշին ջուր է: Բացատրել, որ գոլորշին սառչելիս վերածվում է ջրի մանրագույն կաթիլների: Բնության մեջ ջրի շրջապտույտի գոյությունը գիտակցել: Դիտարկել ուսումնասիրման առարկան: Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների: |
| Անհրաժեշտ նյութ | ուսուցչի համար. եռուցիչ, ջերմադիմացկուն ապակե անոթ, ջուր, սպիրտայրոց, թիթեղյա ափսե, սառցի կտորներ, լուցկի: Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ նախորդ դասին իրենք խոսել են ամպերի մասին և ենթադրություն արտահայտել, որ ջուր պետք է լինի նաև օդի մեջ: Այժմ փորձի արդյունքում նրանք ինքները պետք է եզրակացություն անեն: Այս փորձերը ուսուցիչն է կատարում, իսկ աշակերտները դիտում են և հետո դատողություններ անում: Յուրաքանչյուր փորձ կատարելուց առաջ, ուսուցիչը հարցնում է՝ ինչ էք կարծում, ի՞նչ էք տեսնելու (ի՞նչ տեղի կունենա): |

I փորձ

Ուսուցիչն իր հետ բերած եռուցիչը կիսով չափ լցնում է ջրով և եռացնում է: Երբ գոլորշին սկսում է վերև բարձրանալ, ուսուցիչը հարց է տալիս:

- Ի՞նչ լցրի եռուցիչի մեջ:
 - Ջուրը եռալուց հետո ի՞նչ տեսաք:
 - Ինչ էք կարծում, ինչի՞ց է բաղկացած եռալու ընթացքում բարձրացող այս «ամպիկը»:
 - Երկար ժամանակ որ եռացնենք այս ջուրը, ի՞նչ տեղի կունենա (ամբողջ ջուրը կգոլորշիանա, ու ամանի մեջ ոչինչ չի մնա):
 - Ի՞նչ եզրակացություն կարող ենք անել այս փորձի արդյունքում (տաքացնելիս ջուրը գոլորշիանում է և տարածվում օդի մեջ):
- Ուսուցիչը հիմա հետազոտում է, թե ինչ են մտածում երեխաները. ջուրը միայն եռալով ժամանակ է գոլորշիանում: Ինչպե՞ս են հիմնավորում իրենց կարծիքները: Ուսուցիչը հանում է նախորդ դասին ջրով լցրած ավսեն և ցույց է տալիս երեխաներին.
- Կարող եք հիշել, ի՞նչ կար այս ավսեի մեջ:
 - Ի՞նչ է պատահել ջրին, ո՞ւր է այն անհետացել:
- Վերջում պետք է եզրակացնեն, որ ջուրը գոլորշիանում է նաև առանց եռացնելու: Ասվածի օրինակ է փռած լվացքի չորանալը. թաց լվացքից ջուրը գոլորշիանում է, լվացքը չորանում է:

II փորձ

Ապակե ամանի մեջ ուսուցիչը մի քիչ ջուր է լցնում և տաքացնում է սպիրտայրոցի վրա (կամ ուրիշ միջոցով): Ջրով ամանի մոտ, այնպես որ գոլորշին հասնի նրան, բռնում է սառույցով լի թիթեղյա ավսեն:

Աշակերտները հետևում են փորձի ընթացքին. ջուրը գոլորշիանում է, ավսեի ստորին մասի սառը մակերևույթին կայչելով ջուրը կոնդենսացվում է (այս բառը, իհարկե, երեխաներին չենք ասում), վերածվում է կաթիլների, կաթիլները մեծանում են, ծանրության ուժով ավսեի հատակից պոկվում ու ներքև, ամանի մեջ են թափվում:

Ուսուցչի հարցերը.

- Ի՞նչ օգտագործեցինք թիթեղյա ավսեն սառեցնելու համար:
- Ջրի տաքանալու հետ ի՞նչ տեղի ունեցավ:
- Ի՞նչ տեղի ունեցավ գոլորշու հետ՝ սառը մակերևույթին դիպչելիս:
- Բնության մեջ նման բան (երևույթ) տեղի ունենո՞ւմ է:

Աշակերտները պետք է կռահեն, որ այս փորձի նման երևույթ կատարվում է բնության մեջ, երբ անձրևի կաթիլները թափվում են ամպերից:

- Որտեղի՞ց է այդքան ջուր գոլորշիանում բնության մեջ:
- Ի՞նչ է առաջանում այս գոլորշուց:

Փորձի արդյունքները և այս հարցերը քննարկելուց հետո, աշակերտները եզրակացնում են, որ ծովերից (օվկիանոսներից) մեծ քանակությամբ ջուր է բարձրանում մթնոլորտ՝ առաջացնելով ամպեր: Յրտից ամպերում ջրի կաթիլները մեծանում են ու անձրևի տեսքով թափվում ներքև:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքերը, ուշադիր դիտել տրված նկարը և ընթերցել կցված փոքրիկ տեքստը: Տեքստի վրա աշխատանքը կատարվում է ուսուցչի արդեն հայտնի մեթոդով. մեկ կամ երկու աշակերտ բարձրաձայն կարդում են տեքստը, մյուսները հետևում են գրքին: Հետո աշակերտներից մեկը պատմում է տեքստի բովանդակությունը՝ հետևելով նկարին: Այս նյութը հասկանալն ու յուրացնելը կատարված փորձերից հետո աշակերտների համար դժվար չի լինի:

Դասագրքի երկրորդ էջին տրված է ևս մեկ օրինակ (նկար), որտեղ պատկերված է, թե ինչպես է ջուրը գոլորշու վերածվում (լոգարանում ջրի ու տաք օդի պատճառով այս պրոցեսը ինտենսիվորեն է ընթանում և ակներն է), տաքի ու սառի հանդիպումից (այս դեպքում՝ հայելու վրա) տեղի է ունենում ջրի կաթիլներ են առաջանում:

Աշակերտները այս պրոցեսը պետք է դիտեն տրված նկարում և նկարագրեն:

Վերջում աշակերտները կատարում են դասի վերջում տրված վարժությունը, որտեղ միայն վերջին նախադասության հետ չափի համաձայնեն:

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասի ակտիվությունների արդյունքում ձեռք բերած գիտելիքը:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=zF5oRzcxxhQ>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե ժամանակը տալիս է այդ հնարավորությունը, ուսուցիչը կարող է այսպիսի փորձեր անել.

1. Աշակերտներին խնդրում է խորը շնչել ու արտաշնչել:

– Որևէ բան տեսնո՞ւմ եք:

– Ձեր կարծիքով, արտաշնչած օդում գոլորշի կա՞ :

– Ինչպե՞ս կարող ենք ստուգել գոլորշու առկայությունը կամ բացակայությունը:

2. Ուսուցիչը բացում է լուսամուտը և ցուրտ օդի հոսանքին (ենթադրվում է, որ ձմեռ է ու ցուրտ է) մոտ գտնվող աշակերտներին խնդրում է նորից արտաշնչել. այս անգամ գոլորշին կերևա:

– Հիմա ի՞նչ եք տեսնում:

– Ինչո՞ւ այս անգամ գոլորշին երևաց (սառը օդի հանդիպելիս՝ գոլորշին նկատելի է դառնում):

– Ի՞նչ հետևություն կարող ենք անել այս փորձից (մեր արտաշնչած օդը բաղկացած է գոլորշուց, որը ցրտի մեջ երևում է, տաքի մեջ՝ ոչ):

ԴԱՍ 21 (1)

Թեմա.

Բնական ռեսուրսներ

Վերնագիրը.

Ջուրը

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան հայրենի միջավայրում նկարագրել/անվանել ջրի օբյեկտները:

Սեփական զգայության օրգանների և պարզ սարքերի միջոցով դիտարկել ուսումնասիրման օբյեկտը:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Թվարկել բնական ռեսուրսները:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.ԻԻ.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.ԻԻ.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Բն.ԻԻ.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:

Նկարագրում է բնության մեջ կամ/և դիդակտիկ նյութի վրա արտացոլված ջրի և ցամաքի օբյեկտները՝ ըստ դրանց

բաղադրիչ մասերի (օրինակ՝ լեռ – լեռան գագաթ, լանջ և ստորոտ, գետ – ափ, հատակ):

Պարզ փորձ է անցկացնում տարբեր բնական միջավայրերում (օրինակ՝ այգի, անտառ, գետի կամ ծովի ափ, մարգագետին) անցկացված հողի նմուշների ջրաթափանցության մասին:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Անհրաժեշտ նյութ.

վրացական մուլտֆիլմ «Ձնագնդին», տեսանյութ, գլոբուս:

1. ԽԹԱՆՈՒՄ (10-15 ԲՈՊԵ)

Ուսուցիչը դասը սկսում է «Ձնագնդին» վրացական մուլտիպլիկացիոն ֆիլմի ցուցադրությամբ: Այնուհետև անցկացվում է թեմատիկ քննարկում: Այլ կարևոր մանրամասների հետ մեկտեղ, ուսուցիչը երեխաների ուշադրությունը կենտրոնացնում է ջրի երեք վիճակների վրա.

– Սկզբից ինչի՞ վերածվեց ձնագնդին: Հետո՞ : (Ջրի, գոլորշու/ամպի, անձրևի)


2. ՄՏԱՎՈՐ ԳՐՈՂ (3-5 ԲՈՊԵ)

Ուսուցիչը հարցով դիմում է դասարանին

– Ձեր կարծիքով ի՞նչ է ջուրը:

Նկարագրե՛ք և բնութագրե՛ք՝ ինչպիսի՞ն է այն:

Գրատախտակի մեջտեղում շրջան է նկարում և մտավոր գրոհի մեթոդով շուրջը գրում է երեխաների կարծիքները: Ենթադրաբար.



3. ՋՐԻՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (4-5 ԲՈՎԵ)

Ուսուցիչն այս դասի համար բերել է գլոբուս և աշակերտներին խնդրում է ուշադիր դիտել, դիտարկել այն: Հավանաբար նկատեցիք, որ գլոբուսի մեծ մասը կապույտ է:

Ուսուցիչը խթանման համար տալիս է հետևյալ հարցերը.

- Ըստ ձեզ, գլոբուսի վրա ի՞նչը կարող է կապույտ գույնով արտացոլված լինել:
- Ինչպիսի՞ն է ծովերի և օվկիանոսների ջուրը: (Աղոտ է, աղի է)
- Խմելու համար ինչպիսի՞ ջուր ենք օգտագործում: Ինչո՞ւ: (Քաղցրահամ ջուր)
- Որտե՞ղ է հանդիպում քաղցրահամ, խմելու ջուրը: (Աղբյուր, գետ, ջրամբար և այլն)

4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ (5-7 ԲՈՎԵ)

Անվանի՛ր գետ կամ աղբյուր, որ հոսում է քո հայրենի քաղաքում/գյուղում: Բնութագրի՛ր՝ ինչպիսին է այն (ափ, հուն, խորություն, հատակ, արագություն, մաքրություն) և լրացրո՛ւ Աշակերտի տետրում տրված սխեման:

Երկնագույն երկնքում հավանաբար հաճախ եք նկատել ամպեր: Նախորդ դասին մենք խոսել ենք, թե ինչից էր բաղկացած ամպը: Երբ եղանակը խառնվում է, հենց այս ամպերից են ներքև թափվում անձրևը, ձյունը և կարկուտը (այսպես կոչված տեղում):

Ջուր կա հողի, բնահողի մեջ ևս: Ավելին, այն հանդիպում է նաև գետնի տակ: Գոյություն ունեն նույնիսկ ստորգետնյա գետեր, լճեր:

Ջրից է բաղկացած բույսի, կենդանու, մարդու օրգանիզմը:

Դեռ հնագույն ժամանակներից մարդու մոտ բազմաթիվ հարցեր էին առաջանում և այսօր նույնպես առաջանում են. ինչո՞ւ, որտեղի՞ց: Նա փորձում էր այս հարցերի պատասխանները գտնել, դիտարկում էր և ուսումնասիրում շրջակա միջավայրը, հարցերին պատասխաններ ստանալու համար փորձարկումներ էր անցկացնում: Այսպիսի գիտական փորձարկումները կոչվում են փորձ (էքսպերիմենտ):

5. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (3-5 բույս)

Փորձ

Անհրաժեշտ նյութ. սպիրտայրոց, թիթեղյա ափսե, հող, հայելի կամ կափարիչ:

Ուսուցիչը վառում է սպիրտայրոցը, որի վրա տեղադրում է թիթեղյա ափսեի վրա լցված հողը, բնահողը: Հողը, բնահողը տաքանալուց հետո այն ծածկում է թիթեղյա կափարիչով: 1-2 բույս հետո հանում է այն, և երեխաներն իրենք են դառնում վկա, որ կափարիչը ջրի կաթիլներով է ծածկված: Թիթեղյա կափարիչի փոխարեն կարելի է հայելի օգտագործել: Այս դեպքում արդյունքն ավելի ակներև է: Երեխաներն իրենք կանեն եզրակացություն, որ բնահողը ջուր է պարունակում, քանի որ տաքացնելուց առաջացած գոլորշին հենց ջրի պարունակությունն է հաստատում:

Երբ բույսերի և կենդանիների մասին էինք խոսում, նշեցինք, որ բոլոր կենդանի օրգանիզմներին գոյության համար ջուր է անհրաժեշտ: Կենդանիներն այն ստանում են ուղղակի ճանապարհով, խմում են, կամ էլ ջուրն ընդհանրապես նրանց գոյության միջավայրն է, այսպես կոչված՝ տունն է:

Բույսերը ջուրը բնահողից ներծծում են արմատներով: Ավելին, նրանք ջրի հետ մեկտեղ ներծծում են նաև նրանում լուծված սննդանյութերը, այսինքն՝ տվյալ դեպքում ջուրը լուծիչ է: Եթե երաշտային տարի է, և բնահողի ջուրը պակասել է, բույսը դժվարանում է սննդանյութ ստանալ և, եթե ժամանակին օգնության չհասնես, կարող է նույնիսկ չորանալ: Ճիշտ այդ պատճառով ամռանը բույսերը ոռոգում են:

6. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասին անցկացված ակտիվությունների արդյունքում ձեռք բերված գիտելիքը:

ԴԱՍ 21 (2)

Թեմա.

Բնական ռեսուրսներ

Վերնագիրը.

Ջուրը բնության մեջ

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան հայրենի միջավայրում նկարագրել/անվանել ջրի օբյեկտները:

Սեփական զգայության օրգանների և պարզ սարքերի միջոցով դիտարկել ուսումնասիրման օբյեկտը:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Պայմանական նշանների միջոցով հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքել/նշումներ անել:

Թվարկել բնական ռեսուրսները:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Բն.Ու.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:

Նկարագրում է բնության մեջ կամ/և դիդակտիկ նյութի վրա արտացոլված ջրի և ցամաքի օբյեկտները՝ ըստ դրանց բաղադրիչ մասերի (օրինակ՝ լեռ – լեռան գագաթ, լանջ և ստորոտ, գետ – ափ, հատակ):

Պարզ փորձ է անցկացնում տարբեր բնական միջավայրերում (օրինակ՝ այգի, անտառ, գետի կամ ծովի ափ, մարգագետին) անցկացված հողի նմուշների ջրաթափանցության մասին:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար. ջուր, ապակյա թափանցիկ բաժակ՝ 4 հատ, 4 գդալ (մեկ հատ յուրաքանչյուր խմբի համար), աղ և շաքար, 1 ֆորամտի թերթ: Աշակերտների համար. գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1.ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (4-7 րոպե)

Ուսուցիչը դասի սկզբին դասարանի աշակերտներին բաժանում է 4 խմբի և յուրաքանչյուր խմբի բաժանում անհրաժեշտ նյութը: Դրանք են ջուր, ապակյա թափանցիկ բաժակ՝ 4 հատ, 4 գդալ (մեկ հատ յուրաքանչյուր խմբի համար), աղ և շաքար: 2 խմբի աղ է տալիս, փասցած երկուսին՝ շաքարի փոշի:

Այնուհետև խմբի անդամները ուսուցչի ցուցումով փորձ են անցկացնում. շաքարը/աղը լցնում են բաժակի մեջ և գդալով լավ խառնում: Դիտարկում են արդյունքները և պատրաստվում շնորհանդեսի: Ցանկալի է (ուսուցիչը հարցերով ուղղորդում է), որ ուշադրությունը կենտրոնացնեն այն բանի վրա, թե որքան ժամանակում հալվեց փոշին, փոխվեց արդյոք գույնը, համր: Աշակերտները կարող են վարել դիտարկման օրացույց, լրացնել աշակերտի տետրում տրված սխեման և պատրաստվել շնորհանդեսի. «+»-ով նշեն փոփոխությունը, եթե փոփոխություն չի արձանագրվել՝ նշանակեն մինուս:

| | ԱՂ | ՇԱՔԱՐ |
|-------------------|----|-------|
| Լուծվե՞լ է արդյոք | + | + |
| Հոտ | – | – |
| Գույն | – | – |
| Համ | + | + |

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (3-7 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքի մատնանշված էջը և ուշադիր դիտել նկարագրողումները: Զույգերով դատողություն անեն, համաձայնության գան և զրի առնեն, թե ինչ վիճակում է նկարներում արտացոլված ջուրը (հեղուկ, պինդ, գոլորշի):

Շնորհանդեսից հետո ուսուցիչը հարցեր է տալիս.

- Ինչ էք կարծում, արդյոք սահմանում է ջերմաստիճանը ջրի վիճակը:
- Որտե՞ղ կարող է հանդիպել ջուրը հեղուկ, պինդ և գոլորշի վիճակում:
- Վերջնականապես աշակերտները հանգում են եզրակացության, որ ջրի վիճակը սահմանում է ջերմաստիճանը:

3. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ (10-15 րոպե)

Ջուրը բնության մեջ ինքնին գոյություն ունի: Այն ոչ միայն մարդու, այլև ցանկացած այլ կենդանի օրգանիզմի համար կարևորագույն բնական ռեսուրս է: Այն անհրաժեշտ է տնտեսել և խնայել:

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և յուրաքանչյուր խմբի բաժանում ֆորմատի քառորդ մասը: Այնուհետև առաջադրանք է տալիս.

I-II խմբերն ընդհանուր թերթի վրա նկարեն անտառ առվակներով, բույսերով, կենդանիներով և այլն:

III-IV. Պատկերացրեք, որ ջրային ռեսուրսը սպառվել է, երկրագնդի վրա ջուրն անհետացել է: Ի՞նչ տեղի կունենա: Ինչպիսի՞ն կլինի շրջակա միջավայրն առանց ջրի: Ո՞ր բույսերն ու կենդանիները գոյություն կունենան:

Պատրաստվեք շնորհանդեսի համար:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասին անցկացված ակտիվությունների արդյունքում ձեռք բերված գիտելիքը:

5. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ավագների օգնությամբ տեղեկություններ հավաքեն, թե մոտավորապես որքան ջուր է օգտագործում իրենց ընտանիքն օր ու գիշերվա ընթացքում, գրեն՝ ինչի՞ համար:

Խնայո՞ւմ են արդյոք ջուրը և ինչպե՞ս:

ՈՒՆԵՆ ԱՐԴՅՈՔ ՎՆԱՍՎԱԾ ԾՈՐԱԿ, ՈՐԻՑ ՋՈՒՐ Է ԿԱԹՈՒՄ:

Այսպիսինի առկայության դեպքում, հավաքեն (տակը անոթ դնեն) և եզրակացություն անեն, թե որքան ջուր է կորչում անխնա:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Թեմա.

Բնական ռեսուրսներ

Վերնագիրը.

Խնայենք խմելու ջուրը:

Դասի նպատակը.

Աշակերտները կարողանան զարգացնել հետազոտական կարողություններ:

Խմելու ջրի և խմելու համար չհատկացված ջրի համեմատական բնութագրում:

Մահմանել սեփական պարտականություններն ու դերը ջուրը խնայելու գործում:

Անձնական կարծիքների և դիտարկման արդյունքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Տեղեկություններ հավաքել և դատողություն անել կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների մասին (ջուր):

Հայրենի միջավայրում նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Բնական ռեսուրսները սպառվելու դեպքում խոսել աղետալի արդյունքների մասին և ենթադրություններ արտահայտել:

Դատողություն անել ջրի աղտոտման հետևանքների մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Բն.Ու.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Բն.Ու.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Ենթադրություն է անում, թե ինչ կարող է պատահել բնական ռեսուրսների սպառման դեպքում:

Համադասարանցիների հետ կիսվում է սեփական փորձով, թե ինչպես է պահպանում կամ/և տնտեսում բնական ռեսուրսները:

Անհրաժեշտ նյութ

ուսուցչի համար. թերթեր, տեսանյութ: Աշակերտների համար. գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՋՐՈՒՅՑ (8-10 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է նախորդ դասի թեման (Ջուրը): Այսօր խոսելու ենք նրա հատկանիշների և անհրաժեշտության մասին: Մեզ հայտնի է, որ ջուրը կյանքի ու գոյության համար անհրաժեշտություն է: Այս պատճառով պետք է խնայել ջուրը, ինչը նույնն է, ինչ կյանքը խնայելը:

Ինչպես գիտենք, մարդիկ շատ ջուր են օգտագործում ինչպես խմելու համար, այնպես էլ առօրյա գործունեության մեջ:


– Ինչ էք կարծում, ի՞նչ տեղի կունենա, եթե ջուրը սպառվի: Բավական է արդյոք ջրի քանակությունը:

Այս հարցերի շուրջ զրուցելու համար՝ ուսուցիչը դասարանը բաժանում է զույգերի: Նրանք 2 րոպեի ընթացքում պետք է մտածեն, քննարկեն ու պատկերացնեն անջուր միջավայրը: Ուսուցիչը զույգերից մի քանիսին տալիս է իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ. ԼՐԱՑՆԵԼ ԴԻԱԳՐԱՄԸ (10-12 րոպե)

Աշակերտների պատասխաններում հնարավոր է արտահայտվի կարծիք այն մասին, որ երկրագնդի վրա ցամաքից ավելի մեծ տեղ է գրավում ջուրը: Ուրե՛մ, ինչն է՞ պետք է խնայել ջուրը: Մեկ անգամ գոնե ակամա փորձե՛լ էք ծովի ջրի համը, ինչպիսի՞ն է այն, խմելու համար պիտանի՞ է, ինչն է՞:

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և գրատախտակին գծում է Վեննի դիագրամ: Աշակերտները պետք է խորհեն «ի՞նչ է նշանակում խմելու ջուրը, և ինչն է՞ այն տարբերվում ծովի ջրից» հարցի շուրջ և լրացնեն Վեննի դիագրամը. դիագրամի աջ կողմում գրված է «ծովի ջուր» (լրացվում է ծովի ջրի բնութագրությամբ), ձախ կողմում՝ «խմելու ջուր» (լրացվում է խմելու ջրի առանձնահատկություններով): Կենտրոնական մասում պետք է գրվի այն, ինչ ընդհանուր է երկուսի համար էլ:



Շտրհանդեսից հետո ուսուցիչը ծավալում է քննարկում՝ գործածելով հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով, որտեղի՞ց է այն ջուրը, որը մենք խմում ենք:
 - Ի՞նչ ճանապարհ է անցնում նա՝ մինչև մեր ծորակներին հասնելը:
 - Խմելու ջուրն էլ անսպա՞ռ է այնպես, ինչպես ծովի ջուրը:
- Ուսուցչի մեկնաբանությունները.

Թեև երկրագնդի վրա, Համաշխարհային օվկիանոսում շատ ջուր կա, սակայն խմելու ջրի պաշարն աստիճանաբար նվազում է, և դրանում մեղքի ամենամեծ բաժինը մարդկանց է պատկանում: Ուսուցիչը հարց է տալիս քննարկման համար.

– Ձեր կարծիքով, ի՞նչն է խմելու ջրի պաշարի նվազման պատճառը: Հնարավոր պատասխաններ. ջրի աղտոտումը, ջրի անխնա օգտագործումը...

3. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՍԱՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ (5-10 րոպե)

Ուսուցիչը երեխաների համար ցուցադրում է տեսաֆիլմ, թե ինչ ճանապարհ է անցնում խմելու ջուրը ջրամբարներից մինչև օվկիանոս: Ֆիլմն ավարտվելուց հետո քննարկում է կազմակերպվում: Վերջում աշակերտները գծում են ջրամատակարարման պարզ սխեմա:

4. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (6-8 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ իրենք շրջակա միջավայրի աղտոտման մասին առաջ ևս խոսել են, գիտեն, թե ինչ վտանգ է ստեղծում աղտոտված միջավայրը մարդու կյանքին:

Մարդկանց համար հատկապես տագնապալի է ջրի աղտոտումը:

Ուսուցիչը զրույցը վարում է հետևյալ հարցերի միջոցով.

- Ինչ էք կարծում, ինչպե՞ս է տեղի ունենում ջրի աղտոտումը:
- Ձեր կարծիքով, ո՞ր է գնում կենցաղային գործածությունից աղտոտված ջուրը (կոյուղիներից, ֆաբրիկա-գործարաններից և այլն):
- (գետեր, ջրամբարներ, լճեր, լճակներ)
- Միայն մարդո՞ւ համար է վտանգավոր աղտոտված ջուրը:
- Խմելու ջրի հանդեպ խնայողաբար վերաբերմունքը մտնո՞ւմ է քո պարտականությունների մեջ: Ի՞նչ կարող ես անել դրա համար:

5. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (20-25 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին տանում է մոտակայքի տեղային միջավայր (գետի, լճի, լճակի, ջրամբարի, ծովի ափ) և խնդրում է նկարագրել այն հետևյալ տերմինների օգտագործմամբ. արագահոս գետ, ավազոտ, քարքարոտ ափ, աջ և ձախ ափ, աղտոտվա՞ծ է արդյոք և այլն:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ՏԵՏՐՈՒՄ (4-6 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել տետրերը և ինքնուրույն աշխատել 2-րդ և 3-րդ վարժությունների վրա: 4-րդ վարժությունը նրանք կարող են կատարել տանը:

7. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-4 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է ինչպես շաբաթվա ընթացքում, այնպես էլ այս դասին ձեռք բերած գիտելիքը և հանձնարարում է աշակերտներին ինքնուրույն հետազոտություն անցկացնել խմելու ջրի սպառման վերաբերյալ. բացահայտել, թե որքանով ենք խնայում ջուրը, ինչպես է այն սպառվում և այլն: Մրա համար նրանք պետք է ստուգեն ծորակների վիճակը տանը, նրանցից քանի՞սն է անխափան աշխատում, քանիսի՞ց է ջուրը կաթում և իզուր կորչում: Եթե կաթում է, ցանկալի է, որ գիշերվա ընթացքում ծորակի տակ աման դրվի, և այս փորձի հիման վրա, ինքնուրույն եզրակացություն արվի՝ խնայում են խմելու ջուրը, թե՞ ոչ: Հաջորդ դասի համար հարցնեն ծնողներին,

ավագներին, հարևաններին, թե ում պետք է դիմել այն դեպքում, եթե նկատում են, որ տանը կամ փողոցում ջրի խողովակը կամ ծորակը փչացել է:


ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչ – Հնուց ի վեր ջուրը մարդկանց համար այնքան նշանակալի է եղել, որ այս բառից շատ ուրիշ բառեր ու արտահայտություններ են առաջացել: Ուսուցիչը գրատախտակին գրում է մի քանի այդպիսի արտահայտություններ և աշակերտների հետ մեկտեղ բացատրում է դրանց նշանակությունը:

Դրանք են. ջրի բերածը ջուրն է տանում, աչքը ջուր դարձավ, ջուրը մտնողի ոտքերը կթրջվեն, գետն անցնողն առվում չի խեղդվի, ոտքերը սև ջուրն իջան, շատ ջրեր են անցել և այլն:

ԹԵՍՏ 4

1. **Նկարագրի՛ր և բնութագրի՛ր, թե ինչ է ջուրը և ինչպիսին է այն:**



2. **Ուշադիր դիտի՛ր քարտեզը և նրա օգնությամբ գունավորի՛ր երկրագնդի՝ ջրով ծածկված մասերը:**

3. **Նկարագրի՛ր և բնութագրի՛ր՝ ի՞նչ է ջուրը և ինչպիսի՞ն է այն:**

Անվանի՛ր քո քաղաքում, գյուղում առկա գետ, աղբյուր:

| |
|--|
| |
| |
| |

Ինչպիսի՞ն է նրա ափը.

- ա) քարքարոտ, բ) ավազոտ, գ) ժայռոտ:

Հո՞ւնը.

- ա) նեղ, բ) լայն:

Արագությո՞ւնը.

- ա) արագահոս, բ) դանդաղահոս:

Մաքրությո՞ւնը.

- ա) մաքուր, բ) աղտոտված:


Ջրի քանա՞կը.

- ա) ոչ ջրառատ, բ) ջրառատ:


4. Համարակալի՝ ըստ աճման (փոքրից դեպի մեծը).

- 3 Գետ 1 Առվակ 4 Ծով 5 Օվկիանոս 2 Լիճ

5. Ձույգի՝ ը և միացրո՛ւ գծերով.



6. Ինչպե՞ս է տեղի ունենում ջրի շրջապտույտը երկրագնդի վրա.



ԴԱՍ 22

Թեմա.

Վերնագիր.

Դասի նպատակը.

Օդ

Մեր շուրջը օդ է

Աշակերտները կարողանան պարզ սարքերի կիրառմամբ և զգայության օրգաններով դիտարկել ուսումնասիրման առարկան:

Կենսական պահանջմունքների մասին տեղեկություններ հավաքել, դատողություն անել:

Գիտակցել ամենօրյա կյանքում կյանքի համար բնական ռեսուրսների նշանակությունը:

Ենթադրություններ արտահայտել բնական ռեսուրսների սպառման մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.III.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն. II.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

**Արդյունքն ակներև է,
եթե աշակերտը.**

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջումների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Ենթադրություն է անում, թե ինչ կարող է պատահել բնական ռեսուրսների սպառման դեպքում:

Անհրաժեշտ նյութ.

ուսուցչի համար. ստվարաթղթի մեծ կտոր, մոմեր, լուցկի, թափանցիկ անոթներ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (2-3 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է՝ տնային առաջադրանքը ստուգելով և հարց է տալիս.

– Ինչ էք կարծում, կյանքի համար ջրից բացի ուրիշ ի՞նչ է անհրաժեշտ:

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ այս շաբաթվա գրույցի թեման օղն է: Երևի գիտեք, որ մենք շրջապատված ենք օդով, բայց եկեք համոզվենք, արդյոք դա այդպե՞ս է:

– Օդը տեսնո՞ւմ եք:

– Հոտառությամբ զգո՞ւմ եք օդը:

– Գուցե օդի հա՞մն եք զգում:

– Ուրեմն ինչպե՞ս բացահայտենք, որ մենք իսկապես շրջապատված ենք օդով:

2. ՕՂԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ՓՈՐՁԵՐՈՎ (5-10 րոպե)

Օդի գոյությունը հավաստելու համար աշակերտները հնարավոր է շատ տարբեր կարծիքներ արտահայտեն: Բոլոր դեպքերում ուսուցիչը պարզ փորձերի օգնությամբ բացահայտում է՝ արդյոք դասասենյակում օդ կա՞:

1-ին փորձ

Ուսուցչի խնդրանքով երեխաները նստարանները քաշում են, պատից պատ տարածություն են ազատում: Հետո ուսուցիչը երկու աշակերտների ուղղահայաց, լայնակի կտրել է տալիս ստվարաթղթի մի մեծ կտոր (երեխաները ստվարաթուղթը երկու կողմերից մի ձեռքով բռնում են): Այսպես աշակերտները պետք է վազեն դեպի մյուս պատը, որպեսզի ստվարաթղթի վրա օդի դիմադրությունն զգան:

Ուսուցչի հարցերը.

– Ի՞նչ էիք զգում, երբ վազում էիք:

– Ձեր կարծիքով, ի՞նչն է «բախվում» ստվարաթղթին:

2-րդ փորձ

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին պահել տետրը կամ գիրքը դեմքին մոտ և հովհարի պես մի քանի անգամ թափահարել:

– Հիմա ի՞նչ եք զգում:

– Ձեր կարծիքով, ի՞նչ է իրենից ներկայացնում այն «անտեսանելի մարմինը», որը ձեր դեմքին է դիպչում:

3. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (4-5 բույս)

Ուսուցիչը խթանող հարց է տալիս.

– Մարդուն անհրաժեշտ է արդյոք օդը: Մեր շուրջը օդ է, և մենք շնչում ենք օդը:

– Ջրի մեջ կա՞ օդ:

– Ըստ ձեզ, հողի մեջ ապրող որդերը, բզեզները, մրջյունները ի՞նչ են շնչում:

– Հողի մեջ կա՞ արդյոք օդ:

Այս հարցերին ուսուցիչը ամենայն հավանականությամբ տարբեր պատասխաններ կլսի:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 բույս)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին բացել դասագրքում 34-րդ դասը, ձախ էջին տրված նկարների և փոքրիկ տեքստերի վրա աշխատանքը կկատարվի արդեն ծանոթ մեթոդով: Աշակերտները հասկանում են, որ օդ կա նաև ջրում և հողում: Օդը անհրաժեշտ է այնտեղ ապրող կենդանի օրգանիզմներին՝ շնչելու համար:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (5-8 բույս)

Փորձի անցկացում

Դասագրքի երկրորդ էջում աշակերտներին ներկայացվում է մի փորձ, որը երեխաներին ցույց կտա այրման պրոցեսի վրա օդի ազդեցությունը: Ուսուցիչը դասարանը խմբերի է բաժանում, բաժանում է երկուական մում և դատարկ անոթներ: Նկարագրված հաջորդականությամբ աշակերտներն ինքնուրույն կատարում են այս փորձը խմբերում (ուսուցիչը կարող է միայն մումերը վառելու հարցում օգնել): Փորձի արդյունքում երեխաները կտեսնեն, որ կարճ ժամանակամիջոցում անոթով փակված մումը հանգչում է:

Ուսուցչի հարցերը.

– Ըստ ձեզ, կհանգչե՞ր մումը, եթե անոթով չծածկելիք:

– Ինչ էք կարծում, ինչո՞ւ հանգավ մումը:

Աշակերտները խմբերում պետք է քննարկեն և իրենց եզրակացություններով ավարտեն Աշակերտի տետրում տրված նախադասությունները:

6. ԼՐԱՑՆԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (5-6 բույս)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել Աշակերտի տետրը և կատարել առաջին վարժությունը: Հետո բացեն դասագիրքը և վարժության մեջ տրված բառերը բանավոր համապատասխանեցնեն նախադասություններին:

7. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 բույս)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասի ակտվություններն ու ձեռք բերած գիտելիքը:

Ծանոթություն. փորձը կատարելուց առաջ ուսուցիչը երեխաներին պետք է հարցնի, թե ինչ կանոնների պետք է հետևել, որպեսզի հրդեհ չբռնկվի կամ մարմնի վրա այրվածքներ չստանան (կամ անվտանգություն ինչ միջոցներ պետք է պահպանեն կրակի հետ աշխատելիս):

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը քննարկում է վարում հետևյալ հարցերի շուրջ.

– Ինչ էք կարծում, ի՞նչ է նշանակում «աղտոտված օդ» արտահայտությունը:

– Ինչպե՞ս է տեղի ունենում օդի աղտոտումը:

– Շնչելու ժամանակ զգո՞ւմ ենք օդի աղտոտվածությունը: Ինչպե՞ս:

– Ինչպե՞ս կարող ենք պահպանել օդի մաքրությունը:

ԴԱՍ 23

Թեմա.

Օդ

Վերնագիրը.

Ինչպես է շարժվում օդը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան դիտարկել տաք և սառը օդի շարժումը և նկարագրել դիտարկման արդյունքները:

Տարբերել միմյանցից տարբեր ուժգնության քամիներն ու անվանել դրանք:

Կատարել մոտորիկյան զարգացնող աշխատանք:

Պարզ սարքերի կիրառմամբ դիտարկել ուսումնասիրման առարկան:

Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Նկարագրուման վրա և իրականության մեջ որոշել երևույթները, նկարագրել դրանք:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն. II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Անհրաժեշտ նյութ.

քառակուսի գունավոր թղթեր, աշակերտների խմբերի քանակին համապատասխան քանակությամբ ձողիկներ կամ մատիտներ, սևեռակներ, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, մկրատ:

1. ՏԱՔ ԵՎ ՍԱՌԸ ՕԴԻ ՇԱՐՇՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ (3-5 րոպե)

– Ըստ ձեզ, այս սենյակում է ավելի տաք օդ, թե՞ դրսում:

(Նկատի է առնվում, որ դասը անցկացվում է ձմռանը և դրսում սառը օդ է, իսկ դասասենյակում՝ տաք:)

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՅԳԵՐՈՎ. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-5 րոպե)

Ուսուցիչը վերցնում է երկու փուչիկ ու աշակերտներին հարցնում.

– Պատկերացրեք, որ երկու փուչիկն էլ ճիշտ հավասար քանակությամբ օդով ենք փչել, բայց մեկում օդը սառն է, մյուսում՝ տաք: Ինչ էք կարծում, ի՞նչ տեղի կունենա:

(Տաք օդով փչած փուչիկը կթռչի վերև, դեպի առաստաղ, քանի որ տաք օդը թեթև է և վերև է բարձրանում: Մառը օդով փչած փուչիկը կընկնի գետին:)

– Ի՞նչ կպատահի առաստաղին հասած փուչիկին, եթե նրա մեջ եղած օդը սառչի: (Այն ևս ներքև կիջնի:)

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-6 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքերը: Նրանք դիտում են նկարները և աշխատում են տեքստերի վրա արդեն ծանոթ մեթոդով: Ստացած տեղեկությունների մշակումը կարող է շարունակվել հետաքրքիր գրույցով. ցանկացողները վերհիշում են, թե քամու ժամանակ ինչ են արել, ինչ են տեսել, ինչ են զգացել...

– Ասում են, քամին նպաստում է բույսերի բազմացմանը, համաձայն յն ես արդյոք այդ տեսակետին:
Ուսուցիչը դասարանը բաժանում է զույգերի և նրանց խնդրում ենթադրություն արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (10-15 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և բաժանում է անհրաժեշտ նյութը. քառակուսի գունավոր թղթեր, 30-40 սմ երկարությամբ ձողիկներ և սևեռակներ: Աշակերտները պետք է ծանոթանան գործնական աշխատանքում տրված առաջադրանքին՝ «Ինչպե՞ս է պատրաստվում պտուտակը» և ինքնուրույն կատարեն այն (խումբը մեկ պտուտակ պետք է պատրաստի): Շնորհանդեսների ժամանակ յուրաքանչյուր խումբ իր աշխատանքն է ներկայացնում դասարանին և խոսում է տեքստում տրված հարցերի շուրջ:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին ձեռք բերած գիտելիքը և հանձնարարում է կատարել Աշակերտի տետրում տրված վարժությունը:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=tTodrCWESaU>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը անցկացնում է դասարանական քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

– Ինչ եք կարծում, ի՞նչ կլինի, եթե օդը վերանա երկրագնդից:

– Ձեր կարծիքով թռչունները կկարողանայի՞ն թռչել անօդ տարածության մեջ: Ինչո՞ւ:

ԴԱՍ 24

Թեմա.

Բնական ռեսուրսներ

Վերնագիր.

Բնահողը և օգտակար հանածոները

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան նկարագրողման վրա և իրականության մեջ որոշել մարմինները, նկարագրել և բնութագրել դրանք:

Դատողություն անել կենցաղային թափոնների և շրջակա միջավայրում մաքրության պահպանման նշանակության մասին:

Նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Նկարագրել բնության մեջ հայթայթած քարերը, դիտարկել և համեմատել, դրանք խմբավորել տարբեր նշաններով:

Տարբեր տեղերից վերցված բնահողն ուսումնասիրել խոշորացույցով և ձեռքով շոշափելով և տվյալները համեմատել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ի.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ի.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ի.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝

ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:

Նկարագրում է բնության մեջ կամ/և դիդակտիկ նյութի վրա արտացոլված ջրի և ցամաքի օբյեկտները՝ ըստ դրանց բաղադրիչ մասերի (օրինակ՝ լեռ – լեռան գագաթ, լանջ և ստորոտ, գետ – ափ, հատակ):

Դիտարկում է, նկարագրում և համեմատում բնական միջավայրում գտած քարերը: Խմբավորում է դրանք՝ ըստ տարբեր հատկանիշների (օրինակ՝ գույնի, չափի, ձևի, ողորկության):

Ուսումնասիրում է տարբեր տեղերից վերցված հողի նմուշներ մանրադիտակով և շոշափելով, դրանք համեմատում է տարբեր հատկանիշներով (օրինակ՝ գույն, մասնիկների չափը, փխրունություն, խոնավության պարունակություն), համադասարանցիներին ծանոթացնում է դիտարկման արդյունքները:

Անհրաժեշտ նյութ.

տարբեր չափի, ձևի և գույնի մանրաքարեր, բնահողի տարբեր տեսակներ, խոշորացույցեր:

1. ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ (3-5 րոպե)

Ուսուցիչն այս դասի համար բերել է գլոբուս և աշակերտներին հարցնում է.

- Հիշե՞ք՝ այս գլոբուսի վրա ի՞նչն է նշված կապույտ գույնով: (Ջուրը)
- Բացի ջրից, ուրիշ ինչի՞ց է բաղկացած երկրագունդը: (Ցամաքից)
- Ինչպիսի՞ն է ցամաքի մակերևույթը: (Լեռնոտ, հարթավայրային)
- Գլոբուսի վրա ի՞նչ գույնով է արտացոլված ցամաքը:

2. ՄԻՆԻ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (5-10 րոպե)

Ցամաքի մակերևույթը, այսպես կոչված՝ կեղևը, պինդ է և բազմազան: Կեղևի վերին՝ փխրուն մասը կոչվում է բնահող: Բնահողը գյուղատնտեսական գործունեության հիմնական միջոցն է, այն բույսին ապահովում է ջրով, ջերմությամբ և սննդանյութերով: Բնահողի բաղադրությունը տարբեր է: Գոյություն ունի սևահող-բերրի բնահող, կավուտ, ավազուտ, քարոտ և այլն: Մարդիկ հնագույն ժամանակներից դիտարկում էին և ուսումնասիրում բնահողը և համապատասխանաբար օգտագործում այն: Օրինակ՝ սևահող բնահողը լավագույնն է վար ու ցանքի համար, կավուտ բնահողից սպասք են պատրաստում, ավազն ու քարն օգտագործում են՝ որպես շինանյութ և այլն: Հողի վերին շերտից բացի, հորատող սարքերի միջոցով մարդիկ կարողացան թափանցել հողի մեջ մոտավորապես 12 կիլոմետր խորությամբ և ուսումնասիրել այն: Պարզվեց, որ երկրակեղևը հարուստ է տարբեր բաղադրություն ունեցող գոյացություններով, այսպես կոչված՝ օգտակար հանածոներով:

- Որևէ բան իմացե՞լ էք օգտակար հանածոների մասին: Թվարկե՛ք:

Օգտակար հանածոները գոյություն ունեն պինդ, հեղուկ և գազային վիճակում: Դրանք հայթայթում են ինչպես հանքերում, այնպես էլ ստորգետնյա հանքահորերում և հորատանցքերի միջոցով:

- Ըստ ձեզ, մարդն ինչի՞ համար է օգտագործում օգտակար հանածոները:

Եթե աշակերտները հարցին չեն կարողանա սպառիչ պատասխան տալ, ցանկալի է, որ ուսուցիչն ինքը պարզաբանի:

Նավթից պատրաստած նյութերը հիմնականում որպես վառելանյութ են օգտագործում: Մրանք են բենզինը, մեքենայի յուղը, պլաստմասսան, ներկերը, դեղերը և այլն:

Լեռնային պինդ ապարներից (գրանիտ, մարմար, ցեմենտ, աղյուս, ապակի, գիպս, կիր, քարածուխ) շինանյութ է պատրաստվում: Թանկարժեք քարերը՝ ալմաստը, սուտակը, գիրուխտը օգտագործվում են զարդերի համար:

Որքան ավելի շատ օգտակար հանածոներ ունի երկիրը, այնքան ավելի հարուստ է նա:

Հայթայթած օգտակար հանածոների մեծ մասն անհրաժեշտ է գործարանային վերամշակման ենթարկել: Գործարաններում, որտեղ տեղի է ունենում դրանց վերամշակումը, առաջանում են արտադրական թափոններ. փոշի, արտանետումներ, աղտոտված ջուր: Դրանց մի մասը արտանետվում է օդ և աղտոտում այն, իսկ մի մասը հոսում է մոտակայքում գտնվող գետեր, ծովեր կամ օվկիանոսներ և վտանգ ստեղծում մոտակայքում գտնվող բուսածածկույթին, կենդանիներին և մարդկանց: Ի վերջո այս ամենը աղտոտում է շրջակա միջավայրը:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (5-10 րոպե)

Ուսուցիչն այս դասի համար բերել է տարբեր գույն, չափ և մակերևույթ ունեցող քարեր, մանրաքարեր: Հնարավոր է նաև՝ հանքանյութ, եթե դրա հնարավորություն ունի: Դասարանը բաժանվում է խմբերի: Նրանց բաժանվում է հետազոտման նյութ:

Ուշադիր զննե՛ք և խմբավորե՛ք բնական միջավայրում հայթայթած քարերն՝ ըստ տարբեր հատկանիշների, և պատրաստե՛ք շնորհանդեսի համար:

- I խումբ՝ ըստ գույնի
- II խումբ՝ ըստ չափի
- III խումբ՝ ըստ ձևի
- IV խումբ՝ ըստ մակերևույթի

4. ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ (6-10 րոպե)

Այս անգամ ուսուցիչը խմբերին բաժանում է տարբեր տեսակի բնահողի նմուշներ և խոշորացույցեր.

- I խումբ՝ սևահող
- II խումբ՝ ավազոտ բնահող
- III խումբ՝ քարոտ բնահող
- IV խումբ՝ կավոտ բնահող

Ցանկալի է, որ հողը լցված լինի պլաստմասսայե մեկանգամյա թափանցիկ բաժակների մեջ: Խմբի անդամները խոշորացույցի օգնությամբ և ձեռքի հպումով պետք է հետազոտեն իրենց ձեռքի տակ եղած բնահողը, դատողություն անեն և համաձայնեցված տվյալներով լրացնեն իրենց Աշակերտի տետրում տրված սխեման ու պատրաստվեն շնորհանդեսի.

| | |
|------------------------------------|--------------------------------|
| Գույն | Մուգ, սև, ոսկեգույն, դեղնավուն |
| Բաղադրություն | Քարոտ, ավազոտ |
| Փխրունություն | Փխրուն, պինդ |
| Ջրի պարունակություն (խոնավություն) | Չափավոր, չոր, թաց |

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին անցկացված ակտիվությունների արդյունքում ստացած գիտելիքը:

ԴԱՍ 25-26

Թեմա.

Բնական ռեսուրսներ

Վերնագիրը.

Մագնիս

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Դիտարկման արդյունքում հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքել:

Պարզ փորձեր անցկացնել/տարբեր բաղադրության նյութերը խմբավորել:

Մազնիսի բևեռների փոխազդեցության մասին եզրակացություններ անել:
Առօրյա կյանքում մազնիսի կիրառության կարիքն ու անհրաժեշտությունը հիմնավորել:

Կապը ԱՌԲՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:
Բն.Ու.4. Աշակերտը պետք է կարողանա բնութագրել մազնիսի գործողությունը:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:
Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):
Պարզ փորձեր է անցկացնում մազնիսի միջոցով և տարբեր նյութերից պատրաստված մարմինները խմբավորում՝ ըստ մազնիսի հետ փոխազդեցության:
Պարզ փորձ է անցկացնում երկու մազնիսի կիրառմամբ և եզրակացություն անում մազնիսների բևեռների փոխազդեցության մասին:
Թվարկում է մազնիսի կիրառման օրինակներ ամենօրյա կյանքում. մազնիսային գրատախտակ, պայուսակի փական, սառնարանի վրա ամրացնելու պատկերներ և այլն:
Մազնիսն օգտագործում է պարզ խնդրի լուծման համար (օրինակ՝ երկաթից կամ այլ նյութից պատրաստած մարմինների կույտից երկաթյա մարմինների առանձնացման համար կամ/և սեղանի խաղ ստեղծելու համար):
Անհրաժեշտ նյութ. մազնիսներ, երկաթյա, պլաստմասսայե, փայտյա, կավե, պլաստիլինի իրեր:

Անհրաժեշտ նյութ.

1. ՄՏԱՎՈՐ ՔՐՈՇ (2-3 րոպե)

Ձեզանից բոլորն էլ հավանաբար խաղացել են մազնիսով:
Վերհիշի՞ր և բնութագրի՞ր այն:
Ուսուցիչը գրատախտակին գրում է աշակերտների կարծիքները.
Ենթադրաբար՝ պինդ է, մետաղ է, ձգում է, արծաթագույն է, երկու գույն ունի, տարբեր ձևի է...

2. ՄԻՆԻ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (5-6 րոպե)

Ուսուցիչը ակներևության համար բերել է տարբեր ձևի և չափի մազնիսներ. առանցքային, պայտաձև, ինչպես նաև՝ երկաթյա, պլաստմասսայե, փայտյա, կավե, պլաստիլինի իրեր:
Մազնիսն ունի ուժ, որով որոշ առարկաներ իր կողմ է ձգում, կպցնում է իրեն: Այդ պատճառով էլ ասում են, որ մազնիսն ունի ձգողականության ուժ: Եկեք, մեր աչքով տեսնենք մազնիսի այս հատկությունը:
Ուսուցիչը մազնիսը մոտեցնում է դեռ փայտյա, այնուհետև կավից և պլաստմասսայե, իսկ վերջում երկաթյա իրերի:
– Ի՞նչ կատարվեց:
Երեխաները, ելնելով տեսածից, անում են համապատասխան եզրակացություն. մազնիսը ձգեց միայն երկաթից պատրաստած իրերը, այսինքն՝ մազնիսը ձգում է երկաթյա առարկաներ:
– Ըստ քեզ, ըստ Աշխատանքային տետրում տրված նկարների, բացի մեխից ուրիշ ի՞նչ առարկաներ կձգի մազնիսը:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

– Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի: Խմբերին բաժանում է մի շարք առարկաներ: Ուսուցիչը դիմում է դասարանին.

– Տեսակավորե՛ք իրերը՝ ըստ մագնիսի հետ փոխազդեցության և արդյունքները գրանցե՛ք աղյուսակում:

| ԻՐ | ՄԱԳՆԻՍԸ ՁԳՈՒՄ Է | ՄԱԳՆԻՍԸ ՉԻ ՁԳՈՒՄ |
|-------------|-----------------|------------------|
| Մեխ | + | |
| Թել | | + |
| Փայտյա գդալ | | + |

Այժմ տեսնենք, թե ուրիշ ինչ հատկություններ ունի մագնիսը:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (4-6 րոպե)

Ուսուցիչը սեղանի մոտ է կանչում մի աշակերտի և առաջադրանք տալիս.

Վերցրո՛ւ մագնիսը և թղթի ամրուցիչներ, այսպես կոչված՝ սկրեպեր: Մագնիսին մոտեցրո՛ւ մի ամրան: Մագնիսը կձգի այն: Այժմ այդ ամրանով կպի՛ր ուրիշ ամրուցիչների: Կտեսնես, որ դրանք ևս կկպչեն իրար: Այնուհետև ուսուցիչը հարցնում է դասարանին.

– Ինչպե՛ս կբացատրեք այս երևույթը, ի՞նչ կատարվեց:

Քննարկե՛ք և արե՛ք եզրակացություն:

Մագնիսի ձգողականության ուժն անցավ ամրուցիչին:

Այս անգամ ուսուցիչը ցուցադրական սեղանի մոտ է հրավիրում ցանկություն ունեցող մեկ այլ աշակերտի և տալիս ցուցում.

– Վերցրո՛ւ մեկ ամրուցիչ և ուղղի՛ր: Ամրուցիչից ստացած ձողիկի մի ծայրին մագնիսը մի քանի անգամ քսի՛ր մեկ ուղղությամբ: Այնուհետև երկաթյա ձողիկը մոտեցրո՛ւ ամրուցիչներին: Ձողիկը կձգի ամրուցիչներն ու կկպցնի իրեն:

– Այս անգամ ի՞նչ եղավ:

– Այն մագնիսացված է, այսինքն՝ այն ևս ունեցավ մագնիսական ուժ:

4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏԻՐ (6-10 րոպե)

Փորձ 1

Աշխատանքը բաղկացած է երկու փուլից:

Առաջին փուլ.

Ուսուցիչը խմբերին բաժանում է մագնիսներ, որոնց բևեռները գունավոր են (կարմիր և կապույտ): Նա աշակերտներին խնդրում է որոշել, թե ինչպես են դրանք փոխազդում իրար հետ: Դրա համար անհրաժեշտ է սկզբից ներգրավվեն մի գույնի բևեռները (վերջավորությունները): Ի՞նչ տեղի ունեցավ:

Այժմ փորձեն և միացնեն տարբեր գույնի վերջավորությունները՝ կարմիրը կապույտի հետ: Այս անգամ ի՞նչ տեղի ունեցավ:

Դատողությո՛ւն արեք փորձի մասին և արե՛ք եզրակացություն:

– Այստեղից ելնելով՝ կարո՞ղ եք որոշել, թե ինչպես են փոխազդում մագնիսն ու երկաթը:

– Ինչ եք կարծում, միանմա՞ն բևեռներ ունեն, թե՞ հակադիր:

Երկրորդ փուլ.

Հետևում ենք շարժմանը

Ուսուցիչը յուրաքանչյուր խմբին տալիս է 3 առանցքային կամ պայտաձև մագնիս, որոնցից միայն մեկի վրա են նշված բևեռները (գույներով) և առաջադրանք է տալիս. մագնիսների փոխազդեցությամբ որոշել չնշված մագնիսի բևեռները: Այնուհետև կպչուն գունավոր թուղթ (կարմիր և կապույտ) փակցնել դրանց վրա:

Մա հետաքրքիր է:

«Միրող քար» (չու-շի), – այսպես են կոչել չինացի բնագետները բնական մագնիսը՝ նրա ձգողականության հատկության պատճառով: Ինչպես չինացիներն էին ասում, այս քարը երկաթը

նույն կերպ է ձգում, ինչպես սիրող մայրը՝ իր զավակին: Ուշագրավ է, որ ֆրանսիացիները նույնպես մազնիսին նույնպիսի անվանում տվեցին: Մենք նույնպես հաճախ կիրառում ենք «մազնիսի պես ձգում է» արտահայտությունը, և որոշ չափով սա ևս սիրո հետ է կապված:

Բնական մազնիսների այս «սիրո» ուժը շատ մեծ չէ: Մազնիսները կարող են իրար ձգել կամ վանել: Ուստի գոյություն ունի երկու տիպի «մազնիսական լիցք», որոնք կոչվում են բևեռներ: Դրանցից մեկը կոչվում է հյուսիսային բևեռ, իսկ երկրորդը՝ հարավային բևեռ: Պարզ է, որ այս անվանումը կապված է աշխարհագրական անվանումների հետ, քանի որ կողմնացույցի սլաքի մի ծայրը հյուսիս է ցույց տալիս, իսկ մյուսը՝ հարավ: Իսկապես, եթե առանցքի ձև ունեցող մազնիսը կախենք թելից, մազնիսն այնպես կշրջվի, որ նրա մի ծայրը ուղղված կլինի դեպի հյուսիս, իսկ մյուսը՝ դեպի հարավ: Մազնիսի ճիշտ այս հատկությամբ է պայմանավորված կողմնացույցի գործողությունը:

Ի՞նչ կկատարվի, եթե մազնիսի առանցքը մեջտեղից կտրենք: Կպարզվի, որ յուրաքանչյուր կտոր ինքնուրույն մազնիս է և քանի անգամ էլ կտրեք այն, բևեռների տարանջատման երբեք չեք հասնի: Նրա թեկուզ շատ փոքրիկ կտորն ունի երկու բևեռներն էլ, և այս բևեռները գոյություն ունեն միայն նրա ծայրերին:

Հայտնաբերել են մազնիսի ևս մեկ հետաքրքիր հատկություն. եթե մազնիսի մոտակայքում երկաթի կտոր տեղադրենք, այն ևս մազնիսի հատկություն ձեռք կբերի: Ստացվում է, որ մազնիսը կարող է երկաթի սովորական կտորը մազնիս դարձնել: Այս գործընթացը կոչում են մազնիսացում:

6. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 բույս)

Ուսուցիչն ամփոփում է դասի ժամանակ քննարկված թեման:

ԱՅԼԸՆՏԸԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Ձկնորսություն»

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի և նրանց տալիս է անհրաժեշտ պիտույքներ:

Թափանցիկ անոթի մեջ ջուր լցրե՛ք և մեջը գցե՛ք փոքրիկ մեխ: Այնուհետև, ըստ տրված նկարի, համաձայնե՛ք և ընտրե՛ք այն առարկան, որի օգնությամբ մեխն այնպես հանեք, որ ո՛չ ջուրը թափեք, ո՛չ էլ ձեռքերը թրջեք: Նկարագրե՛ք փորձի արդյունքները: Գրե՛ք՝ ինչ էիք մտածում մինչև փորձի անցկացումը, ինչպես հանեցիք մեխը, ձեր խմբում արդյոք որևէ մեկը փորձո՞ւմ էր այլ կերպ հանել մեխը:

ԴԱՍ 27

Թեմա.

Բնական ռեսուրսներ

Վերնագիրը.

Հրաբուխներ

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Անձնական կարծիքների և դիտարկման արդյունքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերի:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Անհրաժեշտ նյութ. պոլիէթիլենի կտորներ, կավահող, թիթեղյա կամ ապակե նեղ անոթներ, գինու քացախ, կերակրի սոդա, անձեռոցիկներ, ուսումնա-ճանաչողական ֆիլմ հրաբխի մասին, պլաստիլին, փոքր գդալ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (5-6 րոպե)

Ուսուցիչը գրույց է վարում՝ գործածելով հետևյալ հարցերը.

- Լսե՞լ եք այն տարօրինակ լեռների մասին, որոնց հրաբուխ են անվանում:
- Ի՞նչ գիտեք հրաբուխների մասին:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (12-13 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքի համապատասխան դասը և դիտել հրաբուխի նկարը: Ցանկալի է, որ հենց տեղում քննարկվի նկարը. ի՞նչ են տեսնում նկարում, նրանց կարծիքով ի՞նչ է տեղի ունենում, ինչո՞ւ են այսպիսի գույներ և այլն:

Հետո ուսուցիչը մեկ կամ երկու աշակերտների կարգալ է տալիս տրված տեքստը: Մյուս աշակերտը (կամ աշակերտները) պետք է փորձեն ըստ ընթերցած տեքստի և նկարի բացատրել, թե ինչ իմացան հրաբխի մասին:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ «ՄԵՆՔ ՆՈՒՑՆՊԵՍ ՍՏԵՂԾԵՆՔ ՀՐԱԲՈՒԽ» (15-18 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է մի քանի խմբերի և հանձնարարում է ինքնուրույն ծանոթանալ դասագրքում նկարագրված փորձին, իսկ շնորհանդեսի ժամանակ պատասխանել փորձի տակ տրված հարցերին:

Ուսուցիչը խմբերին բաժանում է փորձի համար անհրաժեշտ բոլոր առարկաները և հետևում է երեխաների աշխատանքին, որպեսզի նրանք գործեն տրված հաջորդականությանը համապատասխան: Մինչև երեխաները քացախն օգտագործեն, ուսուցիչն աշակերտներին նախօրոք ենթադրություն արտահայտել է տալիս.

- Ինչ էք կարծում, ի՞նչ տեղի կունենա, երբ քացախը լցնենք:

Յուրաքանչյուր խմբի պատասխանն ուսուցիչը գրառում է գրատախտակի վրա, որպեսզի հետո փորձի արդյունքը կանխատեսման հետ համեմատելու հնարավորություն լինի:

Փորձն ավարտելուց հետո, խմբերն արտահայտում են իրենց տեսակետները և հետևություն են անում: Փորձն ավարտելուց հետո բոլորը անձեռոցիկով պետք է չորացնեն իրենց սեղանները և պետք է հավաքեն առարկաները:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասին կատարված ակտիվությունները:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://youtu.be/mgpBvRMu680>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՄ ԼՐԱՅՈՒՑԻՉ) ԱԿՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը գտել է հետաքրքիր պատմություններ, նկարներ կամ տեսանյութ հրաբուխների մասին և ներկայացնում է աշակերտներին: Այսպիսիք կարող են լինել Վեգուվի հրաբխի, Պոմպեյ քաղաքը ծածկված ժայթքած հրաբխի մասին պատմությունները, Մեքսիկայի Պարիկուտին հրաբուխը, օվկիանոսներում ժայթքող հրաբուխները և այլն:

ԹԵՍՏ 5

1.

ա) Մագնիսն ունի ուժ, որով որոշ առարկաներ:

բ) Մագնիսը հիմնականում ձգում է պատրաստած առարկան:

գ) Մագնիսն ունի երկու . հյուսիսային և հարավային:

2. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:

Մագնիսը ձգում է.

կավը, հողը, երկաթը, փայտը, պլաստմասսան:

3. Շրջագծի՛ր ճիշտ պատասխանը:

Պատկերացրո՛ւ, որ քեզ անհրաժեշտ է մագնիսացնել մեխը: Ինչպե՞ս կվարվես:

ա) Մեխը կպահես մագնիսի վրա:

բ) Մագնիսը կքսես մեխին:


գ) Մագնիսը մի քանի անգամ կքսես մեխին մեկ ուղղությամբ:

4. Որոշի՛ր՝ ստորև թվարկված բառերից ո՞րն է ավելորդ, և վրան գի՛ծ քաշիր:

| | | |
|------------------------------------|---|-------------------------------------|
| <input type="text" value="Ուժ"/> | <input type="text" value="Ցուր"/> | <input type="text" value="Մագնիս"/> |
| <input type="text" value="Երկաթ"/> | <input type="text" value="Զգողականության ուժ"/> | <input type="text" value="Մեխ"/> |

5. Մագնիսով ձկնորսություն

Ո՞ր առարկաները կբռնի մագնիսը կարթով: Շրջագծի՛ր և գունավորի՛ր:



ԴԱՍ 28

Թեմա.

Վերնագիրը.

Դասի նպատակը.

Անցյալի հետքերով

Որտեղ են ապրում մարդիկ

Աշակերտները պետք է կարողանա որոշել մարմինը, նկարագրել, տեսակավորել:

Կիրառել հաղորդակցության տարբեր ձևեր:

Հետազոտել տարբեր բնակատեղերի կառուցման առանձնահատկությունները և նկարագրել դրանք:

Տարբեր մարմիններ համեմատել/նկարագրել՝ ըստ ձևի, չափի և բաղադրիչ նյութերի:

Ծանոթ նյութն անվանել և հիմնավորել դրա ըստ անհրաժեշտության կիրառման անհրաժեշտությունը:

Դատողություն անել որոշ առարկաներ տարբեր նյութերից պատրաստելու անհրաժեշտության մասին:

Անվանել բնական ռեսուրսները և խոսել դրանց նշանակության մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշչի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ու.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Բն.Ու.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Մեկական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Տեղի միջավայրում հետազոտում է օրգանիզմների տարբեր բնակատեղեր (որջ, բույն, տուն), նկարագրում է դրանց կառուցման առանձնահատկությունները:

Նկարագրում է և համեմատում տարբեր մարմինները՝ ըստ չափի, ձևի և բաղադրիչ նյութի:

Անվանում է իրեն լավ ծանոթ նյութերի (օրինակ՝ փայտի, ապակու, պլաստմասսայի) ամենօրյա կյանքում կիրառման օրինակներ:

Դատողություն է անում, թե ինչի համար են պատրաստվում իր կողմից կիրառած որոշ առարկաներ (օրինակ՝ այծոռ, հագուստ, խաղալիքներ) մի քանի տարբեր նյութերից:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է

ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Անհրաժեշտ նյութ.

տեսաֆիլմ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (6-7 րոպե)

Խթանման համար ուսուցիչը տալիս է մի քանի հարց և երեխաներին ներքաշում է գրույցի մեջ.

– Ձեր կարծիքով, ապաստանելու և ապրելու համար մարդն ինչի՞ կարիք է գգում:

– Ինչո՞վ են տարբերվում տները քաղաքում և գյուղում:

– Ինչ էք կարծում, նախնադարյան (առաջին, հնագույն ժամանակների) մարդիկ գիտե՞ին տուն կառուցել: Որտե՞ղ էին նրանք ապրում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-8 րոպե)

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին բացել դասագրքերի համապատասխան էջը և ուշադիր նայել տրված նկարները:

Այնուհետև գրքի վրա աշխատանքը տեղի է ունենում հետևյալ կերպ.

Առաջին նկարագրում կից համառոտ տեքստը կարդում է մի աշակերտ, մյուսները գրքում հետևում են: Հետո ուսուցիչը խնդրում է մեկ ուրիշ աշակերտի պատմել, բացատրել, թե ինչպես էին ապրում մարդիկ քարանձավներում, ինչ գործիքներ ունեին և ինչի համար էին կիրառում: Ինչպես էր կազմակերպված նրանց բնակման տեղը և այլն:

Վերջում աշակերտները, ըստ նկարների, պետք է պատասխանեն «Մտածի՛ր» խորագրի ներքո բերված հարցերին: Ով նկարը ուշադիր է նայել և քարանձավում տեսել է խարույկը, առաջին հարցին չի դժվարանա պատասխանել: (Երկրորդ հարցի պատասխանն է «հոսանքը» կամ «էլեկտրահոսանքը», «բնական գազը»):

Նման կերպ պետք է շարունակվի աշխատանքը նաև երկրորդ և երրորդ նկարների վրա:

3. ԴԱՍԱԴԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (3-5 րոպե)

Ուսուցիչը վարում է գրույց հետևյալ հարցերի շուրջ.

– Ձեր կարծիքով՝ ինչի՞ օգուտ է կառուցած մեր դպրոցի շենքը:

– Ի՞նչ շինանյութեր են օգտագործվել պատուհանների համար: Դռա՞ն համար:

– Քաղաքում շինարարական ի՞նչ նյութ են օգտագործում հիմնականում:

– Ուրե՞տե՞ս ի՞նչ է նշանակում «շինանյութ» բառը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (4-6 րոպե)

Աշակերտները բացում են Աշակերտի տետրերը, առաջին վարժության մեջ, աջ կողմում պետք է նկարեն նախնադարյան մարդու բնակատեղի, աջ կողմում՝ ժամանակակից սենյակ՝ կահավորված տեխնիկայով, և համեմատեն: Այնուհետև համապատասխանաբար լրացնեն աղյուսակը՝ իրենց դպրոցի շինանյութային ժամանակ օգտագործած շինանյութերի մասին: Ուսուցիչն աշակերտներին պետք է հանձնարարի աշխատել անհատապես կամ զույգերով:

5. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (2-3 րոպե)

Ուշադիր նայիր տանը, որտեղ ապրում ես և լրացրու սխեման (ինչով է այն կառուցված):

6. ԴԱՄԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է (կամ հարցեր առաջադրելով աշակերտներին է տալիս ամփոփել) այս դասին ձեռք բերած գիտելիքը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ այն նյութերը, որոնք գործածվում են շինարարության մեջ, կարող են լինել բնական և արհեստական՝ մարդու ձեռքով ստեղծված:

- Բնական ի՞նչ շինանյութեր են գործածվել մեր դպրոցի շենքի կառուցման ժամանակ (այսպիսիք կարող են լինել՝ փայտը, քարը...):
- Արհեստական ի՞նչ շինանյութեր են գործածվել մեր դպրոցի շենքը կառուցելու ժամանակ (սրանք են՝ աղյուսը, ներկը, պլաստմասսան...):

ԴԱՍ 29

Թեմա.

Անցյալի հետքերով

Վերնագիրը.

Ի՞նչ է մեզանից թաքցնում հողը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան դիտարկել ուսումնասիրվելիք օբյեկտը:

Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Մարմինները որոշել:

Մարմինը նկարագրել՝ ըստ բաղադրիչ մասերի:

Իրեն ծանոթ մարմնի բաղադրիչ նյութերն անվանել:

Դատողություն անել տարբեր նյութերից միևնույն առարկան պատրաստելու անհրաժեշտության մասին:

Դատողություն անել նյութի հատկանիշների մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.II.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրադրումների վրա կամ իրականության մեջ:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, S2S):

Նկարագրում է և համեմատում տարբեր մարմիններ՝ ըստ չափի, ձևի և բաղադրիչ նյութի:

Անվանում է իրեն լավ ծանոթ նյութերի (օրինակ՝ փայտի, ապակու, պլաստմասսայի) ամենօրյա կյանքում կիրառման օրինակներ:

Դատողություն է անում, թե ինչի համար են պատրաստվում իր կողմից կիրառած որոշ առարկաներ (օրինակ՝ աթոռ, հագուստ, խաղալիքներ) մի քանի տարբեր նյութերից:

Ընտրում է նյութ՝ տվյալ նշանակումն ունեցող մարմին (կամ դրա մոդել) պատրաստելու համար, դատողություն է անում այդ մարմնի նշանակման հետ նյութերի հատկանիշների (օրինակ՝ ողորկություն, թափանցիկություն, առաձգականություն, ջրի մակերևույթին լողալու ունակություն, ջրանցիկություն) համապատասխանության մասին:

Անհրաժեշտ նյութ.

ավագով լի մեծ արկղ, «հնագիտական գործիքներ»՝ փոքրիկ թիակ, վրձին, մաղ, «ցուցանմուշներ»՝ փոքրիկ կավե աման (կամ դրանց կտորտանք), զարդ, ընտանի կենդանիների ոսկորներ, խեցիներ, փետուրներ, աղյուսի կամ կղմինդրի կտորտանք, բուխ դանակ, դուլ, թղթեր:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (8-10 բուպե)

Տնային առաջադրանքը ստուգելուց հետո, ուսուցիչը գրատախտակին գրում է «հնագետ» (արխետոլոգ) բառը և հարցնում է աշակերտներին, գիտե՞ն արդյոք այս բառի նշանակությունը: Աշակերտների կարծիքները համառոտ գրանցում է գրատախտակի վրա և ասում է, որ այս հարցին դասի վերջում նորից կանդրադառնան:

Հետո ուսուցիչն ասում է, որ հողի տակ, բացի օգտակար հանածոներից, շատ հետաքրքիր բաներ կան թաղված, ինչը հին ժամանակների մարդկանց և նրանց կյանքի մասին է պատմում:

- Ինչպե՞ս են ապրել մարդիկ Վրաստանում դարեր առաջ:
- Ինչպիսի՞ տներ էին կառուցում, ի՞նչ նյութեր էին օգտագործում:
- Ինչպե՞ս էին հագնվում:
- Ի՞նչ սպասք ունեին:
- Ի՞նչ գործունեությամբ էին զբաղված և այլն:

Այս ամենը պարզելու համար կրկին մեզ հողն է օգնում: Բազմաթիվ տարիների ընթացքում հողը և փոշին ծածկել են հին բնակատեղիները: Հետո այս հողը բույսերով է ծածկվել ու ամեն ինչ թաքցրել: Հնագետները ճիշտ այն մարդիկ են, ովքեր հողի տակի բնակատեղիները, հին առարկաներն են գտնում: Վրաստանի շատ վայրերում տեղի են ունենում հնագիտական պեղումներ, ինչի արդյունքում հին ժամանակների մարդկանց իրեր և տների փլատակներ են հայտնաբերվում: Այս իրերը մաքրում և զգուշորեն տեղադրում են հատուկ շինության ներսում, որը թանգարան է կոչվում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ. «ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ» ԱՆՑԿԱՑՈՒՄ (8-10 բուպե)

Հնագիտական պեղումների ժամանակ հատուկ գործիքներ են անհրաժեշտ: Ուսուցիչն իր հետ բերել է պարզունակ «հնագիտական գործիքներ» (փոքրիկ թիակ, վրձին, մաղ) և ցույց է տալիս աշակերտներին: Նրանց նշանակմանը երեխաները ծանոթանում են աշխատանքի ընթացքում:

Ուսուցիչը պատրաստել է ավագով լի լայն արկղ, որի մեջ թաղված են տարբեր առարկաներ (դա կարող է լինել կավե աման, զարդ, բուխ դանակներ, աղյուսի կամ կղմինդրի կտորտանք, ընտանի կենդանիների ոսկորներ, փետուր և այլն): Ուսուցիչը երեխաներին ասում է, որ այս «հողում էլ» (ավագով արկղում) կան հին բնակատեղիների փացորդներ և նրանց առաջարկում է պեղումներ անել: Դրա համար ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և հերթով յուրաքանչյուր խմբի կանչում է արկղի մոտ: Երեխաները պետք է ընտրեն համապատասխան գործիքները և սկսեն «պեղել»: Նախ և առաջ փոքր թիակով պետք է հանել ավազը և մաղել: Ավազը մաղվում է դուլի մեջ: Բրածո առարկան կարող է հայտնաբերվել կամ թիակով աշխատելու, կամ մաղելու ժամանակ: Երբ որևէ առարկա հայտնաբերեն, վրձինով պետք է մաքրեն այն: Հայտնաբերած ցուցանմուշը վերջում դնում են դատարկ պահարանում կամ դարակի վրա և այսպես ստեղծում են «թանգարան»: Մեկ առարկա հայտնաբերելով ու «թանգարանում» տեղադրելով՝ այս խմբի աշխատանքն ավարտվում է, հետո երկրորդ խմբի աշակերտներն են շարունակում նույն բանն անել: Այսպիսով խմբերը հերթով «պեղումներ» կանցկացնեն մինչև հայտնաբերեն բոլոր թաղված առարկաները:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ. ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ (5-7 բուպե)

Աշակերտները փում են իրենց խմբերում: Այս անգամ նրանք պետք է Աշակերտի տետրում գրեն այն բոլոր առարկաների անունները, ինչ հայտնաբերել են: Հետո նույն թղթի վրա լրացնում են երկու սյունակներով պարզունակ մի աղյուսակ: Մի սյունակի վերևում գրված է «արհեստական առարկաներ», մյուսի վերևում՝ «բնական առարկաներ»: Աշակերտները հնագիտական նմուշներից պետք է տարբերեն արհեստական ու բնական առարկաները և լրացնեն այս աղյուսակը (փաստորեն նրանք արդեն գրառած բառերը պետք է տեղադրեն աղյուսակում):

4. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (8-10 բուպե)

Աշխատանքի վերջին փուլն է, ըստ ցուցանմունքների՝ պատկերացում է ստեղծվում անցյալի մասին և համապատասխանաբար՝ հիմնավորվում են ենթադրությունները: Ուսուցիչը կարող է հարցերի օգնությամբ ճիշտ ուղղություն տալ աշակերտներին: Օրինակ.

1. Ի՞նչ է մատնանշում ձեր կողմից հայտնաբերված կղմինդրի կտորտանքը:
2. Կավի՞ կտորտանքը:
3. Շինարարական առարկանե՞րը, գլաքարե՞րը:
4. Գինու կարասի բերա՞նք:
5. ԿճՈՒՃՐ, որի մեջ ցորեն է:
6. Երկաթյա ի՞րը:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ծեփել, «վերականգնել» այն իրերը, որ նրանք գտան «հնագիտական» պեղումների ժամանակ: Այս դեպքում կավի փոխարեն պլաստիլին կօգտագործեն: Ենթադրաբար, դա կլինի սպասք: Օրինակ՝ կարաս, գինու քամիչ, թաս, ափսե, կճուճ և այլն: Վերջում կկազմակերպվի ցուցահանդես:

- Ուսուցիչը, եթե անհրաժեշտ համարի, կարող է տալ հետևյալ հարցերը.
 - Այս նյութն այսօր օգտագործո՞ւմ են այս իրերը պատրաստելիս: (Ապակի, կավ, ճենապակի, մետաղ)
 - Դու ո՞րն ես ավելի հավանում և ինչո՞ւ:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 բուպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է այս դասին անցկացված ակտիվությունները: Վերջում ուսուցիչը վերադառնում է գրատախտակին գրված բառին՝ «հնագետ» և հարցնում է՝ հասկացա՞ք, ով է հնագետը: Ի՞նչ նշանակություն ունի հնագետների գործունեությունը:

Ծանոթություն. այս դասը ուսուցիչը կարող է անցկացնել՝ ըստ իր ցանկության:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե ժամանակը թույլ տա, ցանկալի է, որ ուսուցիչը խմբերին իրենց պատկերացումներով կենդանացրած անցյալը նկարելու հնարավորություն տա: Դատողություններ անեն և արտահայտեն իրենց կարծիքները (ինչպիսի տներում են ապրել այն մարդիկ, ինչով են սնվել, ունեցե՞լ են արդյոք ընտանի կենդանիներ, ինչ գործունեությամբ են զբաղվել և այլն):

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|----------------------|---|
| Թեմա. | Մենք և բնությունը |
| Վերնագիրը. | Մեր դպրոցի հարակից տարածքը. հետազոտություն |
| Դասի նպատակը. | <p>Աշակերտները պետք է կարողանան տեղային միջավայրի դիտարկման արդյունքում գոյություն ունեցած աշխարհագրական օբյեկտները ճանաչել, անվանել և նկարագրել:</p> <p>Միմյանցից տարբերել բնական և արհեստական օբյեկտները:</p> <p>Ստեղծել պարզ նկար տեղային միջավայրի օբյեկտների տեղադրմամբ:</p> <p>Գյուղի և քաղաքի միջավայրին բնորոշ նշաններն անվանել:</p> <p>Անհրաժեշտ տվյալները հավաքել և նկարի միջոցով նշումներ անել:</p> <p>Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր:</p> <p>Շրջակա միջավայրում անվանել ջրի և ցամաքի օբյեկտները և նկարագրել դրանք:</p> <p>Բնության մեջ ջրի և ցամաքի օբյեկտները բնութագրել՝ ըստ բաղադրիչ մասերի:</p> |

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ու.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, S2S):

Տեղի միջավայրում հետազոտում է օրգանիզմների տարբեր բնակատեղեր (որջ, բույն, տուն), նկարագրում է դրանց կառուցման առանձնահատկությունները:

Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:

Նկարագրում է բնության մեջ կամ/և դիդակտիկ նյութի վրա արտացոլված ջրի և ցամաքի օբյեկտները՝ ըստ դրանց բաղադրիչ մասերի (օրինակ՝ լեռ – լեռան գագաթ, լանջ և ստորոտ, գետ – ափ, հատակ):

Անհրաժեշտ նյութ.

գունավոր մատիտներ և ֆլումաստերներ:

1. ԴՊՐՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԻՏՈՒՄ (8-10 բույլ)

Ուսուցիչն աշակերտներին տանում է դպրոցից դուրս, նրանք պետք է պտտվեն դպրոցի տարածքում և գտնեն այնպիսի տեղ, որտեղից լավ է երևում շրջակա միջավայրը (աշխարհագրական և մարդածին օբյեկտները):

Ուսուցիչ բազմակողմանի հարցերի շնորհիվ աշակերտները հետազոտում են դպրոցի հարակից տարածքը:

Հետազոտական աշխատանքն ավելի լավ կազմակերպելու համար դասարանը բաժանվում է մի քանի փոքր խմբերի: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբի հերթով հարցեր է տալիս: Եթե խմբերից որևէ մեկը չպատասխանի տրված հարցին, ապա հարցին պատասխանելու հնարավորություն կտրվի մյուս խմբի ներկայացուցչին: Նման հարց-պատասխանը կարող է ստանալ մրցույթի տեսք, ինչն ավելի հետաքրքիր կդարձնի աշխատանքի գործընթացը:

Հնարավոր հարցերը.

1) Ինչպիսի՞ն է գետնի մակերևույթը այնտեղ, որտեղ մենք կանգնած ենք՝ թեք է, թե՞ հարթ (հարթավայր):

2) (Եթե թեք է) Ինչո՞ւ է թեք, մինչև ուր ենք քայլելու, եթե վերելքով բարձրանանք:

3) Ի՞նչ էք տեսնում մեր շրջակա բնական միջավայրում (լեռ, լիճ, ծով, գետ, հովիտ, անտառ):

Ուսուցիչը երեխաների ուշադրությունը կենտրոնացնում է լեռան վրա և խոսում է նրա բաղադրիչ մասերի մասին: Ցանկալի է, որ այս գործընթացն ընթանա հարց-պատասխանի ձևաչափով:

4) Գիտե՞ք արդյոք, թե ինչպե՞ս է կոչվում լեռան ամենաբարձր տեղը: (Գագաթ) Ամենացա՞ծր տեղը: (Ստորոտ)

5) Ի՞նչ բույսեր են աճում այս բնական միջավայրում: (Ծառեր, թփեր, խոտեր, թե՛ միայն հող ու ժայռեր են:)

6) Ձեր կարծիքով մարդիկ ինչպե՞ս են օգտվում բնական այս միջավայրից: (Անտառից, մարգագետնից, սարերից, գետերից...)

7) Մարդու ձեռքով ստեղծված ի՞նչ էք տեսնում մեր շրջապատում: (Ճանապարհ, աշտարակ, շենքեր, մարգահրապարակ, կամուրջ...)

8) Ձեր կարծիքով մարդիկ ինչպե՞ս են օգտվում այդ կառույցներից: (Բնակելի շենքեր, հիվանդանոց, եկեղեցի, խանութ, ուսումնական հաստատություն...)

8) Ի՞նչ գույներ էք տեսնում ձեր շուրջը:

9) Ի՞նչ ձայներ էք լսում, դրանցից որո՞նք են բնական ձայներ:

10) Ի՞նչն էք հավանում (ի՞նչն է հրապուրիչ) և ի՞նչը չէք հավանում (ի՞նչն է անհրապույր, տգեղ) մեր շրջակա միջավայրում: Ինչո՞ւ:

2. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին նորից ուշադիր նայել շրջապատում առկա օբյեկտներին և խմբավորել դրանք՝ ըստ հետևյալ նշանների.

ա) մեզանից հեռու և մեզ մոտիկ օբյեկտներ,

բ) բնական և արհեստական օբյեկտներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (5-7 րոպե)

Դասարան վերադառնալուն պես՝ ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին բացել Աշակերտի տետրը, վերհիշել դպրոցի շրջակայքը և նկարել այն դատարկ տեղում: Ուսուցիչը նրանց խնդրում է թերթի վրա տեղափոխել ինչպես բնական, այնպես էլ արհեստական օբյեկտներն արտահայտող բառերը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (3-5 րոպե)

Նկարելն ավարտելուց հետո, աշակերտները պետք է անցնեն հաջորդ առաջադրանքին, որը պահանջում է լրացնել աղյուսակն՝ ըստ նկարի (աշակերտն իր իսկ նկարի համաձայն աղյուսակ պետք է կազմի՝ խմբավորելով բնական և արհեստական օբյեկտների անվանումները):

5. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (3-4 րոպե)

Այն բանից հետո, երբ աշակերտները կանվանեն շրջապատի բնական և արհեստական օբյեկտների իրքը, առկայությունը, ուսուցիչը քննարկման համար հետևյալ հարցերը կառաջադրի.

– Ձեր կարծիքով այս օբյեկտները գյուղական միջավայրին են բնորոշ, թե՞ քաղաքային միջավայրին:

– Ինչո՞վ է բնութագրվում գյուղական միջավայրը:

– Ինչո՞վ է բնութագրվում քաղաքի միջավայրը:

– Որտե՞ղ են ավելի շատ բնական օբյեկտները՝ գյուղում, թե՞ քաղաքում:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (5-7 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բաժանում է մի քանի խմբերի և ցուցումներ է տալիս. աշակերտները խմբերում միմյանց պետք է ցույց տան, ներկայացնեն իրենց աշխատանքները, հետո ընտրեն դրանցից լավագույնը և շնորհանդեսի ժամանակ բացատրեն, թե ինչու են արել նման ընտրություն: Շնորհանդեսի համար նրանք նաև պետք է մտածեն, թե ինչը կփոխեին իրենց շրջակայքում, որպեսզի այն ավելի հրապուրիչ դարձնեին:

7. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (1-2 րոպե)

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է հետևյալ խաղը. աշակերտն ընտրում է որևէ օբյեկտ (բնական կամ արհեստական), բնութագրում է այն՝ ըստ երեք նշանի, համադասարանցիները պետք է գուշակեն և անվանեն այս օբյեկտը: Օրինակ՝ մեքենա – ունի դեկ, 4 անիվ, տարբեր գույների է:

8. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (3-4 թուպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է անցկացված ակտիվությունները և այն գիտելիքները, որոնք ձեռք են բերել վերջին երկու դասերի ընթացքում:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երեխաների հետ զրուցեք այն բանի մասին, թե ինչպես կարող է մարդը ազատ ժամանակը անցկացնելու և հանգստանալու համար օգտվել շրջակայքից (կարելի է օգտվել ինչպես բնական, այնպես էլ արհեստական օբյեկտներից):

ԴԱՍ 30

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիր.

Ինչպես է մարդը փոխում շրջակա միջավայրը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան շրջակա միջավայրի հանդեպ մշակել հոգատար վերաբերմունք:

Խոսել մարդու գործունեությամբ հարուցված դրական և բացասական փոփոխությունների մասին:

Միմյանցից տարբերել խնամված և անխնամ շրջակա միջավայրերը և հիմնավորել:

Կարողանա նկարագրողման մեջ և իրական կյանքում ճանաչել/ նկարագրել տարբեր մարմիններ:

Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին/հիմնավորել:

Սեփական տեսակետը ներկայացնելիս՝ կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր (նկար):

Նկարագրել շրջակա միջավայրի օբյեկտները:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ու.6. Աշակերտը պետք է կարողանա նկարագրել ջրի և ցամաքի օբյեկտները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Սեփական տեսակետների կամ/և հետազոտության արդյունքների ներկայացման ժամանակ կիրառում է հաղորդակցման տարբեր ձևեր (օրինակ՝ նկար, բանավոր խոսք, ՏՀՏ):

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

Անվանում է և նկարագրում հայրենի միջավայրում ջրի (օրինակ՝ ծով, լիճ, գետ) և ցամաքի (օրինակ՝ լեռ, հարթավայր) օբյեկտները:

Անհրաժեշտ նյութ.

գունավոր մատիտներ և ֆլումաստերներ, տեսաֆիլմեր
էկոլոգիական խնդիրների մասին:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (3-4 րոպե)

Նախորդ դասի թեման վերհիշելուց հետո, ուսուցիչն ասում է, որ նրանք արդեն գիտեն, որ շրջակայքում տեղի են ունենում փոփոխություններ, հետևաբար այն ժամանակ առ ժամանակ փոխվում է: Ուսուցիչը հարցնում է.

– Ինչ եք կարծում, ո՞վ է փոխում մեր բնակելի միջավայրը:

Հավանաբար երեխաները կկռահեն, որ մարդն իր գործողությամբ (գործունեությամբ) փոխում է շրջակայքի պատկերը:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է դիտել դասագրքերը և նկարագրել, թե ինչպես են մարդիկ փոխում շրջակայքը:

2.ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (5-8 րոպե)

Տրված են չորս նկարներ, որտեղ պատկերված է շրջակայքի փոփոխությունը՝ մարդու տարբեր գործունեությունների հետևանքով: Աշակերտները ծանոթանում են նկարների ներքևում տրված տեքստերին:

Պետք է տեղի ունենա տեքստի իմաստավորում-ամփոփում. մարդը գոյության համար շատ բանի՝ կերակրի, ջրի, հագուստի, էլեկտրաէներգիայի, բնակելի տան, աշխատանքային շինության և այլնի կարիք ունի, ինչի համար նա օգտագործում է բնությունը և իր գործունեությամբ մշտապես փոխում է շրջակայքի պատկերը, երբեմն նույնիսկ վասա է հասցնում նրան:

Ուսուցիչը դիմում է դասարանին.

– Ինչ եք կարծում, արդյոք վտանգավո՞ր է փայտանյութի համար անտառներ հատելը:

Աշակերտների ենթադրությունները ուսուցիչը գրում է գրատախտակի վրա, այնուհետև, ցանկալի է, դրանք համատեղ քննարկեն:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (4-6 րոպե)

Աշակերտի տետրում տրված է ուրվագծային նկար՝ քաղաքի փողոցը մեծ ու փոքր շինություններով: Այստեղ բոլորովին բացակայում է բուսականությունը՝ ծառերը, թփերը: Աշակերտը պետք է հասկանա, որ այսպիսի շրջակայքը ճիշտ այն պատճառով է անհրապույր, որ պակասում է բուսականությունը: Աշակերտին տրվում է հանձնարարություն ինքնուրույն լրացնել այս բացը, նկարել ծառեր, ծաղիկներ... Գունավորել նկարը և ավելի հրապուրիչ դարձնել տրված միջավայրը:


4. ՀԱՄԵՄԱՏԻՐ ՀԻՆԸ ԵՎ ՆՈՐԸ (3-5 րոպե)

Ուսուցչի ցուցումով աշակերտները բացում են դասագրքի համապատասխան դասը: Նրանք պետք է համեմատեն նկարները՝ Հերոսների հրապարակը հնում և հիմա, և խոսեն այն մասին, թե ինչն է հանգեցրել նման փոփոխությունների, հավանո՞ւմ են արդյոք և այլն:

5. ՄԻՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (10-15 րոպե)

Մարդիկ իրենց գործունեությամբ, գիտակցված թե անգիտակցաբար, վասա են հասցնում բնությանը: Որքանով որ տարեցտարի աճում է փայտանյութի նկատմամբ պահանջարկը, այնքանով նվազում է անտառը, ինչն աղետալի հետևանք է բերում:

Ուսուցիչը գրատախտակի վրա գծում է շրջան, որի մեջտեղում գրում է «էկոլոգիա» բառը: Այնուհետև խնդրում է աշակերտներին, ըստ հնարավորինս, ներկայացնել, իրենց կարծիքով ինչ է դա նշանակում:



Այս դեպքում նշանակություն չունի, թե որքանով ճիշտ պատասխան կտան երեխաները: Կարևորն այն է, թե կկապե՞ն արդյոք նրանք այս բառը թեմատիկայի՝ բնության հետ, որի մասին ընթանում է խոսքը:

Մտավոր գրոհի սկզբունքներից ելնելով, ուսուցիչն արձանագրում է բոլոր պատասխանները: Իսկ վերջում ինքն է բացատրում տերմինի նշանակությունը:

«Էկոլոգիան» հունարեն բառ է և նշանակում է բնական տեղ, տուն: Էկոլոգիան տարբեր բացատրություններ ունի: Համաձայն դրանցից մեկի, Էկոլոգիան կենդանի օրգանիզմների, բույսերի և կենդանիների ուսումնասիրությունն է՝ նրանց բնական վայրում: Այսինքն՝ այն կյանքն ուսումնասիրող գիտություն է: Էկոլոգիական աղետներ են ձյունահոսքը, սողանքը, օդի և ջրի աղտոտումը և այլն: Շրջակա միջավայրի խնամքը, նրա մասին հոգածությունը մեզանից յուրաքանչյուրի պարտավորությունն է: Պահպանել բնությունը նշանակում է հոգ տանել սեփական առողջության մասին:

Ինչպիսի՞ն կլինի շրջակա միջավայրի վիճակը մոտ կամ հեռավոր ապագայում: Ի՞նչ է սպասում մեզ:

Կկարողանա՞ արդյոք մարդը պահպանել մոլորակը աղտոտումից: Կկարողանա՞ խելամոռեն օգտագործել նրա ռեսուրսները:

Այսպիսի հարցերը արդեն վաղուց են դրված մարդու առջև: Գիտնականներն աշխատում են, ելք են որոնում՝ ինչպես փոխարինել բնական ռեսուրսները, որպեսզի փրկեն շրջակա միջավայրը: Այս առումով կան նաև ձեռքբերումներ: Օրինակ՝ բնակելի շենքին անհրաժեշտ են բազմաթիվ շինանյութեր, որոնք բնական են (փայտանյութ, ավազ, քար և այլն): Գիտնականները կարողացել են այնպիսի արհեստական նյութեր օգտագործել, որից պատրաստած դուռ-լուսամուտը, հատակը և այլ երեսպատման նյութեր բավականին գեղեցիկ և դիմացկուն են: Արհեստական նյութով բնականի փոխարինումն, իր հերթին, հնարավորություն է տալիս պահպանել բնական միջավայրը, փրկել անտառները:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (10-15 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բաժանում է փոքր խմբերի և ասում է, որ այս ընթացքում (ինչ դասերը սկսվել են) նրանք մի քանի անգամ արդեն դիտել են դպրոցը և նրա հարակից տարածքը: Բացի այդ, նրանք ամեն օր լինում են դպրոցի բակում և շատ լավ ճանաչում են դպրոցի միջավայրը: Խմբերի համար առաջադրանքն այսպիսին է. աշակերտները պետք է մտածեն այն մասին, թե ինչը կփոխեին դպրոցական միջավայրում (դպրոցի տարածքում կամ շինության ներսում), որպեսզի այն ավելի հրապուրիչ դառնար: Խմբում պետք է պատրաստվի նկար կամ ցուցապաստառ փոքր տեքստով: Հետո աշակերտները պետք է կատարեն «Համաձայն ես արդյոք» առաջադրանքը, որը տրամաբանորեն կավարտի խմբային աշխատանքը:

7. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասի ակտիվությունները և աշակերտներին տանը հանձնարարում է ընտանիքի ավագ անդամներից հարցազրույց վերցնել: Հարցերն այս բովանդակությունը պետք է ունենան.

- 1) Ի՞նչն է փոխվել մեր քաղաքում (գյուղում) քո մանկությունից առ այսօր:
- 2) Հավանո՞ւմ ես արդյոք այս փոփոխությունները: Ինչո՞ւ և այլն:

Աշակերտները պատասխանները պետք է մտապահեն: Բացի այս, հաջորդ դասի համար ուսուցիչն աշակերտներին պետք է հանձնարարի ընտանեկան լուսանկարների ալբոմից բերել հնում և վերջերս արված լուսանկարներ (այս թվում՝ իրենց նախնիների), որտեղ պատկերված են փողոցներ, շինություններ, քաղաքային կամ գյուղական տեսարաններ, մարդիկ...

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԴԱՑՈՒՑԻՉ) ԱՎՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե ուսուցիչը ժամանակ և ուրիշ ռեսուրսներ ունենա, ցանկալի է, որ խմբային աշխատանքից հետո տեղի ունենա այն աշխատանքների ընտրություն, որոնց իրականացումը հնարավոր է և իսկապես կծառայի դպրոցի շրջակայքի բարելավմանը: Ուսուցիչն աշակերտների հետ պետք է պլանավորի այն քայլերը, որոնք անհրաժեշտ կլինեն նրանց նպատակն իրականացնելու համար (շնորհանդեսի համար ցուցապաստառ կազմել, ծնողներին հրավիրել ու ներգրավել, տնօրինության կազմի ներկայությամբ մտահղացումը ներկայացնել և այլն):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԿՈԼԱԺԻ ՍՏԵՂԾՈՒՄ

| | |
|---|--|
| Թեմա. | Մենք և բնությունը |
| Վերնագիրը. | Շրջակա միջավայրը հնում և ներկայում |
| Դասի նպատակը. | Աշակերտները պետք է կարողանան տարբեր աղբյուրներից փնտրել և հավաքել տեղեկատվություն: Տեսնել տարբերությունները՝ հնի ու նորի համեմատության հիման վրա: Ուսումնասիրած երևույթի մասին պարզ հարցեր տալ: Նկարագրողումներում և իրականության մեջ տեսակավորել իրադարձությունները: |
| Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ. | Բն.Ո.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ: |
| Արդյունքն ակներև է, եթե աշակերտը. | Ուսումնասիրվելիք մարմնի/երևույթի մասին պարզ հարցեր է տալիս: Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրողումների վրա կամ իրականության մեջ: |
| Անհրաժեշտ նյութ. | մեծ ֆորմատի թուղթ, հին ու նոր լուսանկարներ, հին և ժամանակակից թերթերից ու հանդեսներից լուսանկարների օրինակներ: Տեսաֆիլմ նախնադարյան մարդու մասին, մկրատ: |

1. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԱՐՑՈՒՄ (10-12 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է տանը հանձնարարված առաջադրանքները ստուգելով, մասնակցել կարող է յուրաքանչյուր ցանկացող: Աշակերտները դասարանին պետք է ներկայացնեն ուսումնասիրության արդյունքները կամ այն տեղեկատվությունը, որը նրանք ստացել են ծնողներից կամ տատիկ-պապիկից՝ նրանց ծանոթ շրջակայքի (քաղաքի, գյուղի, փողոցի, դպրոցի, տան, ճանապարհի, անտառի և այլնի) փոփոխությունների մասին: Զուգահեռաբար ցանկալի է, որ համառոտ մեկնաբանեն նաև իրենց բերած լուսանկարները (ո՞վ կամ ի՞նչ է պատկերված այնտեղ, մոտավորապես երբ՞ է և այլն), ինչի միջոցով ավելի կհեշտանա հնի ու նորի համեմատությունը: Ակներև տեսնենք այն փոփոխությունները, որոնց տասնյակ տարիներ են անհրաժեշտ եղել: Օրինակ՝ ինչպիսի՞ն էին այն ժամանակվա քաղաքը կամ գյուղը, փողոցը, գետը, ճանապարհը, հագուստը, փոխադրամիջոցները և այլն:

2. ԿՈԼԱԺԻ ՍՏԵՂԾՈՒՄ (17-20 րոպե)

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է բերած լուսանկարներով ստեղծել կոլաժ և վերջում այն վերնագրել: Դրա համար նա պատրաստել է պատին ամրացված մեծ ֆորմատի թուղթ, որը երկու մասի է բաժանված: Չախ կողմում նրանք պետք է տեղադրեն (զգուշորեն սոսնձելով) այն նկարները, որոնցում հին կենցաղն է պատկերված: Աջ կողմում՝ ժամանակակից նկարները (կարելի է օգտագործել նաև նախորդ ժամին աշակերտների արած լուսանկարները), ցանկալի է, որ ուսուցիչը ևս ունենա հին կենցաղը ներկայացնող նկարներ: Կարելի է օգտվել հին թերթերից ու հանդեսներից: Վերջում կստանանք կոլաժ, որը ստեղծելուն մասնակցում էր ամբողջ դասարանը: Վերջինս հնարավորություն կտա քննարկելու և համեմատելու հին և նոր կենցաղը, շրջակայքի փոփոխությունները:

Աշխատանքի վերջին փուլը վերնագրի ընտրությունն է, որին ուսուցիչը կարող է մրցույթի բնույթ տալ: Անվանված փր քանի վերնագրերից կընտրվի այն, որն ամենաշատ ձայներ կստանա:

3. ՀԱՐՑ-ՊԱՏԱՄԻԱՆ ԵՎ ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (5-8 րոպե)

Ուսուցիչն աշխատանքն ամփոփելուց հետո ավելացնում է. դուք ականատես դարձաք այն փոփոխություններին, որ տասնյակ տարիների ընթացքում են տեղի ունեցել: Եկեք հիմա մտածենք

և վերլուծենք, դուք դեռ ընդամենը 6-7 տարեկան եք, երկրորդ տարին է, ինչ սովորում եք դպրոցում, երևի նկատել եք, որ ձեր շրջակայքում էլ որոշակի փոփոխություններ են տեղի ունենում:

Հարցեր աշակերտներին.

– Նկատե՞լ եք արդյոք որևէ փոփոխություն ձեր շրջապատում, այնտեղ, որտեղ ապրում և սովորում եք (խոսքը բնական և արհեստական օբյեկտների մասին է, այդ թվում՝ դպրոցի վերանորոգումը, դասարանական գույքը, մարզահագուստը, մարզահրապարակները, ճանապարհները, խաղահրապարակները):

– Հավանո՞ւմ եք արդյոք այս փոփոխությունները: Ինչո՞ւ:

– Եթե ձեր կամքը լիներ, ի՞նչը կփոխեիք և ի՞նչն անփոփոխ կթողնեիք:

– Ցանկալի՞ են արդյոք այդ փոփոխությունները մարդկանց համար: Ինչո՞ւ:

– Քե՞զ համար: Ինչո՞ւ:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը գրատախտակին գծում է դիագրամ, որի ձախ կողմում գրում է «նախնադարյան մարդ», աջ կողմում՝ «Ժամանակակից մարդ»: Այնուհետև խնդրում է աշակերտներին հարցին պատասխանելու միջոցով օգնել լրացնել դիագրամը: Լրացվում է նախ սխեմայի ձախ կողմը.

Որտե՞ղ էր ապրում,

Ինչպե՞ս և ինչո՞վ էր գոյությունը պահպանում,

Ինչպե՞ս էր սնունդ հայթայթում,

Ի՞նչ էր հագնում,

Ինչո՞վ էր տաքանում,

Ինչպե՞ս էր տեղափոխվում և այլն:

Այնուհետև նույն հարցերին պատասխանելու միջոցով նրանք նկարագրում են ժամանակակից մարդուն և համապատասխանաբար լրացնում աջ սյունակը:

Ուսուցիչն այս սխեմային նպատակային ծանրաբեռնում է հաղորդում: Դարերի ընթացքում մարդիկ զարգացել են, փոխվել են ցանկություններն ու պահանջումքները, փոխվել են կյանքի օրենքները, փոխվել է շրջակայքը...

Ի՞նչ էր առաջ և ի՞նչ է հիմա: Ի՞նչն է փոխվել մարդու զարգացման ընթացքում, ի՞նչն է առաջ բերել այդ փոփոխությունները: Աշխատեք այնպես անել, որ եզրակացություններն իրենք՝ երեխաներն անեն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ. ԴԻՏԱՐԿՈՒՄ

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Շրջակա միջավայրի աղտոտումը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան մշակել շրջակայքի հանդեպ հոգատար վերաբերմունք:

Խոսել բնական և մարդու կողմից ստեղծված կենցաղային միջավայրի մասին:

Տարբերել մաքուր և աղտոտված շրջակա միջավայրերը:

Շրջակա միջավայրը դիտարկել սեփական զգայության օրգանների և պարզ սարքերի օգտագործմամբ:

Մասնակցել պարզ գործնական ակտիվությունների:

Իրականության մեջ որոշել մարմինները և տեսակավորել:

Նկարագրել տարբեր մարմիններ և դրանք համեմատել ըստ չափի, ձևի և բաղադրիչ նյութի:

Բերել ծանոթ նյութի առօրյա կյանքում կիրառման օրինակներ:

Դատողություն անել տարբեր նյութերից պատրաստված միևնույն առարկայի մասին և եզրակացություններ անել:

Դատողություն անել կենցաղային և այլ տիպի թափոններով աղտոտման հետևանքների մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ու.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Բն.Ու.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրադրումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝ ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Նկարագրում է և համեմատում տարբեր մարմիններն՝ ըստ չափի, ձևի և բաղադրիչ նյութերի:

Անվանում է իրեն լավ ծանոթ նյութերի (օրինակ՝ փայտի, ապակու, պլաստմասսայի) ամենօրյա կյանքում կիրառման օրինակներ:

Դատողություն է անում, թե ինչի համար են պատրաստվում իր կողմից կիրառած որոշ առարկաներ (օրինակ՝ այծոռ, հագուստ, խաղալիքներ) մի քանի տարբեր նյութերից:

Դատողություն է անում, թե ինչի կարող է հանգեցնել գետի/անտառի աղտոտումը կենցաղային և այլ տիպի թափոններով:

Կոնֆետներ կամ ուրիշ պատրաստ մթերքներ, որոնք փաթեթավորած են, հիգիենիկ ձեռնոցներ, թափոնների համար մեծ տոպրակներ:

Անհրաժեշտ նյութ.

1. ԷՔՍԿՈՒՐՄԻԱ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ (8-10 րոպե)

Ուսուցիչը երեխաներին տանում է դպրոցին մոտիկ գտնվող այգի, մարգագետին կամ անտառ: Եթե այդպիսի հնարավորություն չլինի, կարելի է բավարարվել դպրոցի բակի կանաչապատ անկյունով, կարևորը բնության գրկում լինելն է:

Ուսուցիչը խնդրում է երեխաներին դիտել շրջապատի առարկաները և պատասխանել հարցերին.

- Ի՞նչ էք տեսնում շրջապատում:
- Տարբերակեք, դրանց թվում ի՞նչն է բնական: Ի՞նչն է մարդու ձեռքով ստեղծված:
- ա) Փակեք աչքերդ և լսեք.
- Ի՞նչ ձայներ էք լսում:
- Հաճելի՞ է ձեզ այդ ձայները լսելը (կամ ո՞ր ձայնն է հաճելի լսել):

– Նման ձայներ լսո՞ւմ եք դպրոցում: Տա՞նը:

բ) Հիմա դանդաղ ներշնչեք օդը և որոշեք.

– Ինչի՞ բույր եք զգում:

– Հաճելի՞ է ձեզ բնության գրկում առկա հոտը:

– Ձեր տանը կամ դպրոցում զգո՞ւմ եք նույն բույրը:

(Այս և նման հարցերի էությունն այն է, որ աշակերտները զգան ու տարբերեն բնական միջավայրը ոչ միայն տեսողությամբ, այլև մյուս զգայարաններով և հասկանան, որ բնական միջավայրը տարբերվում է մարդու կողմից ստեղծված միջավայրից:)

2. ԻՆՉՊԵՍ Է ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՂԲԸ (6-8 րոպե)

Այս դասի համար ուսուցիչը հատուկ պատրաստած պետք է ունենա կոնֆետներ և ուրիշ փաթեթավորած պատրաստ մթերքներ, որոնք բաժանում է աշակերտներին և խնդրում է ուտել: Հետաքրքիր է, որտե՞ղ կզգեն կոնֆետների թղթերը, տոպրակները և մյուս թափոնները:

Ուսուցիչը վարում է համառոտ քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

– Ինչպե՞ս է աղտոտվում մեր շրջապատը:

– Ինչպե՞ս է առաջանում աղբը:

Աշակերտները պետք է հասկանան, որ շրջապատն աղտոտվում է թափոններով:

Շատ մարդիկ սխալ են վարվում, ինչի պատճառով փողոցներն ու բակերը պատված են կենցաղային թափոններով:

Ուսուցիչը շարունակում է զրույցը.

Դուք բազմաթիվ դպրոցական պարագաներ եք օգտագործում: Եկեք թվարկենք դրանք. գրիչ, քանոն, ռետին, տետր, գիրք, մատիտ: Կարո՞ղ եք ասել, թե ինչից են պատրաստված դրանք: Այնուհետև ուշադրությունը կենտրոնացնում է քանոնի վրա և աշակերտներին խնդրում է հանել քանոնը և դիտարկել այն: Որոշել, թե այն ինչից է պատրաստված: Կպարզվի, որ մի քանիսը փայտյա են, մի քանիսը պլաստմասսայե կամ էլ երկաթե:

Ինչ եք կարծում, ո՞ր հատկանիշներն են պայմանավորում այդ նյութերի կիրառումը՝ տվյալ իրը պատրաստելու համար: (Առաձգականություն, ողորկություն և այլն)

Քննարկել այս այլընտրանքի դրական և բացասական կողմերը:

Այս անգամ ուսուցիչը նրանց ուշադրությունը կենտրոնացնում է դպրոցական գույքի վրա, ինչպիսիք են աթոռը, նստարանը, գրատախտակը, լուսամուտը, դուռը: Ջուլգերին առաջադրանք է տալիս դիտարկել՝ ինչից է պատրաստված դրանցից յուրաքանչյուրը: Տեսե՞լ են արդյոք նույնպիսի իր, որը, սակայն, այլ նյութից է պատրաստված, օրինակ՝ աթոռը (փայտյա, պլաստմասսայե, երկաթե, քարե) և այլն:

Այնուհետև ուսուցիչը տալիս է քննարկման հարց.

– Ինչ ես կարծում, ինչո՞ւ է մարդը փայտյա նյութը փոխարինել երկաթով կամ պլաստմասսայով:

– Հավանո՞ւմ ես արդյոք այս որոշումը: Հիփսավորի՞ր՝ ինչո՞ւ:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (12-13 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և հանձնարարում է խորհել.

1-ին խումբ – Ի՞նչը չեն հավանում այն միջավայրում, որտեղ գտնվում են (բնության մեջ թափփված աղբը այն անհրապույր է դարձնում):

2-րդ խումբ – Ինչպե՞ս է տեղի ունենում բնության աղտոտումը:

3-րդ խումբ – Ի՞նչ պետք է անենք, որպեսզի շրջակա միջավայրը չաղտոտվի:

4-րդ խումբ – Ի՞նչ պետք է նախաձեռնենք (անենք) աղտոտված շրջակա միջավայրը մաքրելու համար:

Ուսուցիչն այս հարցերը կարող է նախապես թերթիկների վրա գրել կամ յուրաքանչյուր խմբի բանավոր հանձնարարել մեկական հարց: Աշակերտները տեղում քննարկում և պատասխանը ներկայացնում են փառաստանի տեսարանների միջոցով: Մնացած աշակերտները պետք է կռահեն, թե ինչ է ուզում ասել տվյալ խումբը:

4. ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԱՔՐՈՒՄ (6-7 րոպե)

Ուսուցիչը երեխաներին բաժանում է հիգիենիկ ձեռնոցներ և պոլիէթիլենե տոպրակներ

(յուրաքանչյուր խմբի՝ մեկ տոպրակ): Աշակերտները հավաքում են թափօփված աղբը և լցնում են տոպրակների մեջ: Հետո դպրոց վերադառնալիս, այս տոպրակները զցում են աղբատուփերը կամ բունկերները:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 բոպե)

Համառոտ ամփոփման ժամանակ աշակերտները պետք է ասեն, թե ինչ սովորեցին, ինչ նոր բան լսեցին, ինչու անցկացվեց այսպիսի դաս, ինչու ձեռնոց օգտագործեցին և այլն:

Ուսուցիչը տնային առաջադրանք է հանձնարարում երեխաներին՝ ծնողների օգնությամբ որոշել, թե մոտավորապես քանի դուլ (կամ տոպրակ) աղբ է հավաքվում իրենց տանը օրվա, մեկ շաբաթվա, մեկ ամսվա ընթացքում:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչն անցկացնում է համառոտ քննարկում հետևյալ հարցի շուրջ.

– Կարելի՞ է ասել, որ թափված տերևները աղտոտում են բնությունը:

Քննարկման արդյունքում պետք է գալ այն եզրակացության, որ թափված տերևները, ճյուղերը, պտուղները... չի կարելի աղբ անվանել: Բնությունը աղբ չի ստեղծում, աղբը թափոնների տեսքով միայն մարդիկ են թողնում:

ԴԱՍ 31-32

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Աղբը մեր շրջակա միջավայրում

Դասի նպատակը.

Աղտոտված միջավայրի նկատմամբ աշակերտների մոտ պետք է բացասական վերաբերմունք ձևավորվի:

Աշակերտները պետք է կարողանան գիտակցել առողջության համար մաքուր միջավայրի անհրաժեշտությունը:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցել գործնական ակտիվությունների:

Նկարագրողումների վրա և իրական կյանքում որոշել/ նկարագրել երևույթները:

Դատողություն անել կենդանի օրգանիզմների կենսական պահանջմունքների մասին:

Դատողություն անել մաքուր շրջակա միջավայրի կարևորության մասին:

Պահպանել շրջակա միջավայրի մաքրությունը և այս առումով նկարագրել սեփական գործողությունը:

Դատողություն անել կենցաղային թափոնների երկրորդային կիրառման մասին:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ու.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները պատկերագրումների վրա կամ իրականության մեջ: Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջմունքների (սնունդ, ջուր, օդ, ապաստան) մասին:

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝ ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Անհրաժեշտ նյութ.

տեսաֆիլմ կենցաղային թափոնների երկրորդային վերամշակման մասին, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (6-7 րոպե)

Ուսուցիչը երեխաներին ասում է, որ այսօր խոսելու են շրջակայքի աղտոտման մասին: Երևի նկատել էք, որ աղբը կուտակվում է այնտեղ, որտեղ մարդիկ կան: Մարդիկ գործածում են անհամար առարկաներ, կերակուր, նյութեր, ինչի արդյունքում էլ Ֆնում է այն, ինչն այլևս նրանց պետք չէ, այսինքն՝ թափոններ: Թափոնները թափում են, և այսպես կուտակվում է աղբ: Աղբը հավաքվում է ամեն օր, անդադար:

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին մտաբերել, թե որքան աղբ է հավաքվում նրանց տներում օրվա ընթացքում: Այսուհետև ուսուցիչն ասում է, որ մեր երկրում՝ Վրաստանում, մոտ մեկ միլիոն ընտանիք կա: Ինչ էք կարծում, քանի՞ տոպրակ աղբ է հավաքվում մեր երկրում ամեն օր:

1 կամ 2 միլիոն տոպրակը հսկայական քանակություն է: Միասին հավաքված այսքան աղբը մեկ մեծ լեռ կստեղծեր:

Ուսուցիչը հաջորդ հարցով է դիմում դասարանին.

– Գիտե՞ք արդյոք, թե որտեղ և ինչպես են մարդիկ թափում աղբը:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Տրված հարցին պատասխանելու և հասկանալու համար, թե ինչ է առաջ բերում աղբը սխալ տեղում թափելը, աշակերտները պետք է ուշադիր դիտեն դասագրքի համապատասխան էջին տրված լուսանկարները: 3 նկարներում պատկերված են մարդկանց կողմից աղբը թափելու տարբեր դեպքեր: Աշակերտները պետք է դատողություն անեն այն նկարների մասին, որտեղ աղբը սխալ տեղերում է թափվում (ճիշտ է միայն վերջին նկարի տարբերակը):

Պետք է յուրաքանչյուր նկար առանձին-առանձին քննարկվի և ծավալվի գրույց այն մասին, թե ինչու են ճիշտ (կամ ոչ ճիշտ) համարում աշակերտները այս մարդկանց գործունեությունը: Վերջում ուսուցիչն այսպիսի հարցեր է տալիս.

– Ինչ էք կարծում, ինչո՞ւ են այս մարդիկ այս կերպ վարվում (նկատի ունի այն մարդկանց, ովքեր աղտոտում են շրջակա միջավայրը):

– Ձեր կարծիքով ի՞նչ տեղի կունենա, եթե բոլորը փողոցում (դրսում) թափեն աղբը:

– Ձեր կարծիքով ի՞նչ կլինի, եթե բոլոր աշակերտները աղբը (թղթերը, պոլիէթիլենի տոպրակները, արևածաղկի սերմերի կեղևը...) թափեն դպրոցի տարածքում:

– Արդյոք մեր դասասենյակը աչքի անցկացնելու և մաքրելու ցանկություն չառաջացա՞վ ձեզ մոտ:

3. ԴԱՍԱՍԵՆՅԱԿԻ ՄԱՔՐՈՒՄ (4-5 րոպե)

Վերջին հարցից հետո աշակերտները ուշադիր նայում են հատակին, եթե մի տեղ աղբ նկատեն, պետք է վերցնեն ու աղբամանը զգեն: Կարող են նաև արևածաղկի սերմերի կեղևները կամ ուրիշ ուտելիքի թափոնները (եթե այդպիսիք կան) հավաքել: Այս դեպքում կարևորը ոչ թե այն է, որ սենյակը փայլի, այլ այն, որ աշակերտների տեսական իմացությունը (պատրաստվածությունը) գործնական կիրառություն ունենա:

Ուսուցիչը կարող է երեխաներին առաջարկել, որ աղբամանի կողքին դնեն այսպես կոչված կանաչ արկղ: Սա կլինի սովորական սովորաբար մեծ արկղ, որը կծածկեն կանաչ թղթով, մեջը կգետեղեն ցանկացած օգտագործած թերթ, այսպես կոչված՝ մակուլատուրա: Մակուլատուրան ենթակա է երկրորդային վերամշակման, դրանից պատրաստում են սովորաբար թուղթ, թուղթ:

Ինչ էք կարծում, ինչո՞ւ են արկղը ծածկել կանաչ գույնով: Ինչի՞ խորհրդանշան է այն: (Կյանքի, ծառերը կանաչ են...)

Մակուլատուրայի միջոցով մենք կփրկենք հարյուրավոր ծառեր: Ցանկալի է նույնպիսի արկղեր երեխաների կողմից տեղադրվեն արդեն ամբողջ դպրոցում:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (8-10 րոպե)

Աշակերտի տետրում տրված է «Աղբաորս» վերնագրով ուրվանկար: Աշակերտները անհատապես պետք է աշխատեն, գտնեն նկարում թափթիված աղբը և շրջագծեն: Այնուհետև նկարը գունավորեն: Վերջում պետք է քննարկվի կատարված աշխատանքը. ի՞նչ տիպի թափոններ են թափված, ուրիշ ի՞նչ տեսակ աղբ ենք տեսնում փողոցում (բակում) թափված:

5. ԴԱՄԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասին ձեռք բերած գիտելիքն ու փորձը: Ընդգծում է, որ մարդու գործունեությունը առաջ է բերում շրջակայքի տարբեր բաղադրիչների աղտոտում. որոշ դեպքերում ջուրն է աղտոտվում, որոշ դեպքերում՝ բնահողը, ուրիշ դեպքերում՝ օդը: Աղտոտումը պատկերող նկարներ են տրված հենց նրանց Աշակերտի տետրում: Աշակերտներն ինքնուրույն կատարում են այս վարժությունը: Ցանկալի է, որ աշակերտները ծնողների հետ մեկտեղ քննարկեն դասագրքում տրված շրջակա միջավայրի աղտոտումը պատկերող նկարները:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԸԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը խնդրում է աշակերտներից յուրաքանչյուրին վերհիշել ամբողջ շաբաթվա ընթացքում իրենց գործունեությունը շրջակայքի հանդեպ:

1. Ամբողջ շաբաթվա ընթացքում անձամբ նա աղտոտել, թե՞ ընդհակառակը՝ հոգ է տարել շրջակայքի մաքրության մասին:
2. Ո՞ւր էր թափում կենցաղային թափոնները:
3. Պատահականորեն չի՞ աղտոտել արդյոք շրջակայքը:

ԴԱՍ 33

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Պահպանենք շրջակա միջավայրը:

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան անվանել շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով ստեղծված վտանգները: Արտահայտել սեփական վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ:

Որոշել մարմիններն ու երևույթները նկարագրումներում և իրական կյանքում, նկարագրել դրանք և տեսակավորել:

Կիրառել հաղորդակցման տարբեր ձևեր:

Դատողություն անել առողջության համար մաքուր շրջակա միջավայրի անհրաժեշտության մասին:

Թափոնների երկրորդային կիրառման մասին տեղեկություններ հավաքել և դատողություն անել:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշչի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն. II.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն. II.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Բն. III.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

**Արդյունքն ակներև է,
թե աշակերտը.**

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Կազմում է իր սննդակարգի մեջ մտնող մթերքների ցանկը և առանձնացնում մարդու համար պարտադիր սննդամթերքների խմբերը (բանջարեղեն, միրգ, հատիկայիններ, կաթնամթերքներ):

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

Տեղեկություն է ձեռք բերում և դատողություն անում, թե ինչպես է հնարավոր իրականացնել կենցաղային թափոնների երկրորդային կիրառումը (օրինակ՝ պլաստմասսայե շշերից ծաղկամաններ պատրաստել, մետաղյա թափոնները՝ որպես ջարդոն հանձնել, թուղթը՝ մակուլատուրա):

Դատողություն է անում, թե ինչի կարող է հանգեցնել գետի/անտառի աղտոտումը կենցաղային և այլ տիպի թափոններով:

Անհրաժեշտ նյութ.

մեծ ֆորմատի թղթեր, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, վավերագրական ֆիլմ աղտոտված շրջակա միջավայրի թեմատիկայով:

1. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (10-16 րոպե) Ուսուցիչը դասը սկսում է վավերագրական ֆիլմի ցուցադրմամբ, որտեղ արտացոլված է աղտոտված շրջակա միջավայր և մարդկանց գործողության աղետալի հետևանքները: Ուսուցիչը սկսում է քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

- Ձեր կարծիքով ի՞նչ փաստ է հասցնում մարդուն շրջակայքի աղտոտումը:
- Ձեր կարծիքով ի՞նչ փաստ կարող է հասցնել շրջակայքի աղտոտումը կենդանիներին:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Դասագրքում տրված են չորս նկարներ. ինչպես է կենդանին փորփրում աղբը, քաղաքում ոչ ճիշտ տեղում թափված աղբի մեջ խաղում է երեխան, օդի աղտոտումը և կենցաղային թափոններով ջրի աղտոտում:

Նկարների հետ տրված է այսպիսի հարց. «Ո՞ւմ (ինչի՞ն) է վտանգ սպառնում այս միջավայրում»:

Աշակերտները անհատապես պետք է մտածեն, արտահայտեն իրենց ենթադրությունը այս կամ այն նկարի վերաբերյալ: Հետո, ըստ ցանկության, մի քանի աշակերտ հերթով նկարագրում են աղտոտման տեսակները և այն վտանգը, որ սպառնում է մարդկանց կամ կենդանիներին:

Ուսուցչի լրացուցիչ հարց.

– Կարո՞ղ է արդյոք կենդանին փասսվել աղբի մեջ կեր փնտրելու ժամանակ: Ինչպե՞ս: (Կտրվածք կարող է ստանալ թիթեղյա տուփերից կամ թափված ապակիներից, կարող է կուլ տալ պոլիէթիլենի կտորներ, թունավորվել, հիվանդանալ և այլն:)

3. ՔՆՆԱՐԿՈՒՄ (6-7 րոպե)

Զրույցից հետո ուսուցիչը քննարկման հարցեր է տալիս դասարանին.

– Ինչ եք կարծում, ո՞ւմ գործունեության արդյունքում է տեղի ունենում շրջակա միջավայրի աղտոտումը:

– Ինչ եք կարծում, հնարավո՞ր է արդյոք խուսափել օդի, ջրի և ընդհանրապես շրջակա միջավայրի աղտոտման վտանգից:

– Արդյոք շրջակա միջավայրի աղտոտումը համընդհանո՞ւր հիմնախնդիր է:

– Անձամբ դու ի՞նչ կարող ես անել դրա կանխման համար:

– Ինչ ես կարծում, շրջակայքի հանդեպ հոգատարությունը մտնո՞ւմ է քո պարտականությունների մեջ:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (10-13 րոպե)

Այն բանից հետո, երբ աշակերտներին հասկանալի կդառնա, որ շրջակայքի աղտոտումը մեծ վնաս կարող է հասցնել կենդանի աշխարհին, ինքնին հարց է ծագում.

– Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել շրջակա միջավայրը աղտոտումից:

Ուսուցիչը բացատրում է, որ պաշտպանության միջոցներից մեկը մարդկանց տեղեկատվության տրամադրումն է՝ նախագրուշական ցուցապաստառներ կազմելով և դրանք աչքի ընկնող տեղերում փակցնելով: Այսպիսի մի ցուցապաստառի նմուշ է տրված դասագրքի հաջորդ էջին:

Ուսուցիչը աշակերտներին բաժանում է 3 կամ 4 փոքր խմբերի և հանձնարարում է մտածել և կազմել ցուցապաստառներ աղտոտման դեմ:

1-ին և 2-րդ խմբեր – Ստեղծում են ցուցապաստառ դպրոցի բակի մաքրության պահպանման համար:

3-րդ և 4-րդ խմբերը – Ստեղծում են ցուցապաստառ դասասենյակում մաքրության պահպանման համար:

Աշխատանքը ավարտելուց հետո տեղի է ունենում ցուցապաստառների շնորհանդես և դասարանական ցուցապաստառի համար սենյակում մշտական (նկատի է առնվում ամբողջ տարվա ընթացքում) տեղի ընտրություն: Իսկ այն, թե ինչպես պետք է հասակակիցներին ներկայացնեն դպրոցի բակի մաքրությանը հետևելու վերաբերյալ ցուցապաստառը, աշակերտները և ուսուցիչը միասին պետք է որոշեն:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասի ժամանակ ձեռք բերված գիտելիքը և խնդրում է աշակերտներին ուշադրությամբ ծանոթանալ դասի վերջում տրված «Մտապահի՛ր» խորագրին (եթե դասի ընթացքում չհասցնեն, տանը կարդան):

6. ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է տանը հայթայթել տեղեկություններ (հարցնել ավագներին, հարևաններին, ծնողներին) որոշ կենցաղային թափոնների վերամշակման մասին (մակուլատուրա, մետաղի թափոնների հանձնում՝ որպես ջարդոն, ապակյա և պլաստմասսայե սպասք) և հաջորդ դասին ներկայացնել:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը երեխաներին հիշեցնում է, որ բնության գրկում լինելու ժամանակ իրենք տարբեր հաճելի բույրեր էին զգում: Հիմա պետք է հիշել, թե ինչ հոտ է տարածված այնտեղ, որտեղ աղբ է թափված: Ուսուցիչը պատին, միմյանցից հեռու փակցնում է մաքուր և աղտոտված շրջակայք պատկերող նկարներ և սկսում է խաղը. աշակերտները հերթով պետք է մոտենան նկարներին և դիմախաղի միջոցով ու շունչը պահելով ներկայացնեն, թե ինչ են զգում այս երկու տարբեր միջավայրերում:

ԴԱՍ 34

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Անվտանգության պահակետում

Դասի նպատակները.

Աշակերտները պետք է կարողանան անվանել առողջության համար վտանգավոր կենցաղային իրերը:

Խոսել վտանգավոր իրերից օգտվելու անվտանգության կանոնների շուրջ:

Որոշել մարմինը, նկարագրել, տեսակավորել:

Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Առօրյա կյանքում բնական ռեսուրսների (գազ) կիրառում և դրանցից օգտվելու անվտանգության կանոնների պահպանում:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.III.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Անհրաժեշտ նյութ.

հակամիջատային ակտիվացիոն բալոն, լվացքի փոշի, ուրիշ տնային քիմիկատներ («Խլուրդ», մաքրող նյութեր), օծանելիք, թել, ձեռքի ժամացույց, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ (8-10 րոպե)

Ուսուցիչը երեխաներին հարցնում է, հիշո՞ւմ են արդյոք նրանք առաջին դասարանում անցած նյութից, թե տնային գործածության որ առարկաներն են, որ առանձնահատուկ զգուշություն են պահանջում: (1-ին դասարանում խոսք է եղել սրածայր տնային առարկաների մասին): Ի՞նչ փաստ կարող է հասցնել անվանված այս կամ այն առարկան, ի՞նչ պետք է անենք՝ այդ վտանգից խուսափելու համար:

Հետո ուսուցիչն ասում է, որ ինքը բերել է մի քանի տնային գործածության առարկաներ, որոնցից երեխաները պետք է ընտրեն, թե որոնք են գործածման ընթացքում վտանգավոր: Ուսուցիչը արկղից (կամ պայուսակից) հանում և սեղանին շարում է հակամիջատային ակտիվացիոն, լվացքի փոշի, կոյուղու խողովակները մաքրելու «Խլուրդ», խոհանոցի լվացարանակոնքը մաքրելու «Կոմետ», պատուհանները մաքրելու հեղուկներ (կենցաղային գործածության համար նախատեսված քիմիական ուրիշ մաքրող նյութեր), ինչպես նաև անվտանգ նյութեր՝ օծանելիք, թելի կոճ, ժամացույց և այլն: Ուսուցիչը հերթով ցույց է տալիս յուրաքանչյուր իր և հարցնում է.

– Գիտե՞ք սա ինչ է, և մարդը ինչի՞ համար է այն գործածում:

– Վտանգավոր է երեխաների համար, թե՞ ոչ:

Այս վերջին հարցին պատասխանելու համար աշակերտները պետք է հանեն կարմիր կամ կանաչ գույնի ֆլումաստերներ (մատիտներ)՝ կարմիրով նշելով վտանգավորները, կանաչով՝ անվտանգները:

Այնուհետև, եթե երեխաները չկարողանան պատասխանել տրված հարցերին, ուսուցիչն ինքն

է բացատրում, թե ինչու է այս առարկան գործածելը վտանգավոր, ի՞նչ ֆասս կարող է հասցնել երեխաներին, ինչպե՞ս պետք է երեխան պահպանի անվտանգության կանոնները (այս ամբողջ տեղեկատվությունը գրված է կենցաղային առարկաների վրա և հաճախ նախագուշացնում է, որ երեխաները չպետք է ձեռք տան դրանց: Դրանցից շատերը թունավորում են առաջացնում, մի մասն էլ կարող է մաշկը և աչքերը ֆասսել):

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (8-10 րոպե)

Աշակերտի տեսքում տրված են կենցաղային իրերի նկարներ: Աշակերտները պետք է որոշեն, թե օգտագործելու ժամանակ դրանցից որոնք են վտանգավոր առողջության համար և համապատասխան շրջանակը կարմիրով շրջագծեն (սրանք են լվացքի փոշին, միջատների աէրոզոլի բալոնը, ապակի մաքրելու հեղուկը, կացինը, դանակը, էլեկտրաջեռուցիչը): Այս վարժությամբ տեղի կունենա այն գիտելիքի ամրապնդում, որը նրանք նախորդ դասին ստացել էին գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցիչը զրույցը վարում է հետևյալ հարցերով.

– Ի՞նչ պետք է անեք, եթե գազի հոտ եք զգում: Իսկ երբ հրդեհ եք նկատո՞ւմ:

Զրույցից հետո ուսուցիչը ուշադրությունը հրավիրում է «Մտապահի՛ր» խորագրին և ասում է, որ կան ծառայություններ, որոնց պետք է դիմել անհրաժեշտության (հրդեհի, գազի արտահոսքի, ջրի խողովակների պայթելու) դեպքում: Սա անհետաձգելի օգնության ծառայությունն է՝ 112-ը:

3. ԶՐՈՒՅՑ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (6-8 րոպե)

Ուսուցիչը ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, որ վարժությունը կատարելիս վտանգավոր առարկաների մեջ աշակերտներն անվանել են նաև էլեկտրաջեռուցիչը:

– Ուրիշ ի՞նչ կենցաղային իրեր գիտեք, որոնք էլեկտրաէներգիայով են աշխատում (հեռուստացույց, արդուկ, լվացքի մեքենա, համակարգիչ, վարսահարդարիչ...):

– Այս իրերը գործածելիս ինչո՞ւ է պետք զգույշ լինել (այս իրերը էլեկտրական հոսանք են հաղորդում, և տարբեր անսարքության պատճառով կարող է մարդը հոսանքահարվել կամ կարող է հրդեհ բռնկվել):

– Ինչո՞ւ է վտանգավոր հոսանքահարումը:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (8-10 րոպե)

Դասագրքում տրված է վարժություն էլեկտրաէներգիայով աշխատող կենցաղային իրերի ճանաչման և դրանց օգտագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման մասին: Աշակերտներն ինքնուրույն պետք է կատարեն այս աշխատանքը, որն ավարտելուց հետո, պատասխանելու ժամանակ, պետք է տրված անվտանգության կանոններն ամբողջությամբ կրկնեն կամ լրացնեն (օրինակ՝ չի կարելի հոսանքին միացրած էլեկտրասարքավորանքը մաքրել, փոխել միացրած լամպը և այլն):

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասի ժամանակ ստացած գիտելիքը ու մեկ անգամ ևս ընդգծում է այն, որ մեր առողջության ու շրջապատում անվտանգության համար անպայման պետք է պահպանել անվտանգության կանոնները:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանկալի է, որ ուսուցիչը ժամանակ գտնի աշակերտների հետ գազից օգտվելու անվտանգության մասին խոսելու համար: Գազը (վառելիք գազը) շատ վտանգավոր թույն է, գիշերը գազօջախը վառված վիճակում թողնելը կարող է վտանգ ստեղծել մարդու կյանքի համար: Պետք է զրույց վարել՝ կապված այն բանի հետ, թե.

– Ի՞նչ պետք է անենք, եթե սենյակում գազի հոտ ենք զգում:

– Ինչպե՞ս պետք է օգտվենք գազօջախից՝ հրդեհ չառաջացնելու համար:

(Գազի հոտ զգալու դեպքում չի կարելի լուցկի վառել, լույսը միացնել, գազօջախից օգտվել... Նույն պահին պետք է բացել լուսամուտները և սենյակը օդափոխել: Եթե հոտը շարունակ փսում է, անպայման պետք է կանչել գազի վթարային ծառայության մասնագետի:)

ԴԱՍ 35

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Մենք և դեղերը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան հասկանալ տարբեր տեսակի դեղերի (ներարկման, հեղուկ, հաբ, քսուք) գոյության մասին:

Գիտակցել ոչ ճիշտ ընդունած դեղի վնասը:

Մշակել դեղերի հետ կապված անվտանգության կանոններ:

Որոշել մարմինները, նկարագրել, տեսակավորել:

Անձնական կարծիքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Ենթադրություններ արտահայտել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.II.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.III.7. Աշակերտը պետք է կարողանա անվանել ամենօրյա կյանքում օգտագործած բնական ռեսուրսները և դատողություն անի դրանց նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է բնական ռեսուրսները, որոնք կիրառում է ամենօրյա կյանքում (օրինակ՝ ջուր, փայտ, բնական գազ) և խոսում է դրանց նշանակության մասին:

Անհրաժեշտ նյութ.

դեղեր բժշկի կաբինետում, մեծ ֆորմատի թուղթ, մարկերներ (կամ գրատախտակ և կավիճ), մատիտներ:

1. ԴԵՂԵՐԻ ԴԻՏՈՒՄ ԲԺՇԿԻ ԿԱԲԻՆԵՏՈՒՄ (10-15 րոպե)

Ուսուցիչը պայմանավորվել է դպրոցի բժշկի հետ և նրա առանձնասենյակ է տանում աշակերտներին:

Նա հետևյալ հարցերի միջոցով սկսում է զրույցը.

– Ձեր կարծիքով ինչո՞ւ ենք դեղեր օգտագործում:

– Ի՞նչ տեսակի դեղեր եք տեսնում: Որո՞նք են հաբերը: Կաթիլներ՞ ըր (հեղուկները): Քսուքներ՞ ըր:

– Տեսնո՞ւմ եք այնպիսի դեղ, որը ներարկվիչով է ներարկվում մարդուն:

– Ինչ եք կարծում, ինչպե՞ս պետք է պահել դեղը, որ չփչանա:

– Ինչո՞ւ են դեղերը հաճախ տուփերով (փաթեթավորած):

– Ձեր կարծիքով ե՞րբ է դեղը օգտակար մարդու համար:

– Ինչպե՞ս կարող է իմանալ հիվանդը, թե ինչ քանակությամբ (չափաբաժնով) պետք է ընդունի դեղը:

– Էլի ի՞նչն է ձեզ հետաքրքրում դեղերի մասին (հարցեր տվեք բժշկին):

Ակնառու է, որ այս զրույցի մեջ ցանկալի է պարբերաբար ներքաշել բժշկին (բուժքրոջը), որը կպարզաբանի երեխաներին հետաքրքրող հարցերը: Բժիշկը պետք է բացի որևէ տուփ, երեխաներին ցույց տա, որ ներսում դեղ է դրված, նույն տեղում տվյալ դեղի հրահանգն է, որի վրա տրված է ընդարձակ տեղեկատվություն տվյալ դեղի մասին:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՍԱԳՐՔՈՎ (5-8 րոպե)

Դասասենյակ վերադարձած աշակերտները բացում են դասագրքերում համապատասխան դասը և կարդում են նույն էջին տրված փոքր տեքստը դեղի մասին (ի՞նչ հասկացանք, այս տեքստի համաձայն, ինչպիսի՞ նշանակում ունի դեղը): Հետո երեխաները դիտում են երկրորդ նկարը, կարդում են լուսանկարի հետ տրված նախադասությունը և մտապահում են նոր բառը՝ «ներարկում»:

Վերջում աշակերտները կատարում են դասագրքի երկրորդ էջի վարժությունը՝ դեղերի տեսակները տարբերելու մասին:

3. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (4-5 րոպե)

Ուսուցիչը սկսում է համառոտ քննարկում՝ հետևյալ հարցերի շուրջ.

– Կարո՞ղ է դեղը օգուտի փոխարեն վնաս տալ մարդուն, ո՞ր դեպքում (առողջության համար վտանգավոր է բժշկի կողմից չնշանակված կամ մեծ քանակությամբ դեղեր միանգամից ընդունելը և այլն...):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (8-10 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է փոքր խմբերի և հանձնարարություն է տալիս: Աշակերտները դասագրքի երկրորդ էջին պետք է նայեն լուսանկարը ու մտածեն, թե ինչու է դեղի տուփի վրա գրված. «Երեխաներից հեռու պահել»:

Հետո խմբերից յուրաքանչյուրը պետք է սահմանի մեկ կանոն այն բանի մասին, թե ինչպես անել, որ դեղը երեխային չվնասի (օրինակ՝ մի՛ խմիր դեղը առանց մեծերի թույլտվության, բժշկական ներարկիչով խաղալ չի կարելի, խուսափի՛ր բակում գցած օգտագործած ներարկիչից և այլն):

Շնորհանդեսին զուգահեռ ուսուցիչը գրատախտակին կամ ֆորմատի թղթին գրառում է երեխաների կողմից մշակված դեղերի անվտանգ գործածության կանոնները:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասը և մեկ անգամ ևս ուշադրություն է դարձնում դեղերի հետ անվտանգ վարվելու կանոններին:

Ուսուցիչը հանձնարարում է երեխաներին հաջորդ դասի համար բերել սննդամթերքի դատարկ տուփեր, տարաներ, արկղեր, շոկոլադե սալիկները փաթեթավորելու թղթեր, պոլիէթիլենե բաժակներ, զովացուցիչ ըմպելիքների պոլիէթիլենե շշեր, պահածոների տուփեր՝ ով ինչ կգտնի տանը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը խնդրում է երեխաներին վերհիշել, թե ինչ զգացումներ են ունեցել դեղեր խմելիս, սրսկվելիս: Ի՞նչ արդյունք է ունեցել դեղերով բուժումը, առանց հարցնելու որևէ մեկը դեղեր չի՞ խմել արդյոք, որքանո՞վ է ճիշտ նման արարքը և այլն: Այս գրույցին պետք է հաջորդի գրքում, «Մտապահի՛ր» խորագրում տրված տեքստի ընթերցում և իմաստավորում:

ԴԱՍ 36

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Ինչպե՞ս պահպանել սննդի անվտանգությունը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան գիտակցել սննդի հետ կապված անվտանգ վարքը:

Գործնականում օգտվել սննդի պիտակի վրա տրված տեղեկատվությունից:

Դիտարկել ուսումնասիրման առարկան:

Մասնակցել գործնական ակտիվությունների:

Հարցին պատասխանելու համար հավաքել անհրաժեշտ տվյալները, նշումներ անել:

Դիտարկման արդյունքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Դատողություն անել կենսական պահանջումների մասին (անվելը) և անվտանգություն պահպանել:

Մասնակցել շրջակա միջավայրում մաքրության պահպանմանը: Տեղեկություններ հայթայթել կենցաղային թափոնների երկրորդային կիրառման մասին, դատողություն անել այդ մասին:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Բն.Ու.5. Աշակերտը պետք է կարողանա մարմնի և նրա բաղադրիչ նյութերի հատկությունները կապել այս մարմնի նշանակման հետ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դիտարկում է ուսումնասիրման առարկան սեփական զգայության օրգանների կամ պարզ սարքավորումների օգտագործմամբ:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Հավաքագրում է և իր մոտ նշում հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տվյալները (նկարների, պայմանական նշանների միջոցով):

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Տեղեկություններ է հավաքում և դատողություն անում կոնկրետ օրգանիզմի կենսական պահանջումների (անունը, ջուր, օդ, ապաստան) մասին:

Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝ ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Տեղեկություն է ձեռք բերում և դատողություն անում, թե ինչպես կարելի է իրականացնել կենցաղային թափոնների երկրորդային կիրառում (օրինակ՝ պլաստմասսայե շշերից ծաղկամաններ պատրաստել, մետաղյա թափոնները որպես ջարդոն հանձնել, թուղթը՝ մակուլատուրա):

Անհրաժեշտ նյութ.

սննդամթերքի տուփեր կամ անոթներ՝ պիտակներով, տեսանյութ կենցաղային իրերի երկրորդային կիրառության մասին: Մնդամթերքի դատարկ ամաններ, փաթեթավորելու նյութեր՝ պիտակներով:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (5-6 բոպե)

Նախորդ դասին մենք դատողություն արեցինք անվտանգության վարքի կանոնների մասին, որոնք անհրաժեշտ են մարդու կյանքի և առողջության համար:

Հիշի՛ր, եղե՛լ է այնպիսի դեպք, երբ քո զգուշության կամ հեռատեսության շնորհիվ որևէ մեկին (բարեկամ, ընտանիքի անդամ, ծանոթ, անծանոթ) օգնել էս, փրկել վտանգից:

Կամ ընդհակառակը՝ գուցե քե՞զ են փրկել վտանգից:

Ով ցանկանում է, պատմում է այդ մասին:

2. ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (5-7 րոպե)

Օրինակները լսելուց հետո, ուսուցիչն է՛լ ավելի պետք է ընդարձակի թեման և այս անգամ երեխաների ուշադրությունը բևեռի սննդամթերքի անվտանգության վրա:

- Ինչ էք կարծում, որքանո՞վ է անվտանգ այն սննդամթերքը, որով սնվում ենք:
- Ինչ էք կարծում, ի՞նչ նշանով պետք է գնահատվի սննդամթերքի որակը:

Այսօր սպառողական շուկայում սննդամթերքի մեծ ընտրություն կա: Աչքի է ընկնում նրանց տարատեսակությունը, փաթեթավորման որակը: Դժվար է նրանց միջև ընտրություն անելը: Գուցե դուք էլ հաճախ մասնակցել էք այս գործընթացին (ծնողների հետ կամ ինքնուրույն սննդամթերք գնելիս):

- Որտեղի՞ց էք գնում սննդամթերքը. մարկետներում, կրպակներում, թե՞ շուկաներում:
- Սննդամթերք գնելիս ինչի՞ն էք ուշադրություն դարձնում:

3. ՄԻՆԻ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (4-5 րոպե)

Այս և Վնացած հնարավոր հարցերին պատասխանելուց հետո, ուսուցիչը խոսում է այն մասին, թե ինչ պետք է անել սննդամթերք գնելու ժամանակ: Նախ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ դրա (գրում է գրատախտակին).

1. Արտադրման ամսաթիվը,
2. Պահման ժամկետը:

Այս ամենի մասին տեղեկատվությունը տրված է փաթեթավորված սննդամթերքի պիտակի վրա: Ցուցադրման համար ցանկալի է, որ ուսուցիչը հետո ունենա որևէ սննդամթերքի պիտակ:

Նախ և առաջ ուշադրություն պետք է դարձնել սննդամթերքի արտադրման և պահելու ժամկետներին, ինչն անպայման նշված պետք է լինի նրա վրա: Օրինակ՝ կաթնամթերքները շուտ փչացող մթերքների շարքին են պատկանում: Դրանք պահելու ժամկետը չափազանց կարճ է՝ մեկից մինչև հինգ օր: Այս պատճառով այս և նման մթերքներ ձեռք բերելիս, անպայման ուշադրություն է պետք դարձնել ժամկետներին: Որպես օրենք, պահման ժամկետները կամ պիտակին են գրված լինում, կամ կափարիչի վրա, կամ էլ տարայի տակ:

Եթե նշված ժամկետները խախտված են (կամ ժամկետն անցել է), այս սննդամթերքը վտանգավոր է առողջության համար (ուսուցիչը ինչ-որ ասում է, նույն պահին ցույց է տալիս պիտակների նմուշների վրա):

4. ԱԿՏԻՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (15-20 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4-5 մարդուց բաղկացած խմբերի այնպես, որ յուրաքանչյուր խմբի մտավորապես հավասար քանակությամբ մթերքների փաթեթավորման նյութ հասնի, հետո տալիս է այսպիսի հանձնարարություն.

– Ուշադրությամբ դիտեք և ծանոթացեք ձեր ձեռքի տակ առկա սննդամթերքի տուփերին (անոթներին), գտեք նրանց վրա տեղադրված պիտակները, ուշադիր կարդացեք, միասին քննարկեք այն անհրաժեշտ պայմանները, որոնց մասին քիչ առաջ խոսում էինք: Ցանկալի է, որ ուսուցիչը յուրաքանչյուր խմբին բաժանի 2-ական տարբեր պիտակներ: Շնորհանդեսի ժամանակ դատողություններ արեք վերևում քննարկված երկու բնութագրիչների շուրջ:

Աշակերտները շնորհանդեսի ժամանակ պետք է հիփսավորեն, արդյոք իրենց ձեռքի պիտակների համաձայն կարելի՞ է տվյալ մթերքը սննդի մեջ գործածել:

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է այս դասին և ողջ շաբաթվա ընթացքում ձեռք բերած գիտելիքը: Այնուհետև խնդրում է աշակերտներին պարբերաբար պատմել իրեն, թե այս գիտելիքը երբ կօգտագործեն կյանքում:

ՓՈՐՁ

Անհրաժեշտ նյութ. մկրատ, զովացուցիչ ըմպելիքների պլաստմասսայե տարաներ, սովարաթղթե տուփեր, շոկոլադի թղթեր, չոր սոսիս, կարթաթել, ասեղ, ֆլումաստերներ և այլն:


Խմբերին տրվում է հետևյալ հարցը – Ննարավո՞ր է արդյոք ձեր իսկ բերած իրերի (որոնք արդեն

կենցաղային թափոն են) երկրորդային օգտագործումը:

Վստահե՛ք ձեր երևակայությանը: Ստեղծե՛ք պիտանի իրեր (դա կարող է լինել ծաղկաման, գրչատուփ և այլն): Վերջում աշակերտներն իրենց ստեղծած իրերը կներկայացնեն համադասարանցիներին:

ԹԵՍՏ 6

1. Տեղավորի՛ր սննդամթերքը.



2. Տեսակավորի՛ր սխեմայում այս օբյեկտները.

ծով, տուն, կամուրջ, սար, ճանապարհ, անտառ:

| Բնական | Արհեստական |
|--------|------------|
| Ծով | |
| Ասար | Կամուրջ |
| | |
| | |

3. Ո՞ր ես գցում կոնֆետի թուղթը կամ պաղպաղակի փաթեթավորման թուղթը (պատասխանն ընդգծի՛ր).

- ա) Բակում,
- բ) Հատակին,
- գ) Աղբամանը:


4. Ո՞րը աղբ չէ (ընդգծի՛ր ճիշտ պատասխանը).

- ա) Կոնֆետի թուղթը,
- բ) Թափված տերևները,
- գ) Կենցաղային թափոնները:

5. Շրջակա միջավայրի աղտոտումն արդյոք համընդհանու՞ր հիճախնդիր է:
Գրի՛ր՝ այո կամ ոչ:

Չէ՛ր

6. Ո՞րն է դեղ.
(ճիշտ պատասխանը շրջագծի՛ր):



ԴԱՍ 37

Թեմա.

Վերնագիր.

Դասի նպատակները.

Մենք և բնությունը

Անվտանգ հանգիստ բնության գրկում

Աշակերտները պետք է կարողանան խոսել բնական միջավայրում մարդու համար հնարավոր վտանգների մասին:

Խոսել բնության գրկում անվտանգ հանգստի կանոններից:

Գիտակցել բնության գրկում ճիշտ վարքը:

Նկարագարդման վրա կամ իրականության մեջ իրադարձությունները որոշել, նկարագրել:

Դիտարկման արդյունքների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Դատողություն անել առողջության համար շրջակա միջավայրի նշանակության մասին:

Պահպանել շրջակա միջավայրի մաքրությունը և այդ նպատակով գիտակցել սեփական գործողության նշանակությունը:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագարդումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝ ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Անհրաժեշտ նյութ.

տեսանյութ, աշխատանքային թերթեր:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (6-7 րոպե)

Այս դասին աշակերտները պետք է հնարավորինս պատկերացում կազմեն այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսիք են արևահարվելը և արևի լոգանքները, ձյան կամ սառույցի վրա սահքը, ձնահյուսի վտանգը, ծովային ալեկոծությունը, քարաթափությունը, մառախուղը, ամպրոպն ու որոտը, անտառում վարքի առանձնահատկությունները և այլն: Սրա հետ մեկտեղ դասի ընթացքում պետք է ընդգծել շրջակա միջավայրի մաքրության մասին հոգածությունը:

Դասի սկզբում ուսուցիչը մի քանի հարցերով դիմում է աշակերտներին.

– Ձեզանից ո՞վ է եղել ծովափին հանգստանալու:

– Ո՞վ է եղել լեռներում:

– Ո՞վ է սիրում անտառում զբոսնել:

– Սրանցից բացի, ուրիշ ինչպիսի՞ բնական հանգստավայրեր գիտեք:

Ուսուցիչը վերջում հարցով դիմում է երեխաներին.

– Դուք ինքներդ որևէ վտանգավոր իրավիճակի չե՞ք հանդիպել (կամ լսե՞լ եք վտանգավոր իրավիճակների մասին):

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՎ (8-10 րոպե)

Աշակերտների պատասխաններից հետո ուսուցիչն ավելացնում է, որ բնական միջավայրում իսկապես տեղի են ունենում անցանկալի դեպքեր, երբ մարդիկ վտանգի մեջ են հայտնվում: Հիմա ճիշտ այդ հարցերի շուրջ պետք է խմբերով աշխատեն: Ուսուցիչը դասարանը բաժանում է չորս խմբի և հանձնարարում է մտածել և թվարկել.

1-ին խումբ – Պատկերացրեք, որ հանգստանում եք ծովափին, ձեր կարծիքով ի՞նչ վտանգ կարող է սպասվել ծովափին:

2-րդ խումբ – Պատկերացրեք, որ անտառում եք, ի՞նչ վտանգ կարող է սպասվել անտառում:

3-րդ խումբ – Պատկերացրեք, որ ամռանը բարձրալեռ գյուղում եք հանգստանում, ի՞նչ վտանգ կարող է սպասվել լեռներում ամռանը:

4-րդ խումբ – Պատկերացրեք, որ Բակուրիանիում կամ Գուդաուրիում եք հանգստանում ձմռանը, ի՞նչ վտանգ կարող է սպասվել ձմռանը:

Շնորհանդեսի համար երեխաները կարող են պատասխանները համառոտ գրառել: Ցանկալի է, որ աշակերտներն իրենց գրառումները նկարագրադրեն:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ (10-12 րոպե)

Դասագրքի համապատասխան էջին տրված են բնական միջավայրը պատկերող չորս լուսանկարներ, որոնք աշակերտները պետք է դիտեն և համապատասխանաբար խոսեն այն վտանգների մասին, որ պատկերված է այս լուսանկարներում:

Ուսուցիչը, ըստ տրված նկարների, զրույց է սկսում՝ աշակերտներին հետևյալ հարցը տալով.

– Ի՞նչ վտանգ է սպասում մարդուն նման դեպքերում:

Դասագրքի երկրորդ էջին տրված է վարժություն, որը աշակերտին մտորել կտա բնության գրկում եղած ժամանակ ճիշտ (անվտանգ) վարքի կանոնների մասին:

Աշխատանքը ավարտելուց հետո ուսուցիչը կարող է առաջադրել լրացուցիչ հարցեր ևս, օրինակ.

– Ինչո՞ւ պետք է անտառում արահետով դեպի վար գնալ (որովհետև, եթե ճանապարհը կորցրել

ենք, դեպի վար իջնող արահետը ի վերջո կամ մեզ ճանապարհին է հասցնում, կամ մարդկանց բնակավայրի, դեպի վեր բարձրացող արահետի դեպքում այս հնարավորությունը պակաս է):

5. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (2-3 ԸՈՊԵ)

Ուսուցիչը համառոտ ամփոփում է դասի ակտիվությունները և դրա արդյունքում ստացած գիտելիքը: Այնուհետև երեխաներին տանը առաջադրում է ծանոթանալ «Մտածի՛ր» խորագրին և պատասխանել հարցերին: Նաև՝ լրացնել տետրի համապատասխան էջին տրված վարժությունը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼԸԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչն անցկացնում է քննարկում՝ հետևյալ հարցի շուրջ.

– Ի՞նչ վտանգ կարող է սպառնալ մարդուն բնության աղտոտումից:

– Կմասնակցե՞ս արդյոք, օրինակ, ծովափին կամ անտառում էքսկուրսիայի ժամանակ նկատած աղբի հավաքմանն ու աղբավայր հասցնելուն:

ԴԱՍ 38

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Պահպանենք բնությունը

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան բնության հանդեպ հոգատար վերաբերմունք ձևավորել:

Նկարագարողումների վրա և իրական կյանքում ճանաչել երևույթները, նկարագրել:

Հիմնվելով դիտարկման արդյունքների վրա՝ պատասխանել հարցերի:

Անվտանգության նպատակով գիտակցել սեփական գործողությունները:

Կապը ԱՈՒՊ-ի չափորոշիչի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.3. Աշակերտը պետք է կարողանա դատողություն անել օրգանիզմների համար միջավայրի նշանակության մասին:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Դատողություն է անում իր առողջության համար միջավայրի նշանակության մասին (օրինակ՝ օդափոխված դասասենյակ, մաքուր բնակատեղ):

Շրջակա միջավայրում մաքրություն է պահպանում (օրինակ՝ ըստ նշանակման է տեղադրում կենցաղային թափոնները) և նկարագրում է այս նպատակով սեփական գործողության նշանակությունը:

Անհրաժեշտ նյութ.

գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ:

1. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ ԵՎ ՔՆՆԱԸԿՈՒՄ (8-10 րոպե)

Ուսուցիչը խնդրում է երեխաներին բացել դասագրքերի համապատասխան էջը, ուշադիր դիտել տրված նկարները և կարդալ կից տեքստը: Տեքստը կարդում են մեկ կամ երկու աշակերտներ: Մեկ կամ երկու աշակերտներ պատմում են, թե ինչ հասկացան ընթերցած տեքստից:

Այնուհետև ուսուցիչը քննարկման հարց է առաջադրում.

– Երբևէ մտածել էք, թե ինչպես է անտառում հրդեհ բռնկվում:

Երեխաների մեծ մասը սովորաբար կարծում է, որ անտառում հրդեհի պատճառը կայծակն է,

բայց ուսուցիչը նրանց ասում է, որ կայծակի պատճառով առաջացած հրդեհները շատ հազվադեպ երևույթներ են: Մովորաբար հրդեհը բռնկվում է մարդկանց անփութության պատճառով: Օրինակ, 1999 թվականին Ռուսաստանում եղել է 30 հազար անտառային հրդեհ, և համարյա բոլոր դեպքերի պատճառը մարդկանց անփութությունն է եղել:

2. ԶՐՈՒՅՑ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ (8-10 բույս)

Ուսուցիչը գրատախտակին գրում է հինգ դեպք, որոնց պատճառով (կամ մարդկանց անփութության պատճառով) կարող է անտառում հրդեհ բռնկվել.

1. Վառվող լուցկին գցելը:
2. Վառվող ծխախոտը նետելը:
3. Մխալ տեղում խարույկ վառելը:
4. Անուշադրության մատնած չհանգած կրակը:
5. Ուժեղ շոգը:

Այնուհետև ուսուցիչը յուրաքանչյուր դեպք քննարկում է աշակերտների հետ միասին և վերջում եզրակացնում են, որ.

– Չի կարելի անտառում նետել վառվող լուցկին կամ ծխախոտը, քանի որ չոր խոտերն ու տերևները հեշտորեն են բռնկվում, և կրակն արագ փոխանցվում է ծառերին:

– Խարույկ վառելու համար այնպիսի տեղ է պետք ընտրել, որտեղից բոցը ծառի ճյուղերին, մերկացած արմատներին, խոտերին ու թփերին չի կարողանա հասնել:

– Գնալուց առաջ անպայման պետք է համոզվել, որ խարույկն ամբողջությամբ մարել է, չմարած խարույկը կարող է նորից բորբոքվել ու բոց դառնալ:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (10-11 բույս)

Աշակերտի տեսքում տրված են հինգ ուրվանկարներ. թոչնի ձագերով բույն, կանաչած ծառեր, գետ, անտառային գագան, անտառամերձ փայտե տնակ: Աշակերտներին առաջադրանք է տրվում գուշակել, թե ինչը կարող է զստվել անտառային հրդեհի հետևանքով և համապատասխան նկարները գունավորել (միանգամից չի զստվի միայն գետը):

– Արտահայտի՛ր ենթադրություն. ի՞նչ կհաջորդի հրդեհին:

– Հրդեհը կնպաստի՞ արդյոք բնական ռեսուրսների ոչնչացմանը, սպառմանը:

4. ԴՄՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (5-6 բույս)

Վերջում ուսուցիչը քննարկում է սկսում՝ հետևյալ հարցերի շուրջ.

– Ինչպե՞ս կարող ենք անտառում հանգստանալ այնպես, որ հրդեհ չբռնկվի:

– Ի՞նչ պետք է անենք, եթե պարզվի, որ այն անտառում, որտեղ մենք ենք գտնվում, հրդեհ է:

5. ԴԱՄԻ ԱՄՓՈՓՈՒՄ (5-6 բույս)

Ուսուցիչը կամփոփի ստացած գիտելիքը և մեկ անգամ ևս կնշի անտառում անվտանգ վարքի անհրաժեշտությունը:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=I1h0wTEsCPE>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է մարմնավորել այն առարկաները, որոնք կարող են անտառային հրդեհում հայտնվել, օրինակ.

Թոչնին, որի բույնն է վառվում:

Նապաստակին ձագերի հետ:

Մեծ կաղնին:

Մրջյուններին և այլն:

Ասեն, թե ինչ զգացողություն է ապրում:

Ենթադրաբար՝ վախ, հուսահատություն, պայքար...

ԴԱՍ 39

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Ինչպե՞ս վարվենք

Դասի նպատակները.

Աշակերտները պետք է կարողանան նկարագրողումների վրա և իրական կյանքում որոշել մարմինները, նկարագրել դրանք, տեսակավորել:

Անձնական կարծիքների և դիտարկումների վրա հիմնվելով՝ պատասխանել հարցերին:

Թվարկել կենդանի մարմիններին բնորոշ հատկանիշները:

Կենդանու մասին տեղեկություններ հավաքել:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշի արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Բն.Ու.2. Աշակերտը պետք է կարողանա որոշել կյանքի հիմնական նշանները:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագրողումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Թվարկում է կենդանի մարմինների բնորոշ նշանները:

Ընտրում է կենդանի, դիտարկում է և հավաքում տեղեկություններ այն մասին, թե ինչպես է շարժվում, սնվում, մեծանում, զարգանում և բազմանում այդ կենդանին: Սեփական տվյալները համեմատում է համադասարանցիների աշխատանքների հետ:

Անհրաժեշտ նյութ.

հավելվածից 4 էջ՝ համապատասխան տեղեկատվական տեքստերով, գունավոր մատիտներ կամ ֆլումաստերներ, աշխատանքային թղթեր:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՁՐՈՒՅՑ (3-4 րոպե)

Ուսուցիչը շարունակում է նախորդ դասին քննարկած թեման, որ բնության գրկում գտնվելիս պետք է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերել որոշ կենդանիների հանդիպելիս: Այնուհետև հարցերով դիմում է դասարանին.

– Ո՞ր կենդանիներին կարող ենք հանդիպել բնական միջավայրում:

– Ձեր կարծիքով ո՞ր կենդանուն հանդիպելն է վտանգավոր: Ինչո՞ւ:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (5-6 րոպե)

Աշակերտի տետրում տրված են մեզ մոտ ապրող մի քանի կենդանիների նկարներ, որոնց հանդիպելիս մարդը առանձնակի զգուշություն պետք է ցուցաբերի: Դրանք են թունավոր օձը, կարիճը, իշամեղուն, մոծակը: Աշակերտները պետք է կռահեն և նկարագրեն դրանց, հետո պետք է փորձեն պատմել, թե որ կենդանին ինչով է վտանգավոր մարդու համար (օձի, կարիճի և իշամեղվի խայթոթ թունավոր է, մոծակը, ճիշտ է, թունավոր չէ, բայց տարբեր հիվանդություններ է տեղափոխում, նրա խայթոթ բավական ցավոտ է):

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԽՄԲԵՐՈՒՄ (17-18 րոպե)

Ուսուցիչը դասարանը բաժանում է 4 խմբի և հանձնարարություն է տալիս: Յուրաքանչյուր խումբ պետք է կարդա դասագրքի «Մա հետաքրքիր է» խորագրի ներքո տրված տեքստը:

1-ին և 2-րդ խմբեր – Թունավոր օձերի մասին տեքստը,

3-րդ և 4-րդ խմբեր – Կարիճի մասին տեքստը:

Աշակերտները խմբերում պետք է ծանոթանան տրված տեղեկությանը և խորհեն, թե ինչպես (ինչ ձևով) կարող են փոխանցել համադասարանցիներին այս գիտելիքը (շնորհանդեսի համար կարող են նկարներ անել, բեմականացնել, վերարտադրել տեքստի բովանդակությունը և այլն):

4. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ (8-10 րոպե)

Աշակերտները բացում են աշխատանքային տետրերը, որտեղ պետք է կռահեն ու գրեն կենդանիների անունները. օձ, կարիճ, մլակ և այլն: Նրանք պետք է գլխի ընկնեն, որ մի շարքում (թունավոր կենդանիներ) պետք է գրել օձ, կարիճ, իշամեղու, իսկ երկրորդում՝ գայլ, արջ և մոծակ:

Աշակերտներն աշխատում են ինքնուրույն:

5. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ (2-3 րոպե)

Ուսուցիչն ամփոփում է դասին ձեռք բերած գիտելիքը և աշակերտներին տանը Աշակերտի տետրից հանձնարարում է 2-րդ առաջադրանքը:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լավ կլինի, եթե ուսուցիչը գտնի Վրաստանում տարածված օձերի և (կամ) թունավոր սնկերի լուսանկարներ և դրանք ներկայացնի աշակերտներին:

ԴԱՍ 40

Թեմա.

Մենք և բնությունը

Վերնագիրը.

Վրաստանն իմ հայրենիքն է

Դասի նպատակը.

Աշակերտները պետք է կարողանան մշակել պետական դրոշի և օրհներգի հանդեպ հարգանքի զգացում:

Գիտակցել, որ Վրաստանն իրենց հայրենիքն է:

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցել գործնական ակտիվությունների:

Տրված հարցերին պատասխանելու համար հիմնվել անձնական կարծիքների և դիտարկման արդյունքների վրա:

Որոշել, նկարագրել և տեսակավորել նկարագարդման վրա տրված օբյեկտները:

Կապը ԱՌԻՊ-ի չափորոշիչ արդյունքների հետ.

Բն.Ու.1. Աշակերտը պետք է կարողանա մասնակցել գործնական ակտիվությունների և ցուցաբերի տարրական հետազոտական հմտություններ ու կարողություններ:

Արդյունքն ակներև է, եթե աշակերտը.

Անվտանգության կանոնների պահպանմամբ մասնակցում է պարզ գործնական ակտիվությունների:

Որոշում է, նկարագրում և տեսակավորում մարմինները կամ/և երևույթները նկարագարդումների վրա կամ իրականության մեջ:

Տրված հարցին պատասխանելու համար հիմնվում է սեփական տեսակետների կամ/և դիտարկման արդյունքների վրա:

Անհրաժեշտ նյութ.

տեսանյութ՝ «Վրաստանի օրհներգը», մկրատ, սոսինձ:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ (10-12 րոպե)

Ուսուցիչը դասը սկսում է զրույցով.

– Մարդիկ տարբեր երկրներում են ապրում: Բոլոր երկրներն իրենց անուններն ունեն: Ի՞նչ է այն երկրի անունը, որտեղ մենք ենք ապրում: Ո՞րն է մեր հայրենիքը:

Աշակերտների մի մասը կարող է իր պատմական երկրամասը կամ քաղաքն (օրինակ՝ Կախեթին, Մամեգրելոն...) անվանել, բայց մեծամասնությունը Վրաստանը կանվանի, քանի որ առաջին դասարանից այդ մասին արդեն գիտեն: Ուսուցիչը խնդրում է երեխաներին բացել դասագրքերի համապատասխան դասը, որտեղ Վրաստանի բնությունը պատկերող լուսանկարներ են տրված, և սկսում է քննարկում հետևյալ հարցերի շուրջ.

- Ուշադիր նայե՛ք նկարները: Ձեր կարծիքով ո՞ր երկրում են արված այս լուսանկարները:
- Ի՞նչ էք տեսնում առաջին նկարում:
- Ձեր կարծիքով այս սարերը բարձր են, թե՞ ցածր: Ինչո՞ւ էք այդպես մտածում:
- Ի՞նչ է պատկերված վերևի երկրորդ լուսանկարում՝ գյուղ, թե՞ քաղաք:
- Կարո՞ղ էք գուշակել՝ որ քաղաքն է:
- Թբիլիսիին՝ որպես Վրաստանի գլխավոր քաղաքի, ի՞նչ են ասում:
- Ի՞նչ էք տեսնում երրորդ նկարում:
- Ձեր կարծիքով ի՞նչ եղանակ է այս նկարում: Ինչո՞ւ էք այդպես մտածում:
- Ի՞նչ է պատկերված այս նկարում՝ գյուղ, թե՞ քաղաք:
- Ինչո՞ւ էք կարծում, որ նկարում գյուղ է:
- Ի՞նչ տարբերություն էք տեսնում քաղաքի ու գյուղի միջև:
- Ձեր կարծիքով ո՞ր ծովի ափն է պատկերված չորրորդ նկարում:

2. ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔԻ ՎՐԱ (3-4 րոպե)

Այսուհետև ուսուցիչը հանձնարարում է բանավոր կատարել դասագրքում տրված վարժությունը:

3. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻ ՏԵՏՐՈՒՄ. ՎՐԱՍՏԱՆԻ ԴՐՈՇԻ «ԿԱԶՄՈՒՄ» (20-22 րոպե)

Ուսուցիչը բացատրում է, որ բոլոր երկրները (պետությունները) իրենց դրոշն ունեն: Դրոշ բառը վրացերենում, բացի «դրոշա» անվանումից ունի նաև «ալամի», «բայրադի» անվանումները, նշված բառերը հնում հայերենում ևս օգտագործվել է «դրոշ» բառի իմաստով: Հնում, պատերազմների ժամանակ զինվորները մարտական դրոշներով էին դուրս գալիս մարտի դաշտ: Հաղթանակած բանակը ծածանած դրոշով էր տուն վերադառնում: Ճիշտ է, այսօր դրոշներն այլևս պատերազմ չեն տանում, բայց բոլոր պետությունները, որպես անկախության նշան, իրենց դրոշն ունեն:

Ուսուցիչը խնդրում է երեխաներին տեսրի վերջում տրված պատկերները կտրել-հանել և լրացնել շրջանակը կամ պատկերել Վրաստանի դրոշը: Դրա համար նրանք պետք է կտրեն 9-րդ հավելվածում տրված կարմիր պատկերները, ճիշտ համադրեն և սոսնձեն շրջանակի մեջ:

Ուսուցչի լրացուցիչ հարցեր.

- Հավանո՞ւմ էք մեր հայրենիքի դրոշը: Ինչո՞ւ է:
- Այս դրոշներով մարդիկ սովորաբար ո՞ւր են գնում:
- Ձեր կարծիքով ի՞նչ են արտահայտում դրոշը ծածանելով:

Ուսուցիչն ավելացնում է, որ հայրենիքի հանդեպ մարդկանց սերը դրոշի հետ մեկտեղ տարածվում է նաև պետական օրհներգի վրա: Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին դասագրքի կազմի վրա գտնել Վրաստանի պետական օրհներգի՝ «Ազատության» տեքստը: Սկզբից երեխաներին մի քանի անգամ կարդալ է տալիս տեքստը, հետո, հնարավորության դեպքում, ցանկալի է, որ երեխաներին այն ունկնդրել տա:

4. ԴԱՍԻ ԱՍՓՈՓՈՒՄ (1-2 րոպե)

Վերջում ուսուցիչն ամփոփում է դասը և բացատրում է տնային առաջադրանքը:

Տեսրի 10-րդ հավելվածից պետք է կտրել-հանել նկարները, դասավորել համապատասխան հաջորդականությամբ և սոսնձել աշխատանքային տեսրի վերջին էջին: Վերջում կստանան Վրաստանի քարտեզը համապատասխան գրությամբ՝ «Վրաստանը մեր հայրենիքն է»:

Երաշխավորվող տեսառեսուրս. <https://www.youtube.com/watch?v=EacvchU6khY>

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ԿԱՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչն իր հետ բերել է Վրաստանի պատմական դրոշների նկարներ և ցույց է տալիս աշակերտներին:

Ուսուցիչը դասարանի համար բերել է Վրաստանի դրոշը և աշակերտների հետ համաձայնությամբ նրա համար դասասենյակում աչքի ընկնող տեղ է գտնում:

9. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ՓՈՔՐ ԽՄԲԵՐՈՎ ԵՎ ԶՈՒՅԳԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոցական կրթական համակարգում աշակերտակենտրոն մոտեցումն ուժեղ թափ հաղորդեց համագործակցային մանկավարժության զարգացմանը, այն այսօր լայն տարածում է գտել աշխարհում: Ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի միջև հատկանշական է գույգերով ու խմբերով աշխատանքը: Ավանդական դասի ժամանակ, երբ գերակշռում է ֆրոնտալ հարցումը, հիմնականում ակտիվություն են ցուցաբերում ուժեղ աշակերտները: Նրանք նոր նյութը հեշտությամբ են հասկանում, արագ յուրացնում են, ուսուցիչն էլ հիմնվում է նրանց վրա, իսկ թույլ աշակերտը մնում է սովորում, և նրա՝ դասերից ետ մնալն այս դեպքում արդեն երաշխավորված է, քանի որ ժամանակը չի բավականացնում, որպեսզի ամեն ինչ պարզ պատկերացնի, և ոչ էլ համարձակվում է հարցերով դիմել ուսուցչին: Եթե նրան հարցնում են, արագ պատասխանել չի կարողանում կամ ճիշտ չի պատասխանում և, կարճ ասած, խափանում է դասի բնականոն ընթացքը:

Հիմա քննարկենք երկրորդ տարբերակը, երբ աշակերտին անհատական առաջադրանքներ ենք տալիս, և նա ինքնուրույն պարապում է: Հաճախ նա իր հաջողություններով ու անհաջողություններով հանդերձ մնում է ինքն իր կեղևի մեջ: Նրան քիչ է հուզում, թե ինչպես են ընթանում ընկերոջ գործերը և հիմնականում իր խնդիրներով է զբաղված: Իսկ համագործակցային մանկավարժությունը ուսանման այլ եղանակ է առաջարկում, երբ աշակերտի կողքին կան ընկերներ, որոնց պետք է օգնել կամ որոնցից կարող է օգնություն խնդրել՝ հարցնել այն, ինչ անհասկանալի է: Կարող են միասին քննարկումներ անել ու եզրահանգման գալ: Երբ քեզանից է կախված խմբի հաջողությունը, անհնար է, որ քո պատասխանատվության չափը չգիտակցես, չաշխատես, չսովորես, ծուլանաս և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ համատեղ ուսանումը ոչ միայն առավել հեշտ և հետաքրքիր է, այլև արդյունավետ է: Հատկանշական է, որ այդ արդյունավետությունը վերաբերում է ինչպես ակադեմիական հաջողություններին և մտավոր զարգացմանը, այնպես էլ՝ բարոյական աճին:

Իր նպատակին հասնելու համար համագործակցային ուսուցումը հաճախ կիրառվում է դասարանում խմբերով կամ գույգերով աշխատանքի (պարապմունքի) մեթոդով: Մանկավարժական նոր տեխնոլոգիաների իրականացումն էլ հաճախ խմբային աշխատանքի մեթոդի հետ է կապված:

ԶՈՒՅԳԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Զույգերով աշխատելու համար ուսուցիչը դասարանը գույգերի է բաժանում և առաջադրանք է տալիս (եթե որևէ աշակերտ մենակ է մնում, ուսուցիչը կարող է ինքը նրա հետ գույգ կազմել կամ երեք երեխա նստեցնել միասին): Աշխատանքի տևողությունն ուսուցիչն է որոշում և աշակերտներին նախապես զգուշացնում է: Աշխատանքի ավարտից հետո, եթե ուսուցիչը գույգերից մեկի աշխատանքը գնահատում է, այդ գնահատականը պետք է նույն չափով և նույն կերպ վերաբերի երկու գույգընկերներին էլ: Այդպիսով, երեխաները կհասկանան, որ նրանք պատասխանատվություն ունեն իրենց գույգընկերոջ հանդեպ և կփորձեն միմյանց օգնել սովորելու գործընթացում: Նրանք միասին դիտարկում են, մտածում, դատողություն անում, աշխատում, նկարում, ապա ստուգում են մեկը մյուսի աշխատանքը, վերահսկում են այն: Նման համագործակցությունը հիմք է ստեղծում փոքր խմբերով առանց հակամարտության աշխատանքի համար:

ԽՄԲԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Խմբային պարապմունքը դպրոցում մենք քննարկում ենք՝ որպես կոլեկտիվ մտավոր աշխատանք, ինչը երեխայի մտավոր զարգացման համար լավագույն պայմաններ է ստեղծում:

Հարաբերությունների տեսանկյունից խմբային պարապմունքի նպատակը ոչ այնքան այն է, որ խումբը ենթարկվի ուսուցչին, որքանով այն, որ խմբի յուրաքանչյուր աշակերտ իրեն հարմարավետ զգա, առավելագույն արդյունքների հասնի և ընկերների ու ուսուցչի հետ համագործակցի: Նման պայմաններում խմբային աշխատանքը հետևյալ ազդեցությունն է գործում աշակերտի անհատականության զարգացման վրա.

- Խումբը ստեղծում է մտավոր լարվածության դաշտ:
- Խումբը ստեղծում է էմոցիոնալ լիցքավորման դաշտ:
- Խումբը մարդուն վարքի փորձ ձեռք բերելու հնարավորություն է տալիս:
- Խմբում աշակերտն ընտելանում է ընկերների հետ համագործակցությանը:
- Խումբը նպաստում է աշակերտի՝ ինքնուրույն աշխատելու ունակության զարգացմանը:
- Խումբը մարդու մեջ զարգացնում է պատասխանատվության զգացումն ու այսպես շարունակ:

Ուսուցչի կազմակերպած խմբային դասն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ տեղի է ունենում աշակերտների անհատական զարգացում: Խումբը լավագույն հնարավորությունն է ընձեռում այնպիսի ստեղծագործական միջավայրի ստեղծման համար, որն ապահովում է խմբի անդամների զարգացում:

Դասի ժամանակ խմբային աշխատանքի զարգացման հիմնական յուրահատկություններն են.

- 1) Կոնկրետ ուսումնական խնդիրների լուծման համար դասարանը բաժանվում է 3-6-հոգանոց խմբերի:
- 2) Յուրաքանչյուր խմբի տրվում է կոնկրետ առաջադրանք (առաջադրանքը բոլոր խմբերի համար կարող է լինել նույնը կամ տարբեր), որը խումբը միասնաբար է կատարում՝ առաջնորդի կամ ուսուցչի ղեկավարությամբ:
- 3) Խմբում առաջադրանքն աշակերտների միջև այնպես է բաշխվում և կատարվում, որ հնարավոր լինի խմբի յուրաքանչյուր անդամի անհատական ներդրումն աշխատանքում արձանագրել և գնահատել:
- 4) Սկզբում խմբերի կազմը փոփոխական է, նրանց համալրումը տեղի է ունենում նրա նախատեսմամբ, որ դա առավելագույնս նպաստի յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունների իրացմանը և անհատական բնավորությունների համատեղմանն՝ առանց խնդիրների:
- 5) Խումբը ձևավորվում է այն սկզբունքով, որ միավորվեն տարբեր ուժերի տեր ու գիտելիքների տարբեր մակարդակների, տարբեր բնավորություններով աշակերտները, ինչը նրանց փոխադարձաբար միմյանց լրացնելու ու հարստացնելու հնարավորություն է տալիս:
- 6) Խումբը պետք է աշխատի փոխադարձ համաձայնությամբ, առանց բախումների, ոչ մի երեխա չպետք է ճնշվի:
- 7) Աշխատանքը պետք է կատարվի ուսուցչի կողմից նախապես սահմանված ժամանակահատվածում:
- 8) Խումբն աշխատում է մեկ սեղանի շուրջ:
- 9) Որպես թիմեր ձևավորված խմբերը կարելի է ժամանակ առ ժամանակ փոփոխել կամ անփոփոխ թողնել որոշ ժամանակ (մեկ կամ երկու ամիս, ուսումնական կիսամյակ):

Խմբային աշխատանքի ժամանակ պետք է աշակերտներին խթանենք աշխատանքի և արդյունքների միասնական քննարկման, միմյանց խորհուրդի կարգով դիմելու և փոխադարձ օգնության:

Այդ ժամանակ զգալիորեն ավելանում են բոլոր անհրաժեշտ դեպքերում ընկերներին օգնելու դեպքերը: Պետք է նշել, որ այս դեպքում օգնող աշակերտը պակաս օգուտ չի ստանում, քանի որ նրա գիտելիքը կոնկրետանում, ակտիվանում, ամրապնդվում է համադասարանցուն բացատրելու գործընթացում:

Խմբային աշխատանքի ժամանակ ուսուցիչը տարբեր գործառույթներ է կատարում՝ ստուգում է աշխատանքի ընթացքը, արձագանքում է հարցերին, կանոնակարգում է վեճերն ու աշխատանքի հաջորդականությունը, անհրաժեշտության դեպքում օգնում է առանձին աշակերտի կամ ամբողջ խմբին: Միաժամանակ առավելագույնս նպաստում է արդյունքների քննարկմանն ու փոխադարձ խորհրդատվությունների անցկացմանը:

Ուսուցիչը պետք է վերահսկի ամբողջ դասարանի աշխատանքը, սակայն չպետք է ստեղծվի տպավորություն, թե որևէ խմբի գլխին կանգնած է: Ուսուցիչը չպետք է միջամտի խմբի աշխատանքին՝ բացի այն դեպքից, երբ աշակերտները որևէ հարցի պարզաբանում են խնդրում:

Աշխատանքն ավարտելուց հետո, խմբերը ներկայացնում են իրենց աշխատությունները (խմբի անդամներից մեկը պարզաբանում է կատարված աշխատանքը և օգտագործում մեկնաբանության համար): Ուսուցիչն ինքը կարող է ընտրել շնորհանդեսավարին (ներկայացնողին) կամ էլ կարող է խմբին տալ ընտրության հնարավորությունը: Շնորհանդեսի ժամանակ վեճն անընդունելի է, որպեսզի ներկայացնողի մտքի թելը չկտրվի: Հարցեր կարող են տրվել միայն շնորհանդեսից հետո (շնորհանդեսի մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև):

Խմբային աշխատանքը հաջողությամբ իրականացնելու համար՝ ուսուցիչը պետք է լավ ճանաչի դասարանին (խոսքը ոչ միայն աշակերտների գիտելիքի մակարդակի մասին է, այլև խառնվածքների ու հարաբերությունների առանձնահատկությունների): Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է նախապես պատրաստվել ու ծրագրել այն: Ճիշտ է, նման աշխատանքն ուսուցչից լրացուցիչ ժամանակի հատկացում է պահանջում, սակայն փոխարենը մանկավարժական էֆեկտը զգալիորեն մեծ կլինի:

Խմբային աշխատանքը հաջողությամբ կարելի է անցկացնել ինչպես նոր նյութի հաղորդման ժամանակ, այնպես էլ արդեն սովորած նյութը ստուգելիս ու գնահատելիս: Կարևորը, որ ուսուցիչը չշփոթի, իմանա, որ խմբային աշխատանքը ոչ թե նպատակ է, այլ գործնական միջոց՝ դասն իր նպատակին հասցնելու և նախանշված խնդիրները լուծելու համար:

Հաջորդ փուլում ցանկալի է, որ **քննարկում** կազմակերպվի: Քննարկումն ինքնըստինքյան է ծնվում, քանի որ շնորհանդեսի ժամանակ թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտների մոտ, բնականաբար, հարցեր են առաջանում: Շնորհանդեսի ժամանակ հարցեր տալը ցանկալի չէ: Երբ ընդհատվում է միտքը, արդյունքում խախտվում է շնորհանդեսի ամբողջականությունն ու կանոնավորությունը: Իսկ շնորհանդեսի ավարտից հետո առաջ քաշված հարցերի շուրջ պետք է քննարկում անցկացվի: Հարցը խորությամբ ըմբռնելուց բացի, քննարկումը նպաստում է մի շարք օգտակար հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են՝ ակտիվ ունկնդրումը, սեփական կարծիքի արտահայտումն ու դրա հիմնավորումը, վեճի ժամանակ հեղինակություն վայելող մարդու առջև վախի հաղթահարումը, դատողությունն ու ուրիշի միտքը գնահատելու ունակության զարգացումը, ինչպես նաև տարբերվող կարծիքի հանդեպ ներողամիտ վերաբերմունքը: Քննարկման գործընթացն այս հատկանիշների զարգացմանն այն դեպքում է նպաստում, եթե ինքը՝ ուսուցիչը դրանց կրողն է և օրինակ, ինչը սովորելու է կոչում ուրիշներին:

Քննարկումը միշտ ընթանում է այն կանոնների պահպանմամբ, որոնք նախապես են եղել մշակված ուսուցչի և աշակերտների միջև: Քննարկման կանոններն առհասարակ պետք է այսպիսին լինեն.

- Երբ մեկը խոսում է, մյուսները լսում են:
- Եթե որևէ բան ես ուզում ասել, ձեռք բարձրացրու:
- Ուրիշին չընդհատես խոսելիս:
- Ուրիշի խոսելու ժամանակ չծիծաղես՝ բացի այն դեպքից, երբ կատակում են:
- Վիճաբանությանը մասնակցում են բոլորը:

Քննարկումից հետո սովորաբար տեղի է ունենում գնահատումը (տարրական դասարաններում թվանշաններով գնահատում տեղի չի ունենում):

Գնահատումը շատ նուրբ գործընթաց է և անաչառ ու զգույշ մոտեցում է պահանջում: Գնահատումը տեղի է ունենում առանց թվանշանի:

Աշակերտը գնահատվում է ըստ նրա, թե որքանով լուրջ ու պատասխանատվությամբ է մոտեցել տրված հանձնարարությանը, ինչպես է «պարապել» և իր հնարավորությունների քանի տոկոսն է օգտագործել այդ գործընթացում:

Խմբերի շնորհանդեսներից հետո ուսուցիչը գրատախտակը բաժանում է այնքան մասի, որքան խումբ կա, և համարակալում է: Գնահատվում է ոչ թե անհատական, այլ խմբային աշխատանքը: Գնահատում են խմբերի անդամները և ոչ թե ուսուցիչները: Գնահատումը տեղի է ունենում բոլորի կողմից: Յուրաքանչյուր աշակերտ հայտնում է իր կարծիքը և ասում է այն խմբի համարը, որին

լավագույնն է համարում (իր խմբից բացի): Ուսուցիչը գրատախտակի վրա համապատասխան խմբի թվի տակ նշում է անում: Խմբի համարն ասելու հետ մեկտեղ ցանկալի է, որ աշակերտը նաև բացատրի, թե ինչու է առավելությունն այդ խմբին տվել: Վերջում, ըստ նշումների, բացահայտվում է լավագույն խումբը:

Աշխատանքի վերջում նպատակահարմար է այսպես կոչված ռեֆլեքսիայի՝ կշռադատման անցկացումը:

«Կշռադատում» (ռեֆլեքսիա) տերմինը նշանակում է սեփական կարծիքների ու ապրումների վերլուծություն, սեփական հոգեվիճակի մասին մտածել, երբ դիտարկումը միտված է գիտակցության ներքին գործունեությանը: Մի խոսքով, մանկավարժական կշռադատումը կարող է բացատրվել՝ որպես սեփական վարքի, այս դեպքում՝ ուսումնա- ճանաչողական գործունեության գիտակցում: Երկրորդ դասարանում կշռադատման ժամանակ բավական է աշակերտների կողմից այն բանի գիտակցումը, թե ինչ են սովորել այդ դասի ընթացքում, ինչն էր նրանց համար հետաքրքիր ու հիշարժան, ինչն են դժվարացել հասկանալ և այլն:

Պարապմունքի եզրափակիչ փուլում դասի ընթացքը և մասնակիցների արձագանքները հիշելը կարևորագույն ուսումնական և դաստիարակչական գործառույթ են կատարում:

10. ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵՆՔ ԱՇԱԿԵՐՏԻՆ

Ըստ Ազգային ուսումնական պլանի, ուսուցման I փուլում (1-4 դասարաններ), խորհուրդ չի տրվում թվանշանով գնահատել: Չնայած դա չի նշանակում, որ աշակերտների գնահատում ընդհանրապես տեղի չի ունենում: Հակառակը, կարծում ենք, որ առանց թվանշանի գնահատելիս, համեմատաբար ավելի շատ են հնարավորություններն՝ աշակերտների գիտելիքներն ու ստեղծագործական ընդունակությունները ցույց տալու համար:

Ըստ մեզ, ավելի հարմար է աշակերտներին գնահատել՝ ելնելով այն նպատակներից (գիտելիք, հմտություն-կարողություններ, վերաբերմունք), որոնք ենթադրում է այս առարկայի ուսուցումը, և ըստ այն կոնկրետ (լոկալ) նպատակների, որոնց հասնել պլանավորում ենք հենց դասի ժամանակ (կամ ուսուցման գործընթացում գնահատում ենք այն, թե ինչպես կարողացավ աշակերտը հաղթահարել կոնկրետ հանձնարարությունները):

Ուսուցիչը նախապես պետք է իմանա, թե ինչ չափանիշներով պետք է գնահատի աշակերտին: Այդ չափանիշներում մանրամասնորեն պետք է նկարագրի աշակերտի կողմից առարկան սովորելու և յուրացնելու մակարդակն ու որակը:

Ուսուցիչն աշակերտներին պետք է գնահատի հաճախ և տարբեր ուղղություններով: Գնահատումը պետք է հիմնվի ուսուցչի կողմից յուրաքանչյուր աշակերտի դիտարկման արդյունքում կուտակված տվյալների վրա:

Հնարավոր է գնահատումը ներառի հետևյալ չափանիշները.

- Որքանով ճիշտ է ճանաչում և անվանում աշակերտն առարկաներն ու երևույթները:
- Որքանով ճշգրիտ կարող է նա ձևակերպել միտքը:
- Առարկաների և երևույթների խմբավորում՝ ըստ նման և տարբերվող հատկանիշների:
- Աղյուսակների և դիագրամների կազմում-լրացում:
- Ուսուցանվող հարցի հետ կապված համապատասխան հարցերի ձևակերպում:
- Շնորհանդես՝ գիտելիքի և հմտությունների ցուցադրում:
- Տրամաբանական եզրակացություններ անել:

Մենք համարում ենք, որ առարկաները ճանաչելը և անվանելն «աշակերտի գիտելիքի որակի համեմատաբար ցածր, I կարգի ցուցանիշ է»:

Ավելի բարձր՝ II մակարդակի չափանիշներ են «մտքի հստակ ձևակերպումը», «առարկաների և երևույթների խմբավորումը» և «շնորհանդեսը»:

Ամենաբարձր՝ III մակարդակի չափանիշներն են՝ «աղյուսակների լրացումը», «համապատասխան հարցերի ձևակերպումը» և «տրամաբանական եզրակացությունների հանգումը»:

Այսպիսով, ենթադրվում է, որ յուրաքանչյուր հաջորդ մակարդակ նախատեսում է նախորդ մակարդակի չափանիշների պահանջները նույնպես:

Փորձը մեզ ցույց է տվել, որ զույգերով ու խմբերով կատարված ակտիվությունը նպաստում է աշակերտների միջև համագործակցության հմտության զարգացմանը: Նման աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են լսել միմյանց, նկատի ունենալ ուրիշի կարծիքը, կարողանում են քննադատաբար, ստեղծագործաբար մտածել և գնահատել, սեփական կարծիքը հայտնել ու հիմնավորել և այլն: Նրանք սովորում են գործառույթները ճիշտ բաշխել և ժամանակը ռացիոնալ օգտագործել:

Ցանկալի է, որ խմբային աշխատանքի գնահատման ժամանակ ուսուցիչը շեշտադրումն անի դրական կողմերի վրա. ոմանք ավելի լավ են գրում, իսկ ոմանց հաջողվում է ավելի լավ կարդալ կամ նկարել: Գնահատելիս ուսուցիչն ուշադրությունը չպետք է կենտրոնացնի նրա վրա, ինչն աշակերտի մոտ չի ստացվում: Հակառակը՝ նա միշտ պետք է շեշտի այն արժանիքը, որն աշակերտին առանձնահատուկ ձևով կներկայացնի: Դրանով աշակերտին ավելի լավ աշխատելու խթան կտրվի,

ավելի լավ սովորելու, ուրիշների համար օրինակ ծառայելու... Ի վերջո այս ամենը կնպաստի աշակերտների ինքնահաստատմանն ու սեփական հնարավորությունների մեջ վստահ լինելուն:

Ուսուցիչը նախապես պետք է որոշած լինի խմբային աշխատանքի գնահատման ձևը: Խմբային աշխատանքի ժամանակ ցանկալի է, որ երեխաներն իրենք գնահատեն մյուս խմբի աշխատանքները: Շնորհանդեսի ընթացքում պարտադիր է, որ խմբի կողմից ներկայացված աշխատությունը փակցվի գրատախտակին կամ աշխատության վրա գրվի համապատասխան խմբի համարը, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան գնահատել միմյանց աշխատանքները. յուրաքանչյուր աշակերտ բարձրաձայնում է, թե ըստ իրեն՝ որ խմբի աշխատանքն է լավագույնը (բացի իր խմբից), և հիմնավորում է, թե ինչու է այդպես կարծում: Յուրաքանչյուր կարծիք հայտնողի կարծիքը ուսուցիչը գրատախտակին, խմբի համարի մոտ է գրանցում «+» նշանով: Ըստ «+» նշանների քանակի կորոշվի հաղթող խումբը:

Հնարավոր է, որ ուսուցիչն ընդունի գնահատման միասնական պայմանական նշաններ (արև, աստղ, ժպտացող մարդուկ և այլն) կամ կիրառի այնպիսի միջոց, ինչպիսին է կարճ մեկնաբանությունը: Այս դեպքում ուսուցիչը հատ-հատ (բանավոր կամ գրավոր) գնահատում է յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանք (թեստ, սխեմա, ապլիկացիա, նկար և այլն): Նա կարող է յուրաքանչյուր աշխատանքի տալ կարճ գրավոր մեկնաբանություն, որտեղ խոսքը կլինի կատարված աշխատանքի արժանիքների և թերությունների մասին: Ցանկալի է, որ տեղում տրվեն նաև անհրաժեշտ խորհուրդները.

Օրինակ.

– Թաթիա՛, դու հաջողությամբ կարողացար կատարել հանձնարարությունը. ճիշտ ես բաշխել ժամանակը, ընկերներիդ հետ համաձայնեցված էիր աշխատում և որոնում էիր խնդրի լուծման ուղիներ: Ապրե՛ս:

– Գիգա՛, դու լավ ես կատարել աշխատանքդ, չնայած, եթե ժամանակ չկորցնեիր, հավատում եմ, ինքդ էլ կհայտնաբերեիր սխալդ ու կկարողանայիր ուղղել այն: Խորհուրդ եմ տալիս ընդհանրապես ավելի ուշադիր կարդալ առաջադրանքի պայմանը, այդպես ավելի մեծ հաջողությունների կհասնես: Քեզ հետ մեծ հույսեր եմ կապում:

Ցանկալի է, որ ուսուցիչը նման ամփոփիչ մեկնաբանություն կիսամյակի ավարտին յուրաքանչյուր աշակերտի համար նույնպես գրի, որտեղ նա կբնութագրի աշակերտի ամբողջ կիսամյակի աշխատանքը և նրա հնարավորություններն ավելի լավ դրսևորելու համար խորհուրդներ կտա: Ցանկալի է, որ ուսուցիչը խուսափի խիստ բացասական գնահատականներից, որպեսզի աշակերտը դրանից չկորցնի իր անձի ու հնարավորությունների հանդեպ հավատը: Դրան հակառակ, ավելի էֆեկտիվ կլինի, որ աշակերտներին աշխատանքը բարելավելու ուղիներ առաջարկենք, առաջ մղենք, նրանց իրենց հնարավորությունների հանդեպ վստահություն, հավատ ներշնչենք ու որքան հնարավոր լինի քաջալերենք ու ոգևորենք:

Հնարավոր է դպրոցն ինքը մշակի ու ընդունի միասնական պայմանական նշաններ՝ առանձնահատուկ հաջողությունը գնահատելու համար, կամ ուսուցիչն ինքը սահմանի գնահատման սխեմա: Առաջարկում ենք գնահատման պարզ սխեմա:

| ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ | ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ | ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ | ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔ |
|-----------------------|------------------------------|---------------------------|------------------------------|------------------------------|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1. Սաաբա Զապիշվիլի | Ամբողջությամբ յուրացրել է | Ամբողջությամբ յուրացրել է | Մասամբ է յուրացրել | Ամբողջությամբ յուրացրել է |
| 2. Մարիամ Չոխելի | Ամբողջությամբ յուրացրել է | Ամբողջությամբ յուրացրել է | Ամբողջությամբ յուրացրել է | Մասամբ է յուրացրել |

Վրաստանում հանրակրթական համակարգը նպատակադրում է հարմար պայմաններ ստեղծել ազգային և համամարդկային արժեքներ կրող ազատ անհատի ձևավորման համար:

Միևնույն ժամանակ, կրթական համակարգը զարգացնում է դեռահասների մտավոր և ֆիզիկական հմտություններն ու կարողությունները, տալիս է անհրաժեշտ գիտելիք, ապահովում առողջ կենսակերպ, աշակերտների մոտ ձևավորում ազատական և ժողովրդավարական արժեքների վրա հիմնված քաղաքացիական գիտակցություն և օգնում նրանց՝ ընտանիքի, հասարակության և պետության հանդեպ սեփական իրավունքների և պարտականությունների ճանաչման հարցում:

Վրաստանի հանրակրթության համակարգում ստացած փորձի հիման վրա դեռահասը պետք է կարողանա.

ա) Գիտակցել սեփական պատասխանատվությունը երկրի շահերի, ավանդույթների և արժեքների հանդեպ:

Դպրոցական կրթությունը պետք է զարգացնի աշակերտի ունակությունը՝ ճիշտ սահմանել սեփական երկրի պետական, տնտեսական և քաղաքական շահերը, և նրան տա օգտակար որոշումների կայացման և ակտիվ գործելու հնարավորություն:

բ) Պաշտպանել և պահպանել բնական շրջակա միջավայրի պայմանները:

Դեռահասը պետք է իմանա, ինչ բնական պայմաններում է ապրում, ինչ զուս կարող է հասցնել շրջակա միջավայրին այս կամ այն գործողությունը, ինչպես պահպանի և պաշտպանի բնական շրջակա միջավայրը:

գ) Արդյունավետ օգտագործել տեխնոլոգիական կամ ուրիշ մտավոր ձեռքբերումներ, գտնել տեղեկատվություն, մշակել և վերլուծել այն:

Այսօր, երբ մարդու համար հասանելի է մեծ ծավալի և տարբեր բովանդակության տեղեկատվություն, դրա արդյունավետ օգտագործումը կենսական նշանակություն է ստանում: Դեռահասը պետք է կարողանա ոչ միայն հայթայթել տեղեկություններ, այլ նաև գնահատել դրանք՝ ըստ բովանդակության, որակի, նշանակման. սահմանել նախանշված նպատակների համար դրանց օգտագործման ձևերը. տեխնոլոգիական ձեռքբերումներն արդյունավետորեն կիրառել ամենօրյա կյանքի, աշխատանքի, մտավոր և հոգևոր գործունեության պայմանների բարելավման համար:

դ) Ինքնուրույն ապրել, որոշումներ կայացնել:

Դպրոցական կրթությունը պետք է զարգացնի դեռահասի՝ անձնական, ընտանեկան և հասարակական կյանքում ինքնուրույն որոշումների կայացման հմտություններն ու կարողությունները:

ե) Լինել ստեղծագործ, ինքնուրույն ստեղծել արժեքներ և ոչ թե ապրել միայն առկա արժեքների հաշվին:

Դպրոցական կրթությունը պետք է ապահովի դեռահասի այն հմտությունների ու կարողությունների զարգացում, որոնք նրան հնարավորություն կտան արդեն առկա փորձն ու ձեռքբերումներն օգտագործել նոր նյութական, մտավոր և հոգևոր արժեքների ստեղծման համար:

զ) **Ամբողջ կյանքի ընթացքում շարունակաբար զարգացնել սեփական հնարավորություններն ու հետաքրքրությունները, հնարավորինս իրացնել դրանք ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:**

Դպրոցական կրթությունը պետք է ձևավորի դեռահասի՝ շարունակական զարգացման, ամբողջ կյանքի ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերման կարողություն, որպեսզի կարողանա պատշաճ կերպով սահմանել սեփական հնարավորություններն ու հոգևոր հակումները և ըստ այդմ հաստատել սեփական տեղը հասարակական կյանքում: Դեռահասը պետք է պատրաստ լինի ընտրություն կատարելու՝ ապագա կրթության և աշխատանքային գործունեության համար:

է) **Հաղորդակցվել անհատների ու խմբերի հետ:**

Դպրոցական կրթությունը պետք է ապահովի, որ հասարակության ապագա անդամների մոտ զարգանան ընդհանուր հաղորդակցական հմտություններ ու կարողություններ (գրել, կարդալ, խոսել, լսել), կազմակերպչական և խմբային աշխատանքի հմտություններ, այդ թվում նրանց մոտ, ում համար Վրաստանի պետական լեզուն մայրենի լեզուն չէ:

ը) **Լինել օրինապահ, հանդուրժող քաղաքացի:**

Այսօրվա հարաշարժ, էթնիկ և մշակութային առումով բազմազան աշխարհում որպեսզի հասարակությունը գործի, առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման և փոխձանաչման հմտությունները: Դպրոցը պետք է մշակի դեռահասի՝ մարդու իրավունքների պաշտպանության և անհատին հարգելու կարողությունը, որը նա կօգտագործի իր և ուրիշի ինքնատիպության պահպանման համար: Դեռահասը պետք է կարողանա օգտագործել մարդու հիմնարար իրավունքների մասին ստացած տեսական գիտելիքն ու ապրել այդ սկզբունքներով: